




827

L. II. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ. Ի Ր

№ 1 1889

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1889 № 1

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

Երևա


1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՆԵՑ ԱԽՏԻՐ.	1	«Մարտ»-ը սրբէն հասարակ, օրգան:
2 ՄԱՆՈՒԼԵԱՆՆԵՑ ԼԵՅՈՒՆ.	17	Նա ալ (բանաստեղծութիւն):
3 ԱԼԻՔՍԱՆ.	19	Նոյնը (բանաստեղծութիւն):
4 ՊԻՇՏԵԱՆՆԵՑ ՊԵՐՃ.	21	Յեղի (վեպ):
5 ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՆԵՑ ԳԷՈՐԳ.	60	«Բարեպաշտ Մարգիկ» պօետ, ներած.
6 ՓԻՐՈՒԴԱՐԵԱՆՆԵՑ ՏԻԳՐԱՆ.	67	Եղտարդ ԼՖ. գաղտնիքը (պատկեր):
7 ԱՐԵՒԻԵԱՆ.	99	Երգչի ախար (բանաստեղծութիւն):
8 ԼԷՅ.	100	Հինը օր (ճանապարհորդութիւն):
9 ԳԱՐԱՐԵԱՆՆԵՑ ՆԵՂՈՂԱՅՈՒ.	127	Պ. Պաօշեանցի և Նարա վեպերը:
10 ՉՄՇԿԵԱՆ ԳԷՈՐԳ.	133	Գ. Սաւորականցի կենսագրութիւնը:
11 ԱՐՂՈՒԴԱՐԵԱՆՆԵՑ ԿԱՐԱՊԵՏ.	141	Դատաստանական վերանորոգութիւն:
12 Ա.	160	Գրախօսութիւն:
13.	172	Ներքին տեսութիւն:
14 ***.	179	Նամակ Արտատահմանից:
15 ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.	181	Երած շատութիւն:
16 Ն.	186	Վաղարշական տեսութիւն:
17 ԽՄԻ.	194	Պատասխաններ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՈՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

1889



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

1889 թ.

ՀՈՅՍ ՏԵՍԱԾ ԲՈՂՈՐ ՀԱՄԱՐՆԵՐԻ

№ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 №

№ 1

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ . . .	1 «Մուրճ»-ը որպէս հասար. օրգան, և:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ . . .	17 Նաւակ (բանաստեղծութիւն):
3 ԱԼԻՔՍԱՆ	19 Ծովը (բանաստեղծութիւն):
4 ՊՈՇԵԱՆՅ ՊԵՐՃ	21 Յեցեր (վէպ):
5 ԲԱՐԻՈՒԳԱՐԵԱՆՅ ԳԷՈՐԳ . . .	60 «Բարեպաշտ մարդիկ» պօեմ. ներած.
6 ՓԻՐՈՒՄԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ . . .	67 Եղուարդ էֆ. գաղտնիքը (պատկեր):
7 ԱՐԾԻԻԵԱՆ	99 Երգչի ուխտը (բանաստեղծութիւն):
8 ԼԷՑ	100 Հինգ օր (ճանապարհորդութիւն):
9 ՔԱՐԱՄԵԱՆՅ ՆԻԿՈՂԱՅՈՍ . . .	127 Պ. Պռօշեանց և Նորա վէպերը:
10 ՉՄՇԿԵԱՆ ԳԷՈՐԳ	133 Գ. Ստեղծականցի կենսագրութ.
11 ԵԱՂՈՒԲԵԱՆՅ ԿԱՐԱՊԵՏ . . .	141 Դատաւարական վերանորոգութ.
12 Ա. (Արասիւանեանց)	160 Գրախօսութիւն. — Գրականական Հանդէս: — Փիրումեանց՝ Պատկեր- ներ վաղարականի կեանքից: — Քամալեանց՝ Ծովինար: — Նաղա- րեանց՝ Օրացույց 1889 թ.: — Հեքս- պիր, Թարգմ. Յ. Լալաշեանցի՝ Զուր- տեղը մեծ աղմուկ: — Միսալս, Թարգմ. Փ. Վարդանեանցի՝ Բնաւորութիւն:

13	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ . . .	172	«Մուրճ»-ի վերնագրի կլէշէն և թուղթը: — Փոխատու-խնայողական զանձարան «Մուրճ» ամսագրի — «Մուրճ» ամսագրի ուղղագրութիւնը: — Գարրիէլ Սունդուկեանցի յօդէկեանը: — Կովկասեան արդիւնահանդէս 1889. թ.:
14	***	179	Նամակ արտատահմանից:
15	ԿԱՐԱՎՈՒՐՁԱ	181	Երաժշտութիւն:
16	Z	186	Եւրոպական միժ ոլետութիւնների միջազգային քաղաքականութիւնը:
17	ԽՄԲ.	194	«Մուրճ»-ի Նամակադրութիւնը:

№ 2

1	ՊՈՇԵՆԱՆՑ ՊԵՐՃ	199	Յեցեր (շարունակութիւն):
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՌՆ.	231	Միրամ (բանաստեղծութիւն):
3	ԼԷՅՕ	232	Հինգ օր (շարունակութիւն):
4	ՆԺԳԵՀ.	271	Ներշնչանք (բանաստեղծութիւն):
5	Նուճ	272	Երազ (բանաստեղծութիւն):
6	ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԵԲՍԱՆԻՐ	273	Պատրիկեանի Նամակները:
7	ՔԱՐԱՄԵԱՆՑ ՆԻԿՈՂԱՅՈՍ	284	Պ. Պոօշեանց և Նորա վէպերը:
8	ԱՐԾԻԹԵԱՆ.	301	Անջատման ժամ (բանաստեղծութ.).
9	ՎԱՐԳԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ.	302	Գիւղական վարկը:
10			Գրախօսութիւն:—
	Լ. Ս. (Լևոն Սարգսեանց)	318	Մ. Աբեղեան՝ Նմուշներ:
	Լ. Ս.	320	Ա. Մեհրաբեան — Սրինգ՝ Երախաց:
	Լ. Ս.	321	Բիր:—Փիլոսոֆ՝ Զրուցներ:
	Լ. Յ.	324	Փիլոսոֆ՝ Կորած մարդարիտ:
	Ք.	325	Ընտիր Հասածներ:
	Ա.	327	Материалы по изучению быта госуд. крестьянъ въ Закавказ. краѣ.
11	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ	333	Հայոց Բարեգործական Ընկերութեան ժողովը:
12		339	Կովկաս. գիւղ. արդիւնահանդէսը:
13		342	Գարրիէլ Սունդուկեանցի յօդէկեանը:
14		351	Կամ Լօու-Մելիքեան:
15	ԱՍԻԼԵԱՆ ՄԻՍԱԲ.	357	Տիկին Թամար Ներսիսեան:
16	Z.	363	Քաղաքական տնցքերը 1888 թվականին:

17 ԽՄԲ.	368 «Մուրճ»-ի նամակագրութիւնը:
-----------------	--------------------------------

№ 3

1 ՊՈՇԵԱՆՆՑ ՊԵՐՃ	375 Յեցեր (շարունակութիւն):
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	419 Եղեին (բանաստեղծութիւն):
3 Նոյն.	420 Մանուշակ (բանաստեղծութիւն):
4 ԹԱԴԷՈՍԵԱՆ ՔՐԻՍՏՈՖՈՐ.	421 Պօէտին (բանաստեղծութիւն):
5 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԵԳՍԱՆԴՐ.	422 Պատրիկեանի նամակներ:
6 Տ.-ՄԻՐԱԲԵԱՆՑ ՅՈՎՀԱՆՆԵՍ	434 Հոգ.—Մանկ. խորհրդածութիւններ:
7 ԱՐԾԻԻԵԱՆ.	458 Առաւօտեան երգ (բանաստեղծութիւն):
8 ՔԱՐԱՄԵԱՆՑ ՆԻԿՈՂԱՅՈՍ	459 Պ. Պռօշեանց և նորա վէպերը:
9 ԵԱՂՈՒԲԵԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ	476 Դատաս. վերանորոգութիւն. (վերջ):
10 Ա.	500 Դրախօսութիւն—Յիւնամեակ հալոց Հոգ. թեմակ. Գալանոցի երկանաբ. Նաւասարդեանց՝ Հալ-ժողովրդական հէքիաթներ, զիրք IV.—Ковалевскіѳ и Марковъ На горахъ Араратскихъ: Ա. Ջէլզիլից՝ Գանձակի նահանգի համար վիճակագրական նիւթեր:—Кучаевъ Къ вопросу "Ипотечной системы".
11 ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ	516 Պ. Պռօշեանցի յօրէլեանը:
12	517 Ներսիսեան. Գալ. պատմ. ինդրին:
13	522 Կովկասեան արդիւնահանդէս:
14	531 Մահացուցակ:—Պետր. Շանչեան և Ստ. Պալասանեան:
15 Z.	532 Բուլանժէ:
16 ԽՄԲ.	546 «Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 4

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ ԱԻԵՏԻՔ.	551 «Մուրճ»-ը որպէս հաս. օրդան, II.
2 ԼՕՆԳՖԵԼԼՕ-ԻՅ՝ ՄԱՆՈՒԷԼ.	572 Սլաքը և երգը (բանաստեղծութիւն):
3 Նոյնը	573 Անձրեակին օր (բանաստեղծութիւն):
4 ԱԼԵՒՈՐ	574 Ինքնագոհ աղքատը (բանաստեղծութիւն):
5 ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	576 Այց Թիւրքաց-Հալաստանին:
6 ՊՈՇԵԱՆՆՑ ՊԵՐՃ	610 Յեցեր (շարունակութիւն):
7 ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆՑ ՅՈՎ.	650 Տեմպերամենտ:
8 Լ. Ս.	668 Դրախօսութիւն—«Աղբիւր» ամսագ.
9 ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ	675 Գալրոցական դորձեր:

IV

10	676	Թիֆ. Հ. Գրք. Հրատ. Բնկերութ.
11	678	Կովկասեան արդիւնահանդէս:
12 ԽՄԲ.	684	«Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 5

1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	695	Անտեղ, զայրացած... (բանաստ.):
2 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ	696	Պատրիկեանի նամակները: Կեանքի սխեմերը:
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	707	Վաղէր իմ ձի (բանաստեղծութ.):
4 Նոյն.	708	Մասիս (բանաստեղծութիւն):
5 ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	712	Այց Թիւրքաց-Հայաստանին:
6 ՆԺԴԵՀ.	740	Կարօտ (բանաստեղծութիւն):
7 ԱԼԵՒՈՐ	741	Ինքնասպան (բանաստեղծութիւն):
8 ՊՈԾԵԱՆՑ ՊԵՐՃ	742	Ցեցեր (շարունակութիւն):
9 ՍԱՐԳՍԵԱՆՑ ՍԱՐԳԻՍ	780	Հիւն թէ վեւ?
10 Պ. Պ. (Պերճ Պուշեանց).	790	Գրախօսութ.—Տիգրան Կամարա-կան՝ Վարժապետին աղջիկը:
ՔԼ.	794	Գէորգ Չուբար՝ Վէպեր և Պատկերներ:
11 ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ	799	Թիֆլ. Ընկ. Հայեր. Գրք. Հրատ.
12	809	Կանոնադր. Ուսուցչակ. Փոխատու-թնադրական Գանձարանի:
13	815	Ուղղագրութեան խնդիրը:
14	819	Կարգադր. ուսուցիչների մասին:
15 ԶԼԻՑԵԱՆ ԱԻՆՏԻՍ.	821	Կարա-Մուրղան և նորա յառաձայն երգեցողութիւնը մեր մէջ:
16 Z.	827	1789 թ. և համաշխարհային հանդ. Պարիզում:
17 ԽՄԲ.	834	«Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 6

1 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ	839	Խե Կարապետ (վէպ):
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	896	Օաղիս (բանաստեղծութիւն):
3 ԱԼԻՔԵԱՆ	897	Գաղթականի պատմածից (բանաստ.):
4 ՊՈԾԵԱՆՑ ՊԵՐՃ	899	Ցեցեր (վերջ):
5 ԱՐՄԻԵԱՆ.	919	Ամբիլին (բանաստեղծութիւն):
6 ԲԱԼՈՒՂԵԱՆ ԶԱՒԱԳ-ԲԷԿ.	921	Մի թունաւորիր... (բանաստեղծ.):

7 Ա.	922	Գրախ.—Սենեք. Արծրունի՝ Համլետ:
Լ. Ս.	936	Բաղմալէս Հանդիսարան:
8 Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԲԺՂԿ. (ՂԳ.)	944	Բարակացաւ-թողախտը:
9 ԼՈՒՍԻՆԻ.	949	Ամուսն Քրօնիկ: — Դրագէտներ. Գարբնոցի պետը. Սիրողների ներ- կայացումներ. իշխ. Ակ. Յերետելի. Անբարեպաշտ մարդիկ:
10 ԶԼԻՑԵԱՆ ԱԻԵՏԻՍ.	964	Բաքուի Մարդ. Ընկ. 25-ամեակը:
11	972	Կովկ. Կառավարչ. շրջաբերականը:
12	974	Արձան Շանչեանին: Յօրեկան Պը- ռօչեանցի:
13 Շ.	975	Խալո-Գերման. դաշնակցութիւնը:
14 ԽՄԲ.	982	«Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 7

1 ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ	991	Այլ թիւերաց-Հայաստանին (շար.)
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ	1016	Իմ գրիչը-իմ ծառան (բանաստ.):
3	1018	Արտասուք (բանաստեղծութիւն):
4 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ.	1019	Խե Կարապետ (շարունակութիւն):
5 ԱՐԾԻԻԵԱՆ	1077	Երգ և մետաղ (բանաստեղծութ.):
6 ՔԱԼԱՆԹԱՐ ԱԼԷՔՍԱՆԴՐ.	1078	Յ. Յովհաննիսեանի բանաստեղծ.
7 ԲԱԼՈՒՂԵԱՆ ԶՍԻԱԳ	1094	Էստօնական սուսպիլ (բանաստ.)
8 Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԲԺՇԿ. (ՂԳԼ.)	1100	Բարակացաւի ծագման պատճառ.
9 Լ. Ս.	1105	«Յեցեր»:
10 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ Յ.	1109	Կրօնի դասագրքեր:—Սահակ քահ. Սահակեանց:
11 ԼՈՒՍԻՆԻ.	1116	Ամուսն Քրօնիկ:—Աւարտող աշա- կերաներ: Մահմեդականուհիք և դպրոցը: Խրնանը գիտութիւննե- րի կենդրոնացման և ապականդ- րոնացման մասին: Հոյ խմբագիր- ներ:
12 ԽՄԲ.	1127	«Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 8

1 ՎԱՐԴԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ	1135	Հողալին պոլման. և գիւղ. վարկը:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ.	1153	Բանաստեղծին (բանաստեղծութ.):

3 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ	1154	Խե Կարապետ (չարունակութ.):
4 ԱՐԾԻԻԵԱՆ	1221	Տաղանաղիր (բանաստեղծութիւն):
5 ՖՐՈՒԳ-ԻԳ՝ ԱՐԾԻԻԵԱՆ	1222	Արծիւ և ճիճու (բանաստեղծութ.):
6 ԼԵՐՄՈՆՏՈՎ-ԻԳ՝ ԱՐԾԻԻԵԱՆ	1224	Սուրբ տաճարի դռան... (բանաստ.):
7 Ա.	1225	Գրախօսութիւն. — «Թասիբ»:
8 Ա.	1226	«Գաբրիէլի՝ Բնաւոր. կրթութիւն»:
9 Յ. Տ.-Մ.	1231	Բարխուդար.՝ Լէւրնից և Հերբարտ:
10	1236	Կանոններ Հայ. եկեղ. ծխ. ուսումն.
11 ԼՈՒՍԻՆԻ	1245	Ամուսն. Քրօնիկ. — Ամատնալին զրուց: Աբասթուման և Կուրօրտ- ների գրականութիւնը: Ախալցը- խալ: — Իրեր և մարդիկ:
12	1257	Տեղեկագիր Յ. Իզմիրեանց կը- տակի:
13 Շ.	1270	Քաղաքական տեսութիւն: Եռա- պետեան զաշնակցութիւնը և քա- ղաքական նոր հանգամանքները:
14 ԽՄԲ.	1277	«Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 9

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ.	1285	Հոգալին խնդ. Անդրկովկասում:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ	1300	Միակ ճանապարհ (բանաստեղծ.):
3 ԼԷՅ.	1301	Կորածներ (վէպ):
4 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ	1346	Պօէտ (բանաստեղծութիւն):
5 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ	1347	Խե Կարապետ (վերջ):
6 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ	1409	Մի՛ զարմանար (բանաստեղծ.)
7 ՀԱՅՆԷ-ԻԳ՝ ԱՐԾԻԻԵԱՆ	1410	Երգեր (բանաստեղծութիւն):
8 ՏԼԻՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ	1412	Ուսումնարանական զիտելիքներ:
9 ՍԱՐԳՍԵԱՆՅ ԼԵՒՈՆ	1428	Այց Թիւրք.-Հայաստանին (շալ.)
10 ԲԱԼՈՒՂԵԱՆՅ ՋԱՒԱԳ-ԲԷԿ.	1449	Նւէր Լ. Մանուէլեանցին (բանաստ.)
11 ՆԱԴՍՈՆ-ԻԳ՝ ԲԱԼՈՒՂԵԱՆՅ Ջ.	1450	Եթէ սիրում ես... (բանաստեղծ.):
12 Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԲԺՇԿ. (ՂԱԼ.)	1452	Մանուկների հիւանդութիւնները:
13 Լ. Ս.	1459	Գրախօս. — «Իտալիթ և Մհեր»:
14 Մ. ԱՍ.	1463	«Ռուչան և Հիւրիդար»:
15 ԼՈՒՍԻՆԻ	1467	Ամուսն. Քրօնիկ. Կովկասեան Ար- զիւնահանդէսը և նորա կարգադ- րիչները: Անդրկովկասեան երկա- թուղու անցնելը տէրութեան ձեռ.

- քըն: Թիֆլիսի փոխադարձ Ընկե-
րութիւնը կրակից ապահովաց-
ման: Թիֆլիսի ամառայն հիւրերը:
16 Z. 1474 Քաղաքական Տեսութիւն:—Նոա-
պետութիւնը և մանր ազգութիւն-
ների դատը:
17 ԽՄԲ. 1485 «Մուրճ»-ի նամակագրութիւնը:

№ 10

- 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԽՏԻՔ . . . 1495 Արդիւնահանդէսը:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ . . . 1509 Վայրի ծաղիկ (բանաստեղծ.):
3 » » . . . 1510 Նրբ և տեսնում եմ... (բանաստ.):
4 » » . . . 1513 Պանդխտի երգը (բանաստեղծ.):
5 » » . . . 1515 Անբաղդի երգը (բանաստեղծ.):
6 ԼԷՕ 1517 Կարածներ (վերջ):
7 Տ.-ՄԻՐԱՔԵԱՆՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ 1577 Ուսումնար. գիտելիքներ (վերջ):
8 ՕՍԿԱՐ ՐԱԴՎԻՑ-ԻՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ 1591 Քանի պաշտու... (բանաստեղծ.):
9 ԱՔԵՂԵԱՆ, Մ. 1592 Աղգալին վէպ:
10 ԿՐԱՍԻՂՆԻԿԵԱՆ ԱՐՍԷՆ . . . 1609 Ինչո՞ւ փախչեմ... (բանաստեղծ.):
11 ՊԱԼԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ 1610 Փոթորիկն անցաւ... (բանաստ.):
12 Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԲԺՇԿ. (ՂԱ.) 1611 Մանուկն. հիւանդութիւնն. (վերջ):
13 Ա., Բ., Տ. Գ., Տ.-Ն. 1618 Գրախօս.—Ներուզ. գրականութիւն:
14 1631 Թղթակցութիւններ Արտասահմ.—
Գաղթը դէպի Անգլիա.—Ֆիզիոլոգ-
ների կօնգրես Բազելում.—Բրի-
տանակ. ընկ. գիտութիւնները ա-
ռաջացն. համար.—Սպիրիտիստն.
կօնգր. Պարիզում.—Պրուսիայի ժո-
ղովրդական ուսումնար. ներկայ
գրութիւնը:
15 ԼՈՒՍԻՆԻ 1634 Ամառայ Քրօնիկ.—Հակ. Թատրոն:
16 Z. 1640 Քաղ. տես.—Ֆր. 3-դ Հանրապետ.
17 ԽՄԲ. 1655 Խմբագրութեան կողմից:

№ 11

- 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԽՏԻՔ . . . 1673 Պանդխտութեան խնդիրը:
2 ՀԱՅՆԷ-ԻՅ՝ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ Լ. 1683 Կարած բաղը (բանաստեղծութ.):
3 » » . . . 1684 Փայլուն աչերովդ... (բանաստ.):

- 4 ՄՆԱՑԱԿԱՆՆԵԱՆՅ ԳԱՐԻԻԷԼ. 1685 Ոճիրները Երևանեան Նահանգում:
- 5 ՀԱՐՏՄԱՆ-ԻՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ. . . 1703 Սիրասուն ծաղիկ (բանաստեղծ.):
- 6 ՀԱՅՆԷ-ԻՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ . . . 1704 Նոքա իմ կեանքը... (բանաստ.):
- 7 ԲԱՇԽՆՋԱՂԵԱՆ ԳԷՈՐԳ. . . 1705 Նկարչի նամակները:
- 8 ՍԱՐԳՍԵԱՆՅ ԼԵՒՈՆ. 1710 Այց թիւրքաց Հաջաստ. (շար.):
- 9 ԲԱԼՈՒՂԵԱՆՅ Զ. 1737 Ընկերիւս հրդր (բանաստեղծ.):
- 10 ԱՐԵՂԵԱՆ Մ. 1738 Աղգալին վէպ (շարունակութիւն):
- 11 Գ. Բ. 1762 Վաղուց անցել են... (բանաստ.):
- 12 ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅ ՅՈՎՀԱՆ. 1764 Դպրոցական դրօսանք:
- 13 ՊԱԼԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ. 1780 Յուզիւր, դու իմ սիրտ... (բան.):
- 14 ՄԱԼԽԱՍԵԱՆՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ. 1781 Տենչ հայրենիքի (բանաստեղծ.):
- 15 " " " . . . 1782 Ընկերոջ (բանաստեղծութիւն):
- 16 ԳԱՌՆԵՅԻ Յ. 1783 Բարի պտուղ (պատկեր):
- 17 ՍՈՂՈՄՈՆԵԱՆՅ ՀՄԱՅՆԱԿ. 1814 Արդիւնահանդիսից:
- 18 Ա. Ա., Ա. ՔԼ. 1821 Դրախտութիւն: «Կորածներ», «Շե-
քըսպիր-Բակօնեան խնդիր», «Մա-
նիր», «Քանդած օջախ»:
- 19 1829 Թղթակց. Արտասահմանից.—Պա-
րիզի կօնդր. կիրակն. հանդըս-
տութեան աւելիւ.—Լլի քորական
գործը Գերմանիայում.—Ֆրան-
սիական մամուլը.—Լմիլ Օմիլի
մահը.—Եւրոպ. գրադարանները.—
Գրական կեղծիք.—Համա-ամե-
րիկական կօնգրեսը.—Ֆրանսիա-
լի միջնորդների շխտակութիւնը.—
Համաշխարհային հանդիսի վերջը,
ալցելուների թիւը ըստ հրկիրնե-
րի և մամուլի դատողութիւնը.—
Նամակ Կ. Պօլսից՝ Վլլիսիւմ կապ-
րը Կ. Պօլսում:
- 20 Հ. 1846 Քաղաք. Տես.—Համա-ամերիկա-
կան կօնգրես.—Յեղափոխութիւն
Բրազիլիայում:
- 21 ԽՄԲ. 1859 Խմբագրութեան կողմից:

№ 12

- 1 ԱՐԱՍԽԱՆՆԵԱՆՑ ԱԻՆՏԻԲ . . . 1879 «Մուրճ»-ը 1889 թ.:
- 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ . . . 1890 Թախիժ (բանաստեղծութիւն):
- 3 « » . . . 1892 Մանրուք (բանաստեղծութիւն):
- 4 ՄՆԱՅԱԿԱՆՆԵԱՆՑ ԳԱՔՐԻԷԼ . 1893 Ոճիրները Երևան. Նահ. (վերջ):
- 5 ՀԱՅՆԷ-ԷՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ . . . 1919 Անկումն (բանաստեղծութիւն):
- 6 Գ. Բ. 1920 Ահա ծագեց... (բանաստեղծութիւն):
- 7 ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ 1921 Այց Թիւրքաց Հալաստանին (չալի):
- 8 ՍԼԱԽԵԱՆՍԿՈՒՅ՝ ԿՐԱՍԻԼՆԻԿ. 1941 Աքտորւածի ղաւակը (բանաստ.):
- 9 ՊՈԾՇԵԱՆՑ ՊԵՐՃ 1944 Բզլէ (վէպ):
- 10 ՀԱՍՈՒՄՆԵԱՆ ՍԻՄԷՈՆ 1976 Ո՞ւր եւ փախչում (բանաստեղծ.):
- 11 » » . . . 1977 Երբ կուտակում են... (բանաստ.):
- 12 Ա. Ա., Պ. Պ., Լ. Ս. 1978 Գրախօսութիւն—Աղամեանց՝ «Տեղադրութիւն» Երևանի: Գալէմքերան՝ «Մամադործութիւն»: Տէր-Աւետիքեանց՝ «Տեղադրական Նամականիւ»: Մելիք-Շահնազարեանց՝ «Փշրանք»:
- 13 ԼՈՒՍԻՆԻ 1985 Ամուսնաց Գրօնիկի—Մի նոր կուսակցութիւն: Հրատարակչ. Ընկերութիւն: Արխատակէս եպիսկոպոս Սեդրակեան:
- 14 1997 Թղթակցութիւն. Արաստահմանից:
- 15 ԽՄԲ. 2003 Խմբագրութեան կողմից:
- 16 2005 «Մուրճ»-ի 12 համարներին բաժանակցութիւնը:

“ՄՈՒՐՃ” ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Ուսուցիչներին, վարժուհիներին և բարձրագույն դպրոց-
ների ուսանողներին համար:**

ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Վճարում են կամ միանգամ 8 թուրքի տարւայ սկզբին
և կամ տարեկան 10 թուրքի այսպէս՝

Յունւարի 1-ին	2 ռ.
Փետրւարի 1-ին	2
Մարտի 1-ին	2
Մայիսի 1-ին	2
Սեպտեմբերի 20-ին	2

ԳԱԻԱՌՆԵՐԻՅ՝ ուղարկում են տարեկան 9 թուրքի այսպէս՝

Յունւարի 1-ին	3 ռ.
Փետրւարի 1-ին	3
Մարտի 1-ին	3

Բարձրագույն դպրոցներում՝ ուսանողները վճարում են տարեկան 8
թուրքի այսպէս՝

Յունւարի 1-ին	3 ռ.
Փետրւարի 1-ին	3
Մարտի 1-ին	2

Հասցէ՝ Тифлисъ. Редакция журн. МУРЧЪ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

(№ 1, 2, 3, 4 №)

№ 1

- 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ . . . 1 «Մուրճ»-ը որպէս հասար. օրգան I:
- 2 ՄԱՆՈՒԼԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ . . . 17 Նաւակ (բանաստեղծութիւն):
- 3 ԱԼԻՔՆԱՆ . . . 19 Ծովը (բանաստեղծութիւն):
- 4 ՊՈՇԵԱՆՅ ՊԵՐՃ . . . 21 Յեցիր (վէպ):
- 5 ԲԱՐԻՈՒԳԱՐԵԱՆՅ ԳԷՈՐԳ . . . 60 «Բարեպաշտ մարդիկ» պօեմ. Ներած.
- 6 ՓԻՐՈՒՄԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ . . . 67 Եղուարդ Էֆ. զազունիքը (պատկեր):
- 7 ԱՐՇԻԼԵԱՆ . . . 99 Երգչի ուխտը (բանաստեղծութիւն):
- 8 ԼԷՕ . . . 100 Հինգ օր (ճանապարհորդութիւն):
- 9 ԳԱՐԱՄԵԱՆՅ ՆԻԿՈՂԱՅՈՍ . . . 127 Պ. Պոօշեանց և Նորա վէպերը:
- 10 ԶՄՇԿԵԱՆ ԳԷՈՐԳ . . . 133 Գ. Սաւորականցի կենսագրութ.
- 11 ԵԱՂՈՒԲԵԱՆՅ ԿԱՐԱՊԵՏ . . . 141 Դատաւանական վերանորոգութ.
- 12 Ա. (Արատիանեանց). . . 160 Գրախօսութիւն. — Կրահանական
Հանդէս — Փիրումեանց՝ Պատկեր-
ներ վաստակածների կեանքից: —
Քամակեանց՝ Ծովինար — Նաղա-
րեանց՝ Օրացոյց 1889 թ.: — Հերս-
պիր, թարգմ. Յ. Լալապեանցի՝ Զուր
տեղը մեծ աղմուկ: — Վալլա,
թարգմ. Փ. Վարդանեանցի՝ Բնաւո-
րութիւն:
- 13 ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ . . . 172 «Մուրճ»-ի վերնագրի կլիշէն և
թուղթը: — Փոխատու-խնարդական
զանձարան «Մուրճ» ամսագրի: —
«Մուրճ» ամսագրի ուղղագրու-
թիւնը: — Դարբիէլ Սաւորական-
ցի իօրէկեանը: — Կովկասեան ար-
դիւնահանդէս 1889 թ.:
- 14*** . . . 179 Նամակ Արատումեանից:
- 15 ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱ . . . 181 Երածչտա թիւն:

16	Z.	186	Եւրոպական մեծ պետութիւնները միջազգային քաղաքականութիւնը:
17	ԽԱՅ.	194	«Մուրճ»-ի նամակադրութիւնը:

№ 2

1	ՊՈԾԵԱՆՅ ՊԵՐՃ	199	Յեցիր (շարունակութիւն):
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ	231	Միրաժ (բանաստեղծութիւն):
3	ԼԷՑ	232	Հինգ օր (շարունակ. և վերջ):
4	ՆԺԳԵՀ	271	Ներշնչանք (բանաստեղծութիւն):
5	Նոյն	272	Երազ (բանաստեղծութիւն):
6	ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ	273	Պատրիկեանի նամակները:
7	ՔԱՐԱՄԵԱՆՅ ՆԻՍՈՂԱՅՈՍ	284	Պ. Պռօշեանց և Նորա վկայքը:
8	ԱՐՄԻԻԵԱՆ	301	Անջատման ժամ (բանաստեղծութիւն):
9	ՎԱՐԴԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ	302	Գիւղական վարկը:
10			Գրախօսութիւն:—
	Լ. Ս. (Լևոն Սարգսեանց)	318	Մ. Աբեղեան՝ Նմուշներ:
	Լ. Ս.	320	Ա. Մեհրարեան—Սրինգ՝ Երախալ:
	Լ. Ս.	321	Բիքը—Փիլօեան՝ Զրուցներ:
	Լ. Յ.	324	Փիլօեան՝ Կորած մարդարիտ:
	Ք.	325	Ընտիր Հատուածներ:
	Ա.	327	Материалы по изучению быта го- суд. крестьянъ въ Закавказьях.
11		333	Ներքին տնտեսութիւն—Հարց Բա- րեղարժական Ընկերութեան ժողովը
12		339	Կովկաս. զինւ. արդիւնահանդէսը:
13		342	Դարբիէլ Սունդուկեանցի յօդէկեանք:
14		351	Կոմս Լօուա-Մելիքեան:
15	ԱՍԻԼԵԱՆ ՄԻՍԱԲ	357	Տիկին Թամար Ներսիսեան:
16	Z.	363	Քաղաքական անցքերը 1888 թւա- կանին:
17	ԽԱՅ.	368	«Մուրճ»-ի նամակադրութիւնը:

№ 3

1	ՊՈԾԵԱՆՅ ՊԵՐՃ	375	Յեցիր (շարունակութիւն):
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ	419	Եղին (բանաստեղծութիւն):
3	Նոյն	420	Մանուշակ (բանաստեղծութիւն):
4	ԹԱԻԼՈՍԵԱՆ ՔՐԻՍՏՈՖՈՐ	421	Պօլաին (բանաստեղծութիւն):
5	ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ	422	Պատրիկեանի նամակները:

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1889

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1889 № 1

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԻ Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 31-го декабря 1888 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп домъ № 41.

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳԻՐԸ

ՈՐՊԷՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԳԱՆ

Այս օրւանից հայկական գրականութիւնը իւր գիրկն է առնում «Մուրճ» անունով նորածին ամսագիրը: Նա աշխարհ է դալիս, երբ, քանի տարիներէլց ի վեր, հայ հասարակութիւնը մի ամսագրի հրատարակութիւնը կարելոր էր համարում, երբ հայ-գրական շրջանները նորան անհրաժեշտ էին դատում:

«Մուրճ»-ը, որպէս առհասարակ մի ամսագիր, որ իրան նւիրում է հայ աշխարհի կեանքին—իւր ժամանակի օրինաւոր զաւակն է՝ նորան սպասում էին, նորան պահանջում էին, նորան առաջուց ողջունում էին: Զլինէր «Մուրճ»-ը, ամեն մի ուրիշ հայկական ամսագիր, շրջապատւած ստիւն ոյժերով և կեանքին հետեւելու ընդունակութեան գրաւականով,—ըղձացած հիւրը կ'լինէր հայ գրականութեան սեղանին: Որպէս առհասարակ ամսագիր—«Մուրճ»-ը չէ կաշում հայ հասարակութեան շինքին, — ինքը հասարակութիւնը իւր վզի վերայ է առնում նորան: Ամեն խօսակցութիւն, որ եղած է «Մուրճ»-ի հրատարակելուց և մինչև իսկ հրատարակման թոյլտւութիւնը խնդրելուց առաջ—մեզ համոզում են այդ բանի մէջ և հազիւ թէ մեր մէջ գտնւին կասկածողներ այդ նկատմամբ:

Մենք զալիս ենք իւր ժամանակին—այդ անկասկած է: Այդ հանգամանքը ամսագրի հրատարակչի գործը շատ թեթեւացնում է և նորա գրութիւնն իսկ դարձնում է ակտիւ, նախանձելի անդամ, եթէ ի նկատի առնենք, որ շատ հրատարակութիւններ, նմանապէս օգտակար, անգամ, այո՛, շատ կարելոր մտածող մարդկանց աչքում, ստիպւած են եղած դեռ ևս ճանապարհ

հարթել իրանց համար, ղեռ ևս տարիներով շարունակող յառաջաբաններին են կարօտ եղած՝ իրանց օգտակարութիւնը և կարևորութիւնը ապացուցելու և հասարակութիւնից ընդունել տալու համար:

Խոստովանում ենք, երեքին խոստովանում ենք մեր զրութեան աջողակութիւնը, անկոչ հիւր չե՛նք մենք, այլ կոչւած:

Բայց այսօր հանդէս է գալիս ոչ թէ մի ամսագիր առհասարակ, այլ «Մուրճ»-ը, ունենալով որպէս ղեկավար մի որոշ անձնաւորութիւն: Եւ քանի որ մի ամսագիր լոկ իւր զոյուլթեամբ չէ, որ պիտի իւր նշանակութիւնը արդարացնէ,—ընթերցանութեան նիւթեր կարելի էր մատակարարել և այլապէս,—մեզ վերայ ուրեմն պարտք է զրած հրապարակով ասել, թէ ի՛նչ գաղափարներից զըրդւած՝ մենք մեզ վերայ առանք այնքան մի պատասխանատու գործի ծանրութիւնը, որպիսին է մի մեծ քաղաքական—հասարակական—գրական օրգանի հրատարակութիւնը մեր օրերում:

Ամսագիր հրատարակելու գաղափարը մեզ համար նոր չէր. նա ծնել էր մեր մէջ մի քանի տարիներից ի վեր: Բայց ժամանակով նա հասունացաւ մեր մէջ ա՛յն աստիճան, որ ղիմադրելը անհնարին էր: Մեզ դրդող ոյժը գոյացած էր շատ պատճառներից, որոնք բոլորը վերաբերում են մեր արդի գրականութեան, գրական դասակարգի և ազգի առաջըլիմութեան պահանջներին: Այդ բոլոր ոյժերը մեզ վերայ բարդում էին սպաւորութիւններ, որոնք վերջացրին իրանց գործը ազդելով մեր կամքի վերայ՝ կանգնել զլուս մի գործի, որը պիտի գոհացում տայ ժամանակի պահանջներին:

Որո՛նք են, սակայն, այդ պահանջները գրախնութեան, գրական դասակարգի և ազգային առաջըլիմութեան: Ահաք է պարզ խօսել, պէտք է խոստովանել հասարակութեան առջև այն ամեն զգացումները, որ ղեկավարում են այսօր մեր գործառնութիւնը,—որովհետեւ «Մուրճ»-ը այսօր հանդէս է գալիս իբրեւ հայ հասարակութեան օրգանական մի պահանջ, իբրեւ մի օրգան, որը իւր ախօսը պիտի փորէ հանրական դաշտում՝ նորան վերապահած և նորան յատկացրած բաժնում: Որքա՛ն «Մուրճ»-ը պիտի խոր փորէ իւր ախօսը այդ դաշտում—մի խընդիր է, որը ցոյց կ'տայ միմիայն ապագան, բայց որը մասամբ մեզ ինքներնից կախւած է, մեր ղիտաւորութիւններից, մեր հայեացք-

ներից իրերի և մարդկանց վերայ: Այդ հայեացքների համար մենք պատասխանատու ենք հասարակութեան առջև և այդ հայեացքներն են, որ մենք վստահութեամբ կ'բաժանենք հասարակութեան հետ: Թէ ի՞նչ պէտք է լինի «Մուրճ»-ը հայկական աշխարհի համար, — այդ լոկ ապագայի խնդիր չէ և ոչ բնութեան ու հանգամանքների կոյր խաղի գործ, — ո՛չ. «Մուրճ»-ը ինչ բանին էլ որ հասնի վերջերքում, նա այդ վախճանի համար պիտի պարտական լինի այն զեկին, որո՞վ մենք զիտաւորութիւն ունինք վարելու նորան՝ ճանապարհի նոյն իսկ սկզբում: Մարդկային գործառնութիւնների մէջ կոյր բնութիւնը կամ այն անծանօթ ոյժերի խաղը, որ մենք կոյր բնութեան անունն ենք տալիս, անշուշտ մեծ դեր են խաղում: Բայց մարդկութիւնը գնահատում է միմիայն այն, ինչ կամքով է ձեռք բերւած. այն, որ արդիւնք է ճանաչ գործունէութեան, նախադէի, որի վերայ բանել են ուղեղ և միտք, սիրտ և զգացմունք:

Ամեն անգամ, երբ հայ գործողը կամեցել է մամուլի միջոցով արթնացնել մեր ազգի թմրած, հնգութեան փռչիով ծածկւած մտքերը, բացել նորա աչքերը կատարեղ իրողութիւնները տեսնելու համար. ամեն անգամ, երբ ուժգին զարկերով մամուլը կարողացել է հայ ազգի միտքը իւր առանձնութիւնից գուրս բերել և շրփել նորան ընդհանուրի հետ, դորանով իսկ ցոյց տալ նորա համեմատական ոյժը՝ ընդհանուր մարդկութեան ծառայելու և մարդկութիւնը՝ իրան ծառայեցնելու, — այդ ամեն անգամները կազմած են և մեր ժողովրդի զարգացման մի-մի շրջանները: Այդ շրջանների բնատուր յատկութիւններն են եղած՝ ձգտող ոյժերի ողևորութիւնը այն օրդանների համար, որտեղ նոքա գտած են սուս մզող մտքեր և հնամաշ մարդկանց հալածանքից ապահով և հիւրընկալ ապաստան: Եւ, վերջ ի վերջոյ, այդ ձգտող ոյժերն են եղած, որոնք իրանց մոռածմունքով և գործունէութեամբ՝ մի որոշ դրոշմ են կնքել ժամանակի ողու վերայ, ազդել նաև հնի վերայ և այսպիսով ներկայացել և՛ միտք և՛ գործ սուս մզող:

Մեր վերածնելութեան նորեկ պատմութեան մի-մի մեծ բովէներն են դաքա, որքանով որ այդ վերածնելութիւնը մենք պարբերա-

կան մամուլին ենք պարտական: Այդ արդէն պատմական դարձած մեծ թուականներն են 1858—1864 և 1872—1878 և կամ առ առաւելն մինչ 1880 թւականը, երբ առաջին շրջանում քարոզում էր Նազարեանց Ստեփաննոս՝ իւր «Հիւսիսափայլ»-ով, իսկ երկրորդում՝ «Մշակ»-ը, ունենալով որպէս ղեկավար Գրիգոր Արծրունուն և, իբր աշխատակիցներ կամ պաշտպաններ—գրեթէ ամբողջութիւնը մեր ղեռահաս առաջդիմական ոյժերի, որոնք, առանց անգամ հաստատուն գաղափարական կապերի, առանց որ և է նկատելի կազմակերպութեան, կուսակցութեան մի քանի յատկանիշները զարգացնել կարողացան:

Զարմանալի՝ բան. երկու շրջաններ, իրարից մօտ տասնեակ տարի հեռու, իրար շարունակութիւնն են կազմում, բայց և այնպէս իրարից տարբերւում են գրեթէ ամեն բանով՝ Նազարեանցը մի կատարեալ հակապատկեր Գրիգոր Արծրունուն, «Հիւսիսափայլ»-ը հիմնովին տարբեր «Մշակ»-ից:

Բոլորովին տոգորւած եւրոպական գաղափարներով, ապրելով գերմանական փիլիսոփայութեան, բանաստեղծութեան, գրականութեան և գիտութեան մթնոլորդի մէջ, Ստեփաննոս Նազարեանցը, վարդապետական լրջութեամբ և ուղղամտութեամբ, գալիս և ասում է հայ ազգին.— ա՛ղգ իմ, ես տեսնում եմ, որ դու տգէտ ես, արի՛ քեզ լուսաւորեմ:— Եւ նա ձեռնարկում է «Հիւսիսափայլ»-ին, որտեղ բոլորովին ազատ կերպով տեղ է տալիս և բնական գիտութիւններին և փիլիսոփայութեան, վարդապետական ոճով խօսում է մարդկութեան զարգացման պայմանների մասին, ժողովրդականացնել է ջանում գիտութիւնը և մեր զարի գաղափարները բարոյականութեան, հոգեւորականութեան, աշխարհականութեան, դպրոցի մամուլի մասին. և նա խօսում է մի ոճով, որը ենթադրել է տալիս մի վարդապետ՝ ամբիոնի վերայ բարձրացած, որ դասեր է տալիս մի դահլիճում: որը, գաղափարաբար, հեռաւոր Հայաստանի տեղն էր բռնում: Նազարեանցը պատմում էր և քարոզում իւր «Հիւսիսափայլ»-ում, որպէս վայել է մի վարժապետի, որը գեռ ևս չհասկացող պատանիներ ունի որպէս ունինդիրներ և այն ձևով, որ կասկած չէ ընդունում իւր ասածների ճշմարտութեան վերայ: Նորա ոճը դիդակտիկական էր, որ և շատ յարմար էր գալիս նորա այն կարծիքին, որ ինքը երեւի ունէր իւր մասին, որպէս դաստիարակիչ ազգի:

Նազարեանցի այդ տեսակ վերաբերմունքը դէպի հայ ընթերցողը պէտք է որ շատ վերաւորական չլինէր բուն ժողովրդի համար. այդ ժամանակում վերջինս դեռ ևս ընթերցանութեան այնքան ընտելացած չէր, որ յօդաձևերի մէջ լոկ մտքեր որոնէր: Ժողովրդի այն փոքրաթիւ մասը, որը կարդում էր, լրագրութեան մէջ տեսնում էր մեծ մասամբ միայն ընթերցանութեան նիւթ: Այդ փոքրաթիւ ընթերցողների այն մասը, որը հասկացողութեամբ կարող էր վերաբերել դէպի տպած խօսքը, «Հիւսիսափայլ»-ի մէջ տեսնում էր ժողովուրդը դաստիարակող մի օրդան, որի ղիտաւորութիւնների մաքրութեան համար նոյն իսկ նորա հրատարակչի անունը գրաւական էր: Այդ մասը ընթերցողների ուրախ էր «Հիւսիսափայլ»-ի գոյութեանը, բաժանելով նորա խմբագրի և նորա ղլխաւոր գործակիցների կարծիքները և հայեացքները: Այդ համակրողները կազմեցին յատաճադէմ կուսակցութեան ծուծը, նոցանից դուրս եկան Նազարեանցի օղնականները և նորա մտքի թարգմանները՝ Նալբանդեանց, Միանսարեանց և աւելի քիչ յայտնի Ալիշանեանց Յակովբ և ուրիշներ: Մնում էր անձների մի կարգ միայն, որի դէմ արձակած շանթերը ուղիղ իրանց նշանակին էին ղիտւում: Պոքա կազմում էին այն մտքերի աէր անձների խումբը, որոնց Նազարեանցը խաւարաւորների անունն էր տալիս: Պոքա խոր զգացւեցին, այդ մարդիկ, որոնք կամենում էին որ հայի համար առանձին լոգիկա ստեղծէր, քան ընդհանուր մարդկային լոգիկան: Շնորհիւ այդ կարգի մարդկանց, Նազարեանցի բերանով սկսւած լուսաւորութեան մեծ քարոզը սահմանափակեց մեծ բանակուով թէ ի՞նչ է ազգ և ի՞նչ է կրօն: Պատմական և հասարակական ղիտութիւնները, որոնց վերջին խօսքերը ուզում էր Նազարեանցը հաղորդել հայ ազգին, ենթադրում են հասարակութիւններ, որոնք ազգերի կերպարանք են առած. բարոյական փիլիսոփայութիւնը, որի ուսմունքներից նմանապէս օգտւում էր Նազարեանցը, ենթադրում էր կրօնների գոյութիւնը: Նւ միայն շատ բնական է, որ լուսաւորութեան առաջին քարոզները գալիս հանդիպում են ժողովրդի արդէն կազմած համոզմունքներին՝ ազգի և կրօնի զաղափարների վերաբերեալ: Կրօնի ազդեցութիւնը այնքան խորը տպաւորւած է ժողովրդի ոգու մէջ, իսկ ազդութեան զգացմունքը այնքան մեծ յարակցութիւն ունի նոյն

այն ողու հետ, որ պատմական բաղմամբիւղ երեւոյթներն են բերգործութեամբ, այդ երկու զաղափարները՝ ազգի և կրօնի՝ իրար մէջ ձուլուած են. և միմիայն մօքի սրութիւն ունեցողներն են կարողանում այդ զաղափարները իրարից որոշել: Ահա՛ թէ ինչու, ոչ միայն մեզանում ու միայն Նազարեանցի ժամանակ, այլ և շատ ուրիշ ազգերի մէջ, լուսաւորութեան կուր ընդդէմ խաւարի՝ շուտով նեղացաւ և կենտրոնացաւ կատաղի բանակուի մէջ՝ ազգի և կրօնի իրար հետ ունեցած կապի և նոցա մէջ եղած զանազանութեան մասին: Ափսոսալ պէտք է, որ խնդիրը այնպիսի մի փափուկ հողի վերայ տեղափոխուեց, որտեղ պէտք էր սպասել աւելի թիւրիմացութիւնների, յաճախ կամովի, ուրեմն և նենգամիտ, քան այդ բոլորից կարող էր միտք լուսաւորուել: Դա մի փորձութիւն էր, որից, սակայն, «Հիւսիսափայլ»-ը պատուով դուրս եկաւ, ի մեծ նպաստ հայկական մօքի առաջդիմութեան: Ահա այդ է պատճառը, որ «Հիւսիսափայլ»-ի մէջ հետաքրքրական մասը, այսինքն այն յօդաձևերը՝ որոնք ազահոթեամբ կարող էին կարգացուել, ուրեմն այն, ինչ կենդանի օրգան դարձրեց «Հիւսիսափայլ»-ը՝ հէնց հոգեորականութեան և կրօնական խնդիրներին վերաբերեալ յօդաձևերն էին: Մնացածը՝ գեղեցիկ բաներ էին, բայց որոնք ամսագրի նշանակութիւնը չէին որոշում. նոքա յուզմունք չէին առաջացնում, չնայած որ հէնց նոցա մէջ կարելի է կարդալ Նազարեանցին դրող մտքերը, նորա սկզբունքները, նորա ձգտումները:

Որքան էլ փոքրիկ լինէր այն ժամանակեայ ընթերցողների թիւը, այնու ամենայնիւ բոլոր նոցա համար, որոնք անցած են «Հիւսիսափայլ»-ի բովով—«Հիւսիսափայլ»-ը թողած է մեծ յիշատակներ, արթնացնող տաւալութիւններ, ազդեցութիւն՝ ազնիւ, ուղղամիտ և անվեհեր կուռղի, որը բացառիկ փայլով փայլում էր վեհերոտ, մտածողութեան անսովոր, նորանից անգամ վախեցող ու փախչող մի հասարակութեան մէջ: Նազարեանցի շիջալին պատկանողը՝ անկասկած առաջդիմական էր, անկասկած աւելի լայն մտածելու սովորած էր, ժողովուրդը առաջ մղելու մեթօններին աւելի տեղեակ էր, քան թէ «Հիւսիսափայլ»-ի հակառակ բանակները՝ որոնք բեղմնաւոր սերունդ ստեղծելու անընդունակ էին: Նազարեանցը տեսաւ, որ ոչ մի խնդրին մերձեալ էր կարելի, առանց հանդիպելու այն զարհու-

րելի խոչընդոտին, որ կոչում է խաւար, խաւարամտութիւն՝ ժողովրդից հասկացող ճանաչւած մարդկանց և դասակարգի մօտ: Այդ մարդկանց, այդ խմբի և անգամ դասակարգի բերանն էր Մանդինեանի և յետոյ Սիմոնեանցի «Մեղու Հայաստանի» լրագիրը, որի ղեմ և բնականապէս պիտի մղէր պատերազմը: Այդ հանդամանքում, երբ միտք յայտնելու կարելիութեան համար դեռ ևս պէտք էր մարտնչել, «Հիւսիսափայլ»-ը կարող էր, առանց անհամ լինելու, տարին տասներկու ամիս իւր ճակատին այս բնաբանը կրել:

«Այսուհետեւ ոչինչ եղիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել զիտութեան միացնակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր դադափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետեւ լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան զերութիւնից»:

«Հիւսիսափայլ»-ի ոյժը կայանում էր համարձակ մտքերի անխորհախ, բաց և ուժեղ արտայայտութեան մէջ: Նորա թոյլութիւնն էր՝ ժողովրդական կեանքի անգիտութիւնը, ժողովրդական ոյժերի զնահատման և ուրեմն նոցա ղեկավարելու ընդունակութեան պակասութիւնը և դուցէ այդ ոյժերի նոյն իսկ արհամարումը: «Հիւսիսափայլ»-ը չիմացաւ մտնել ամբոխի խորը խորշերը. նա կարծում էր, թէ ժողովրդին պէտք էր միացն քարոզել, դասեր տալ, առանց անգամ նորան ճանաչելու. բաց երբէք չէր կարծում, որ ժողովրդից ևս պէտք էր բան սովորել: Նազարեանցը ծանօթ չէր քաղաքադիտութեան այլ ու բէնի հետ, նա չէր օգտուում եղածից, ենթադրելով որ ոչինչ չկայ: Այդ սխալ էր և երբէք մի հրապարակախօսութիւն, վարած Նազարեանցի ձեռով, չէր կարող երկար տևողութիւն ունենալ, կատարեալ պահանջ դատնալով ընթերցող հասարակութեան համար: «Հիւսիսափայլ»-ի նշանակութիւնը չէր կարող աճել, այլ, ընդհակառակը, նա կարող էր միացն նւաղել, մի անգամ ընդ միշտ իւր ազդեցութիւնը դործած, վերջացրած լինելուց յետոյ: «Հիւսիսափայլ»-ի կարևորութիւնը կայանում էր հէնց նորանում, որ նորա այդ միանգամայն զարկը մեծ էր և տևողական ազդեցութիւն ունեցաւ: Այդքանն էլ բաւ էր, որ «Հիւսիսափայլ»-ը տեղ բռնէր մեր ազգային առաջդիմութեան պատմութեան մէջ և այդ է, որ մենք հրճւանքով խոստովանում ենք:

«Հիւսիսափայլ»-ի զաղարումից դէս՝ մինչ 70-ական թւականների սկիզբները, մամուլը անբեղմնաւոր եղաւ հայկական կեանքի համար: Հասարակութիւնը ուշադրաւ դրութեան մէջ չէր. եղած թերթերը չիմացան իրանց վերայ ուշք դարձնել, իսկ իրանց բռնած ուղղութեամբ՝ աւելի էլ հեռացնում էին հասարակութեան ուշքը պարբերական մամուլից: Մամուլը դարձած էր թթու ճաշակի ազդասէրների անհետեանք հետաքրքրութեան առարկայ. խօսք ու քարոզի մէջ չէր նշմարւում որ և իցէ նախազծած մեթօդ, անսպթաք ուղղութիւն, վստահութիւն՝ մոքեր յղանալու, արծարծելու և հաստատ կամք՝ այդ մոքերը առաջ տանելու: Եւ այդ մեռելութեան մէջ դոփիւն և թնդիւնով աշխարհ եկաւ «Մշակ»-ը, որի խմբագիրը իւր որոշ տեմպերամենտը մոցրեց լրագրական գործունէութեան մէջ: «Մշակ»-ով սկսեց մի նոր շրջան ոչ միայն մեր պարբերական մամուլի պատմութեան մէջ, որը մեզ այսօր հետաքրքրող առարկան չէ. — «Մշակ»-ով սկսեց մի նոր շրջան մեր ժողովրդի զարգացման պատմութեան մէջ առհասարակ:

«Մշակ»-ով սկսեց մի շրջան, երբ ժողովրդի և ազդի մէջ եղած թմրած ոյժերը կրկին, բայց և աւելի հեռու ծաւալով, քան «Հիւսիսափայլ»-ի ժամանակ, սկսեցին իրար հետ խմբւել, շփւել, զստուել, ընդհարւել, կռւել, իրար համակրել, հակակրել: «Մշակ»-ի կարեւորութիւնը այստեղ նորանումն էր, որ նա ազդի զանազան տարրերը կըրկին անգամ իրար հետ շփեց՝ կարդալ—գրել իմացող հայերը սկսեցին հէնց իրար հետ վիճելով անգամ՝ իրանց ընդհանուր կապը աւելի ճանաչել: Ստեղծւեց մի հետաքրքրական դրութիւն, որի մէջ հայ ժողովուրդը վաղուց չէր եղած: Մամուլը դառաւ առաջնակարգ գործող ժողովրդական կեանքում, նորան ստորադրւեց մատենագրական գրականութիւնը, որը առաջ գերակշիռ նշանակութիւն ունէր ընթերցող հայերի համար, թէպէտ և այն գրականութիւնն էլ, ինքն ըստ ինքեան, մի նշանաւոր տեղ չէր բռնում հայի կեանքում: Եթէ «Մշակ»-ի բռնած ընթացքը դեր խաղաց հայ մարդու մըտաւորական կեանքում, այդ եղաւ շնորհիւ մի հանգամանքի—աւելի, քան երբ և իցէ, հայը տեսաւ այն ամենը, ինչ կազմում է նորա ընտանեկան, հասարակական և կրօնական—բարոյական կեանքը, այդ ամենը, ասում ենք, տեսաւ նա տեղահան եղած, խաղի վերայ դրւած «Մշակ» լրագրից, նորա խմբագրի և աշխա-

տակիրներն զբնի միջոցով: Ամեն անգամ այդ տեսակ վարեողութիւնը նման հետեւանքներ չէր ունենալ, ինչ ունեցաւ «Մշակ»-ի բռնած ընթացքը իւր հրատարակութեան առաջին տարիներում — հայ ժողովրդի համար: «Մշակ»-ի առաջին տարիների հրապարակաստութիւնը կուսութեան նշանակութիւն ունեցաւ ոչ այնքան խօսքի զուտ բովանդակութեան շնորհիւ, որքան շնորհիւ այն կօնուրաստի, որ կազմում էր «Մշակ»-ի խումբը՝ մնացեալ հայութիւնից: Եթէ այդ խումբը մնար իւր մէջ կղզիացած, երբէք «Մշակ»-ը չէր ձեռք բերիլ իւր վաղեմի ազդեցութիւնը. բայց նա, այդ խումբը, սուարացաւ օրէցօր, իւր կողմը զրաւելով երիտասարդութեան սուարագոյն մասը, իսկ զոցա հետ և այն բոլոր մարդկանց, որոնց մտածմունքները և դործունէութեան ցանկութիւնը կաշկանդւած էին ամուր շղթաներով, այն կապանքներով, որոնցով նոցա վաթաթել էր հնադարեան բուռնիան, ասիական դանդաղկոտ ոգին, մինչ վերին աստիճան փուտ և եսական աղայականութիւնը, մամոնային անմիտ երկրպագութիւնը, կեղծ կրօնականութիւնը՝ շահախնդրական աստառով: Այն ամենքը, որոնք ճնշւած դրութեան մէջ էին, դուռն «Մշակ»-ի մէջ իրանց ապահով ապաստանը: Եւ ով ունէր մի դանդառ — արդարացի թէ անարդար — բաւական էր, որ այդ մի դանդառ լինէր, ուրեմն բոլոր մի որ և է կարող անձի կամ զոյութիւն ունեցող հիմնարկութեան դէմ՝ նա ապահով էր, որ «Մշակ»-ում նորա տողերը կ'զետեղւեն:

«Մշակ»-ը սկսեց այդպիսով մի անխնայ, բայց և կոյր պատերազմ զոյութիւն ունեցող ազգային և ժողովրդական կարգ եւ կանոնների և սովորութիւնների դէմ: Նա ունեցաւ բազմաթիւ կուսակիցներ ժողովրդի ամենազնահատելի ոյժերի կողմից լոկ այն պատճառով, որ շատերը և շատ շատերը այն հայեացքի էին, որ մինչև կ'ախրապետի մեզ մօտ հնաւանդ ճնշող ոգին, ոչ մի ազատ և անկախ մտածմունք չէ կարող բեղմնաւոր արդիւնք ունենալ մեր հասարակութեան մէջ: Իսկ որտեղ կեանքը այդպէս է պայմանաւորւած, առաջդիմութիւնը լոկ երազ կ'մնար և առանց առաջդիմութեան պայմանի՝ ոչ մի ազգ չպիտի պարծենայ իւր զոյութեամբ: Ոչ թէ «Մշակ»-ի յարձակումները բոլորն էլ արդարացի լինէին՝ — ոչ. բայց ո'չ մի ծայրայեղութիւն բաւական չէր համարւում «Մշակ»-ի համա-

կրողների կողմից, երբ նոքա իրանց աչքի առջև ներկայացնում էին հակառակ կուսակցութեան պատկերը, որ զժնեաց էր նոյն իսկ իւր զաղափարական ոչնչութեամբ և զարհուրելի՝ նորա անխնայ հալածանքով ամեն մի նորութեան դէմ: Դա՝ «Մշակ»-ի tabula rasa-ի ժամանակն էր և հէնց այդ վերումն էր, որ «Մշակ»-ը հիացումի արժանի յատկութիւններ ցոյց տուց, իսկ Գրիգոր Արծրունին—իւր արտիստական տաղանդը:

«Մշակ»-ը փայլեց իւր հերքողական կողմով: Համեմատ իւր դերին, «Մշակ»-ի խմբագիրը բանեցնում էր յարձակողական մի ոճ, որը այնքան սաղում էր նորա «մորակող» ուղղութեան: Այդ մեզ համար նոր ոճի յատկանիշներն էին՝ հակիրճութիւն, անպաճոց՝ հարթութիւն, պարզութիւն, որ յաճախ բնութեան մերկութեան էր հասնում, անխտրութիւն բառերի մէջ, որ իւր միակ արդարացումը գտնում էր անհրաժեշտ դառած մի կուլի աջողութեան պայմանների մէջ. անգամ խօսքերի և բառերի իմաստի սխալ ըմբռնումն, դէպի որը համակրող կուսակցութիւնը ներողամիտ էր գտնում՝ ժամանակը եկած չհամարելով համեմատապէս մանր հաշիւների յետեւից ընկնելու. և վերջապէս, զրելու ճաշակի կատարեալ բացակայութիւն, որ արտայայտում էր անվերջ կրկնութիւնների մէջ. կրկնութիւններ, որոնց աղեղութիւնը ներում էր և ձանձրալիութիւնը անհաշիւ անցնում՝ սոսկ այն ինտերեսի պատճառով, որ ունէին գրեածների հիմնական մտքերը, գիտաւորութիւնները: Իսկ այդ գիտաւորութիւններին համակիր էր մեծ կուսակցութիւն:

Համարձակ ոճի հետ զուգընթացաբար գնում էր և համարձակութիւնը մտքերի, որոնք գրաւում էին ընթերցողի միտքը իրանց տարրականութեամբ մի կողմից և առերևոյթ տրամաբանականութեամբ: Առաջ եկաւ սկզբունքների վերայ հիմնած լոգիկական դատողութեան եղանակը, որը, իւր մեծ արժանաւորութիւնների հետ միասին բանասկուական խնդիրներում, այս յարմարութիւնն էր ներկայացնում, որ նա քողարկում էր իսկական կեանքի, ժողովրդական իսկական երևոյթների անգիտութիւնը «Մշակ»-ի խմբագրի կողմից: Այդպիսով է, որ «Մշակ»-ի մէջ գերակշռում էր դատողութիւնը a priori, որ շատ խնդիրներ կարճ կարելու կարելիութիւն էր տալիս, ի մեծ նպաստ դասի պաշտպանութեան՝ ճշմարտութիւնը լոկ արտա-

քին լողիկայով չափող նորասի պատանիներին և, եթէ ոչ ուժեղ մտածողութեան սովոր, բայց և այնպէս ձգտող մարդկանց համար:

Այսպիսով ահա՛, հայ ժողովուրդը անցաւ «Մշակ»-ի շօլայի բովով մի քանի տարիներ շարունակ և սովորեց այն մտքին, որ ամեն ինչ՝ մեր կեանքի վերաբերեալ, կարելի է խնդիր շինել, կարելի է քննադատութեան ենթարկել և որ կեղծ են այն մարդիկ, որոնք ժողովրդի միտքը թմրութեան մէջ են պահում և իրանք էլ հէնց այդ խաւարի մէջ մնում, թէ ինչ է՝ այս ինչ կարգը, կանոնը կամ սովորութիւնը հայի պատմական աւանդութեամբ սրբազործւած է, մանաւանդ այն երեւոյթների նկատմամբ, որոնք հային արգելում են ընդհանրութիւնից փորձւած և լաւագոյն համարւած ճանապարհով ընթանալ:

Ահա՛ այդ է, որ մենք անւանում ենք «Մշակ»-ի շօլան և այդ մտքով է, որ ասացինք թէ «Մշակ»-ը դեր խաղաց մեր ազգի զարգացման պատմութեան մէջ: «Մշակ»-ը խնդիրներ չլուծեց, բայց ցոյց տւեց, որ խնդիրներ կան: Բայց այդ գաղափարի եռանդի մէջ նա այնքան հեռու գնաց, որ մինչև անգամ իրան անձնատուր արաւ մի տարօրինակ մոլութեան՝ խնդիրներ յարուցանել—որտեղ այդ չէր էլ հարկաւոր: Թերթի խմբագիրը մինչև անգամ այնքան խնդրատէր դառաւ, որ հաստատ կարելի էր ասել, թէ նորան հետաքրքրողը ոչ այնքան բուն խնդիրն էր, նորա բովանդակութիւնը, նորա լուծումը և նշանակութիւնը առհասարակ, որքան ցանկութիւնը մի որ և իցէ նորութեամբ պարծենալ իւր ընթերցողների առջև:

«Մշակ»-ի մտքի այդ անբովանդակութիւնը սկսեց երևալ այն ժամանակ, երբ արդէն հակառակ կուսակցութեան, այն է՝ «Մեղու» լրագրի գաղափարների փոտութիւնը բաւականաչափ պարզւած էր և երբ այդ աւելի ապացուցելը և անգամ այդ խնդրի մասին խօսելը դարձաւ ձանձրալի: Մինչև այդ ընդհանրապէս «Մշակ» լրագիրը իսկական օրդան էր հայ առաջապէս կուսակցութեան և մինչև այդ ընդհանրապէս «Մշակ»-ի նշանակութիւնը պատմական էր: Այդ ընդհանրապէս «Մշակ»-ի պատմութիւնը կարող է հետաքրքրել շատ շատ լրագրական զործի պատմութիւնը. նա դառաւ լրագիր—խօսքի սովորական նշանակութեամբ, և գաղափարեց լինել օրգան հայկական մտքի:

«Մշակ»-ի անկման նշանները սկսեցին երևան դալ իւր հրատա-

բակուլթեան սկզբից արդէն 4—5 տարի յետոյ: Բայց այդ անցաւ աննկատելի կերպով, շնորհիւ այն բարձր ինտերեսի, որ ներկայացրեց Ռուս-Տաճկական պատերազմը: Այդ անցքի բարձր ինտերեսի առջեւ հեղացան կրքերը առհասարակ: Պատերազմի ժամանակից զէս արդէն «Մշակ»-ի հետաքրքրականութիւնը պահպանուեց շնորհիւ Բաֆֆիի, որովհետեւ տաղանդաւոր վիպասանը կարողացաւ, աւելի քան յօդաձագրական հրապարակախօսութիւնը, օգտուել նորեկ պատմական անցքերից, և այսպիսով «Մշակ»-ի զրեթէ ամբողջ էութիւնը մտաւ «Բանասիրականի» մէջ: Այդ ժամանակից արդէն «Առաջ»-նորդը սկսեց ծառայել միմիայն լրագրի անկման իբր պայացոյց, մերկացնելով խելացի և իմաստասէր հասարակութեան առջեւ նախկին անվեհեր մարտնչողի դրական մտքերից զուրկ լինելը, նորա բոլոր մտաւոր անանկութիւնը:

Եթէ «Մշակ»-ը փայլեց սկզբնական տարիներում իւր կատարած այն պատմական դերով, որ մենք վերը որոշեցինք, անշուշտ այդ պէտք է վերագրել այն հանգամանքին, որ հայ հասարակութեան մէջ կային նոր ուղղութեան ձգտող և տրամադիր բազմութիւ. տարբեր: Բայց որ մեզնից վերը որոշած կռիւ յաղթանակով «Մշակ»-ը և նորա բոլոր նախնին կուսակցութիւնը զլիաւորապէս պարտական են «Մշակ»-ի խմբագրի բնաւորութեան անյուղողութեան՝ միացած նորա ընդհանուր և բազմակողմանի զարգացման հետ — այդ միանգամայն զուրս է ամեն կասկածանքից: Բայց և այն ճիշտ է և զուրս ամեն կասկածանքից, որ այդ բնաւորութիւնը ոչ այն լայն բնաւորութիւնն է, որ պահանջում է ժողովրդական առաջնորդութեան համար և ոչ էլ Արծրունու ընդհանուր և բազմակողմանի զարգացումը այն խորութիւնը ունի, որ պահանջում է ժողովրդական կարեւոր խնդիրները քննելու համար: Զարմանալի է, որ այն մարդը, որը տաղանդ ցոյց աւելց ամեն բանից խնդիր շինելու, բոլորովին զուրկ երևաց ամեն ընդունակութիւնից, խնդիրները ուղիղ դնելու և մանաւանդ, նոցա քննադատելու: Վարպետ յարձակման մէջ, «Մշակ»-ը, շնորհիւ նորա ղեկավարին, չկարողացաւ կեանքը ըմբռնել, ոչ թէ միայն տեղեկութիւնների պակասութիւնից — այդ հեշտ լրացնելու գործ էր, — այլ նորա, «Մշակ»-ի խմբագրի, ոգու հիմնական յատկութեան շնորհիւ, որ անփոփոխելի մնաց, որքան էլ

նորա վաղեմի կուսակիցները ցաւէին այդ բանի համար և հերոսական ջանքեր գործ զնէին «Մշակ»-ը արդէն ակնյայտնի դառած կորուստից փրկելու:

Այդ անկումը արդէն կատարւած իրողութիւն էր 70-ական թւականների վերջում: Բայց կուսակից գրողների անցուսահատութիւնը և մորմոքեող վիշաք դրդեցին նոցա մի վերջին անգամ թեւ տալ այդ անժամանակ դարձած լրագրին, բայց, աւա՛ղ, միմիայն այն համոզմունքին հասնելու համար, որ նա արդէն իւր բոլոր ոյժը կորցրել է հայկական մտքի օրդան լինելու և հասկանալու ոչ միայն ժամանակի ոգին, այլ նոյն իսկ իւր վաղեմի բարեկամների լեզուն: Կուսակցութիւնը, զգոյշութեամբ սկսեց լուել և համբերել, անկարող լինելով մօտենալ գոյութիւն ունեցող ոչ մի հրատարակութեան: Յրեց հօտը, անհովիւ և անապաստան, մորմոքը սրտնեւում, անկարող գրիչ շարժելու,— իրանց օրդանի հետ կապող գաղափարական կապերը անվերադառնալի կերպով խզւած տեսնելով:

Անպատմելի է այն տարտամ դրութիւնը, որի մէջ դեգերում է հայ երիտասարդութիւնը վերջին 7—8, բայց մանաւանդ վերջին 4—5 տարիներում: Բայց նոյն այդ լուութեան շրջանումն է, որ հայ նոր սերունդը ցոյց տւեց իւր բոլոր բարոյական մեծութիւնը: Այդ երիտասարդութիւնը վերքը սրտի մէջ, բայց և աղնուութեան կնիքը ճակատին, մի ապացոյց տւեց, որ ո՛ւմ հետ էլ որ նա լինի, հայկական զարգացման զաղափարը ոչ մի մարդու հաճոյականութեան զոհել տրամադիր չէ և որ նորա վերայ յոյս դնել կարելի է միմիայն, երբ զաղափարը իբր դրօշակ ձեռքում ունիս բռնած: Իսկ այդ պայմանով՝ նա ընդունակ է անգամ անձնւիրութեան և ինքնամոռացման առաքելութեան:

Այս օրւայ «Մուրճ»-ը ծնունդ է արդէն բովով անցկացած այն հայ երիտասարդութեան, որը զարգացման դրօշակը կրել է անձնւիրաբար չլնթացս տարիների և որին նա անկումից ազատել է ուզում: Մենք պատկանել ենք այդ խմբին, իսկ վերջին հինգ-վեց տարիներում

բոլորովին ապրել ենք նորա կեանքով, բաժանելով ընդհանուրի բոլոր զգացումները թէ՛ ուրախութեան և թէ՛ վշտի բուլկներում: Մենք մօտիկուց ծանօթ ենք բոլոր այն փորձերին, որ արեցին այդ տարիներում՝ դուրս բերելու համար նոր սերունդը նորան ճշող կաշկանդումից: Ուրիշ շատերի հետ միասին մենք երգար սպասում էինք մի նոր թերթի հրատարակութեան կոչումն ունեցող մարդու ձեռքով, — մարդու, որ ըմբռնած լինէր ժամանակի պահանջը, ընդունակ՝ հեղինակօրէն առաջնորդելու հասարակաց կարծիքը, թէ օժտւած լինելով դորա համար անհրաժեշտ խոհականութեամբ և զիտութեամբ և թէ ներկայացնէր բարոյական գրաւական իւր ուղղամտութեան հասարակաց գործերի մէջ:

Սպասում էինք մի թերթի, որը կարողանար հաւատո ներշնչել պապանձման մասնւած հայ մտածող երիտասարդութեան և նորան կրկին ասպարէզ հրաւիրէր՝ բաժանել ազգի՝ հետ իրանց մտածմունքները, իրանց աշխատութիւնները և, փոխադարձաբար, որ այդ թերթը նոցա մէջ եռանդ ծնեցնէր և նիւթ տար նպատակադարմար գործունէութեան:

Երիտասարդութեան այդ լուռ եռման ժամանակ յղացաւ մեր մէջ ապագայ «Մուրճ»-ի գաղափարը, որ և լուծեամբ փայփայեցինք քանի մի տարի շարունակ, զգալով մեր բոլոր պատասխանատւութիւնը, որ կապւած է այդ տեսակ գործի հետ այժմեան ժամանակում և սպասելով աւելի կարող մարդու ասպարէզ դուրս գալուն: Հանդամանքները երևի ուղեցին բանը կարգադրել այնպէս, որ մենք լինենք այդ ծանր լուծը կրողը: Եւ եթէ ճշմարիտ է, որ այդ տեղ քիչ չենք մեղաւոր մենք ինքներս, — միւս կողմից մենք փճուեցինք այդ սուրբ գործի համար անել մեզնից կախածը և զիմել կառավարութեան «Մուրճ»-ի հրատարակութեան թոյլտւութեան խընդիրքով: Եւ ահա թէ մեր խնդրագրի մէջ ինչպէս ձևակերպեցինք մեր ցանկութիւնը ծառայել հայի հանրական գործին:

Յանկութիւն՝ օգնել կառավարութեան, ուսումնասիրելով տընտեսական և հասարակական ինդիւրները, որ հետաքրքրում են մեր երկիրը, գործի հրաւիրելով լուսաւոր ոյժերը հայկական հասարակութեան, ոյժերը, որոնք ընդունակ են իրանց մտքերը բացալոյցունել տպագրական խօսքով, մէկ կողմից, — իսկ միւս կողմից ցանկութիւն՝

մղել ժողովուրդը դէպի խելացի աշխատանքի շաւիղը և տալ նորան օգտակար ընթերցանութեան նիւթ.—այդ երկկողմեայ ձգտումը կ'ծառայէ որպէս հիմք «Մուրճ» ամսագրին:

Եւ այդպէս էլ պէտք է լինի: Մենք հրաւեր ենք կարդում մտածելու ընդունակ բոլոր գրող մարդկանց՝ մեզ հետ միասին ուսումնասիրել այն բոլոր խնդիրները, որոնք մի ազգի համար ունին կենսական հատարակական նշանակութիւն: Այդ ուսումնասիրութիւններից, որ մենք կ'անենք եռանդը սրտներումս և հայրենիքին ծառայելու միտքով արութեամբ որպէս վերին պարգև, կ'բղխեն մեծամեծ հետեւանքներ հայ ազգի մտաւոր, հոգեկան զարգացման և բարգաւաճման համար: Թո՛ղ կառավարութիւնը մեր միջոցով ճանաչէ հայ ազգը իւր կարիքներով, իսկ հայ ազգը մեր միջոցով կռէ կառավարութեան դիտաւորութիւնները նորանկատմամբ: Լինենք թարգման հայ ազգի կարիքների, աշխատենք, մեր ազգը ուսումնասիրելով՝ նորա շահերը պաշտպանել: Յորդորենք նորան մտածել ուղիղ, զգալ ազնիւ զգացումներ, հարթել ջանանք նորա առաջանալու ճանապարհները, ներկայացնենք նորան այն բոլոր մեծ նպատակները, որոնց նա ընդունակ է ձգտել, թէ՛ որպէս անդամ ընտանիքի, համայնքի, ազգութեան և թէ՛ որպէս քաղաքացի տէրութեան և անդամ մարդկութեան:

Մինչև այժմ մեր հրապարակաստութիւնը փակւած է եղել գաղափարների համեմատապէս նեղ շրջանակի մէջ. նորան զբաղեցնող խնդիրները եղած են՝ հայը, որպէս իւր ազգի անդամ, հայը, որպէս կրօնական համայնքների անդամ: Այդ շրջանակի մէջ, պատահական գրւածներից դուրս, հայկական հրապարակաստութիւնը իւր մշտական նիւթ չինել է հայ լեզուն, կրօնը և եկեղեցին, իրանց յարաբերութիւններով դէպի ազգութիւնը և վերջապէս՝ դպրոցը:

Ամեն բան, ինչ դուրս է այդ շրջանակից, հայկական գրականութիւնից սնուող սովորած է համարել իբր ոչ իւր խելքի բան, իբր ոչ իւր իրաւունքի բան: Այդ նորանից է, որ հայը դեռ ևս սովորած չէ իւր բարոյական էութիւնը ամբողջութեամբ ըմբռնել:

Եւ դեռ այդ սակաւաթիւ խնդիրներն էլ քննւած են մեր զբոսականութեան մէջ ոչ այն ընդարձակութեամբ, որին նոքա կարօտ են՝ կատարելապէս պարզւած լինելու համար. նոքա շօշափւած են միմեայն այն շափով, որքան պահանջւում է որ նոցա սուլիւթով հա-

կաճառութիւններ սկսւեն, բայց արդէն, աւա՛ղ, ոչ թէ խնդիրները պարզելու, թիւրիմացութիւնները հեռացնելու մոքով, այլ որ կուղիները իրանց ղիալեկաիկական ճարպիկութիւնները իրար ցոյց տան, դարձնելով հայկական գրականութեան ասպարէզը մի կրկէս՝ որտեղ հասարակութիւնը միմիայն նայելու և ցնցւելու գործ ունի, բայց ոչ երբէք իդէալներ մշակելու:

«Մուրճ»-ը վրիպած կ'լինի իւր նպատակների մէջ, եթէ չճաջողի նորան ընդարձակել հայ հասարակութեան մտաւոր հօրիզոնը, ներկայացնելով նորան դարուս ոգին՝ իրագործւած այն հաստատութիւնների մէջ, որոնք իշխում են նորա հասարակական, անտեսական և քաղաքացիական կեանքի վերայ: Բայց այդ բոլորը կ'աշխատենք անել հիմնաւորապէս, որպէս վայել է մի ամսագրի, որ նշանակւած է մի լուրջ ազգի համար, ոչ ցոյցի համար, այլ իբրև անհրաժեշտ պարտականութիւն: Միմիայն այդ պայմանով հայը կ'թօթափի իւր վերայից այն կաշկանդումը, որի շնորհիւ նորա մէջ զարգացել և փնացել է մտքի և ոգու ստրկութիւնը, — այդ մեծ խոչընդոտը ամեն տեսակ առաջդիմութեան:

Ուղղամտութիւնը կ'լինի մեր բոլոր գործաւնութիւնների յատկանիշը թէ մեր վերաբերմունքի մէջ դէպի «Մուրճ»-ի մէջ շարուցած կամ քննադատւած խնդիրները և թէ դէպի ամսագրի աշխատակիցները և հասարակաց գործիչները: Մենք բոլորովին տոգորւած ենք այն մոքով, որ ամեն բեղմնաւոր միտք հարստութիւն է՝ պահպանման և արդիւնւաւորւելու կարօտ: Բայց մեր աչքում ոչ միայն միտքն է մի հարստութիւն, այլ և նորա ծնողը և արդիւնաւէտ կացուցանողը: Իսկ զոքա՝ մարդիկ են և հաստատութիւններ՝ մարդկանցով կառավարւած: Մենք ոչ միայն մտքերի յետևից ենք ընկնելու, այլ և մարդկանց, որոնք այդ մտքերի կրողներն և շնորհքների տէրերն են: Մաղթո՛ւմ ենք Բարձրեալին, որ աշխատակիցների շատութիւնը և հասարակութեան համակրութիւնը միջոցներ տան այս ամսագրին, որպէս զի սա կարողանայ կատարւող գործերից և կառարող անձերից այնքանին տեսնէ և ճանաչէ, թէ բարին և թէ չարը, որքան պէտք է, որ «Մուրճ»-ը հայկական կեանքը բովանդակող օրգան ճանաչւի: Իսկ այդ պայմանով, «Մուրճ»-ը կուլւած կ'լինի երկար տարիներ իւր զոյութիւնը պահպանել ի մեծ նպատակ մեր ազգի առաջդիմութեան:

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Ն Ա Ի Ա Կ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Վազի՛ր, իմ նաւակ, հասի՛ր ծովափին՝
Ալիքի կուրծքը պատառոտելով.
Այնտեղ թո՛ղ հանգիստ գրտնեմ վերըստին՝
Իմ տառապանքը ծովին յանձնելով:

Իմ շուրջը խաւար, ահւելի գիշեր,
Հողմերի սաստիկ ահեղ մըռնչիւն.
Չորս կողմըս ջրեր եւ անվերջ ջրեր,
Չորս կողմըս անհուն սև տարածութիւն:

Բայց այնտեղ, հեռու, աստղիկի նըման
Փայլում է մի լոյս պայծառ ու մենակ.
Այն նայում է մեզ փարոս փրկիութեան—
Վազի՛ր գէպի նա, սիրո՛ւն իմ նաւակ:

Թո՛ղ մըռնչելով սև ալիքները
Սոսկալի անդունդ բանան առաջիս.
Թո՛ղ խաւարի մէջ վայրագ հողմերը
Սպառնական ձայնով սուլեն ականջիս:—

Դեռ յոյս ունիմ ես սըրտումըս պահած,
Որ միշտ ինձ առաջ առաջ է տանում.

Եւ քանի նա կայ, քանի չէ մարած,
Ոյժ կայ վարելու և իմ ձեռքերում:

Եւ խաւարը չէ յաւիտենական,
Յաւիտենական չէ ալէկոծում.
Ես հաւատում եմ արևի ծագման,
Ես հաւատում եմ ծովի հաշտելուն:

Բաղձալի ափին կը հասնեմ շուտով,
Շուտով կը տեսնեմ սիրելի դէմքեր.
Եւ նոքա անկեղծ, ուրախ ողջունով
Կը լուսաւորեն մըռայլ իմ պատկեր:

Վազի՛ր, իմ նաւակ, հասի՛ր ծովափին՝
Ալիքի կուրծքը պատառոտելով.
Այնտեղ թո՛ղ հանգիստ գըտնեմ վերըստին՝
Իմ տառապանքը ծովին յանձնելով:

Մօսկուա. 1888 թ. հոկտեմբ. 20-ին:

Ծ Ո Վ Ը

Ա Ն Ի Ք Ե Ա Ն Ի

I

Նայում եմ ծովի ծածան երեսին՝
Կորչում են իսկոյն պատող ինձ մտքեր,
Նորա ալիքներ շարժող միասին
Որսում են հոգիս, գրաւում իմ աչքեր:

Շողեր արևի զարկում են մեղմիկ
Ծովի մանրածուփ շարժուն հայելուն.
Նայում եմ երկայն լռիկ ու մնջիկ՝
Իիտում եմ անյագ և չեմ կշտանում:

Ահա մի ալիք շողաց առջևիս.
Եւ ես դէպի նա աչքերս դարձուցի.
Ալիքը, կարծես, ժպտաց երեսիս,
Ես ինձ մոռացայ՝ ուրախ ճչացի:

Ձրուած աչքերով նայում եմ ծովին՝
Բայց չկայ իմ պըտած ալիքը սիրուն.
Յանկարծ նա կորաւ, հանգաւ գլխովին,
Բռնեց նորա տեղ ուրիշը փայլուն:

Անվերջ են խաղեր, շարժում ջրային.
Երկայն նայելով՝ ես ինքս, կարծես,
Ապրում եմ անվերջ կեանքով ծովային,
Զգում եմ օրօր, ծփում եմ նայնալէս:

Ծովի անսահման ոյժի առաջև,
 Ինձ թոյլ եմ զգում, անույժ, փոքրոգի.
 Գիտեմ, որ ալիք անդամ մի թեթև,
 Կարող չեմ փոխել ըստ իմ հաճուքի:

II

Սլանում է արագ կոկիկ շագենաւ,
 Տանում ինձ հեռու գէտի կղզիներ.
 Ինձ քաղցր է թւում այգալէս ճեմարշաւ,
 Ծնում է իմ մէջ լանդուզն միտումներ:

Տես. նաւը ահա ալիք է ճեղքում,
 Գիտէ նա շաւիղ ուղիղ պահպանել.
 Մեծ ծովն ետեից մռունչ է հանում,
 Բայց մեզ նա արգելք կարող չէ լինել:

Եւ ծովը նաւի տակ շատ է գալարում,
 Եւ մէջք ուռեցնում, ընկնում, բարձրանում.
 Արդեօ՞ք կլանել է մեզ աշխատում,
 Թէ զուարճ և ուրախ նա պար է խաղում:

Այդ մեք չ'գիտենք և չենք անհանգիստ,
 Առաջ ենք գնում անհոգ մեք ամենք.
 Բայց այն լաւ գիտենք, որ այդ ահալից
 Ծովին իշխելու մեք էլ ոյժ ունենք:

Յ Ե Յ Ե Ր

Վ Է Ա

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Յ Ի:

Ն ու է ը Գ ա ը ը է է Ս ու ն ղ ու է Է ա ն ջ ի ն,

Նոյրա 25-ամեայ յօրհիւանի առթիւ:

Ա

Ո Ւ Ր Բ Ա Թ Ա Խ Օ Ս.

Արարատեան նահանգի մեծ զիւղերից մէկի բնակիչ էր Պետրոսենց Սամիսոնը: Նա հօր մինուճար էր: Նա զիւղի պատուական համարուած երկրասարգներից մէկն էր. իգիթ, կորիճ ջահէլների մէջ առաջիններիցն էր, ընկեր — հարեանի, թաց ու թուշի (հասուհայի) սիրելին էր, մեծ ու փոքրի պատիւը ճանաչող էր:

Սամիսոնը զիւղի առաջաւոր տների զաւակ չէր, բայց վերջիններիցն էլ չէր, միջակ կարողութեան տան որդի էր, յարգելի ու պատուելի մնադործ Գալօյի, կամ ինչպէս ամբողջ զիւղը կոչում էր, Գալ — ափունի տղէն էր:

Ընկերական խմբակներում՝ երեկոցեան ոտքը խաղաղութիւնը յետոյ՝ երբ փողոցները դատարկուում էին և երթևեկութիւնը մնում էր միայն ազափ տղէքանցը, Սամիսոնն անբաժան մասնակից էր:

Բայց նա զիւղը սասանեցնող խմբակների անդամ չէր, այն փչացած, լիտուած և զզուելի տանու գողերի, որ դուրսը դաշտումը մի զինաւորուած թուրք ասենելիս՝ կամ քարերի տակ ու փոսերի մէջ

կը մոնեն կամ երկշտուութիւնից լեզուները կը կապուի, անցորդի ձիու ուքի տակը կ'ընկնեն, պռօշները կը պատուուի, արիւնը կերթայ և ա'լ, աղայ (ա'ա, ա'բ) ասելով իրանց հրացանն ու զէնքերը միամիտ ճանապարհորդին կը տան ու կը դնան զիւղի մէջ կը պարծենան, որ Նդիկը, Խէշօն կամ Քեարամն իրանց թալանեց: Սամիսոնն ասում էր այդպէսներին, որոնք զուրսն այն աստիճան կնատ են վարուում, իսկ զիւղումը լեզուներն երկու զազ մեծացնում են, ո'չ մեծ են հարցնում, ո'չ փոքր, ամեն բանի մէջ խառնուում են, զոռում են, հայհոյում են, կռիւ են քցում և վերջը սպառնալիք տալով ժողովում են միտսին, խորհում, թէ ո'ւմ հանգստութիւնը խանգարեն, ո'ւմ հաւերը զողանան, ո'ւմ խտրի դէզերը, հասած բամբակի արտերը կրակ տան, ո'ւմ այգու խաղողի պողատու որթերը կիսահաս խաղողով արմատից՝ հողի բերանից կտրատեն, թափեն ու իւրեանց վրէժն տանեն:

Ո՛չ, Սամիսոնը հեռի էր այգեպէսներից. նա պատկանում էր այն խմբին, որոնք տանը՝ զիւղամիջին Աստուծոյ գառն են, ծնողների ու ծերունիների հնազանդ, իսկ զուրսը աւազակների դէմ ճակատէ ճակատ կռուում են, մեռնում են՝ զնդակը կրծքից ստացած՝ կամ ցրուում են հրոսակների բազմութիւնը:

Սորանք էլ ունէին իւրեանց ժողովները. պատանեկական անմեղ զուարճախօսութիւնների ժողով էր այն. սրանք էլ իրանց հաշիւն ունէին — ո'ւմ աղջիկն է սիրուն, ո'րը ո'ւմ բաղդ կը լինի, ո'վ կարող է Նազլուի աղջիկ Սիրամի սիրտը զողանալ, Սիրամի փոքր եղբոր ձեռքով նրան կարմիր խնձոր ուղարկել և այլն:

Էս խմբակի մէջ ամեն մէկն իւր սրտի զազանիքը յայտնում էր. մէկը պարծենում էր, որ եթէ չը տան՝ կը փախցնի, միւսն ուխտում էր սուրբ Կարապետի պասը եօթը տարի պահել, եթէ իւր սրտի առարկան իրան վիճակուի, մէկն ա'խ էր քաշում, միւսը սիրտ էր տալիս, մի երրորդն էլ լուռ լսում էր:

Այս վերջինների կարգիցն էր մեր Սամիսոնը. նա միշտ լուռ էր, միշտ լսում էր, շատ շատ՝ մի բառով իւր կարծիքը կը յայտնէր: Այդ էր պատճառը, որ նա իւր ընկերներից ստացել էր «Ուրբաթախօս» մականունը և անդոհ չէր:

Եթէ յանկարծ ընկերի մէկը խօսքը Սամիսոնին դարձնէր ու

հարցներ, թէ դո՞ւ ումն ես սիրում, այս կողմից միւսը ձեռաց մէջ կը խառնուէր, թէ է՛հ, դրան ի՞նչ ես հարցնում, չը գիտե՞ս, որ դա ուրբաթէ ուրբաթ կը խօսի, դա ճգնաւոր է, դրանը պատ օրն է:

Այդ նկատողութեան դէմ Սամփսոնը քթի տակին կը ժպտար ու կասէր, որ ուղիղ է:

— Մեր տղէ՛ք, մի եղալի թիքաց ա մենծանում, խօսք բաց արեց մի երեկոյ խմբակի անդամներից մէկը. էս ձմեռ Ալէքեանց Բարսեղի աղջիկ Սօնէն իրար միտ կոծելու պատճառ կը դառնայ. ինքը սիրուն, Բարսեղի էլած չէլածն էլ շալակին. նրա մէրն էլ պաղողը չի:

Լա՛ւ, որ սաստիկ մոլթը գիշեր էր, մի քիչ էլ ցուրտ էր, ամենքն էլ ետփունջիքը զլիններին էին քաշել ու քշփշում, թէ չէ մեր Սամփսոնի կերպարանքից ընկերները կը վախենային:

Նորա անձի մէջ սարսուռ անցկացաւ:

— Մօտ եկողի սիրտ ու թոքը խանչալովս կը թափե՛մ, դուրս պրծաւ յանկարծ ընկերներից մէկը՝ Դօնդարենց Ասօն:

— Սրա՛ն մտիկ տուէք, տօ՛, դու զղրի ձէն չես լսե՞լ, չե՞ս իմանում, որ Սօնէն մինուճար ա ու աշխարհքի մլքերի տէրը, դու քանի՞ զլխանի ես, որ զլափու, սուգիէքանց ու հարուստների ատամներիցը Սօնա դուս քաշես:

— Ձեզ ասում եմ, որ Սօնէն իմն ա, ոչով չի կարող տանիլ:

— Ը՛...ը՛...ը՛... մի շշուկ դուրս եկաւ Սամփսոնի բերանից, բայց նորա լեզուն կպաւ, ոչինչ չը կարողացաւ ասել:

— Ի՛նչ ես կմկմում, ա՛յ ուրբաթախօս, մի պողոտանց բարութունիս քցելու, մի խօսք ունիս ասելու, ասա՛ ու պրծի էլի՛:

Սամփսոնը ոչինչ չի խօսում:

— Տօ՛, քեզ չեն ասո՞ւմ, ձեռքը քաշեց Ասօն, դու ի՛նչ մոքի ես, կարա՞մ տանել Սօնին, թէ...

Ասօն խօսքը չը վերջացրեց, նա յանկարծ ճչաց.

— Վա՛հ, մեր տղէ՛ք, սա մահուան զոլմանի ա դիպել, մի տեսէք ի՞նչ օրումն ա:

Սուտ չէր ասում Ասօն. Սամփսոնը զընզըր-զընզըր զողացնում էր:

— Էս ի՛նչ ա տօ՛, հիւանդ հօ չե՞ս, կուզես՝ ցրուինք, զնա՞ տուն, ամեն կողմից դարձան դէպի Սամփսոնը:

— Տղէք ջա՛ն, ձեզ մատա՛ղ, հագիւ մրթմրթաց Սամփսոնը:

—Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեց:

—Ասօ ջա՛ն, ինձ սպանի ու Աօնի անուամբ մատաք մի՛ շինիլ, ծամիլ:

—Օ՛, հօ՛, քրքչացին ամենքը, տեսա՞ր արեւը ո՞րտեղ ա էլել մի՞նա՞ծ. ա՛յ դու դարմանի տակի ջուր, մոքումդ բան ես ունեցել հա՞, ընդո՞ւր ես ուրբաթախօս, հասկացա՛նք, հասկացա՛նք:

—Ձեզ մատա՛ղ, լեզուն բացուեց Սամիսոնի, ընչանք օրս ես պտիկ աղպօր պէս ձեր խօսքի մինն երկու չեմ՝ արել, ջանս ուղել էք՝ չեմ խնայել, հիմի թէ աղպէր էք, էդ մի թեւաւորն էլ թողէք իմ ախանատի մէջն ընկնի, էդ մի աղջիկն ինձ բաժին հասցրէք:

—Քեզ վէշքա՛շ, քեզ հալա՛լ, քեզ ջաբբա՛ (պարգեւ):

—Դու ի՞նչ ես ասում, Ասօ ջա՛ն:

—Ես էլ քեզ խաչաղպէր:

—Դէ՛ արի՛ մի պռօշտի անենք:

Սամիսոնն ու Աօն համբուրուեցան:

—Բայց մեր տղա՛յ, վա՛յ թէ քո ատամների համար թթու ըլնի, մեր աղէքը հիմի վաղուց մատնահաշիւն արել, պրծել են:

—Էդ ինձ թողէք՝ էն էլ մի պայմանով:

—Ի՞նչ:

—Խօսք տուէք, ձեր կտրիճ տղամարդութեան վրայ օրթում կերէք, որ էս խօսքն էս ուռու տակին թաղուի, քարը վեր կալէք, քարի տակը զրէք, հասարակութիւնի բերան չը քցէք, վերեն Աստուած գիտենայ, ներքեւը մենք՝ էս չորս հոգիս:

—Սեւերես ըլնի՛, ընկերի մօտ թո՛ւք, խա՛ղք ու խաչտառա՛կ մնայ, իգիթ (չա՛լ) տղամարդ չ՛ըլնի, գտակի տեղ լաչակ ծածկի, ով որ բերանիցը հանի, ձայն ձայնի տուին տղէքը:

—Ու ո՛վ որ էլ զլուխը յետ չը դնի, մեր Սամիսոնի ուղուրին չը կանգնի (չօգնէ), երբ որ իր սիրտը կ'ուզենայ:

—Ամէ՛ն, ամէ՛ն:

—Պայմանը մի մին պռօշտի ա:

—Թող ըլլի՛:

—Չըրճ'ա, չըրճ'ա, կըրճ'ա, կըրճ'ա և բարի գիշեր:

Բ

ԱՐՏԵՄ ՍԷՐԳԷՅԻՉԸ.

Մի մեծ և խոր ձորի վերայ է շինուած Օ. գիւղը: Ձորի քարափի վերայ է հինաւորաց պատմական բերդը: Բերդի աւերակների վերայ է այսօր գլուխը ցցել ու պարծենում Գոմշակերենց Արտոյի խամ-քարէ ու ցիւէ տունը: Կոխածոյ բերդ, վրէն հողէ տուն — կարմիր մետաքսեայ թանկագին շորի վերայ պառաւ տառի հաստ իլկով մանած ու իր տղայ ծոններես Խնդոյի գործած խամ սպիտակ կտաւէ կարկատան չէ, ի՞նչ է բաս:

Ուրախ է Արտօն, կամ առաւել լաւ է, իւր պատուանդովը կոչենք, Արտեմ Սէրգէյիչը, իւր պալատովը: Նա առանց բաւականութեան չի պառկում իւր «Կահլիճ» կոչուած սենեկի վերի կողմը և լուսամտից ականջ դնում ձորի խորքում հոսող գետալիլ քրքչոցին:

Ձորս սենեակներ ունի տունը: Նորանցից երեքը ընտանեկան կառավարութեան են յատկացրած, իսկ ամենամեծը՝ դահլիճը, կամ ըստ Արտեմ Սէրգէյիչի գալան բարձրաստիճան հիւրերի համար է: Ներսի սենեակները կահաւորուած են տեղական սովորութեան համեմատ. հողէ յատակի վերայ փռուած է եղէգնեայ խսիր, վրան ծածկած կամ հասարակ կարպետ կամ քրդի թաղիք, իսկ դահլիճը բացառութիւն է կազմում. նա զարդարուած է կիսահայկական, կիսաերոպական ճաշակով:

Մի քանի դիւրագին աթուներ՝ մէկի ոտքը դուրս եկած ու շորի փալատով ամրացրած, միւսի գլխի տախտակը պակաս՝ շարուած են անների բարդի ծառից քաշած տախտակի յատակի վերայ. մի հասարակ սեղան, խառատ Աւետիսի ճարտարարուեստութեան ապացոյց՝ բազմացրած է ձորակողմի լուսամտի առաջին. նորա վրան ծիծաղում է մէջը նայողի երեսին՝ նոյն Աւետիսի հանճարեղ ուղեղի ծնունդ բոլորակ հայելին, աջ և ձախ կանգնած իւր պահապան հրեշտակներով՝ նոյնպէս ուստայ Աւետիսի շինած ընկուզեայ աշտանակներով:

Կահլիճի միւս կողմը Վրաստանին յատուկ մի տախտ բռնել է սենեկի կէսը: Ցախտի վերայ փռուած են երկու հատ քրդի թաղիք, երկու թարաքեամի կարպետ և պսակն այդ շապլութեանց մի փամ-

բակեցի կամ Վայոց ձորեցի հայ կնոջ գործած գորդ վրայից ծածկած:

Դահլիճի պատի դրսի կողմից՝ ձորաթմբի ապառաժ ժայռի միջից, կարծես զուրս է ցցուել կիսախարխուլ պատշգամբը: Հրաշալի է տեսարանը, աննման է այդ տեղից բնութիւնը. առաջի ձորն իւր կարկաշատ գետակով, լեռնաշափ քարափները՝ սուր ու խորդուբորդ ծայրերով, զիմացի բլուրներն՝ իւրեանց լայնարձակ հովիտներով հիանալի են: Աննկարագրելի է մանաւանդ զարնան պարզ երեկոյն, երբ բլրներից ամենաբարձրի ետեւից նազաճեմ զուրս է դաւլիս գիշերի երկնային ճաճանչաւորների պսակը՝ 15 օրական ժպտածիծաղ լուսինը և պատշգամբի առաջի ձորից վեր բարձրացած՝ հակադաս բարդիների ճիւղերի տերեւների միջից հազար և մի կոորներով լոյսեր է սփռում մինչև դահլիճի խորքը:

Արտեմ Սէրգէյիչն իրաւ որ ճաշակի տէր է. էս ժամանակները նա միշտ ճրագը հանդցնում է իւր հիւրերին ամենամեծ զուարճութիւն պատճառելու համար: Երեք խօսքով է նա իւր սրտի անչափ բերկրանքը արտայայտում. *великолепно! чудно! безподобно!*

Ինքը՝ յարգելի Արտեմ Սէրգէյիչը բնիկ Ս. գիւղացի է: Վարժ խօսում է ռուսերէն և շատ յաճախ էլ հայերէն խօսելու սիրում է ռուսերէն խառնել՝ օրինակ «*честное слово*», «*клянусь честью*», «*подлец я буду*» և այլն:

Հարկաւոր չէ զիմացի մարդին գիտենալ ռուսերէն. Արտեմ Սէրգէյիչի համար այդ մի և նոյն է, նա վարժուել է այդ ձև խօսակցութեանը և շատ անգամ խօսքերն անգիտակցաբար են զուրս թռչում նորա բերանից:

Արտեմ Սէրգէյիչը մանկութիւնից բացակայ է գտնուել իւր հայրենի գիւղից. նա ծառայել է զանազան արքունի կապալառուների մօտ, վեր ու նիստ է արել շատ աստիճանաւորների ու զազալների հետ, շատերին ծանօթ է, ինչպէս ինքն ասում է՝ բոլորի հետ «*на ты*» է:

Արտեմ Սէրգէյիչն իւր գիւղացիների մէջ էլ պատիւ ունի. նա շատ քաղցր, քաղաքավարի և աղ ու հացով մարդ է. մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, իւր անուշ լեզուովն, անմեղ կատակներովն և զուարճախօս յատկութիւնովն ամենի սիրելին է:

Եթէ Արտեմ Սէրգէյին իւր երիտասարդութեան թարմ ոյժը գործ դրեց իւր հայրենի ծննդավայրից դուրս, այսօր խոհականութեան և փորձառութեան տարիներում, մօտ 50 ձմեռներ ճանապարհ դրած՝ Մասեաց զլխի նման ջինջ սպիտակացած՝ իսկ դէմքի կայտառութեամբ դեռ զուարթ՝ դեռ ջահէրների կարգումը՝ նա մեծամեծ ծառայութիւններ է անում իւր մանկութեան օրօրանին:

Այսօր իշխանութիւնից մի հրաման եկաւ՝ Արտեմ Սէրգէյին է կատարելու ձեռք ցոյց տուողը: Վաղը մի գործակալ, մի առաջնորդ, մի պատուէլի հիւր այցելեց զիւղը, Արտեմ Սէրգէյին է հիւրասիրում, պատուում, նորա արձակած սուրբ Աթոռի հրամանը կատարել տալիս և յարգանքով ու լիաբուն աջահամբուժումով ուղևորում: Արտեմ Սէրգէյին իւր բնտանիքի մէջ էլ պատուական մարդ է. օրը հինգ անգամ տուն կը գալ իւր սիրելի լծակցի պայծառ երեսը տեսնելու, դեռ պատշգամբը չը բարձրացած՝ ձայն կը տալ — Մաշուրիկա՛, զօլբուշիկա, Մա՛րան ջան, թա՛ռան ջան, կնի՛կ ջան, զալիս եմ: Այս բանը զիւղի և դաւառի ժողովրդի հասկացողութեամբը շատ ամօթ բան է. տղամարդին ի՛նչ կը սազի իր կնոջ հետ առամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել. տղամարդն ո՛վ, կանանց գործերի մէջ խառնուիլն ո՛վ, նրանց հետ վեր ունիստ անելն ո՛վ. մարդը պէտք է մարդ լինի, ինչ որ մարդին կը պատկանի. բայց Արտեմ Սէրգէյինը ոչ միայն իւր սեպհական կնոջն էր ջան ասում, ջան լսում, ուրիշների հետ էլ միևնոյնն էր. նա էս բնաւորութիւնովը դաւառի մէջ մի բացառութիւն էր կազմում. նա տանիցը մինչև փողոց դալն ամեն մի պատահած կնոջ հետ հաճոյախօսութիւն էր անում, քաղցր բարի լոյս էր տալիս, ժպտալով՝ հարսի՛, քիքի՛ր (սոյքի՛ն), նանի՛, քեռու աղջի՛կ, սանամէ՛ր, քառորակին բառերն էր շաղկում. օրիորդներին էլ ուղղակի՝ աղջի՛ Մարգարիտ, Ալմաստ ջան, խնամու աղջիկ խօսքով էր պատուասիրում, պառաւանքների առողջութիւնն էր հարցնում, ջահէլ հարսների հետ նրանց մարդկանց անշնորհքութեան վերայ էր խօսում, պատուիրում էր զիշերը հետը չը խօսել, երեսը շուռ տալ, խռովել, աղջիկներից տեղեկութիւն էր պահանջում, թէ ո՞ւմ տղի վրայ ա՛ք ունին և այլն, և այլն:

Բանն այս է, որ նա ոչ մէկի հետ կանգ չէր առնում ճանապարհին. հարցմունքները իրար քամակից հետևում էին քայլերին.

իսկ որ ամենից նորանշան երևոյթն է մեր աշխարհքի համար՝ մեր չխօսքաններին ոչ մէկը նրանից չէր ամաշուում, չէր քաշուում և անպատասխան չէր թողնում. պառաւաններն ուղղակի—ողջ կենա՛ս, քեզ մատա՛ղ, Արտօ ջան՝ էին պատասխանում. ջահէլներից շատերը քաղցրաժպիտ աչքերով, քնթկալները բթից ցած թողած՝ սիրուն ատամները ցոյց տալով՝ մի կիսաձայն հաճոյախօսութիւնով նախատում էին նրան, որ իրանց զլխաւորի անունը բերանը չառնի, ծիծաղատեղ չը շինի: Աղջիկներն էլ բաւականանում էին համեստօրէն ժպտալով և զլուխ տալով: Մի խօսքով, մեր չարգեւորները Արտեմ Սէրգէյիչին հօր, եղբօր և մերձաւորի պէս էին ընդունում և սիրում, և սէրը սրտանց էր:

Անկարծի՛ք, ոչ մի տղամարդ, ծեր, երիտասարդ, երեխայ էլ չէր մնում զիւղումը, որ նորա քաղցր բարեկին չարժանանար և մի քանի խօսք էլ նրան ասելու կամ նրանից լսելու բաղդը չունենար:

Արտեմ Սէրգէյիչն, ինչպէս ասացինք, արդէն 50-ին մօտ սպիտակագլուխ ծերունի էր, (երեսի համար մի՛ հարցնէք, ես միշտ նրան երիտասարդ էի տեսնում, անբեղ, անմիրութ. անխժածը բեղ ու միրութ օրը մի անգամ իր ձեռովն ածելում էր), բայց զիւղի շատ ալեւորներ նրան որդու տեղ էին ընդունում և դէմ ու դէմ Յարթօ, Յարթուն կոչում՝ նորա մանկական անունով: Ընդհանրապէս զիւղին և դաւառին Արտօ անուամբ էր ծանօթ, վերջերումը մի քանի ուրիշ զիւղեր աղայ բռնը պոչիցը կարկատեցին, իսկ նոր քաղաքակրթութեամբ և լուսաւորութեան համար նա Արտեմ Սէրգէյիչ էր. միայն տէրտէրներն ու հայոց ծխական ուսումնարանի վարժապետներն են պ. Յարթութիւն հայ խօսքով նրան մեծաբանում, և ի պատիւ մեր Արտեմ Սէրգէյիչի պէտք է ասենք, որ ինքն էլ իւր կողմից մաքուր հայ գրականական դարձութեան քներով քահանային ու վարժապետին զխաէ գահայցել:

Ասացինք, որ Արտեմ Սէրգէյիչն իւր հայրենի զիւղին մեծ ծառայութիւններ է արել. սուտ չասացինք: Դեռ նոր էր նա եկել հանգստանալու մի քանի ժամանակ իւր ընտանեկան յարկի տակ, երբ առաջին անգամը մօտն զիւղական ինքնավարութիւնները: Հասարակութեան ընտրած անդրանիկ տանուտէրն Արտեմ Սէրգէյիչն եղաւ. նա միաձայն սպիտակ քուէ ստացաւ, ամբողջ հասարակութիւնը զրկաբաց ընդունեց նոր օրէնքները, նրանք ազատուեցան հին տանուտէրական ճնշումներից: Առաջները՝ ո՛ր զրպանից գնդոցի ձայնը

բարձր էր ղողանջում, նա՛ էր ճիպտոր ձեռքն առնում, զլուխ ջարդում, այսօր համայնքն իւր յօժար կամքովն Արտեմ Սէրգէյիչի պէս մարդին է իւր համար զլուխ ընտրել:

Մեծ էր ոգևորութիւնը. ամեն բերան օրհնում էր բարերար օրէնքը, մանաւանդ՝ երբ Արտեմ Սէրգէյիչն իւր հանձարեղ կառավարութիւնով ապացուցեց սուրբ օրէնքի գերազանցութիւնն և փրկարարութիւնը:

Գլխի փողոցները մաքրուեցան տարիներով դարսուած աղտոտութիւններից. զիւղն ազատուեցաւ ընտանի ցեցերից, կաշաւակեր տանտէրներից, երևազաւ իշխաններից, աղքատին խեղդող զգիրներից, տանու գողերից և հարամիեր հարկաժողովներից. մեծ ու պտտիկ մէջ փոխադարձ սէր, յարգանք և պատուապահութիւն մտաւ, վերացան զիւղից սովորական, անվայել յիշոցներն ու անկարգ զրոյցները, ամեն մարդ իւր պարտքը ծանաչեց, իւր հերթը հասկացաւ. էլ հարուստն ամիսներով անվրդով չէր պառկում, քնում, իսկ աղքատն երեք օրը միանգամ զիշերապահութեան հերթ կատարում:

— Գլաֆիի աղայ, դալիս էր մէկը և գտակը վերցնում, բերանը բաց անում՝ գանգատ անելու...

— Չէ՛, գլաֆիի մի՛ ասիլ, տանուտէր խօսք կայ, դու տանուտէր ասա՛. դու քո ոտդ իմ կարպետին մի՛ մեկնիլ, իմ լեզուն վատ է սովորել, ընդհատում էր Արտեմ Սէրգէյիչը:

— Տանուտէ՛ր, էս օր ջրի հերթն իմն ա, փալանդուղ Պէտօն ինձանից ջրգլխի ա, իմ ջուրը կտրել ա, իր պօլօճիկը ջրում:

Գլխիը վազեց, Պէտօյին բերեց:

— Ծա՛կը, հրամայում է անաչառ տանուտէրը:

Պէտօն բանտարկուեցաւ:

— Տանուտէ՛ր, Մէլիք-Բադալի կոմն ընկել էր լճ՝ բաժբակի արտը, դուս էի անում՝ Մէլիքը վրայ հասաւ, վրէս բարկացաւ, ինձ շան որդի ասեց:

— Ուղի՛ղ է, Մէլիք-Բադա՛լ:

— Տօ՛, զրա հէրն անիծած... ուզում է բացատրութիւն տալ Մէլիք-Բադալը, բայց խեղճի խօսքը բերանումը մնաց. տանուտէրն աչքով արեց, զգիրն ախան թօթափել Մէլիքի արծաթէ դօտին արծակեց ու մի մանէթի փոխարէն զրաւեց:

—Տօ՛, շան տղայ զզի՛ր, բարկանում է Մելիք-Բաղալը, զուքանի՞ գլխանի ես, որ ինձ զիպչում ես:

Նորից տանուտէրի աչքը ձապաց, զզիւրը վազեց Մելիքենց տունը, մի պղինձ վերցրեց, զիւղամէջ բերեց և վաճառ է հանում:

—Ի՞նչ բանի ես, Արտօ՛:

—Այո՛, Մելիք ջա՛ն, իմ աչքի լո՛յս, իմ զլխի տէ՛ր, հերիք որքան մինչև օրս բերաններիդ անսահման իրաւունք էք տուել. այտուհետև հայհոյանք անելու, ուրիշին պակաս խօսք ասելու իրաւունք չը կայ, ուշուցի խօսքը մի մանէթ է, ԻՅԵՒԵ, ԵՔ ՍՅԱՅՅ!

—Հանաք հօ չե՞ս անում, Արտօ ջա՛ն:

—Գլ՛ւկդ վկայ, սիրակա՛ն, և տես, որ խօսքս ուղիղ է:

—Հասարակութի՛ւն, դառնում էր տանուտէրը դէպի խուժանը. այս պղինձը զնահատում եմ մի մանէթ, ո՛վ է աւել տալիս, КТО БОЛЬШЕ?

Սկզբներումը դեռ անմեղ կատակներ էին կարծում՝ այն ամենօրեայ քաղցրախօսութիւններից հետեցրած՝ որ Արտեմ Սէրգէյիչն ու Մելիք-Բաղալը բարեկամական սեղանի վերայ իրար հետ անում էին, բայց երբ տանուտէրը հաւատացրեց, որ ասածն օրէնքի հիման վերայ է, ոչ ոք Մելիքի ահու ձայն չը տուեց, բայց սպասում էին տեսնել, թէ տուտը ո՞րտեղ ա կտրուելու:

—Ո՛վ է աւել տալիս, կրկնեց տանուտէրը:

—Մի մանէթ հինգ կոպէկ ինձանում, ցած ձայնով ասեց կանգնողներից մէկը:

—Դու ինձ վա՛յ տաս, հարամիերի աման լպտտող Խուզօ՛, տամները կրճտեց Մելիքը, զու հիմի մարդ ես դառել, մարդամէջ ես մտել, որ Մելիք-Բաղալի պղինձը տօլիով (ածուբ) առնում ես էլի՞:

—Ձայնդ քեզ քաշի, Մելիք-Բաղա՛լ, պաշտպանեց տանուտէրը, Խուզօն է՛լ իրաւունք ունի, ամեն մարդ է՛լ:

—Մի մանէթ հինգ կոպէկ, КТО БОЛЬШЕ? նորից ձայնը բարձրացրեց տանուտէրը:

Ոչ ոք ձայն չը հանեց:

—Մի մանէթ քսան կոպէկ ինձանում, այս անգամ ինքը տանուտէրը աճրդի մէջ մտաւ: Եւ որովհետև Խուզօն խռովեց ու յետ

քաշուեց, պղինձը մնաց իրան՝ տանուտէրին: Հանեց նա գրպանից մի մանէթ քսան կոպէկը, տուեց զանձապետ դատաւորին, իսկոյն մանէթը տուգանքի տօմարի մէջն անցկացրեց, աւելորդը տուեց Մելիք-Բաղալին:

— Է՛, մեր տղէ՛ք, եթէ Մելիք-Բաղալի լեզուն բռնը մտաւ, մենք մեր գլխի ճարը տեսնենք, լեզուներիս սանձ զնենք, ասացին ամենքն ու հայհոյանքի տօպրակը գիւղական դատարանի շեմքի տակին թաղեցին:

Խեղճ Մելիք-Բաղալը բաւական տուժեց: Վեց ամիս էր Արտեմ Սէրգէյիչը տանուտէր էր և Մելիքն ամենից շատ տուգանքը տուեց, բայց ի հարկէ, նա տանուտէրից չէր նեղանում, իւր վատ սովորած լեզուին էր մեղադրում:

Հախ Աստծո՛ւ, ինքը Մելիք-Բաղալը վատ մարդ չէր, բարեսիրտ էր, զուարճախօս էր, սրախօս էր և գիւղի սիւններից մէկն էր, գիւղի համար գլուխը զրած ունէր, մեծ ու պստկի, իրաւորի—օտարի, հէքիմ—դատաւորների առաջին էլ խօսքը դուրս էր գնում: Միակ վատ բնաւորութիւնն այս էր, որ չէր կարողանում թարգը տալ թագուն, աշկարայ ձեռքն ընկած տեղից մի շնչին կաշառք վերցնելուց: Այդ իւր անցեալ տանուտէրութեան երջանիկ օրերի սովորութեանց հետեւանքն էր, իսկ միւսը՝ առաւել վատթարը՝ նա չէր կարողանում լեզուն յետ սովորցնել ուշունցնատուութիւնից. արշալոյսից մինչև վերջնալոյս՝ շարունակ ուշունց էր դուրս գալիս բերանից: Վնաս չունէր, նրա ուշունցից ոչ ոք խամ չէր և չէր էլ նեղանում, բայց խեղճին էժան չէր նստում:

Թոյլ տանք Մելիք-Բաղալին ինքը պատմի իւր ցաւը:



ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԸ.

Օ. գիւղը իրարանցումի մէջ է. տանուտէր Արտեմ Սէրգէյիչն իր գլուխը չի ճանաչում, զգիր ու եսասավուլ, առուազ (Ջրապետ) ու գիւղումը հաց կիտելու համար յետ ընկած նախրի՝ բոլորը գործի մէջ են, տանուտէրի, սուղիէքանց և հարուստների տներում էլ թանկագին կարպետ ու խալիչաջ չի մնացել՝ կրուում են դէպի ձորը՝ բազմադա-

րեան կամրջի ականջին զտնուած ծառուտը և փռուում կանաչ խոտերի վերայ. վերի կողմը տարածած է փափուկ մահիճն և վրան դրած երկու հատ պատուական մութաքայ: Հեռուումը մի ծառի տակի մորթուած է պարարտ ոչխարը, սարքուած են օջաղին պղնձներն և շարուած են փայտեայ դալար շամփրների վերայ խորովածները: Գետի ափին բղխող ականակիտ աղբրի ակնումը շարուած են կարմիր գինիով լիքը շիշերը:

Ահա եկան Ս. Կիւղի բոլոր իշխանները: Ահա և հաստաշլինք Պապի Գէվօն շապկանց՝ մինչև ծնկները բաց, մստ և մազատ կրծքի վերայ մանկամարդ կնոջ ստինքներից՝ մեծ մեծ ծծերը կախ քցած, թօռի պարանը երեք տակ կոնատակովը վիզը ձգած՝ վալը դրեց թաց թօռն և հրամայեց իր օգնական գէլխեղդ Թորոսին ձիու սուպրակը գետի ջրի մէջ դնել մինչև ինքը կը հրամայի:

— Եկա՛ւ, եկա՛ւ, ձայն տուեց հեռուից քարափի վերայ կանգնացրած պահապանը:

Ամենքը յառաջ վազեցին. տանուտէրը բոլորի գլխին ծառուտից դուրս կանգնած էր:

— Գտակնե՛րդ, ձայն տուեց տանուտէրն և յառաջ վազեց:

— Բարև ձեզ, ձիուց ցած թռչելով՝ բարձր ողջոյն տուեց թանկազին հիւրը:

Գա գառառի նաշալնիկն էր:

Նա միայն չէր. մի քանի աստիճանաւորներով էր շնորհ բերել:

Նա այս անգամ պաշտօնական գործով չէր եկած: Այսօր նա

Ս. Կիւղացուց հիւրն էր:

Շատ տարի էր նա նաշալնիկ էր և տարէն մի անգամ այս քաղցր աղբրի ջուրը խմում էր:

— Բարի՛, հազար բարի՛ ես եկել, աղայ ջան, մեր գլխի՛ մեր աչքի վրայ ես եկել, յառաջ եկաւ Պապի Գէվօն՝ թօռի մէջ կողում մի ահազին մեծութեամբ խլպտալով կարմրախայտ ցած թողելով կանաչի վերայ, քեզ փէշքե՛շ, աղայ ջա՛ն, 20 տարի ա, դլխիդ մեռնե՛մ, ես էս գետի ամեն մի քարէ տակը, ամեն մի խոր գետի ձկան ծուարատեղը տարին հարիւր հետ քրքրել եմ, խօլխօլել եմ ու դեռ էս չափին կարմրախտ տեսած չեմ, անմահական ա, անմահական, հոգահա՛մ ա, հոգահա՛մ, թիքէն մի պաճախլու ափի, տեսնում ես,

աղայ ջա'ն, ո'նց ա թոպուտալով ոտդ պաշում, որ հրամայես՝ իրան մատաղ անեն ոտիդ տակին ու իր զրդրճան քեալլէն քո հրամանքդ անուշ անես:

—Շորհալալ եմ, Գէորգ, քո կալած ձկներն ես ամեն տարի էս ծառերի տակին կերել եմ, ոչ մէկն անհամ չի եղել:

Նաչալնիկը հինգ մանէթանոցը մեկնեց Գէվոյին:

—Տո՛ էս թղթի կտորն ինձ ի'նչ պտի տաքացնի, աղայ ջա'ն, սող օրը ջրումը թրջուած մուկն եմ դառել, մրսել եմ, մի քո օրհնած բերանովդ հրամայես, մի թաս քրտնքի ղեղ տան, ոսկորներս տաքանան, աւելի լաւ ա:

—Արտեմ Սէրգէյի'չ, մեր Գէորգին մի թէյի բաժակով արա՛ղ:

—Էդ ա է', ջօմարդ մարդի բերնին մեռնե'մ, ասեց Գէվօն, առաւ ձեռքն արագն և՝

—Աղա՛յ ջան, քո կենացը:

Ճաշի թէժ ժամանակն է. սեղանի ծաղիկը Մելիք-Բաղալն է, ամեն մի բաժակի վերայ նա երկար ատենաբանութիւն է անում և բոլորին ծիծաղացնում:

Նաչալնիկն իր կողմից խմեց Օ. գիւղի հասարակութեան կենացը և մի կարճ յորդորով կշտամբեց նրանց անտարբերութիւնը՝ նոցա անուսումնասիրութեան առթիւ:

Նաչալնիկը զարձաւ դէպի Մելիք-Բաղալն և ասաց.

—Իսկ դո՛ւ, Մելիք-Բաղալ, միանգամայն մեղադրելի ես, լեզուդ ասեմ, թէ դորժդ. քո աչքն ի'նչպէս է վերցնում, որ այսօր ձեր գիւղումն ուսումնարան չը կայ:

Այդ ժամանակ ղեռ տարրական դպրոցի հարցը վերջնական ելքի չէր հասել:

—Նաչալնիկ աղա՛յ, գլխիդ ու արեւիդ մատա՛ղ, տեղիցը կանգնեց Մելիք-Բաղալը, հրամանք արա՛ մի երկու խօսք ասեմ, սրտիս փուքը դարտակեմ, յետոյ աչքս հանի:

—Իրաւունք եմ տալիս:

—Նաչալնիկը հաստատ կենա՛յ, քեզ էլ յայտնի ա, որ մենք հէրենական, պապենական բռի, անտաշ գեղըցի ենք, ուսումնարան չենք մտել, քաղաք տեղ չենք ման եկել, կռպիտ, վայրենի ենք, էշ

կերել ենք, էշ մենծացել. զեղըցունը որ կայ՝ իր աշխատանքն, իր ժամն ու տաւարը, իր օրհնութիւնն ու ուշունցն ա. ասում ա՛ խէրն ու շառն աղպէր են, էնպէս էլ օրհնէնքն ու ուշունցը մի հալալ մօր ջխտակներ են, մենք ոչ աղէքանց ու քաղքցոնց պէս կարանք առանց ժամ գնալ մնալ, ոչ առանց ուշունց տալու համբերիլ. ժամիցը զուս գալուս մեր «օղորմի Աստծու» հետ «շան որդին» էլ մէկէլ ատամի տակիցը պէտք ա զուս սլալ, ուշունցը մեր խօսք ու զրըցի, մեր խօսակցութիւնի աղն ա, անաղ կերակուրը համ չի ունենալ, էնպէս չի՞, աղա՛յ ջան, ջանի՛դ մեռնեմ:

—Լա՛ւ, հիմի խօսքդ ի՛նչ ա:

—Ձէ՛, դեռ մի հրա՛մանք արա բարի բերանովդ, սուտ ա՛, թէ զորթ:

—Ասենք թէ ուղիղ ես ասում, զիւղացին ու նաչալնիկն երկուսն էլ առանց ուշունցի չեն կարող կառավարուիլ:

—Հա՛, դէ տեսա՛ր, որ զլուխս ճշմարտախօս մարդի ոտի տակին փարվան կանեմ: Դէ՛, աղայ ջա՛ն, դէ՛ հիմի արի, երկար խելքովդ զատի, մեր զրութիւնի մէջը մտի՛ր, մեր հալն ու ափալն (դրո-նէ-նը) իմացի, մեզ խեղճ արի, մեզ էս բաբելական կրակիցն աղատի՛, էրուած ենք ողջ հասարակութիւնով: Էս ա վեց կօլօլ ամիս ա, քանի էս նոր օրէնքները զուս եկան, մեր Յաթօն մեզ շամփուրն ա քաշել, բռնել մարմանդ կրակին, ոչ մի անգամ խորովում ա, մոխիր շինում, ոչ էլ կրակն ա հանգցնում, մեզ հովութիւն տալիս:

—Ի՛նչ Յաթօ, Մէլիք-Բաղա՛լ:

—Տօ՛, էս մեր... ը՛մ... ը՛մ... ը՛մ... էս... շ... շ... մեղա՛յ, մեղա՛յ, քիչ էր մնացել երեխեքանցս էս օրուայ ապրուստը շան ու զիլի բաժին էի անում... ո՛չ, ոչ, մեղա՛յ Աստծու... ծամծմտեց Մէլիքը, էս մեր պարոն Յաթօն, մեր տանո՛ւտէր գլամին, որ իմ մենծ տղիցը վեց ամսով ու երեք օրով պտտիկ ա, ակսար սա Ձիք-չորեքշաբթի օրն ա ծնիլ, ա՛յ չքուի սրա զլուխը...

—Մէլի՛ք-Բաղալ, համեստօրէն ձայն տուեց տանուտէրը, մանէլթը գլորուեց:

—Դէ՛, աղայ ջա՛ն, լսեցի՞ր. զարձաւ բազկատարած Մէլիքը նաչալնիկին:

—Էս բան չը հասկացայ, ուսերը թափ տուեց նաչալնիկը:

— Զէ՛, դու ինձ ասա՛, էս խօսքի համար աժի, որ մեր աղայ գլալնին ինձանից մի մանէթ շորաֆ խլի՞:

Նաչալնիկը գլխի ընկաւ. նա, դիցուք, վաղուց գիտէր Մէլիք-Բաղալի ցաւը:

— Նս քեզ լիակատար իրաւունք եմ տալիս, ասաց, էս ձորի ծառերի շուաքումը, էս սառն աղբրի մօտ, էս գետի ափումը, էս բաց երկնքի տակին. ոչ ովից չը քաշուես, ի՛նչ քո սրտի ցաւն է, յայտնես, ի՛նչ սիրտդ քեզ իրաւունք է տալիս՝ չը խնայես. մի՛ վախիլ, ոչ ով քո փէշին էս օր չի կարող դիպիլ, էս օր քեզանից ինչքան տուգանք խլեն, իմ վզիս:

— Հա՛, Աստուած որդիքդ պահի՛, հիմի կասե՛մ, հիմի թող ինչքան ուզում ա բուայ մեր բացողւշ Յաթօն, դուայ մեր ազուաւը:

— Ա՛յ մարդ, Մէլիք-Բաղալ, ժպտալով դարձաւ նաչալնիկը, ընչի՞ ես մեր տանուտէր Արտեմ Սէրգէյիւն անպատուում, քաղաքավարի անունը տաս ի՛նչ կը լինի. մէկ՝ որ տանուտէր է, մէկ՝ որ քո ազգականդ է և միւս էլ՝ որ դիւղի ու զաւառի մէջ պատուելի աղայ մարդ է:

— Տօ՛՛ քեզ մեռնեմ, քո սուլթան բալէքանցը (սրդ-սրդ) մեռնեմ, ախար դա ո՞ր տեղի աղէն ա, ախար ոնց որ ասում էի ու բերնիս եկաւ, դա իմ հօրօղպօր թող՝ ողորմածիկ Սաքօյի տղէն ա. էդ չքուելուն լիս աշխարհք եկաւ Զիք-չորեքշաբթի օրը՝ առաւօտէն ծէզը քցելուս: Խալխին տղայ ա ըլնում՝ ուրախանում են, համա մեր խեղճ Սաքօն ամպեց ու մրրած երկնքի պէս աչքերիցը թափեց, ի՛նչ ա՛ թէ հէնց էս Զիք-չորեքշաբթի օրը պտի ծնէ՞ր, որ մի օր յառաջ կամ մի օր յետն էր արշայ ընկել (էր-սրդ)՝ աշխարհքը կը քանդուէ՞ր, մեղք կը լինէ՞ր. համա չէ՛, փիսը փիս կըլնի. էն օրն ամեն բան չքուում ա, սա գլուխը դուս ա սրծացնում: Ինչ և իցէ՛, բերինք Զատիկ օրը մկրտեցինք, որ Զիք-չորեքշաբթու շորշովը վրիցն անցկենայ, վեր կալանք անումը դրինք Յարութիւն: Դէ՛, մեր տընեքումն ո՞վ ա երեխին Յարութիւն կանչում, անումն էլ երեխի հետ պտի կամաց-կամաց մենծանայ. մինք Յաթօ աւեց, մէկէլն՝ Յարթեն, մենք էլ ա՛յ թ ու լ ա (ա՛յ շնի՛) էինք կանչում ու ձեռներիս թաքնում, ուրախանում: Նկա՛՛ որ սա ընկաւ Նրեան՝ ուսնների մէջը, ընտեղերանք ի՛նչ արեց, ի՛նչ չարեց, քանի՛ փողբաթու աչքեր հող ու մոխիր

փչեց, զազախին հողախառը հաց ուտացրեց՝ փորահարինք քցեց, նրանց ձիանոնցը ջուրն ընկած դարով ուտցրեց՝ սպանեց, իր ջէրը տուգացրեց. մի օր էլ տեսնենք՝ մի քանի իրպէսներին՝ Նրեանի ջահէլ ջուհուլին հաւաքել ա, բերել զեղը բարեկամների տներումը սրապատիւ տալի, մի շաբաթ քէֆից աչք շի բաց անել տալիս, մեր հաշուովը զօնադներ ա ման ածում, թէ ի՞նչ ա, սաքի պատիւ եմ տալիս. դու մի՛ տալի, սա դրանց բերել ա, որ դրանց բերնովը մեզ հասկացնի, որ իր անումն էլ Յաթօ չի՛:

—Բաս ի՞նչ ա, չը հասկանալ կեղծեց նաւալնիկը:

—Նս ի՞նչ գիտեմ, էն տղէքանցից ո՛րն Արտօ էր կանչում, ո՛րն՝ Արտուշ, մինն՝ Արտուշիա, Արտեմուշիա, մի քանիսն էլ՝ Արտեմ՝ Սերգելլիչ, ոնց որ դու հիմի, աղա՛յ ջան, հրամանքդ ասում ես: Էն օրից ղէսը մենք էլ Արտօ ենք կանչում, ընչունքի տեսնում ենք, որ «Յաթօ» ասելիս՝ քինթը վեր ա քաշում, սաքի թէ՛ ինքն է՛լ Յաթօ ըլնի, մեր գզիր քուրդ Յաթօն է՛լ: Դէ՛, «Յարութիւն» խօսքն էլ մեր լեզուի լաղաբը չի (շայէլ չէ), տէրտէրի ու վարժապետի բառ ա: Համա իմ քրքրուած հողին զիտենայ, ես ուրախ կըլնէի՝ մեր քուրդ Յաթօյի հընկիրը դառնալ, քան թէ փթած սերգելիլ, էդ ի՞նչ խօսք ա Սերգելլիչ. է՛լի մարդ կարմիր պահունի խնձոր, կամ մալաչայ տանձ դառնայ՝ մեղրի պէս քաղցր, որ ուտողի բերանը համ տեսնի, քան թէ տոխպ սերգելիլ, որ կախան են անում թէ չէ, մի շաբաթից հոտում, փթում ա ու վէր ա թափում, ոնց որ մեր Յաթօն. վից ամիս ա՛ քանի տանուտէր ա դառել, ամեն օր հոտում ա մեր վրայ ու մեր խօսքի լաղաթը (սխրթալը), մեր քաղցր մալաչաթը՝ մեր ուշունցը կորում, մանէթն տունում, շներոց անում: Բաս էդ մեղք չի՞, աղայ ջա՛ն:

—Ախար էլի բան չասացիր, Մելիք-Բաղա՛լ, կարճ կտրի տեսնենք:

—Դէ՛, էն եմ ասում, որ քեզ յայտնի ա, որ մենք ղեղըցի ենք, հընկեր-հարեան ենք, իրար հետ հաշիւ, առնելացուկ, տալացուկ ունինք, պատուից ենք, հող ունինք, բազ ունինք, բամբակ ու քընջիթ ենք ցանում, ջուր ենք ջրում, աղպէր ենք՝ բաժանուում ենք, ես ի՞նչ գիտեմ, հաղար տեսակ կապ ունինք, զէ ո՞նց կըլնի, որ տարէն 12 ամիս սիրով, սահբաթով ջա՛ն ասենք, ջա՛ն լսենք, ան-

մեղ հրեշտակների պէս միշտ երեխայ մնանք. դէ՛, մեր մէջը խօսք ու զրից կըլնի, աուր ու ծեծ կարող ա պատահել, ի՞նչպէս դիմանանք, սրտներիս փութը ո՞նց նստացնենք, որ ուշուց չի տանք: Ես քո հօրը կը քաշեմ, դու իմ օխտը պորտն Ադամայ դէսը թուճբէ թուճբ, չօլէ չօլ կը քցես, ես քո կնկայ սիրտը կը շահեմ, գլխի լաշակիցն ընչանք ղիւլբէքը կը փառաբանեմ, դու իմ հարս ու քուեր անուճը կը տաս, բան ա, աշխարհքն էլ կը կառավարուի, սիրտ ա՛ կը նստի, եօլա կերթայ, ուշուցը հօ էն հրօպէին տեղ չը հասաւ, ասում ա. դարպակ խօսքը քամին տանի. էգտէս չի՞, աղայ:

— Խեղճ իմ Մելիք-Քաղա՛լ, հիմի տեսնում եմ, որ ծերացել ես, մի ժամ է խօսում ես, միայն իմ ու քո հայրն ու մայրն ես անհանգիստ անում ու բան չես կարողանում հասկացնել. բան ունիս՝ բանդ ասա՛, իմ կնկայ շորերի հետ ի՞նչ բան ունիս, կա՛ց, գնամ իրան ասեմ, էլ մեր տունը ոտ չես կարալ դնել, եսսավուլով ու դազախներով մինչև ձեր ղիւղը մէկ քշել կը տայ:

— Վա՛յ գլխիս, աղայ ջա՛ն, ես ի՞նչ ճանճ ու մթեղ եմ, որ քո խանութին պակաս խօսք ասեմ՝ կամ չար սրտով աչք քցեմ՝ նրա վրայ. նա իմ քիրն ու մէրն ա, իմ բերնի սրբութիւնն ա, ես առակ եմ ասում, օրինակ եմ բերում, ասում ա՛ առակն անխոտելի ա, ես մեր գեղական հաշիւն եմ ասում:

— Հա՛նաք եմ անում, Մելիք-Քաղա՛լ, դու խօսքդ շարունակիր:

— Դէ՛, էլ ի՞նչ գլխացաւանք անեմ, քեզ ղուրբա՛ն, մեր հալը հասկացար, էլ ոչ բերաններումս լիզու ա մնացել՝ էս մեր չիք Յաթօյի գլամբութիւնի օրումը՝ ոչ սրտներումս եղ. էլ գեղամիջին մի ձէն, մի աղաղակ, մի հարաջ հրոց չես լսիլ, ախար ո՞նց ղալմաղալ (աղմուկ) անենք, երբ որ մէջն ուշուց չը կայ, չէ՞ որ կռուի աղն ուշուցն ա, պստի հա՛րսն ա շինել մեզ էս անիծածը: Ճարներս հատել ա, մի բան ենք միտք արել. առաւօտը որ զարթնում ենք, դեռ երեսներին խաչ չը քաշած՝ դռները պինդ փակում ենք, երթիկ ու փանջարայ ծածկում ենք, մի բեռն ուշուց, դեռ առաջ մեր խեղճ պառաւանների՝ մեր հընկերների (չա՞ռոյ) գլխին ենք թափում, մի քանի էլ, հախ ու նհախ, վեր հատում, ախար ուշուցը հօ առանց տուր ու թմիոցի եօլա չի գնալ ու յետոյ, մեղքս ի՞նչ

Թագացնեմ, մեր էս աղայ գլափնի տանուտէր սերգելիլի Յաթօյի՝ Նոյեան տապանիցը բռնած՝ ինչքան արդար ու մեղաւոր ննջեցելք ունի, լցնում ենք մի նեղաբերան շուշի մէջ, ինչքան էլ քաղցր ուշուցներ կայ, մի տեղ ենք հաւաքում, շուշի բերանը խցկում, որ տեղ չունենան զուրս փախելու: Էս որ պրծանք, նոր դռները բաց ենք անում, երեսներս լուանում, գնում ժամ, մի քանի ծունր դնում հանգիստ սրտով ու ժամից դուրս գալիս իրան էդ անիծածին «օղորմի Աստուած» տալիս: Դա էլ իր մէջն ուռչում, փքուում ա, թէ ինքը նոր օրէնքի գլափնի ա, հին տանուտէրներիցը չի, մեզ ճամփի ա բերել, մեր ուշուցը կտրել ա, մեզ քաղաքավարի ա շինել:

— Էդ լաւ հնարք էք մտածել, Մելիք-Բաղա՛լ, ժպտալով ասաց նաչալնիկը, բայց խեղճ կանանցը զօռ է հասնում:

— Էլի ուրիշ հնարք ենք դտել, աղայ ջա՛ն. ասենք՝ ես քեզ հետ մի դաւի (վէճ՝) ունիմ, ես իմն եմ ասում, դու քոնք. երբ որ տեսնում ենք, որ եօլա չը գնացինք, սրտներս չը նստեց, առանց ուշուցի վերջանալու չի, ես կացինն եմ վերցնում, գնում մեր բաղը, դու բահն ես առնում, էրթում դպա ձեր ջաղացի առուի ուռի ծառերը. գնում կանգնում ենք, հոգոք քաշելով՝ ամենքս մի ծառի տակ: Նստում եմ, ա՛յ ծառ, քո անումդ Գրիգոր ա. դու էլ, ի հարկէ, ասում կըլնիս՝ Բաղալ ա. յետոյ սկսում ենք՝ ես կացնով՝ դու բահով՝ ծառին շրխկացնում, թրխկացնում ու հետն էլ ուշուցի տոպրակը դարդակում: Էն տեղ էլ Նոյը մօտիկ ա, Աղամիցն ենք սկսում, ընչանք Ուռնայի կալը գնում, կենդանի ու մեռել իրար խառնում ու «օխա՛յ» անելով, գալիս մի կուշտ ու կուռ հալալ հաց ուտում:

— Բայց մի՛ մոռանար, Մելիք-Բաղա՛լ, որ ժամից աւելի է խօսում ես, կնոջս պատուեցիր՝ հերիք չէր, մեռել կենդանս էլ անհանգիստ արիր և էլի խնդիրդ չ'ասացիր:

— Աղաչանքս էն ա, ոտներիդ մեռնե՛մ, որ դու մեր դատաւորն ես, մեր ցաւերի դեղ ու զիր անողն ես, առաջ մեր էս դարդն իմանաս, սրտներիցս հարցնես, յետոյ յետ դառնաս երեսիս թքես, թէ Բաղա՛լ, ձեռ. մեկնի՛ր, աշխատի՛, ուսումնարան բաց արա՛, որ երեխէքը կարդան: Նս կարդալու. հա՛լառակ չեմ, աղայ ջա՛ն, համա սրտումս եղ չի մնացել: Նթէ դիտես, որ իմ՝ ձեռիցը բան կը գայ,

Թէ ուզում ես, որ ես զործի մէջ խառնուիմ, գամ քո ոտներն ընկնեմ, ուրիշին շինք ծռեմ, ողորմութիւն ուզեմ, իմ հարեան բարեկամին սիրտ տամ, ուսումնարան բաց անենք՝ դու էլ հրաման տուր էս լէն ու բոլ տեղումը, էս քնքշան գետի ափին, էս սիրտը խորոված հասարակութիւնի առաջին՝ լիզուիս կապերը քանդեմ, ո՛ւմ սիրտս ուզում ա, մի սրտալի, կուշտ ու կուռ ուշուկ տամ, ջանս ու հոգիս զնջացնեմ, յետոյ՝ ինչ որ հրամայես, պատրաստ եմ զլիսս վրայ կատարելու, Թէ մի օրուայ մէջն ուսումնարանը գլուխ չեկաւ՝ կաշիս քերթել տուր եսսափուլ սարի արջ Մահմատին:

Ուրեմն եթէ քեզ իրաւունք տամ ուզած մարդիդ հայհոյել, դպրոց բաց ան՞ում ես մի ամսի մէջ, հարցրեց նաչալնիկը:

—Զը խաբուիս, Մէլիք-Բաղա՛լ, մէջ մտաւ ծիծաղելով տանուտէր Արտեմ Սէրգէյիչը, նաչալնիկը քեզ փորձում է, էդ նաչալնիկի իրաւունքը չի, էդ տանուտէրի վերաբերեալ զործ է, մեղք ես, պարտքի տակ չը մոնիս, ես էս գլխից նաչալնիկի ներկայութեամբ՝ քեզ ասում եմ, որ ամեն մի ուշուկը մի մանէթ տուգանք ունի:

—Դէ՛, ձէնդ քեզ քաշի, չօլումը քամի անո՛ղ, դու էլ շա՛տ ես հպարտացել, չես հասկանում, Թէ ո՛ւմ առաջին ես խօսում. կրակի առաջին չախմախի չեն տալ, ասում ա. «չերեւել արեգակ՝ կորնչեն աստեղք»։ մեր գլխի տէրը, մեք աղէն էստեղ՝ դու ի՞նչ կը համարձակիս ծպտուն հանել, Թող մի ողորմի, հրաման տայ, տես իմ բերանիցն ի՞նչ դուս կը Թափի, ո՛ւմ գլխովը վէր կը գայ, էդ յետոյ մենք կը տեսնենք՝ Թէ դու իմ մի հատ կապէկին ո՞նց ես գիպչում:

—Իրաւունք եմ տալիս, բարձրաձայն վճռեց նաչալնիկը:

—Ղո՛րթ, գլխիդ մեռնեմ:

—Էս բոլոր հասարակութիւնը Թող վկայ լինի, եթէ տանուտէր Արտեմ Սէրգէյիչը քո մի կոպէկին գիպչի, հնգապատիկ վճարեմ: Էլ ես չեմ խօսում, էլ իմ զրիչն այն շնորհքը չունի, որ Մէլիք-Բաղալի բերանից յորդաբուղիս աղբրի նման դուրս Թափուածները մի առ մի Թղթի երեսն առնի, դուք՝ եթէ ցանկանում էք, գտէք իրեն՝ տանուտէր Արտեմ Սէրգէյիչին և Թող ինքն իւր աչքուած սրտովն իւր դարդերը ձեզ լայ ու պատմի: Մեղանից ոչ մէկը, համոզուած եմ, իւր կենաց շրջանում այնքան բազմակողմանի և բազմատեսակ հայհոյանքներ լսած չունի. երեւակայել անհնար է, Թէ

մեր Մելիք-Բաղալը՝ երեսը տանուտէրին դարձրած՝ ի՛նչ խօսքեր զուրս թափեց իւր բերանից խեղճ Արտեմ Աւրգէշիչի հասցէին: Ես քառորդ՝ զուք կէս ժամ ասացէք, շարունակ մի մի ծանր ծանր արտասանած հայհոյական խօսքի հետ՝ ձեռագ շարժումով էլ տեղն էր յատկացնում:

Ամենքը ծիծաղից թուլացել են, ինքը նաչալնիկը մատը կտրես՝ չի՛ իմանալ, յետ է փռուել բարձերի վերայ ու փոր ու սիրտ բռնած կշկում:

Մելիք-Բաղալն իր խօսքին տէր էր, մի ամսի մէջ զպրօցը զլուխ բերեց. նոյն օրը նաչալնիկից ու նորա հետի աստիճանաւորներից ու ծառայակիցներից 500 մանէթի չափ նուէրք առաւ: Իսկ ի ցաւ Ս. զիւղի բոլոր հասարակութեան և նոյն իսկ իրա՝ Մելիք-Բաղալի, Արտեմ Աւրգէշիչի տանուտէրութիւնը շատ կարճատև եղաւ. մի ազդեցիկ մարդու գործ դրած մեքենաները նրա հրաժարականը շտապեցրին:

Այդ մասին Մելիք-Բաղալը մինչև էս օր էլ ակն է քաշում:

Դ

Տ Ղ Ա Մ Ա Ր Դ Ի Հ Ո Գ Ի Ն.

Բարեկից աշնան ամենաուստ ժամանակն է: Ս. զիւղի բոլոր այգիներն ամենաքաղցր պահունի պտուղներով լցուած են. խնձորի, տանձի, սերգելի, գեղձի ծառերը՝ որ զարունքը զժառուս պատանու նման գլխները ցցել, երկնքի հետ էին կալու տալիս, որ գոյն զգոյն անուշաբոյր ծաղիկներով փթթած՝ կարծես ամենքին իրենց զլուխն էին ցոյց տալիս, այսօր այդ բոլոր ծառերը բեռնաշաղակ մշակի նման կռացել, փոքր է մնում գետնին կաշեն: Եթէ տասնաւոր նեցուկները չը լինէին, որոց վերայ զառամեալ արևորի նման յենուել են մեր ծառերը, հիմի ամենքն էլ վաղուց ճղքնակոտոր կը լինէին: Այգիների միջնափայրերն էլ միաբանուել են ավիների ծառաանկի հետ, խաղողի որթերը կախ են արել իւրեանց հաստ ու կոխուն ողկոյցները և իւրեանց տասնաւոր զոյներովը նմանում են ճիշդ դոհարազարդ ոսկի անօթի: Մարգարիտ կոչես սպիտակ Գիշմիշի ասուած խաղողին, շողափն անուանես թափանցիկ շողշողուն Ասկարուն, զմրո՛ւթ ասես մեծապտուղ ծիրանագոյն Հալաղուն, ջակինթի՛ նմա-

նացնես եզան աչքի խոշորութիւնն ունեցող Նզնաչքին, զեղին ու սե սաթի՞ հետ համեմատես սե ու սպիտակ՝ արեւից դեղնած Խարջուին կամ Կանաչկենուն. ո՞ր մէկը համարես, զոհարների տեսակները չեն կարող մրցել Արարատեան դաշտի խաղողների տեսակների հետ. հետաքրքրուողներն ասում են՝ մինչև 54-ի են հասել, ես կասեմ՝ էլի՛ լրիւ չէ:

Ուրախ է զիւղացին, նա երջանիկ է, նա այսօր ժողովում է Աստուծոյ տուած բարիքը, օրականը ծախում է լեռնացի բեռնաւորներին, որոնք մրջիւնի կարաւանների նման քթոցները ձիանցը բարձած՝ խոնուում են այգեշատ գիւղերումը, իսկ պահուենին զգուշութեամբ կրում է իւր մառանը և ճկուն ուռենու բարակ ճղնիկների վերայ կախան անում, մառանի առաստաղը զարդարում՝ իւր սիրուն փոքրիկների ձմեռուան պաշար պատրաստում:

Գիւղական կեանքն եռում է. ամենածեր պապերից և ատամնազուրկ պառաւ տատերից բռնած՝ մինչև նոր տոնաւորուած թոթովախօս մանուկը՝ ամենքն էլ դործում են. մինն ուռ է քաղում, միւսը կախանում է, երրորդը բեռն է բարձում, չորրորդը քթոցը ոտքի տակին կախ է տալիս, կանայք դեղձ են կրպում, աղջիկներն ալանի են շինում, երեխայքը չորացածներն են հաւաքում տնադործ տափարակ ուռեայ մատուցարանների—սալաների մէջ, ա՛յս են անում, ա՛յն են անում, ես ի՛նչ զիտեմ՝ ի՛նչ են անում, բայց որ ամենքն էլ բանի են, ամենքն էլ շտապում են ծառապողից պրծնել, որ կպչեն այգեկութին՝ ամենայն երջանկութեանց զագաթնակէտին:

Աստուծոյ աչքն այս տարի քաղցր է նայել զիւղացոնց վերայ, թրթուռ, մարախ, խորշակ, կարկուտ, ժանգ, փոթորկալից քամի, զարնանային յորդահոս հեղեղներ ու տարափներ, ո՛չինչ երկնային ցատում զիւղի զլետվը չի անցկացել, ոչ մի ծաղիկ ունայն սեղը գետին չի ընկել, ամեն կոկոմած բացուել, բեղմնաւորուել և պտուղ է դառել:

Ուրախ են առաւելապէս այս տարի նշանուելու կորիճ պատանիքն ու արբունքի հասած հրեշտականման աղջիկները. ցնծում են նրանք և հաստատ յոյս ունին, որ իրանցից ոչ մինն այս ձմեռ չի մնալ առանց բարձակից ընկերի, ամենքն էլ արժանի կը լինին կանաչ ու կարմիր նարօտին՝ սուրբ պսակին:

Ամբարն ալիւրով լիքը, կարասները գինւով փորերը տկզած, մառանը հազարաւոր բարիքներով փքուած, իւրն ու պանիրը կճուճ բժուծից դուրս են թափում, էլ ծակ փորով աման չի մնացել. վերի ալվանումը մինչև առաստաղը բամբակի կորզովն է կիտուել՝ չանաքաւոր է կանչում, կտաւատը ձիթահանքումն է ճմլվում, ձէթ դառնում, քնջիթը բովում է դայինխանումը և մի քանի օրից արդար իւղից չը զանազանուող շիրբախտի ձէթը պէտք է տկերը լցուին ու թրփլիզ գրկուին. ուրեմն էլ ջահէլներին բաղդաւորելու ի՞նչ արգելք կայ:

Իսկ եթէ ամեն նորահարսներ ապագայի յուսով են խնդում՝ դեռ իւրեանց մէջ վիճակ չը ձգած՝ թէ ճակատագիրը ո՞ր խումար աչքերը պոփ իրան հանդիպեցնի, բնէ՞ր չը պէտք է ցնծայ ու ճխայ մեր Սամփսոնը, որ իր պատկից հարւանենց աղջիկ Սոնան ոտը 16-ի մէջն է դրել ու այս ձմեռ իւր կողքը պէտք է տաքացնի:

Ել այսուհետեւ ումնի՞ց կասկած ունի Սամփսոնը. Ասօն խաչեղբայր դառնալ խոստացաւ, իշխաններն ու շարթնեցան կամ՝ դեռ խռմիւմ, մրափում են յիմարութեան մէջ, իր դժուարութիւնները վերացել են, ամենից մեծ արգելքներն իւր և Սօնայի ծնողներն էին, որ երկու շաբաթ յառաջ իրենց մէջ համաձայնութիւն են կայացրել, մի մի բաժակ գինւով խօսք են տուել, խօսք առել գիւղական պարզ և համեղ սեղանի վերայ՝ այդու ափումը, տերեւաշատ ծառերի հովումը: Մնացել է միայն ձևականութիւնը, որ այգեբանը և դաշտային գործերը վերջացնելուց յետոյ՝ մի օր յայտնեն իրանց զաւակների նշանը և մի երկու շաբաթից՝ հարսանիքի հոգար քաշեն:

— Երկուսինս էլ մինուճարներ են, մի մին ծառի շիւ են, թո՛ղ իրար փաթաթուին, ճղքճղքնոտին, մեծանան, ծաղկին, պտուղ տան, որ ծերութեան մէջ մեզ մխիթարեն, առաջարկեց դասաբ Գալ — ափուն. լաւ չեմ ասո՞ւմ, հարւան ջա՛ն:

— Քրիստոսի բերնովն ես խօսում, ես իմ Աստուածը, Գալօ ջա՛ն, իմ կողմանէ էս օրուանից Աստուած շնհա՛ւոր անի, վճռեց Ալէքեհց Բարսեղը, հալբա՛թ, Աստու մի մատը կար էս բանի մէջ, մեր խնամոնց աղջիկը (Կե՛ք) ասում էր, որ երկու երեք տարի ա, մեր երեխէքն իրար սիրել են:

— Շա՛տ էլ լաւ են արել, դուշմանի (Բշտահա) աչքն էլ եւն

Հանել, առ՝, պապենական մենք բաղի հարեան էլ ենք, տան զրկիցներ էլ, մեր հէրերն իրար հետ են նստել, վեր կացել, մենք մանկուց իրար հետ ենք տոճնզի տուել էս բաղերի կանանչ ավներումը, մեր կնանիքն են մին մին հետ փսփսացել, հացփոխ արել, մեր երեխէքն են պստուց անփոխան, փորը բաց էս առունների ցիւերի միջին քաշ եկել, իրար հետ կլլտալով «տա փ կ են ալ ու կ ի» խաղացել, երբ որ էլ մենծացել են, իրար հասկացել՝ — էն էլ դո՛ւ ասա: Ել ես քեզանից ո՞ր լաւի դուռը պոփ ծեծէի, աղջիկ ուզէի, կամ դու իմ ընչի՞նչ չը պէտք է հաւանէիր, որ երես թեքէիր, չը տայիր:

— Կամ ընչի՞ պէտք է մեր սէրն ու աղպէրութիւնն աւելի չը պնդացնենք, Գալօ ջա՛ն:

— Մեր ջուխտ մինուճարների արեւներովն եմ երդուում, Բարսեղ ջա՛ն, որ մեր երեխէքը մեզանից խելօք են էլել, իրանց զործն էն գլխիցն են տեսել:

— Տօ՛, բա՛ նոր ես գլխի ընկնում, որ էս օրուան մի մատը քօրփէն տասն իմ ու քո խելքն ունի՞, էս օրուայ օխտը տարեկանը շատ ա հասկանում, քան թէ մեր ժամանակի 20 տարեկանը. մեր ջահէլ վախալը դու աղջիկ տղի իրար սիրել, խօսք տալ՝ լսել ե՞ս, որ մեր սատանի ձաղերն էս հասակումն երկու — երեք տարի, մէրն ասում էր, իրար խօսք են տուել:

— Ես էլ, Գալօ ջա՛ն, իմ պառաւիցն (կոշիկ) իմացայ, թէ չէ հինգ տարի մնար, ես բան չէի հասկանալ, ախա՛ր, տղամարդի խելքն հղպէս բանին կը հասնի՞:

— Մենք տղամարդիքս ի՞նչ ենք որ, Բարսեղ ջան, սկսեց փիլիսոփայութիւն անել Գալ — ափուն, մենք Ատոճու պարզ միամիտ աղպէրներն ենք ու մեր կնանոնց ձեռի աղլիները: Անումն էն ա, սաքի, որ տան գլուխը մենք ենք. շատ սուտ ա, դարգակ, սիրտ հովացնելու խօսք ա, տղամարդը կնիկարմատի անհալս-անվարձ ծառան ա ու նրա սրտի ցանկութիւնների կատարողը. կնիկն էլ որ կայ՝ տղամարդի հոգին ա: Ինչ ուղում ես՝ մտքումդ դի՛ր — տունդ ո՞նց կառավարես, գործդ ի՞նչպէս տանիս, ի՞նչ բան բռնես, ե՞րբ զարիբութիւնի՞ քրեհ — քարվանի գնաս, որդուդ ե՞րբ պսակես, ո՛ւմ աղջիկն ուզես, ո՞նց նստես, վեր կնիսաս, ես ի՞նչ դիտեմ, ամեն բան ու գործիդ՝ տնային կառավարութիւնիդ մէջ ընչանք կնկանդ մատը խառը չըլնի, մինչեւ նրա սրտովը չըլնի, գլուխ չի գալ:

— Սուտ չես ասում, Գալ — ափո՛ււ։

— Ո՞նց թէ սուտ, խօսքերս Աւետարանի կողքումն են դրուած, փորձի՛ր ու տե՛ս։ Մէկ էլ, ասենք, մոքումդ դրիր մի ձի առնես, քո բերքն ու մասիլը բարձես վրէն, ամենա քո ձեռքովը սաղացնես, օգուտը ուրիշին չուտացնես։ Կնիկդ միտք չունի, քէփումը չի գոմումը ձի տեսնել։ Մէկ էլ գիշերը պառկել ես, ողջ օրն եղի պէս բանել, չարչարուել ես, վէր ես ընկել, ասներդ ձգել, որ մի քիչ հանգստանաս, էդուց գիշերահանց աքլորականչին վեր կենաս մութէ-մութ գնաս քո աշխատանքին։ Մէկ էլ տեսար, խանութդ եկաւ, կողքդ մտաւ, պառկեց. դէ՛, քո կողակիցն աս, Աստու տուած հընկերն աս, քո թուլակողքն աս, հօ ջոկ տեղաշոր չը պտի՞ քցի իր համար, էդ Աստուած էլ կը բարկանայ, հաց-քրիստոնէի հաւատին էլ հակառակ աս, դէ՛, էն օրից որ կանանչ-կարմիր բարակ ապրշումէ պարանն երկուսիդ շինքովը պատ տուին խաչ ու Աւետարանի տակին, ձեռ. ձեռի տուին, միացրին, կնիկը քո մեղքն աս, քո շնքի կապն աս, քո կողքը չը մտած՝ դռան տակին, օխտը ճամփի միջին հօ չը պտի՞ վէր ընկնի, Աստու պատուէրը հօ քանդուիլ չը պտի՞։

— Հը՛մմ...

— Հա՛, մէկ էլ տեսնում ես՝ եկաւ։ Ուրիշ վախտ ուզում ես հետը քաղցր զրիցներ անիլ, քո տան խէր ու շաւի վրայ խօսիլ, երեսը շուռ աս տալիս, անքում, ճրրում, վռչում, թէ հիւանդ եմ, թող՝ քնեմ դու էլ՝ դունչդ բարին աս դիպչում, քեզ համար տաղ ես անում, վէր ընկնում. իսկ էս օր, որ մոքումը դրել աս շեմքովը ձի տուն չը թողայ, տեսնում ես՝ քաղցր մասլահաթների տապրակը բաց արեց. — ա՛ մարդ, քեզ մտտա՛ղ, սրտումս դարդ աս մնացել, չը դիտեմ, էս օրուայ տօլմէն հաւանեցի՞ր, թէ ոչ, աղը հօ շատ չէ՛ր, լղար հօ չէ՛ր, քո աղիզ արեով եմ օրթում ուտում՝ երեսի ողջ եղը քաշեցի, քեզ զրկեցի հանդը, քօռանա՛մ ես, քաջա՛ն, վա՛ց թէ սառել էր, համ չը տեսար, գնդերը բկումս շարուեցին, կուլ չը գնացին, ոնց էլաւ՝ երկու հատ բերանս դրի ու ոնց որ դու հանդիցը մատդ վրէն չը դրիր, ես էլ էնպէս. ախա՛ր ի՞նչ կուլ կերթաց, առանց քեզ հալալ հաց կուտուի՞, հլա բօյիդ մեռնե՛մ, ա՛յ քա, տօլմէն լաւն էր, թէ ու։

— Ա՛յ կնիկ, շա՛տ լաւն էր, լաւ էլ իշտահով կերայ, դէ՛ հերիք աս, քունս տանում աս, աչքերս գնում են, էս օր էնքան դութանի

մաճի հետ թրև եմ եկել՝ մէջքիս իլիկը կոտրուում ա, թո՛ղ քնեմ մի քիչ, որ էն զլխէն ջուրը մերն ա, պո՛ւի գնամ բամբակի վերայ կապեմ, կխաշոր ա էլել:

—Դէ լա՛ւ, կը գնաս, ասում ա ու խունջիկ-մունջիկները (շողո-
փորկուկներ) սկսում կամ թէ չէ՝ թնդթնգում, տնքտնքում, լաց
ըլում, թէ իրան շան տեղ չես քցում: Ի՞նչ անես, Բարսեղ ջա՛ն,
թաղա խնամի՛, դու էլ հօ քար չես, քնատիրոնջ հէ՛րն եմ օրհնել,
կողքս տաքացնողի սիրտը պակասցնեմ, թէ հանգստանալու եմ:

—Ե՛...է՛...է՛... Գալօ ջա՛ն, բսկի էդ ըլելու բան ա՞, հանգստա-
նալ ես ուզում, հանդիստը զերեզմաններն են՝ որ կան:

—Ենպէս չի՞, Բարսեղ ջա՛ն, ճակատներիս գրածն երբ որ լրա-
նայ, կերթանք կը պառկենք միջքի վերայ, էնքան կը հանգստա-
նանք, որ Գաբրիէլ հրեշտակը կը դայ, կողքներիս իր գունդովը կը
բզի, Ուռնայի կալը ցոյց կը տայ:

—Գրանից փախչիլ չենք կարող, դու բա՛նդ ասա:

—Շուռ ես դալիս, աղպէ՛ր, սկսում ես կտուց կտրցի տուած՝
քչփչալ, մի քիչ դէսից, մի քիչ դէնից, ինքդ չես հասկանում, թէ
ո՛նց կնիկդ խօսքը փոխեց, բերեց ձիու վրայ, ո՛նց դժուարութիւն-
ներն ու ձիու տուած վնասները մի մին գերանի չափ աչքիդ առա-
ջին շարեց, ո՛նց քո խելքումն էլ նստացրեց, քեզ համոզեց, բերա-
նիցդ խօսք առաւ, որ մեր գոմի մուրքը ձի չի տեսիլ: Հէնց էս-
պէս էլ ամեն բանի մէջ: Լաւ իմացած կաց, մինչև կնիկդ չը ցան-
կանայ, Աստու աբուի շողքն էլ տանդ միջին չի կարող պոխա դալ:

—Դէ դու ասեցիր, թէ կնիկը «տղամարդի հոգին ա», էլ ո՛ւր ես
երկարացնում, Գալօ ջա՛ն, ախար դու հէնց զիտես, իմ մաքուն
անց ա կացել քո տղին աղջիկ տալը, դո՛ւ ոչ մեռնիս, ամեն օր
Սամիսանդ, Աստուած քեզ բաշխի, աչքիս առաջին ա, փառք Աս-
տըծու՝ հասած, կատարած, բեղերն եկած տղամարդ ա, ես էլ ազափ
աղջկայ տէր եմ, երեք տարի ա իմ աղջկայ ուղղները դու-
ռըս ջարդում են՝ չեմ տալիս, դռնովն եմ դուս անում, երթկովն են
մտնում. ես էլ չեմ տալիս, թէ դեռ ջահէլ ա: Ո՛րտեղի ջահէլն ա,
դու հիմիկուայ ծէսերը զիտես ո՛չ, որ 13 տարեկան աղջիկ չեն թո-
ղում տանը մնաց, համա մերը մի հաս էր, տղէն ու աղջիկը զլիւ-
ներս կոխել հօ չի՞, որ շտապենք ռազ անել, դէ մէրն էլ խեղճ ա,

Հարսը չ'ունի, ունենալու էլ զուռը չը կայ՝ որ զայ իրա մատիցը փուշ հանի. չէինք վռազում, բայց տուն ա, առանց խօսալ չի ըլնիլ, մեր միջումը սրա-նրա տղի վրայ վիճակ էինք քցում, մէկին հաւանում, մէկէլին փնովում (~~պարստում~~), համա բո տղի անումն ընչանք օրս մտքովս չի անցկացել, մեր Քէջվանին էլ բան չէր ասել: Ինչ կանես՝ չը զիտեմ, մէջտեղն ընչե՞ր անցկացաւ, ո՞ր տեղից խանութիս գլխումը պտիտ եկաւ, էս երկու շաբաթ ա էդ կնիկը տամարս ա մտել, սատանայ ա դառել, ինձ հանգիստ չի տալիս. — ա՛յ մարդ, Սամփսոնը լաւ տղայ ա, էս օր Սամփսոնը մի բեռն եղ ու պանիր ձիուն բարձած՝ ինքն էլ քիբարի (~~ի-ի~~) միջին նստած՝ տուն բերեց, Սամփսոնն էս զեղի տղէքանց աչքն ա, Սամփսոնը հօրն ու մօրը հնազանդ ա, Սամփսոնն է՛ս ա, է՛ն ա, վերջը, վերջը, վերջը՝ Սամփսոնը լաւ փեսացու ա, Սամփսոնին աչքիս լսի պէս սիրում եմ, Սամփսոնը մեր աղջկանը սիրել ա, մեր աղջիկն էլ Սամփսոնին ա սիրել, ես իմ երեխին Սամփսոնիցը հանիլ չեմ, զուէլ պտի կամք տաս: Ես էլ տեսայ, որ խաթունիս ձեռիցը չը կարացի ազատուիլ, ոչ տարայ, ոչ բերի՝ ասեցի. — իմ կողմից Աստուած չնորհաւոր անի:

— Դէ տեսա՞ր, Բարսեղ ջա՛ն, որ կնիկը տղամարդի հոգին ա:

Ե

Հ Ն Ձ Ա Ն Ա Բ Ա Դ.

Մի արեւոյ աչգու հարաւային անկիւնումն այսօր էլ դեռ երեսը դէմ տուած՝ կանգնած է Հնձանաբաղը: Այդ մի աւերակ է, որի դազափ երկայնութեամբ քառանկիւնի կոխածոյ քարերի երեսները ժամանակի մաշող զօրութիւնից տեղ տեղ խորդուբորդուել են: Հնադէտը նորան առ սակաւն 700—800 տարիներ կ'ընծայի: Ո՛չ տաճարի է նմանում այս աւերակը, ո՛չ մի հնադարեան իշխանական պալատի և ո՛չ մեր աշխարհքում մեծ անցքերի և ճանապարհների վերայ շինուած քար վանսարայ կոչուած իջևանատեղերի: Ոչ մի յիշատակարան կամ արձանագրութիւն ենթադրութեան տեղիք չի տալիս. միայն Հնձանաբաղ անունն է, որ փարատում է ամենայն տարակուսանք. այդպէս կոչուում են Արարատեան աշխարհի այգեշատ գիւղերի այգիների մէջ տեղ տեղ մնացած հին հնձանների ա-

ւերակները. անունն ինքը ցոյց է տալիս, որ դոքա բոլորը Հնձանատեղիներ են եղել, ուր տրորուել են ու մզուել մեր պապերի ձեռքով տնկած ու հասցրած խաղողները՝ Նոյ մեծ պապից սկսած՝ մինչև մեր օրերը:

Հնձանաբազը դրսից ոչինչ չի ներկայացնում. այգետէրերը, երևում է, թափուած քարերը ժողովել են ու թափել ներսը գաւթի մէջ. այդպէս էլ է, բազումը քարի կոյտերից աւելի ոչինչ չը կայ, խոտն էլ՝ այգու անբաժան ընկերը, տեղ չի գտել, որ դուրս դաշտեղ տեղ միայն աներեսի պէս գլխները դուրս են հանել քարածերպերից եղինջի թփերը, որոնք մարդաշափ բարձրանում են և աշունը չորանում:

Զը զարմանաք, եթէ ասեմ, որ Հնձանաբազը դարերով ո՛չ միայն աղամորդու ոտք չի մտել, արևն ու անձրևն էլ դժուար են թափանցել: Հինաւուրց հաստաբուն թեղի ծառի խիտ և անխնամ թողած ոստերն են հովանաւորել ամբողջ աւերակի վերայ, ծառը բարձրացել է և նորից վրանանման կռացրել իւր ճղքները և մինչև գետինը փրուել. էլ ո՛ւմ ցաւն էր կտրուել, աչք ու երես ծուլտել և մի դատարկ հետաքրքրութիւնից ներս սողալ Հնձանաբազը:

Թեղու փշանման բարակ ոստերի ծայրերը չէին միայն որ Օ. գիւղացիների ոտքը կտրել էր Հնձանաբազիցը. երկու արդելք կար և երկուսն էլ օրինաւոր. առաջինն այն էր, որ թեղուն զիպչելը մեղք էր համարուած. թեղին Թուխ-մանուկի տնկածն էր. գիւղի երեխան էլ գիտէր, որ թեղու ոչ մի ճղքին դանակ, էտոց, կացին չը պէտք է զիպչէր, ապա թէ ոչ՝ արիւն դուրս կը գար. թեղին հէնց ինքը Թուխ-մանուկն ա, բարակ ոստերը Թուխ-մանուկի երակներն են, իսկ տերևները՝ նորա զգգուած մազերն են:

Թուխ-մանուկը մերձակայ պարսկական գիւղի մօլլի որդին էր, նա քրիստոնեայ է դառել, նորա մոլեռանդ հայրը կամեցել է որդուն սպանել, հալածելով հասցրել է մինչև Օ. գիւղի Հնձանաբազը: Մանուկը տեսնում է, որ հայրը հասուէհաս է, խնդրել է Աստուծոն, որ իրան ծառ շինի, հօր ձեռքից ազատի: Խնդիրքը կատարուել է. մանուկի զգգուած մազերը ճղքներ են դարձել և մօլլի մանեկուն արդելք եղել: Վատաղած մօլլէն այնու ամենայնիւ մի փոքր իւր փափազին հասել է, թրով տուել է ծառի մի ճիւղքը քերցել: Այսօր էլ

կը տեսնես քերցուած տեղում չորացած ու սեացած արիւնը:

Նրկրորդ աւանդութիւնը Հնձանաբազը շինում է օձերի թագաւորի պալատը. թափուած քարերի խոռոչներն են թագաւոր-օձի ապարանքները, այնտեղ են նորա զօրքերը, այնտեղից է օձի թագաւորն իւր ամբողջ բանակով՝ հազարաւոր օձերով կռիւ գնում Մասիսի ձորաթմբերում, կամ Արագածի կրճքի ճղուածքում՝ Ամբերդաց անդընդախոր ձորի մէջ դառնուած թագաւոր-օձերի վերայ:

Հնձանաբազի օձի օջաղի դուռը փոքր ինչ հետու գտնուած քարակոյտերի տակին¹⁾ է: Շատերը տեսել են բռնաչափ բազմանկիւնի ադամանդը, այն հուլը, որ օձի թագաւորը բերանումն է պահում ու արեւող արած ժամանակ հանում, բազմացնում իւր շորս սրգերի մէջտեղը, թաղի տեղ դորձ ածում: Այն անում է, որ գոհարի շողշողիւնը խոտղեցնի մաիկ տուռներին աչքերը, որ չը գան իր խաղաղութիւնը խոռովեն. ժամանակ ժամանակ թագաւոր-օձն ինքն էլ սիրում է զուարճանալ իւր անդին գանձով. նա յուլիսի կրակ թափող շոքերին՝ ճիշդ կէսօրին՝ երբեմնապէս դուրս է գալիս իւր նազիր-վէզիրներով, իւր անհամար զօրքերով ու զալարուում, կուտապ կուտապ գալիս օջաղի ծակի առաջին, հանում է բերանից շողակը և ժամերով վերեւ շարտում՝ բերանով բռնում, քցում՝ կալնում:

Հէնց էս խառնիխառն պատմութիւններն են, որ Հնձանաբազի ներսն անմատչելի են արել նոյն իսկ այգու տէրերին:

Դեռ էլի նոր առապելներ կարող էին հնարուիլ վերջին երկու տարիների մէջ, եթէ դիւրահաւան պատւանդերից մէկին, կամ միւսին հանդիպէր լսել Հնձանաբազի ներսի յաճախակի փափտցները, կամ տեսնէին՝ ինչ որ մենք պիտի տեսնենք:

Անկարծիք, շատ ապահով են եղել երկու հոգի, որ իւրեանց խորհրդատեղին ընտրել են Հնձանաբազը:

Եւ արդարեւ, ոչ Ալէքսնց Բարսեղն իւր կնոջով և ոչ հանրահաշակ Գալ—ափուն մի օրից մի օր մաքներովը չ'անցկացրին, թէ

¹⁾ Ծանօթ. Ալապիսի օձաբնէր աղօթ շատ զիւղում կան, 100 աւար մի կանգնաչափ օձեր միմեանց զլիս թափուած՝ հաւաքուում են բնի, կամ օջաղի առաջին և ժամերով վաշելում արեւի տաքութիւնը: Օջաղի օձերը ոչ իւրեանց բնի առաջից կը հեռանան և ոչ կը կծեն:

ընչի՞ իրանց մի՛նուձարները ժամերով անդարտանում են իրենց աչդի-
ներին խոր թմբերումը:

Կասկած տանելու տեղիք էլ չը կար. Սամիտներ մանկազր ձեռ-
քին՝ թմբերի միջումն էր, ուրեմն աշնան հունձն էր անում, խոտ էր
հնձում: Խակ Սոնան դեղձի ծառերի տակերն է ժողովում, տանում
խւրեանց և հարեան Գալ— ափունենց լաջն միջնապատի քարերի
վերայ շարում, չորացնում: Բանն այն է, որ ոչ թմբերի խոտն է
հնձելով վերջանում, ոչ դեղձն է պրծնում, ոչ էլ մեր ջահէլներն են
թմբերիցը զուրս գալիս:

— Բ'ս.... Ը'ս.... Ը'ս....

— Բ'ս.... Ը'ս.... Ը'ս....

Աւաջին շշուկը լսուում է Հնձանաբազի գրսւից, երկրորդը՝ ար-
ձագանդ է տալիս ներսից:

Եւ ահա մի բարձրահասակ սեւաչեւայ աղջիկ, սունելով իւր խոււ
սուլոցի արձագանդը, չորս կողմը զգուշաբար աչքը պալտեց և ներս
սողաց Հնձանաբազը:

— Մեռայ սպասելով, աչքս ջուր կտրեց:

— Ձեր կարելի, մէքս հազար բանի ա դնում:

— Նստի՛, ոչի՛նչ:

Աղջիկը նստեց կոխ շարաքարերից մէկի վերայ:

Նորա կողքին՝ բաւականին հեռու, տեղաւորուեց խօսակիցը:

— Քի՛չ էլ հեռու, մի՛նթանէս (չթագգէս) կը արորես, մէքս կի-
մանայ, լաւ չի՛:

— Ել ո՛նց հեռու, քարի պունդին եմ, քիչ ա մնում՝ վեր ընկ-
նիմ, երկուսիս մէջտեղն երկու մարդի տեղ կայ:

— Ա՛յ:

Խօսակիցը մի խոր հոգոց քաշեց և մութացկանի պէս վիզը
ծռած՝ աջ ձեռքը պարզեց:

Օրիորդը հանգարտութեամբ նորան երկարացրեց լւր կողմից
ձեռքը:

Առաւ անձանօթն իւր կոշտացած մատների մէջ օրիորդական
քնքուշիկ մատների ծալքերն և հեռուից շարունակ շփում էր:

Այս գործողւթիւնը կատարուում էր ժամերով լսիկ-մնջիկ:

Բնութեան հանդարտ ժամանակէն, աչն էլ միայն զիշերը, երբ ամեն շնչաւոր մրտաւաճ են և օդն ամենանուրբ է, ամենասուր ա-
կանջը շատ մօտից հազիւ կարող է որոշել երկու անընդհատ միա-
պաղաղ շնչառութեան ելեւէջներ: Ուրիշ ոչինչ ձայն չէր խանդարում
Հնձանաբազի խաղաղութիւնը:

— Հերի՛ք է, հոտ չառնեն, աշխարհքի մէջ մի մատը մեզր չը
դառնանք:

Պատասխանը երկու ուսերի վեր բարձրանալն է, որ ժողովրդի
մէջ ակամայ համաձայնութեան արտայայտիչ է, այսինքն՝ թո՛ղ քո
սասածը լինի:

Տեղերումը շարունակում են պինդ նստել:

Անցնում է էլի՛ կէս ժամ, աւել, պահաւ:

Մի նոր շարժում՝ զլիսով դէպի այգու ափը ցոյց տալով՝ աղջկայ
կողմից:

Յօժարակամ համաձայնութեան նշան՝ զլուխը դէպի աջ ուսը
թեքելով:

Աղջկայ բարակ մեղրամոմանման մատները պինդ սեղմուեցան
ընկերի փայտեայ կշտ մատների մէջ, մի մի խանդաղատական հա-
շեացք դուրս ցոլացին երկուստեք, սեւեռուեցան փոխադարձ միմեանց
աչքերում, թեղի ծառի թփերը յետ բացուեցան և մեղծանօթ Սօնան
արդէն թափ է տալիս մեծ մեծ ալանու դեղձերը, քաղլակի մէջ
լցնում, ուսի վերայ դնում և դուրս զալիս թմրերից:

— Աղչի՛, տարի ա քաշում քո թումբ մոնել-զուս զա՛լի, կըլ-
տամբում է մայրը:

— Է՛հ, ես ի՛նչ գիտեմ, սրտատրոփ հեւալով փախում է, քան
թէ պատասխան է տալիս Սօնան ու քաղլակը վայր դնում:

Եաւական բողբոջներ են անցնում, մինչ նորա կրծքի տախտակն
խւր վերայ բարձրացած երկու բոնցկաչափ գնդակներով՝ դադար է
առնում բարձր ու յամ անելուց:

Սօնան նստել, դեղձ է կլլում: Նրբանի նահանգի գաշտային
մեծ աղբէլից զիւղերի աղջկանց սիրելի պարապմունքն է այս: Ալանի
են անում նրանք, այդ անդական աղնիւ մրգերից մինն է՝ ձմեռը նորա-
փետաներին զոքանչների կողմից թաւաղաց անելու: Այ՛ այլ ինչ է

աշանին, եթէ ոչ կլարած, չորացրած, կորիզը հանած, ներսի դատարկութիւնը մանր ծեծած ընկուզով լցրած ղեղձը:

Թնդում է Ալէքենց Բարսեղի կին Մարգարտի սիրտը, նա աչքի պոչով նայում է իւր հոգու ճրագ դատեր վարդանման ու շառագունած գէմքին և ցնծում է ուրախութիւնից: Մայրական դորոմիւս արտափայլում է Մարգարտի երեսին. հազար ու մի խառնաշփոթ, ուրախ ու տխուր մտածմունքներ կաշճակի պէս պանծում են նորա զլիտով: Նորա աղջիկը հասել է, երեսը 15 օրական լուսնի նման յետ է գնացել, սև սև աչքերը՝ երկայն ու խիտ արանանունքներով՝ դուրաչափութիւն են կազմել թանձր, թուխ թուխ, կեռ. կեռ. յօնքերի հետ. իւր Սօնայի չափաւոր արծուի քիթը միանգամայն յարմարուել է կիսաձուռած, կիսակորիկ ծնօտի կամարի հետ, նորա կիստարի փոքրիկ բերանը՝ բարակ և թափանցիկ շրթունքների տակից՝ փայլին տուող լուսաշար մանրիկ ստամոքսի հետ՝ անդխտակցաբար յետ է բացուում, որ կարմիր աչտերի ծալքերին շարունակ խաղացնի համեստ կուսական ժպիտը: Հապա լացն, փայլուն ծակա՞տը, որի վերին մասը ծածկուած է մետաքսեայ թաշկինակի տակ. հապա երկայն, բարակ մէջքը, եղջերուի սիգապանծ պարանոցը, կանոնաւոր իրանը, 12 հաստ հիւսիսը վրան ծածանող թիկո՞ւնքը. — բոլորը, բոլորը միասին առած՝ մի կատարելութիւն են ընծայել Սօնայի շքնաղ կազմուածքին, մանաւանդ այս րոպէին ղեղեցկութիւնն իւր գահը զրել է նորա երեսին:

Մարգարտը լոխի աչքերը գէպի երկինք բարձրացրեց, նորա շրթունքները հանդարտօրէն շարժուեցան, նա աղօթք է մրմնջում, գոհանում է իւր բաժին Ատուածանից, Աուրբ Տիրամօր պաշտպանութեանն է յանձնում իւր անուշ գառնուկին և մի բարի բաղդ է խնդրում:

Իսկ աղջիկը:

Նա, ինչպէս ասացինք, երեսն արեւմուտք, նստած է ծառի տակին, ղեղձ է կլպում և ժամանակ առ ժամանակ աչքի պոչով գէպի հարաւ է նայում. նա կարծես վախում է, թէ իւր շարժմունքները կասկած կարող են զարթնացնել մօր սրտումը, գէմքին իրան կը մասնէ, այդ պատճառաւ նորից աչքերը կորացնում է:

Մայրը բան չի՝ հասկանում, բայց Սօնան հանդիսաւ չէ, զող՝ սիրտը դող. նա սպասողական դրութեան մէջ է:

Այո՛, Սօնայի աչքն երկար ժամանակ որոնում է խաղողի որ-
թերի տերեւների միջից մէկին. նրա սիրան իրեն կրծատում է.
նա մեղաւոր է համարում իւր գլուխը, որ այդքան շուտ գրկեց մի
ուրիշին երջանկութիւնից, որ կապիլ, կաշկանդել է նուիրական քարի
վերայ իւր անմուռն խոտակցին:

Պարտական էր Սօնան մտածել, մօտ մի ժամ է թողել է ինքը
Հնձանաբազր, իսկ թեղի ծառի շատերը դեռ յետ չեն բացուել:

Վարդարիսը ոչինչ նկատողութիւն չարեց, երբ իւր աղջիկը պատ-
ուական խոշոր գեղձերի կեսը միայն կձպեց, միւս կեսն շտապաւ
ճղտեց, սալայի մէջը շարեց, դրեց զլսին և թմբերի միջով ուղղուե-
ցաւ դէպի միջնապատը:

—Վ'ս... ր'ս... ր'ս...

—Վ'ս... ր'ս... ր'ս...

Նորից թեղու ճղնիկները շարժուեցան:

Սօնան մի րոպէ կանգ առաւ քարի առաջին, զլուխը ծանր տա-
րաւ ու բերեց դէպի աջ ու ձախ ուսերը՝ իբրեւ յանդիմանութեան
նշան՝ և ականակց պարզ հեղուկը՝ առաւօտեան ցօղի շիթերի նման՝
ցած իջաւ աչքերի աղբիւրաներից:

Նա նոր բան չարեց. նորա աչքերը հետեւեցին քարի վերայ ար-
ձանացած՝ քան թէ նստած էակի տեսանելիքին. պիմացի աչքերն
արտասունքից ուսել էին: Սօնան նստեց. Սօնայի մասները նորից
շիւուեցան:

—Ամօթ չի՞, երկխալ ես, չնչաց Սօնան:

—Սպանի՛ր, որ չե՛մ կարողանում. ընչանք ե՞րբ, աս'ա ու պրծի
էլի՛, մի անգամ մորթի՛, կամ կենդանացրո՛ւ:

—Ա՛յ աղաջ, ո՛նց ասեմ, ախար էս անտէր երեսը միս ու արիւն
ա, զաբաղիանի կաշի հօ չի՞, ախար մեր գլուղումն էսպէս զլուխը
քարը տալ էլ լսել ե՞ս, ինչ որ մենք արինք:

—Քո կամքը չի՞, թէ չես ուզում, քացով տո՛ւր, գէն քցի՛:

—Ամա՛ն, Սամիտն ջա՛ն, գլխովդ պախտ գնամ, էդ խօսքն ինձ
մի՛ ասիլ, իմ օրն առանց քեզ սեւ ըլնի՛:

—Բա՛ս, էս ո՞ր քարովը տամ իմ գլուխը, երկու երեք կօյոյ տա-
րի ա գուլ ես չինել, ոտդ կոխած տեղն երեսս եմ գնում, աչքդ թե-
քած վախորդ մահս եմ միտս բերում, զիշերը քուռա ա փախել, ցե-

րեկն անգնջում կեղեղակ եմ դառել, օրերն իրար քամակից չարխի նեմն զլորուում են, ընկեր-ողէքանց միջին մատով ցոյց տալու եմ դառել, ոչ բերանումս ա լեզու մնացել, ոչ զլսումս խելք, նրանք հազար են հարցնում, ես մին չեմ կարողանում պատասխան տալ, մի ժամանակ զիժ մոզի էր անումս, հիմի ուրբաթ ախօս են զրել, ուզում ես ընչանք կենամ, որ զեզի զաղանները, իշխաններն ու քէթխուղէքը քեզ յափշտակեն, իրանց յորրազ, պարծենկոտ, հաւազող տղէքանց ճանդը քցեն, ես էլ ես գտակը զլսիս՝ Սամփսոն ա-նումով, ողջ առողջ զետնի երեսին համ ինքս ման դամ, համ իմ թշնամին. նա էլ երեսիս բան չասի, հրնկեր տղէքանց մօտ պարծե-նաց, թէ ես մի հոգեւորի կաքաւն իմ թոռն ընկաւ. իրիկունն էլ զայ քեզ մօտ, մինն տաւն աւելցնելով՝ իր զլուխը զովի, ինձ վրայ ծիծաղաց. դու էլ քիթդ թափ տաս ու ասես՝ ա՛չքն էլ հանեցիր, նա ի՛նչ իմ մարդացու արժան տղայ էր....

— Սամփսոն ջա՛ն...

— Յետոյ դու էլ քո թոյ ու թուշ (Հասկանից Երչիւն) հարսն ու տղջիկների մօտ բերնէ բերան քցես, ասես՝ որ երեք տարի չը-ւաքիւ հետ քաշ էիր տալիս, վերջը բերանս բաց թողիր, քաղցր թի-քի տեղակ թող ու փէջին փշեցիր ա՛չք ու բողաղս...

— Աճօ՛թ քեզ, Սամփսոն, որ երկու տարի ա, անպարան կա-պիլ ես ինձ տոխցի, քաշ ես տալիս ու էլի վրէս կասկած ունիս:

— Աղչի՛, կասկած չեմ անում, զիտեմ, որ թագաւորի տղի հետ ինձ փոխիլ չես, բաց քանի՞ քօտ կապէկ ածի: Էս օր աշուէք ա, Աստու բարիքը վերեքուում (Հասկանից) չի, էս տարի զիւղումն ինչքա՛ն տղայ ու տղջիկ կան, որ քթերն անջախ են սրբում, պտակ-ուելու են. քեզ յայտնի ա՛ որ երեք տարի ա, ողջ զեզի ա՛չքը քո վրէն ա, սիրունութիւնդ էլ որ յետ ցնենք՝ հօր մկնուճարութիւնդ, էսքան մուլք ու կայանքը քեզ ա մնալու, եղալի թիքայ ես. տեղի-ցը վեր կենողը գտաւ՝ ապրանքի ա ման զալիս, թէ որ էզուց հէ-րրդ եզան նման տկանջիցդ բռնի, տոյ մի գրափու կամ սուղիի տղի, դու ի՛նչ կանես, կարա՞ս ծաղուն հանիլ, կարա՞ս հախաւակիլ:

— Վա՛յ զլսիս, Սամփսոն ջա՛ն, վատ վատ, սիրտ պատուացնող խօսքեր մի՛ տսիլ, Աստուած մի՛ տրասցէ, Աստուած ինձ էն օրը մահ տալ:

—Տօ՛, ի՞նչ մի՛ արտայայտե՛ք, զու՛ չը զիտե՞ս, որ երեք տարի առաջ զիտե՞ս, որ ոտդ 13 տարին զրիթ թէ ոչ, որը մին ա, խնամխօսներդ տասնութի՛ն:

—Ղորթ ա՛, բաց տեսնու՞մ ես, որ հէրս չի տալիս:

—Տօ՛, էն օրն ասում էր աղջիկս ջահէլ ա, էս օր ի՞նչ խօսք ունի. տօ՛, էս տարի որ քեզ չը պատկեց, էս ձմեռ մեր քար ու քանդ զեղի նամարդ ազատի տղէքը ձեր մարագումն անկրակիլ խոտ կը թողա՛ն, ձեր բազերի բարունակներն ու տաշնակները քօքի վերայ կը մնա՛ն, ձեր գոմումը տաւար, ձեր թատերի վերայ հաւեր կը թողա՛ն. չե՞ս իմանում, որ մի կարգ ջահէլներ կան, որ տնքանդութիւնից ու գողութիւնից աւելի՝ ձեռքներիցը բան չի դալի՞ս. չե՞ս իմանում, որ էդ վախլուկ այտապարակները չօրումը մուկն են դասնում, զեղումը կատու, հիմի էլ որ քուչովն անց ես կենում, զո՛ւ ես բերանների մատաքը:

—Ե՛հ, հողեմ դրա՛նց գիժ ու խեղճ զուլին էլ՝ իրանց վրայ թըքողինն էլ. քո մի մուռտառ մազը կը փոխեմ նրանց գլխի հէ՛տ:

—Էդ ես շա՛տ լաւ գիտեմ, բաց թէ որ խօսքը քեզ հասցնեն, քո կամքը հարցնեն. ոնց որ բռիս միջին զիտեմ, որ եզուց հէրդ իր մուկն երուելուց ու կորատուելուց ազատուլու համար՝ աչքերը հուպ ա տալու՝ քեզ զիտանոց սեխը քցելու:

—Վէ լա՛ւ, զուք էլ շատերիցը մինը, թո՛ղ քո հէրն առաջիկութեան անի, զայ ինձ ուզի. հէրս էլ կը տայ, չէնքով շնորհքով աղայ ես. էլ ինչի՞ ես ինձ զօռ անում, հողիս կատիկս հասցնում, որ ես մօրս ասեմ:

—Աղչի՛, բա՛ զու չե՞ս իմանում, որ հիմի շնորհքն ու խելքը չեն հարցնում, հէրդ գիժ ա, որ սուղիս—տանտեքների գնչերին տայ՝ յետ դարձնի, թէ ես զասար Վալօյի տղին եմ՝ աղջիկ տալու:

—Յիսե՛մ սուղիէքանց զուլը, նրանց ամենքի տղէքն էլ մի մի բլնդեազ անշնորհքներ են, քո ոտը չ՛աժեն, նրանց ո՛վ կտանի:

—Տօ, ջանի՛դ մեռնեմ, տղի լաւութիւնն ո՛վ ա մօիկ տալիս. սուղիէքն են քո հօրը պէտքը, որ եզուց զեղամիջին քամակին կանգնեն պահապան հրեշտակի պէս. զու որ սուղիէքանց, կամ զլափու հարս զառնաս, հօրդ ոչ ով չի կարող տակ, թէ աչքիդ վերեն

ունք կայ, ձնից ու արեւից աւել՝ ձեր բակն ոչ ով չի տա դնիլ. զը-
գիր-եասավուլի ձէն ձեր քուչումն էլ չի լսուիլ:

—Բա՛ն քո հօրն ասա՝ ամենի աչքն էլ հանի, էղուց զայ հօ-
րիցս ուղի, նշան զնի, բոլորի բերանն էլ ցնի:

—Հաղար հետ եմ քեզ հասկացրել, որ իմ հերը ձեր զոնովն
անց չի կենալ, նա զխօի, որ դու մեր ատամի ծամ չես, նա իր ո-
տրն իր կարգեալից դուս չի՝ մեկնիլ:

—Նիւի՞, դու ք ո՛ւմնից էք պակաս էս գեղումը, ձեր կարողու-
թիւնը մերիցն ընչո՞վ ա պակաս, մենք էլ երեք ըսող ունինք՝ դու ք
էր, ձեր արտերը մերիցը շատ, ձեր տունը մերիցն աւելի լաւ, քո
հօր պատիւը գեղամիջումն իմ հօրիցն առաւել:

—Եղ հօ՛ էղպէս ա, բայց հերդ խելքը հացի հետ չի կերել,
որ զլամսուն Գալ-ափունի հետ փոխի:

—Բառ ի՞նչ անենք:

—Ելի ասե՞մ, երկու տարի ա զլսումդ հալում եմ, դեռ էլի
հարցնում ես. հասկանում եմ, դու ինձ շինել ես մի հասարակ ձե-
ռի աղլուխ, քիթդ կը սրբես՝ կը սրբես՝ ու մի օր, երբ արշամ, խոսս
աղլուխը ձեռդ կ'ընկնի, ինձ զէն կը շարտես:

—Սամիսոն ջա՛ն, խեղճ արի՛:

—Հա՛, հա՛, ի՛նչ ես կորցնում, երկու երեք տարի ա՛ քո շունն
ես շինել, քամակիցդ քցել, մի օր մի մնի կոոր չես քցել բերանս.
երկու տարի ա, ոտիդ տակին փռուած եմ, թո՛ղ էս անդիպու քարը
լիզու ընի՛ վկայի, ձեռդ բռնելուց աւել ընչի՞ եմ՝ արժանացել.
շունչդ շնչիս կպե՞լ ա, երեսս երեսիդ զխօւլ ա, բերանս բերանիդ
դոն առե՞լ ա. չորիդ էլ չեմ համարձակուում զխօւլի. քարասի՛րտ,
թէ որ սրտումդ սէր կայ, ե՞րբ խնայեցիր, ե՞րբ մօտ նստեցիր, ե՞րբ
թողացիր մասս երեսիդ կոչի, ասա՛՝ ե՞րբ: Մի ուրիշը որ ներս մտ-
նի Խուխ-մանուկի տունը—էս Հնձանարադը, մեզ էսպէս տեսնի, չի
տալի՛ խռոված տէքերակիներենք. էս քարն էլ էնքան մեծ ա՛ որ
մեր արանքումը հաստափոր դէլ-Մուկուչին տեղ կանի:

—Սամիսոն ջա՛ն, չե՞ ես աղջիկ եմ:

—Սաքի նոր խօսք ասեցիր, առաջինն ա՛ որ խուլ աղանջս
լսում ա, դեռ մի սաղ տարի հոգիս դուս եկաւ աչքով ունքով թը-
փերի տակիցը, ծառերի շուփքիցը քեզ հասկացնելով, որ՝ նեքսես

օջաղ եւս վառել. իրանած եղան նման օխար հաւողի թումբը մին էիր թռչում, մօրդ կուշտն ընկնում. կամաց կամաց Աստուած սիրտդ զուժ քցեց, սկսեցիր մի տարէն ճամփայ հեռուից ջանդալների (խախտ) արանքից՝ զող կասուի պէս՝ մարաղ մանել, ինձ մտիկ տալ. քիչ քիչ ոտդ յառաջ դրիր, ի հարկէ, քարասիրտ հօ չէիր, տեսնում էիր, թէ ո՞նց եմ շլինք թեքել, անխօս քեզ պոնկնոտում, աղաչանք, պաղատանք անում, ո՞նց էի մղկոտում:

— Հերիք չի, Սամիսոն:

— Յետոյ հը՛... հը՛... հը՛... հը՛... քիչ, քիչ, քիչ, քիչ եկար կանգնեցիր մեր միջնապատի տակին՝ ձեր թփերի միջին ու շլինքդ ծռած մունջ մունջ մնացիր: Ախ, քո ցաւը տանեմ, չէն ի՞նչ օր էր ինձ համար, ի՞նչ պատկերք էիր դառել, ի՞նչպէս էիր կարմրել առաւօտուան նորցեա բաց էլած կոկոմ վարդի նման ու վռչնել, քիչ էր մնացել՝ ամանելուցդ երեսիդ կաշին պատուռի, արիւնը գնաց: Ըսկի մաքիցս չի ընկնում, ոտներս դեանիցը կտրուել էին, վերացել էի, հէնց իմացայ, թէ էս ա հրեշտակս զրկումս ա, էս ա ջէրանս իր ոտովն ա եկել, անումդ տուի, Սօնա ջա՛ն՝ մղկոացի: Գառան նման շլինքդ ծռել կաննել ես, ոչ ձէն՝ ոչ ձուն:

— Է՛հ, Սամիսոն, հազար հետ ասել ես:

— Կը թողա՞ս մօտդ դամ, հարցրի քեզ. — ձէ՛ն չը կայ: Սօնա՛, ախար ես քեզ սիրում եմ, ասեցի: — Դու քարացել, տեղդ մխտել ես:

— Աղչի՛, մի ձէն հանի տեսնեմ, զու էլ ինձ սիրում ե՞ս, թէ չէ, հարցրիքդ: Ե՛ն ինչ քաղցր հրուպա էր, երկնային թաղաւոր, բերանդ փակ մնաց, բաց մեռնե՛մ էդ ծիծեռնակի թեւ աչքերին, որ մի մտիկ տալով՝ սրտիդ սրտը (Գաղաթիւ) քեզանից զուս խլեցին, աչքերդ քեզ մատնեցին, է՛ն ի՞նչ նեո ու զիւլլայ էր, որ աչքերիցդ միեցիր սրտիս մէջը: Չանիդ մեռնե՛մ, ասեցի, ու ոնց որ թաղին ծլունդ ծլունդ անելով՝ երկու զօլաջ (Ժա 2 առ 2) տեղը մին ա թռչում, իր որսի քամակիցն ընկնում, ես էլ պատի զլխովն ինձ ձեր բաղը քցեցի:

— Շա՛տ ճանդդ բնկաւ, ա՛յ:

— Հեռու չէիր փախչիլ, համա քո մի մատը թափ տալն ինձ անշունչ քար շինեց, տեղն ու տեղս թողեց. անիրաւ, ո՞նց շունչդ բաղի ափումն առար:

— Տեսա՞ր, որ երկ' օրից էլի յետ եկաց, քիչ, քիչ թողացի ինձ մօտ գաս, մէնակ հեռու կանգնես:

— Բայց որ ձէ'նիդ չարժանացայ:

— Բնտուր հնարքն էլ դուար, էլ ի՞նչ ես ուզում:

— Մեռնեմ Թուխ — մանուկի զօրութիւնին, որ թեղի ա դառել, ճղքճղքնոտել, Հնձաբանապի վրաց փուռել, իսանաորդու չի թողում իր փէշի տակը մտնել: Հալլա' թ' իր կամքն էր, որ մտքումս տուն տուեց, ինձ դպա իրան քաշեց: Միտք անելով հողիս բերանս հասաւ, թէ ո՞ր տեղ մի խոլվաթ, աչքից հեռու տեղ դանեմ, քեզ տանեմ, որ մեր դալ՝ գնալն աշիեարաց չըլնի. կարծես, մինը կուռս քաշումս դպա թեղու փռչակը. ոս', մի մանեմ, տեսնեմ՝ ի՞նչ կայ էստեղ, ասեցի, ու երես ու ձեռ ճղտելով՝ ներս մտայ, աղինջներն յետ բաց արի և էս տափակ սև քարը մեզ համար նստելու տեղ ջոկեցի:

— Ես էլ ի՞նչ շուտ կամ եկայ:

— Անիրա՛ւ, դու մտքումդ դրել ես ինձ ողջ ողջ գերեզման դնել. երկու շաբաթ օձի լիզու թափեցի՝ լնչանք կարողացայ երկու մատդ բռնել ու թեղու տակը մտցնել:

— Դէ՛ համ տարար, համ ձեռներս խաղալիք ես չինել, էլ ի՞նչ ես ուզում:

— Ուրի՛շ:

— Ուրի՛շ էլ տ'ւա՝ քանի նշանուել չենք, ըտուց աւելին պա՛ս, ագապ աղջիկն անխորիլ շամամ ա:

— Բաս մարդ երկու տարի շամամը ձեռումն ունենաց ու նրա հոտին չարժանանա՞յ: Սպանի՛ր ինձ, Սօնա՛, էլ չեմ կարող, կուգես ճշա՛, աշխարհքը զլխիդ հաւաքիր, ես պոի իմ շամամիցը հոտ քաշեմ, ի՞նչ ես ասում, ասա՛, հրամայի՛ր, վճռի՛ր, թո՛ղ մի հոտ քաշեմ քեզանից, թո՛ղ մօտ նստեմ, քարի վրայ արանք չը փնայ, մի երեսս երեսիդ տունի, Սօնա ջա՛ն:

Սօնէն լուռ էր:

— Սօնա՛, մօտ նստե՛մ:

Ոչինչ ձայն:

Սամփսանը մօտեցաւ:

Սօնի կողմից ոչինչ չարժում, կամ բացասութիւն:

— Սօնա՛, կը թողաս կուռս շինքովդ պատ տա՛մ:

Սօնայի պարանոցն ինքն իրեն ծռուեց զէպի Սամփսոնը:

Նրանց շրթունքները մօտեցան: Նրկու ամբողջ տարուայ մէջ առաջին համբոյրն էր, որ Սամփսոնը քաղեց իւր սիրելուց: Կուսակա՛ն սուրբ համբոյր:

— Հիմի՞ ինչ ես ասում, բոպէական գրկախառնութիւնից յետոյ հարցրեց Սամփսոնը:

— Ի՞նչ պէտք է ասեմ, էս իրիկուն սև երես մահապարտի պէս պտի մօրս ոտներն ընկնեմ, ամեն բան իրան յայտնի անեմ: Կասեմ. ա՛յ մէր...

Սօնան զողում էր ամբողջ մարմնով, խօսքերը կցուեցան ատամներին մէջ:

— Ի՞նչ ես սիրադ կոտրում, Սօնա ջա՛ն, ընչի՞ փոշիմանածի պէս դառար, թէ չես ուզում, թէ ես արժանի չէի քո մի պալին, կարող ես մի շահ-սիլլայ տալ, զէն քցիլ ինձ, զնալ քո սրտի սիրածին ուղիի: Փառք Աստծու, իրան էլ լաւ յայտնի ա, որ էս օր երկու տարուայ մէջ առաջին անգամը շունչս շնչիդ, պոօշս պոօշիդ զիպաւ վարդի տերէն էլ մի հետ ձեռք տալով չի սալարում, չի չմքում: Թէ մի պաշով աչքիցդ ընկայ, թէ չես ուզում իմն ըլնել, կարծիր՝ թէ Աստուած քեզ մի աղպեր ա տուել՝ օտարութիւնի մէջ էր, քուերը կարօտել էր, եկաւ, գրկեց, համբուրեց, սրտի փափազն առաւ, ուրախութիւնից սիրաբ պատուուեց, մեռաւ: Հէնց իմանում ես՝ զժուար բան ա զլուսա քեզ մատաղ տա՛լը, էստեղ նստի, գնամ մեր հնձանից զամէս բերեմ, կը տեսնես:

Սամփսոնը վեր կացաւ և գնում էր:

— Ո՛չ, ոչ, սխալում ես, Սամփսո՛ն, տեղդ պինդ նստի, կուռը քաշեց Սօնան, զուր ես զամի քամակիցը գնում, դու զամէն բերնումդ ունիս, որ սրտիս մէջն ես ցցել ու խառնում, սիրող սրտի վրայ ծիծաղում. ես փոշիման չեմ քեզ սիրելու համար, դու իմ զլուխն ես, իմ ջանն ես, իմ սիրտն ես, զլիսի տէրն ես, դու էդ մի պոօշը պոօշին կպցնելովդ չի տիրեցիր իմ սրտին, ի՞նչ երկու տարի, ընչի՞ չես ասում երե՛ք, չո՛րս, հի՛նգ... իմացիր, երեխութիւնից Աստուած մեզ իրար համար ա արշայ քցել, աներս ձեր տանը՝ բաղերս ձեր բաղին կպցրել, որ իրար հետ մենծանանք, իրար հետ խաղանք, իրար հետ մեզ ճանանչենք, իրար սիրենք, իրարից անբաժան մեռնենք, դրախտ թէ դժոխք՝ իրար հետ մանենք. երեխութիւնի սէրն

ուրիշ էր, մենծացանք՝ ուրիշ փոխուեց, բայց երկսի անումն էլ սէր ա, առաջինը վերջինիցը պարզ սրտով՝ վերջինն առաջինիցը խելօք մտածած, չափ ու ձև արած, քաղցր ու հաստատ:

— Թէ էդպէս էր, էլ ընչի՞ մի պաշը քեզ փոխեց, ընչի՞ ուռի տերևի պէս զոգում էիր քամի չէլած տեղը:

— Ա՛խ, Սամիտոն ջան, հիմի եմ հասկանում, որ տղի ու աղջկայ մէջը սարեր կան, հիմի եմ գլխի ընկնում, որ ինչ բան տղի համար հեշտ ա, ամօթ չի, աղջկայ համար սար շուռ տալ ա. քեզ համար ռնց որ մի կում ջուր կուլ տալ՝ զժար չի ամեն տեղ նստել, ասել՝ որ Սօնին սիրում ես, Սօնին պաշել ես, Սօնին ուզում ես, բայց ես իմ ծնող մօր մօտ էլ քաշուում եմ: Երկու տարի ա՛ զու ինձ զօռ ես անում, երկու տարի ա՛ ամեն օր մտքումս դնում եմ իրիկունը սիրաս բաց անել մօրս մօտ թ մուլթը կոխելու, լիզու խաղնուում ա, բերանս փակուում, Զաքարիայի պապանձումն ա դալի վրէս, ամօթն աչքերս կոխում ա, արտասուէնքն ինձ խեղդում ա, ընկնում եմ տեղաշարիս մէջ, զլուխս բարձի տակին պահում: Անշանք էս օր էլ իմ տեղերն ամենքիցը շուռ ա վեր քաղում, թէ ի՛նչ ա, մէրս յանկարծ բարձիս ձեռը չը տայ՝ տեսնի որ լծաց ա: Ա՛յ, հէնց էդ միտքն էր հիմի, որ ինձ զոգմանի բերեց, ընչանքի հաստատ մշտքումս դրի՛ էս զիշեր անց չը կացնել, ամեն բան մօրս ասել, տոներն ընկնել, աղաչել, պաղատել, որ մի հնարքով հօրս բան հասկացնի, մեր նշանը շուռ վրայ բերի ու գեղիս շուն ու զիւանոնցից ինձ ազատի: Ինձ համար Սամիտոնիս կոխած հողը հազար գլաւի, սուգիս, հոգարարձու, դատաւոր-մենծաւորի գլխից լաւ ա, զու միամիտ կաց:

— Ես մեղաց Ասածու, հոգի՛ ջան, զլուխս քարովը տուի, ես հէնց խմացայ, թէ պաշի վրայ հերպ կեաւ:

— Ար էլ մտքովդ փիս փիս բաներ անց չը կացնես Սօնիդ վրայ ու կասկածանք չանես, էս ես՝ էս իմ զլուխը, իմ սաղ ջանս, իմ մարմինս: Ար զու էլ սրանից յետոյ զամի ու խանչալի ետեւից չը գնաս, Սօնիդ համար Սիմաւոն ծերունի գաւնաս՝ էս էլ լծող ըլի՛ երկու:

Սօնան այս անգամ ինքը փաթաթուեց Սամիտոնին:

(Ար չարտնակուի)

„ԲԱՐԵՊԱՅՏ ՄԱՐԴԻԿ“

ՊՕԷՄԻԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՐԳ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅԻ

Պարկեշտառուն, համեստափալ
Ռրիորդներ ու տիկիններ,
Ազնիւ, խոհեմ, գիտուն և ալ
Լաւ լատկութեան տէր նարոններ.
Գուք ամենքդ, որոնք արժան
Դատէք կարգալ այս գրուածքը,
Մի ենթարկէք խիստ քննութեան
Սորա ոճը ու հիւսուածքը:
Արևն անգամ չէ անարտոյ,
Նորա վրայ էլ բծեր կան շատ:
Մահկանացուն այս աշխարհում
Միշտ եղել է մեղանչական,
Բացի Պապից, որ նորերում
Հռչակուեցաւ անսխալական:
Բայց երևի, թէ սուրբ հայրը
Մոռացել է Փրկչի խրատը,
Որ ասում էր՝ թէ եղբայրը
Չկատարէ եղբոր դատը,
«Զի տեսանես զչիւղ լական
Եղբոր քո և ի քում ական
Զգերանդդ ո՛չ տեսանես»:

Ահա Տիրոջ բուն խօսքերը,
 Որ լիչեցնում եմ նորան ես
 Եւ լուանում իմ ձեռները:
 Ուրեմն ազնիւ ընթերցողներ,
 Խնդրում եմ ինձ խիստ չդատէք,
 Եթէ տեղ տեղ անհարթ տողեր
 Գրուածքիս մէջ կը նկատէք:
 Դորա համար մի լաւ խօսք կայ՝
 Licentia poetica.

Բայց ինչք ինձ այս բանն իզուր
 Այսքան պիտ' անհանգստացնի.
 Մի՛թէ առակս հազար ու բիւր
 Մարդկանց ձեռը պիտի անցնի:
 Յայտնի է, որ առհասարակ
 Հայ ազգը չէ ընթերցասէր.
 Կարծես ի զուր բազմապատուկ
 Սուրբ Սեւրովըը հնարեց տուեր.
 Գուտտէներգի գիւտից անմահ
 Հայերը չեն քաղում շատ շահ:
 Գիրք կ'սրբալը դեռ մեզ համար
 Պիտուիք գարձել չէ կենսական,
 Թէեւ արդէն քանի մի դար
 Ունինք մամուլ տպագրական:
 Մենք լրագիրներ ունինք նոյնպէս,
 Ամենօրեայ մինչև անգամ.
 Բայց զալիս են նաքա հանդէս,
 Մի եօթնեկում երեք անգամ.
 Օրագիրներ ունինք նաեւ,
 Որը ծանր, որը թեթեւ,
 Եւ զոցս հեռ քանի մի հատ
 Լայս են տեսնում տարէնը գիրք,
 Որոնց մէջը թէ քիչ, թէ շատ
 Երևում են քանքար ու ձիրք:

Բայց ապրանքն այդ հայի համար
Գին չունի եւ չէ պիտանի.
Լաւ է, թէ մի մանրավաճառ
Քաջով գնէ փաթաթանի:
Անմըխիթար մի երևոյթ—
Այն, բայց այդ հային չէ փոյթ:

Լուսաւորեալ կոչուած գասը
Հայերէն չէ կարգում երբէք.
Գրազ կը գամ մէկին տասը,
Եթէ տաճոս կը հերքէք:
Եւ եթէ այդ ընտրեալներից
Եւ աջախի կան անհատներ,
Որոնք ստիպուած լոկ պատշաճից
Երբեմն առնում են հայ գրքեր,
Կամ ի պատիւ բարեկամին,
Բաժանորդ են մի օրագրին.
Սակայն զիտեմ, որ չեն կարգում,
Թերթերն անգամ չեն կտրտում:
Գարիս զաւակ կրթուած հային
Հայ միտքը չէ հետաքրքրում,
Գրականութեանը ազգային
Ծանօթ չէ նա, չէ համակրում.
Եւ քնչ սնունդ բարոյական
Մեր պարօնին intelligent
Կարող են տալ «Քնար Հայկական»,
«Կուսածաղիկ», «Նամուս» կամ «Խէնթ»:
Ուրիշ բան են եւրոպական
Հեղինակներն անզուգական.
Վիկտոր Հիւգօ, Զօլա, Դոգէ,
Շէկսպիր, Բալուն, Շիլլեր, Գէօտէ,
Որոնց անմահ գրուածները
Հիացնում են ընթերցողին,
Վսեմ ոճը, դարձուածները

Յափշտակում միտքն ու հոգին:
Այդ այդպէս է, և դորա դէմ
Ով կարող է ասել մի բան:
Միայն այս էլ հաստատ գիտեմ,
Որ ամենքն էլ չեն լեզուաբան՝
Լուսաւորեալ մեր հայերը
Եւ զմայլում են շատ շատերը
Արեւուտքի գրականութեամբ,
Հարկաւ օտար թարգմանութեամբ:

Իսկ այն դասը, որ չէ առել
Կարոցական կարգին ուսում,
Այբ ժէ ճէ ու է սովորել,
Միայն հայերէն կարգում, խօսում.
Որ սկսել է իւր ուսումը
Երևելի հեգարանից,
Ուր անդրանիկ երեսումը
ձակտին տպած է՝ «խաչ, օգնեալ ինձ».
Յետոյ սերտել է «մի կանոն»,
Ուտելով շատ ճիւղոտ, քանոն
Բազմահմուտ և բանիբուն
Իւր խալիֆա-վարժապետից,
Որին հալըր տալով օրդուն
Ասում էր. «քեզ միսն, օսկորն ինձ»:
Այնուհետեւ կարգացել է
Նա «մեծ սաղմոս», կամ ժամագիրք,
Եւ բնութիւնից թէ ստացել է
Ունակութիւն, շնորհք ու ձիրք,
Նա իւր ուսմանը քրտնաջան
Նարեկով է տուել վախճան:
Այդ դասն ահա, որին գրագէտ
Անունը միայն կարող եմ տալ,
Ոչովհետեւ է նա տգէտ,
Գիտէ միայն գրել կարգաւ.
Որի համար «Եփիմէրդին»,

«Պղնձէ քաղաքի պատմութիւնն»,
 Կամ թէ մի հին կարաբաղին
 Շատ բարձր են քան նոր դպրութիւնն,—
 Դա էլ գրուածքս չի կարգայ,
 Դորա համար գրօշ չարժէ դա:

Փոքր մնաց մոռանայի
 Մեր խմբագիր պարոններին:
 Ճշմարտութիւնն ուրանայի,
 Զայրացնէի կամքը վերին,
 Կարող էի յոյս ունենալ
 Արժանանալ ներողութեան,
 Քան երբ լանկարծ պատահէր տալ
 Պարոններին մոռացութեան:
 Ո՛հ, նոքա շատ ինքնատէր են,
 Որովհետեւ գրչի տէր են:
 Թէ իմացար դու գրաւել
 Նոցա սէրն ու համակրանքը,
 Որ շատ հեշտ է, ևս առաւել,
 Երբ որ նոցս փուտ ապրանքը—
 Լրագիրը—գովես, ճարես
 Բաժանորդներ քանի մի հատ,—
 —Թէև ողջ թերթը քրքրես
 Առողջ մտքեր չես գտնի շատ,—
 Ուսուցիչ ես, թէ դերասան,
 Նկարիչ ես, թէ վիպասան,
 Քո վիճակը ապահով է.
 Յօդուածներով ամբողջ մի շարք
 Խմբագիրը քեզ կը գովէ,
 Կը հիացնէ համայն աշխարհք,
 Հռչակելով քեզ մի հանճար.
 Բայց վայ է քեզ, թէ դու նորան
 Թշնամացրիր. ամեն բան չար
 Պատրաստ են նրա դրիչն ու բերան

Անխնայ թափել խեղճ քո գլխին.
 Ինչ տեսմ նրան լուս ստողին:
 Մի թարգմանիչ կամ հեղինակ,
 Տպելով իւր աշխատանքը,
 Աղարկում է մի օրինակ
 Տէր խմբաչրի տպարանքը,
 Եւ լսյա ունի, որ կը կարգայ
 Մի քննութիւն նորա թերթում.
 Սակայն գորա փոխանակ նա
 Ահա տես, թէ ինչ է կարգում.
 «Շնորհակալութեամբ քստացանք
 Այս ինչ գիրքը, գինը չէ թանկ»:
 Սրանից պէտք է եղրակացնել,
 Որ մեծիմաստ խմբագիրը
 Ամբողջ գիրքը չէ կարգացել,
 Այլ միայն նորա վերնագիրը.
 Կամ եթէ, որ ընդհակառակ,
 Կարգացել է նա այն գիրքը,
 Աւելի ևս է խայտառակ,
 Որ քննելու չունի ձիրքը:
 Նայեն է վիճակն իմ տռակի,
 Ես էլ նրան չեմ ուղարկի:

Բայց կան մարդիկ, որոնք անշուշտ
 Կը կարգան իմ այս տռակը,
 Որոնք վագրի պէս արիւնդուշտ
 Կը գզգզեն խեղճ տետրակը.
 Որոնք կը քնեն տմեն բառ,
 Կը ստուգեն ստորակետները:
 Վայ է, թէ սխալ գտնեն մի տառ,
 Կամ մոռացած չակերտները:
 Դոքա են հայ կրիտիկոսներ,
 Մարտիրոսներ, Կիրակոսներ:
 Ա՛հ, զգոյշ կացէք, հեղինակներ,

Նոցա հետ մի անէք կատակ.
 Արամազդի պէս կալծակներ
 Կ'արձակեն, թէ առիթ կը տաք:
 Բարկացկոտ են նոքա սաստիկ,
 Մի' գնաք նոցա դուք հակառակ.
 Չեն ճանաչում մեծ ու պստիկ,
 Իսկոյն կ'անեն ձեզ խայտառակ:
 Գիտեմ, ինձ էլ չկայ փրկութիւն,
 Կը պատժեն իմ յանդգնութիւն:
 Երբ քննում են նոքա մի գիրք,
 Սկսում են երկար նախաբանով:
 Ճշմարտութիւնը, ոչ թէ կիրք,
 Խօսում է նոցա բերանով.
 Քարոզում են, թէ կրիտիկան
 Սուրբ է, արդար և անաչառ,
 Ար հաշիւները անձնական
 Երբէք պէտք չէ տան նրան պաշտօր:
 Բայց վերջացաւ լաւաջաբան,
 Մնացածն չիշոյ և ոչ այլ բան:
 Թող հայհոյեն, որքան կուզեն,
 Այդ ինձ փոյթ չէ ամենեւին.
 Բիւր նախատինք վերաս գիզեն,
 Խելօք ես չեմ ասի խելին,
 Իմ հաշիւը ես վաղօրօք
 Արդ նոցա հետ վերջացնում եմ...

ԺԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Առաջարկելով այս մի կտորը պ. Գէորգ Բարխուդարեանցի պօէմի-
 ւից «Մուրճ»-ի ընթերցողներին, հարկ ենք համարում մեր շնորհակալու-
 թիւնը լայտնել բանաստեղծին, որ նա գիշանեց լանձնել մեզ ներածութիւ-
 նը մի պօէմիւղի, որը դեռ ես աւարտած չէ: Փոքր սիւրպրիզ չի լինիլ
 հաջ հատարակութեան համար, խմանալով, որ մեր վաստակաւոր բանաստեղծ
 — թարգմանիչը պատրաստուում է ազդալին գրականութեանը մօտ ապա-
 ղալում նւիրել մի ինքնուրույն գործ, որը, իւր տեսակով, բացառիկ տեղ
 պիտի բռնէ: Դա՛ մի ժամանակակից վէպ է, որի գրական արժէքը գնահա-
 տելու համար պէտք է համբերել մինչև պօէմիւղի ըստ ամենելը: Բայց ա-
 ռաջուց խոտանում ենք մեծապարզ հեղինակին, որ «Մուրճ»-ը աշխատելու
 է անել իւր գործը աւելի, որ հարժանանայ այն գառն ծաղրին, որին նա
 մատնում է առհասարակ բոլոր հաջ խմբապարկութիւններին:

Ի Մ Բ.

ԵՐՈՒԱՐԴ ԷՓԵՆԴՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

ՊԱՏԿԵՐ

ՏԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՅԻ:

(Իմ յիշողութիւններից)

Ա.

Հրամանքդ հրաւիրւած չե՞ս Համբարձում աղենց կողմ;—հարցուց ինձ մի կիրակի երեկոյ հաջի Պետրոս աղան, որ եկած էր ինձ այցելութեան:

—Հրաւիրւած եմ,—ստոտասխանեցի ես:

—Ուրեմն գնա՛նք միասին: Կ'երևի թէ Համբարձում աղան կալաբալըղ (աղճաշ) շատ սիրտի ունենայ, քառասունէն աւելի մարդ է կանչած. . .

Ես համաձայնեցայ և դուրս ելանք միասին սենեակիցս:

Հաջի Պետրոս աղան իմ սովորական հիւրերիցն էր: Ես սիրում էի նրա անկեղծութիւնն ու անկողմնակալութիւնը: Ճիշտ է, նա չէր ո՛չ ուսեալ և ո՛չ մեծ խելքի տէր, բայց իր նստապաշարումներով ու սխալ հայեացքներով հանդերձ նա համակրելի էր ինձ, զի խօսում էր ճիշտ այն, ինչ որ մտածում էր: Նա քսան տարուց աւելի «Խօմիսիօնջու» պաշտօն էր կատարում Կ. Պօլիս և նոր էր վերադարձել ու ամուսնացել 47 տարեկան հասակում:

—Հրամանքդ դաւէթներ (խճաշ) շատ կերթա՞ս;—հարցուց նա ինձ ճանապարհին:

—Կ'երթամ, բայց շատ կը տաղտկանամ,—ստոտասխանեցի ես:

—Ո՛հ, կը զգու՛իմ ես այդ խնձոցներէն... Գիտե՞ս թէ մի ր

աղաներ ինչ քրտինք չեն թափեր, որ մի անզգոյշ խօսք, մի անկեղծ լատ. չ'արտասանեն .. Անոնց բոլոր խօսքերը կեղծ ու պատիր են, շողոքորթութիւն են...

— Եղբա՛յր, թո՛ղ զէթ մի բան խօսեն, — ասացի ես, — կ'ուզես կեղծ լինի, կ'ուզես անկեղծ... Բայց բանն այս է, որ շատ անգամ ժամերով լուս կը մնան ու մարդու քունը կը բերեն:

— Ախր ա՛յդ է, որ շատ չեն խօսեր է՛... Է՛՞՞ ժամանակ պէտք է, որ իրենց մտածածի հակառակ մի բան գտնեն ու ասեն... Գու չե՞ս գիտեր, որ անկեղծ մարդիկ, սրտերնին մաքուր պահող մարդիկ միայն շատախօս կը լինեն... Այնու ամենայնիւ դու լաւ դիտի՛ր նոցա զիրքը, երբ մի կուսակցական ակնարկ ընկնի մէջերնին... Հ'ա, էն փուճ Եղուարդն էլ այնտեղ կը լինի, դու լաւ ուսումնասիրի՛ր էլ մարդը:

— Ես կը զարմանամ, — ասացի, — որ ամբողջ ժողովուրդը այդչափ դժգոհ է Եղուարդ էֆէնդուցիէն: Է՛ն հեռացնում զայն դպրոցից:

— Եղուարդ էֆէնդին, — ասաց խօսակիցս — ոչ թէ իբրեւ ուսուցիչ, այլ իբրեւ մարդ իսկ արժանի պիտի չը լինէր ապրելու, եթէ մենք շունենալինք մեր արդարործան կուսակցութիւնները: Ժողովուրդն էլ արդէն գիտես, որ անպիտանին անպիտանն է... Այդպիսի ժողովրդին ի հարկէ ա՛յդպիսի վարժապետ կը վայելի... Ո՛հ...

Եւ նա անցուց ձեռքն իր ճակատով, կարծես վախնալով որ չլուխը չը գտուի իր մարմնից:

— Պիտե՛ս, ես կ'ամէնամ որ էս բաները կ'ասեմ քեզ, — ասաց նա քանի մի քաջ անելուց յետոյ — կ'ամէնամ, որովհետեւ ես էլ Վանցի եմ եւ դու մի օտարական հիւր ես մեզ մօտ...

Ես բացատրեցի հաջի Ատրոս աղային, որ երբէք զիս օտարական չեմ համարում, այլ կարեկից եմ Վանցիներին, իբրեւ իմ համարին եղբայրներին:

Հաջի Համբարձում աղայ Զըրնոյեանի տունը արդէն հեռու չէր եւ մենք մի քանի քաջ միայն լուս զնալուց յետոյ՝ հասանք այնտեղ:

Ահա ժամ անցած-չ'անցած, հիւրանոցը լցւեցաւ յիսունէն աւելի վաճառականներով: Նոցա մեծ մասը նշանաւոր իշխաններ էին: Եղուարդ էֆէնդուցի զատ, կալին նոյնպէս մէկ երկու ուրիշ ուսուցիչ, ինչպէս նաեւ մի քանի քահանայ ու վարդապետ: Սենեակը ներկայացնում էր մի երկայն քառակուսի. յատակի վրայ փռւած էր դե-

ղեցիկ զորդը, պատի տակ, որ սենեակի «վերին»՝ այսինքն ամենա-
շարժելի տեղն է, շինւած էր փառաւոր «սաղրը» մի կանգուն լայ-
նութիւն ունեցող թախտը: Այդ տեղը պատկանում է հոգեւոր դասին
և սակաւաթիւ ընտրեալ աշխարհականներին:

Ձորս անձից զատ, որ սաղրի վրայ էին բազմած, մնացած հասարա-
կութիւնը նստոտած էր՝ ծալապատիկ կամ չոքած՝ մինդարների (նեքստի)
վրայ: Նախասենեակի մէջ տեղ էին բռնել տախկան չորս նւագածուները:

Ձմեռ էր. բոլոր պատուհանները գոց: Ծխախոտի ծուխը
ամպերով բարձրանում էր դէպի աստատաղ: Այդ ահագին
բազմութեան մէջ մի մարդ միայն գտաց, որ ծխելու սովորութիւն
չունէր և այդ՝ իմ բարեկամ հաջի Պետրոս աղան էր:

Սկզբում այդ սուար բազմութիւնը նստած էր այնքան խելօք,
որ տեսնողը՝ կրթարանի խիստ կարգապահութեան վարժւած մի
դասարանի մէջ պիտի կարծէր ինքզինքը: Ամեն մէկը լուռ նայում
էր միմեանի երեսին ու ծխում իր սիգարան: Նրբ գալիս էր մի նոր
հիւր, աշխատում էին տեղ բանալ նրա համար սենեակի վեր, մէջ-
տեղ կամ վար՝ համեմատ նրա ունեցած նիւթական կարողութեան:
Հիւրը իր տեղը գտնելուց յետոյ, ամենքը «թամանդալ» անելով՝ «բարի
եկար» էին ասում նրան: Այնուհետեւ նա էլ մոռցւում էր ամենքից
ու ենթարկւում միւս մահկանացուներին վիճակին:

Ամեն հինգ բողեն մի անգամ, երկու պատանի արաղ էին ցր-
ւում հիւրերին՝ «րիւմկաներով» լեցւած մի մատուցարանով: Նրան-
ցից մէկը ծառայում էր աջ, միւսը՝ ձախ կողմի հասարակութեան:
Նրանք սխալ էին վերին գլխից ու իջնում կարգով մինչև վերջին
հիւրը: Նրբ պատահում էր, որ միջադարձին հիւր էր գալիս, ան-
միջապէս օղի էր բերում նրա համար աջակողմեան կամ ձախակող-
մեան պաշտօնեան, նայելով թէ որի՝ բաժինն էր ընկել այդ նորեկը:

Ամեն անգամ պէտք է անպատճառ արաղ խմողը մի կարճ բա-
բեմաղթութիւն անէ իւր քովը նստողներին, զէթ «կենդանութիւն»
կամ «կենացնի՛դ» ասելով, որպէս զի արժանանայ լսելու չորս կողմից՝
«անուշնե՛ր էլնի, անուշնե՛ր էլնի» խնդակցութիւնը:

Հիւրերի տաղտութիւնը փարատելու համար, տանուէրը հրա-
ման է տալիս նւագածուներին պարսպ չը մնալ և ահա՛ լսում
են նոցա խաջուցիչ զորժիւնների ու տաճկական երգերի եռանդուն

ձայները: Անզգուշ հիւրի մէկը աշխատում է խօսք բանալ որ և է հասարակական խնդրի վրայ... Զանազան կողմերից լսում են իսկոյն հակիրճ ու ակամայ կարծիքներ, տագնապը քիչ քիչ պաշարում է «քաղաքադէտներին», կրքերն յուզւում և յանկարծ սկսւած խօսակցութիւնը, առանց շարունակելու, թելի պէս կտրւում:

Այնուհետև մէկը փորձում է խօսել բոլորովին չէզօք նիւթերի վրայ, պատմութիւններ է անում իր պանդխտութեան տալանորութիւններից:

— Տաս-տասնըհինգ տարի առաջ, — ասում է նա, — երգնկայ եղած ժամանակս, հացի թանկութիւն պատահեցաւ, բայց ոչ թէ ընդեղէնների պահատութենէն, այլ երկու հարուստ յոյների երեսէն...

— Ի՞նչպէս, — հարցնում են սրտատրով քանի մի անհանդիստ անձնաւորութիւններ:

— Այդ երկուքը — Նիկողայի և Վասիլայի կ'ասէին նոցա — քաղաքի ամենէն նշանաւոր մարդիկն էին և Վառապարութեան հետն էլ լաւ էին: Դոքա ահագին ցորենի ամբարներ ունէին և զանազան միջոցներով արդելած էին դրսէն ցորեն բերելը...

Եւ միտմիտ պատմողը ընդհատեց յանկարծ իր ասելիքը, նկատելով զիմացի քանի մի մարդոց կատաղութիւնը... Հասարակութիւնը երկու որոշ մասի բաժանեցաւ և տոնն մինը կարծիքներ էր փոխանակում իր մէջ՝ փսիսոցով ու դէմքի ծամածռութիւններով: Նոքա ամենքն էլ համոզւած էին, թէ պատմողը միտք ունէր խաչատուակել իրանց քաղաքում նոյնանման դերեր խաղացող քանի մի անձնաւորութիւններ:

— Տղանե՛ր, արադ բերէ՛ք, — մէջ է մտնում վրդովւած տանտէրը և իր բարեմաղթութիւններով անուղղակի աշխատում է յուզեալ սրտերն հաշտեցնել: Փոխադարձ բարեմաղթութիւնները վերջ են տալիս, ըստ երևոյթին, այդ միջադէպին:

Բայց պարապութիւնը ձանձրալի է դառնում աղաներին և աննկատելի կերպով սկսւում են նորէն հին պատմութիւնները: Երուարդ էջէնդին զովեստներ է կարդում իր՝ Պօլտոյ մէջ քսան տարի առաջ տեսած, բարեկամ Փիլիպոս եպիսկոպոսի վրայ:

— Փիլիպոս եպիսկոպոսը, ասում է էջէնդին, — զիւղական ծագում ունէր թէև, բայց շատ լուսամիտ ու յատաջլիմասէր էր...

Նւ նկարագրութեան շարունակութիւնը մնում է պատմողի բերանում, երբ նրա աչքին են ընկնում մեծամասնութեան խոժուած գէմքերը... Աղաները կարծում էին, թէ էֆէնդու զլխաւոր նպատակն էր վիրաւորել նոյա կուսակից ինչ ինչ առաջնորդները...

Նորէն մէջ է մտնում օրհնեալ արաղը ու նազածունների մի անոյշ երգ մոռացնել է տալիս այդ ամենը:

Մինչ այդ քաղաքական ձգնաժամերը տեղի էին ունենում սենեակի վերին մասում, միջին և վարի կարգի հիւրերը արդէն գտել էին իրանց զլխի ճարը: Նրանք չէին ուզում ունենալ ընդհանուր խօսակցութիւն, այլ կազմել էին մասնաւոր ակումբներ: Նրանցից իւրաքանչիւրը բաղկանում էր երկու-երեք հոգուց՝ նստած մի կարգում, բայց երբ պէտք լինէր աւելցնել նաև շորրորդ անդամը — այդ վերջինը նստում էր նրանց առաջ պըպըզած: Ամեն մի խումբ ուրախ խօսում, վիճում ու տաքանում էր: Նրբեմն անպիսի մի ներդաշնակութիւն էր մանում բոլոր այդ խմբերի մէջ, որ ամենքը միասին, մի զարմանալի զուգադիպութեամբ, ահագին քահաբա՛հ ու աղմուկներ էին հանում միեւնոյն վայրկեանում:

—Թաւր կուրիսա՛ւ (Հորաւ), թաւր կուրիսա՛ւ, — ձգաց մի երիտասարդ, երբ առաջին անգամ այդպիսի մի հանրական աղմուկ ելաւ: Բարձր խօսողները անմիջապէս զգաստացան:

—«Թաւր կուրիսա՛ւ» ի՛նչ ասել է, — հարցուցի ես զարմանօք կողքիս նստած Պետրոս աղային:

—Այսուեղ որ կանայք բաղնիս երթան, շատ անգամ ջրի թաւը կը կորսնցնեն ու ահագին աղմուկ կը հանեն... Էսպէս բաղմութեան մէջ աղմուկ հանողներին ամէլցնելու համար «Թաւր կուրիսաւ» որ ասեն՝ անմիջապէս կը խելացանան, — բացատրեց նա:

Նւ այդ գիշեր ես համոզւեցայ, որ չաճախ թափ կորուսող լիշեցնելը վատ բան չէ աշտօրինակ խառնաշփոթ խնճոյքներում...

Բ.

Սենեակի օդը սաստիկ տաքացել ու թանձրացել էր և մենք ամենքս, երկրի սովորութեան համեմատ, նստած էինք ձմեռւան տաք վերարկուներով: Վառարանի պէտքը շուտուց արդէն չէր զգացւում և,

հիւրերին ազատ շարժում տալու համար, քակել, սենեակից հեռացուցել էին այդ թիթեղեայ գործիքը: Սիգարի ծուխը, չը նայելով մէկ հատ բաց պատուհանին, թունաւորել էր մեր մթնոլորդը: Երեւում էր, որ անընդհատ արալ խմողներին ամենեւին զգալի չէր այդ բանը: Գլխիս ցաւը բռնեց. ես մտածեցի ելնել գէթ նախասենեակը նւագածունների քէֆին հարցնելու:

—Աստուած կարողութի՛ւն տալ,—բարեմաղթեցի ես նրանց:

—Վա՛յ, Աստուած քէ պախի, էֆէնդի՛, բարո՛վ խաղար բարո՛վ, հրամմէ՛ նստի,—հրաւիրեց ինձ նրանց պետ Կոր (Կոչք)—Աւանդը:

Նոքա գեղգեղում էին տաճկերէն «բիր տաշ աթուրմա»-ը. ես սկսեցի զննել նոցա գործիները:

Կոր-Աւանդի ձեռքն էր ասիական հնադարեան քեամանին, Մըփօն փշում էր հովւական սրինգը, Գեօրիկը (Գրեգոր) նաղարայ էր զարնում, իսկ արծւաքիթ Կարմիր-Վարդանը զաշնակում էր իր զմայլեցուցիչ քառասնաղեայ քնարը:

—Էֆէնդի՛, չե՞ս խնդար մեր էսա խին թախումի (պարագանք) վրայ,—հարցուց ինձ Կոր-Աւանդը՝ երգը վերջացնելուց յետոյ,—կ'ասեն որ Թիֆլիս, կ'են կողմեր ուրիշ թախումով կը շալեն (նռագել)...

—Ձէ՛, ձեր շալկին շատ անուշ է, բայց լաւ կը լինէր որ քիշ էլ հայերէն երգեր շալէիք...

—Էֆէնդի՛, քե մեռնեմ... մենք չենք ուղե՞ր որ խաչեվար տաղեր ասենք, ամմա խաչոց տաղերոց մէջ խամ չը կալ, լազաթ չը կալ... Գեօյ հրամանքդ տեսար մեր «թիւրքիները»... խաչեվար ո՞ր տաղը կը խասնի մեր «Ձէզալիր»-ին, «Ասրայ Դանիզ»-ին, «Խաղամբօլ-գալ»-ին...

—Մեր խաչեվար տաղերը,—չարունակեց կոչը խնդալով—վարժատան տղաների խամար են... Գեօյ մեր Նագօ ծառանիդ (Եր Դրէն) վարժատուն կ'երթայ. ես ինոր մօտէն բիթուն տաղերն էլ սովորայ. ամմա ինոնց մէջ խամ ու խոտ չը կալ, քե մեռնեմ... հապա մենք չե՞նք ուղեր, որ մեր ազգի տաղերն ասենք...

Եւ նա ուղղեց իր կոչը աչերը ճիշտ իմ երեսին, կամենալով լսել իմ մտածմունքը: Նս ամաչեցի—ձետեղ հայերէն լաւ երգեր չը կան, —արտասանեցի ես բոլեական տառանումից յետոյ,—բայց Թիֆլիս, Պօլիս շատ կալ...

—Վասեն, հրաման քե, կ'ասեն, փրաբերաւ նա,—ամմա մենք չենք գիտեր... Վասեն թէ էն տեղեր տաղերը նոթայի կ'առնեն...

—Հիմա չալկըջութիւնը լաւ կը բանի՞, Աւանէս ախպեր,—հարցուցի ես—ի՞նչպէս է, լաւ կը շահւի՞ր:

—Աղէկ է զեօյ, աղէկ է... Աստուած մեր ազգի տունը չէն պախի... ձմրան մէջ զործ շատ կ'էնի, տաճկներաց տուն էլ կ'երթանք... Կսա Մըկօ ու Գեօրիկ ծառանիդ իմ տղաներս են, Վարդանն էլ քորս տղան է... Իսոնք լաւ նալբանդ են, պարապ ժամանակ իրենց սանսաթի (աբէեօ) կ'երթան... աղէկ է զեօյ...

Կոր-Աւանէսը մի յիսնամեայ պարարտ ու բարեսիրտ մարդ էր: Նրա ձաջը, մանաւանդ երիտասարդութեան տուն, շատ աշուշ է եղել ե նա զիջած էր մի առատ հարստութիւն: Նա խօսում էր բուն Վանայ բարբառով և «հ»-ի տեղ միշտ «խ» զործածում:

—Ջեղայիք», «Ջեղայիք» չալէ՛ք,—լաւցաւ հիւրանոցից: Աս մտայ նորէն իմ տեղը գտնելու:

Իմ բարեկամ հաջի Պետրոս տղան Երեքդիսեան Կերբերոսի պէս պահպանում էր իմ տեղս. ես բազմեցայ աջնուկ:

Սենեակի վերին մասում մի նշանաւոր փոփոխութիւն էր մտել և ամեն մարդ իրաւունք ունէր իր օտարութեան մէջ տեսած մարդոց կենսագրութիւններն անել: Զգալի կերպով նկատում էր, որ անսպառ արաղի զոլորշիները մեղմացուցել էին աղաների կուտակցական փոփոխները: Մանաւոր խմբերի խառնաշփոթ խօսակցութիւնը, իրանց շարաբատիկ «թասի» կորուստով, անձանձրոյթ շարունակում էր: Վերին մասում պատմութիւններին լաջորդեցին նաև Երոպական կեանքի քննադատութիւնները: Խօսք էր բացել կրկնամուսնութեան վրայ: Եզուարդ Էփէնդին թափում էր իր բոլոր պերճախօսական ձիրքերը հերքելու համար այդ «հակաեռարանական ապահարդանք»: Նա օրինակներ էր բերում, թէև մեծ մասամբ սխալ, Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի «անբարեկարգ» ընտանիքներից և իր հացեացքները հաստատում էր Նոր-Ատախարանի ազգութեացութիւններով: Տանուր հաջի Համբարձում տղան և ուրիշ մի երկու անձեր, մեծ պատկառանքով էին ընդունում նրա խօսքերը ու ջերմաջերմ պաշտպանում զայն նրա երգուեալ թշնամի—աղաների

դէմ: Քանի մի փոքրիկ խմբեր, ընդհատելով իրանց ուրախութիւնները, ճգնում էին մի բան լսել հեռուից այդ բարձր նիւթերի մասին:

—Աղանե՛ր, սեղանը պատրաստ է, հրամայեցէ՛ք գնանք միւս սենեակը, հրաւիրեց հաջի Համբարձում աղան:—Ղեռնդ հայր սո՛ւրբ, տէր Թովմաս հա՛յր, առաջնորդեցէ՛ք մեզ...

Եւ հիւրերի բազմութիւնը, ընկած իրանց հոգևոր հայրերի էակից, մտաւ մտաւկայ մի սենեակ՝ ընթրիք անելու:

Գ.

Այգտեղ պատրաստուած էին երեք հատ պղնձեայ կլոր մեծ «սեղաններ», գետնից կէս արշին բարձրութեամբ և հիւրերը, շարունակ իրարու «հրամմէ» ասելով ու «վերին» տեղերը ցոյց տալով՝ շարեւցան նրանց շուրջը ծալապատիկ: Այդ «սեղանները» դրւած էին սենեակի երկայնութեամբ, իրարից մօտ մի արշին հեռու: Այգտեղ էլ հասարակութիւնը բաժանուած էր երեք որոշ դասակարգի. վերի սեղանի շուրջը նստած էին հիւրանոցի վերին մասի ներկայացուցիչները, միջին սեղանի շուրջը՝ երկրորդականները և վերջապէս ցածրի սեղանի շուրջ՝ վարի մասի մարդիկը: Ղեռնդ հայր սուրբն ու տէր Թովմասը բազմած էին առաջին սեղանի ճակատը, որով միջոց ունէին դիտելու բոլոր ընթրողների դէմքերն ու շարժումները: Հաց ուտելուց առաջ, հիւրերի ակնորժակը բանալու համար, առաջարկեցաւ մի մի ընկալաւ կօնեակ... Ես, ի հարկէ, չը համարեցի մինչև ընթրիքը խմած արաղի դաւաթները, բայց առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ նրանց թիւը, հիւրերի մեծամասնութեան համար, քսանից պակաս չէր...

Ընթրիքի միջոցին արուստանւեցան քանի մի ճառեր, որոնցից շատանում եմ զնել այստեղ միայն երկուքը:

—Գաւաթները լեցուցէ՛ք, — առաջարկեց Եղուարդ Էֆէնդին:

—Եղբայրնե՛ր, — ասաց նա մի հանդիսաւոր ձայնով — ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ իշխանների դատաւարդը եղած է մի անհրաժեշտ տարր ժողովրդի բարեկեցութեան... Իշխաններն են, որ իրանց խելքով ու հեռատեսութեամբ կ'աճապարեն առաջն առնել խեղճ ու թշւառ ժողովրդի մը — ինչպէս են մեր սիրելի Վանցիք —

ամենատեսակ տագնապներն... Նոքա են, որ առողջարար սպեղանի կը դնեն մեր դժբաղդ հայրենակիցների անբուժելի վէրքերին... Մեծ բարեբաղդութիւն է, ճշմարիտ, տեսնել այս պատուական ու ազնիւ յարկի տակ մեր նշանաւոր ու սիրելի իշխան-ազանների յաճախակի համախմբումը, որ չէ կարող իր բարերար հետեանքները չունենալ... Այս համախմբման և փոխադարձ սիրոյ պատճառը—կը համարձակիմ ասել—մեր ամենիս սիրելի ու մեծանուն Համբարձում աղայ Զրնոյցեանն է, որի ազգասիրութիւնը, բարեպաշտութիւնը, արդարասիրութիւնը ու ամեն մեծամեծ առաքինութիւնները—կը խնդրեմ Ամենակարող Տիրոջմէ,—թո՛ղ անպակաս ու անվաճան լինին ազգերնուս մէջ՝ դարուց ի դարս... Ուրեմն, եղբա՛րք պատուականք, — վրաբերաւ նա մի առանձին ոգևորութեամբ—պարպե՛նք այս դաւաթը ցատակ՝ մեր սիրելի Համբարձում աղայի և նրա համայն զերպատանի կենացը. . .

Սղը թնդաց ծափահարութիւններով (ծափահարելը արդէն 10—12 տարի է, որ մուտք է գտել այնտեղ) և էֆէնդու առաջարկութիւնը կատարեցաւ։ Բայց շատ հեշտ էր նկատել, որ ծափահարութիւնների երեք քառորդը բոլորովին ակամայ ու արհեստական էին։

Քառորդ ժամից յետոյ, հաջի Համբարձում աղան մի բաժակ գինի ասնելով, ոտքի կանգնեցաւ։

—Դուք զիտէք, ազանե՛ր, որ ես խօսելու շնորհք չունիմ...

—Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի,— լսեցան քանի մի ձայներ։

—Այդ ձեր ազնուութիւնն է, որ այդպէս կը թելադրէ ձեզ, բայց ես շատ խեղճ եմ խօսելու մէջ... Միայն թէ ես կ'ուզեմ իմ պարտքս կատարել... Փոքր ինչ առաջ մեր յարգելի Նդուարդ էֆէնդին, իրեն յատուկ սրտառուչ ու ազնիւ խօսքերով, ծառաներուդ (եք) կենացն առաջարկեց... Թո՛ղ ներսի նւաստիս էլ փոխադարձ բարեմաղթութիւն անել մեր սիրելի և շնորհալի էֆէնդուն... Տա՛յ Աստուած, որ նրա հանձարը, պերճախօսութիւնն ու զխոնականութիւնը աւելի և աւելի զարգանայ ի վայելուն մեր տառապեալ ժողովրդի և ի փառս Աստուծոյ... Յայանի է ազնիւ ազաներիդ, որ յարգելի էֆէնդին մի փալուն զոհար է մեր ուսուցիչների մէջ... Նա մեր դաւէթների ազն է... Նա շատ անգամ խօսք կը բանայ այնպիսի նիւթերի վրայ—ինչպէս առ իժ ունեցանք տեսնելու այսօր—որոնց մա-

սին, կը համարձակիմ՝ ասել, մեզմէ շատեր բնաւ դադարաւ չունին... Ուրեմն մաղթե՛նք մեր ազնիւ էֆէնդուն շատ երկա՛ր օրեր, պարպե՛նք յոսնկացս այս դաւաթը մինչև վերջին կաթիլը...

Նորէն սենեակը թնդաց ծափահարութիւններից և սոքի ելած բազմութիւնը քամեց ցատտակ դինու բաժակները: Բաց երբ նրանք նստան, ես տեսայ բարկութիւնից կծկւած ու գունատ շատ մարդոց երեսներ, իսկ վարի սեղանի քանի մի երկուսսարգներ արդէն մի խուլ քրքիջ էին հանել այդ «կենացի» մասին:

Հացէն վերջ, բազմութիւնը չեա քաշեցաւ ու շարեցաւ պատի սակի մինդարների վրայ: Զըրնոյեանի մէկ տղան և մէկ ուրիշ երիտասարդ երկու կոնք ջուր բերելով՝ չոքեցան կարգով ամեն մէկ հիւրի առջև ու ծառայում էին նրանց՝ ձեռքերը, բեղերն ու բերանը լւանալիս: Խւրաքանչիւր հիւր, լացումը աւարտելուց չեստոյ, լսում էր չորս կողմից «մարտդակա՛ն, մարտդակա՛ն» խնդակցութիւնը: Անուհետև նրանք մոնում էին նորից ընդարձակ հիւրանոցը: Այստեղ մի մի «ֆինջան» դառն սուրճ խմելով, հասակաւոր աղաներից մի քանիսը և երկու հոգևորականները հրաժեշտ աւին տան տիրոջ: Նուադածուները հրաւրեցան հիւրանոց (հեքառէնեռէ) ու զետեղեցան նրա մի անկիւնում:

Հացէն վերջ ամեն մարդ յղեամ է լինում և աւելի տրամադիր երաժշտութիւն լսելու: Հիւրերը նստեցան այդ դրութեան մէջ մօտ մէկ ժամ և երբեմն թոյլ էին ապրիս իրանց միացն փոքր կատակներ անել իրարու:

— Պետրո՛ս վարժապետ, դու մացէ՛ր (մօլէ) էսա տեղն ևս եղեր, — հարցուց խնդալով մի չիտուն տարեկան ուսուցչի՝ նրա զիմացը նստող մի վաճառական:

— Հրաման քե, վարի կողմն էի նստած, — պատասխան տուա վարժապետը լրջութեամբ:

— Ինչպէ՛ս եղաւ, փարսներդ առի՛ր...

— Ձէ, չ՛առի...

— Քանի՞ ամսական կը պահանջես:

— Տասնըմէկ:

— Կ՛առնես զեօջ, աջալա մի՛ աներ... Փարսն ի՛նչիդ է սկստք...

—Ի՞նչպէս թէ, ի՞նչիդ է պէտք... ընտանիք ունիմ, տղաներ ունիմ,—վրաբերաւ Պետրոս վարժապետը յուզւած:

—Կը շահէի գեօյ,—շարունակեց վաճառականը իր պաղ հեղ-նութեամբ—աշակերաններից փշուր-մշուր կը տանես, տղաներիդ կ'ու-տացնես...

—Յօ ախպէ՛ր, ի՞նչ փշուր-մշուր... Հիմա՞յ առաջւան ժամա-նակն է, որ փշուր տանեմ... Նստմեն օր Ֆրնէն հաց կ'առնեմ...

—Աղորթ տատ՛, վարժապե՛տ, հիշ օր կը պատահի՞ որ անօթի մնաս ու ծով պահես,—շարունակեց նորէն գրգռելնրան վաճառականը:

—Յոմ՛ չի պատահեր, բայց ցամաք հաց ուտել շատ կը պատահի...

—Հերի՛ք է գեօյ... վարժապետին ի՞նչ կը վայելի կերակուր ուտել...

—Ի՛նչու, ախպէ՛ր, վարժապետը երկաթ է որ... զոռաց նստկապիսի մի յուզմունքով, որ ամբողջ հասարակութիւնը փութկաց ինդպուց:

—Ի հարկէ երկաթ է,—պատասխանեց ամենայն պաղութեամբ վաճառականը—վարժապետը որ երկաթ չը լինի՝ կարո՞ղ է 300 տը-ղայի դուխը բան մտցնել...

—Իրաւո՛ւնք ունիս,—յողուց հանեց վարժապետը և ձիշտ իր օտիսի աչքերին նայելով՝ կրկնեց արտասուալից. Վիրաւո՛ւնք ունիս...

Նորից ծիծաղեցին ամենքն ու անցան ներիշ կատակների...

Վերջապէս հասաւ կէս զիշերը և հիւրերը օտքի ելան մեկնե-լու: Ձեռքս մտցուցի պատահմամբ վերարկուիս զրպանը և ապշելով տեսայ, որ մտցած էի վերցնել մեր մեծ դրան բանալին:

—Մի գժբաղդութիւն է պատահել ինձ,—ասացի ես կամաց հաջի համբարձում աղային—բանալին թողել եմ սենեակումս, մեր սենեկիք մնալու՞մ են հիմա՞յ խոր քնի մէջ...

—Նրանի քեզ ամեն ժամանակ այդ գժբաղդութիւնը պատա-հի,—ասաց նա մի սիրալիր ժպտով ու ձեռքս բռնելով, նստեցուց ասան ռստորիս վրայ: Գու՛ կա՞ց աշտակ,—աւելցուց նա ու իջաւ հիւ-րերի հետ մինչև փողոցի դուռը:

Յետոյ նա անկողին ձգել տւեց ինձ համար ահա փոքր սենեա-կում, ուր նա ընդունււմ էր սովորաբար իր մասնաւոր հիւրերին և ուր մնում էր ինքը առաւօտաներ ու երեկոներ՝ նախ քան ննջարան

երթալը: Այդ սենեակը ձմեռային էր, զի մեծ հիւրանոցում յաճախ նստելու համար պէտք էր լինէր առատ փայտ, որ մի քիչ հաճելի չէր մեր պարոնին:

— Բարի՛ գիշեր, — ասաց նա ինձ, հրամեշտ տալով — կը խնդրեմ հանգիստ քնանաս, առաւօտ շուտ չ'ելնես: Ես կը պատւիրեմ, որ առաւօտ վառարանը վառեն ու սամովարը ձգեն. ես էլ քաղաք շուտ երթալու չեմ, չայ կը խմենք ու բոլ կը խօսենք:

Շնորհակալութիւն յայտնեցի նրան ու պառկեցայ:

Դ.

Առաւօտեան կողմ, ես կարծես թէ երազիս մէջ մի ինչ որ թրխկոց լսեցի: Աչքերս օկամայ բացւեցան ու լսեցի Համբարձում աղայի ձայնը, որ կշտամբում էր իր փոքրիկ աղջկան: — Երեւի՛նն անցնելու, ասում էր նա, — դու շտենես, որ էստեղ մարդ կայ քնած. ի՛նչ իշու պէս փետերը կը թալես գետինս:

Հասկացայ, որ փոքրիկ Մաքրուհին փայտ էր բերել վառարանի համար և նզովելով բերողին էլ, հրամայողին էլ, պինդ կերպով աչքերս գոցեցի ու միտքս դրի որ էլ ոչ մէկ թրխկոցի համար քունս չը խանդարեմ: Ծակ իմ արթննալս արդէն ոչ ոք չ'իմացաւ, զի ես պառկած էի սենեակի մի անկիւնում, երեսս պատի կողմն արած: Հաջի Համբարձումի ձայնից կարելի էր զուշակել, որ նա նստած էր ճիշտ իմ հակառակ կողմի պատի տակ՝ վառարանի մօտ:

— Խեղճ աղջիկը չգիտէ թէ ի՛նչ թշնամութիւն կ'անի մեզ՝ առիթ տալով մեր հիւրին զարթնելու, — լսեցի ես անմիջապէս մի նոր անձի թիւրքերէն խօսքերը և առանց տարակուսելու, հասկացայ որ այդ նոր անձն էլ մեր ծանօթ Եղուարդ է՛իջեղին է:

Մէկ հաս աչքերս խաշոր կերպով բացի, որ փոքր ի՛շատէ դուշակեմ թէ առաւօտեան ինչ ժամանակն է և ես համոզւեցայ որ նոր էր լուսացել: Այդ բանի ասացոյց էր թէ՛ սենեակի աղօտ լոյսը և թէ՛ իմ քնադուրկ աչքերը: — Այտեղ մի նշանաւոր բան կայ, — մրտածեցի ես ու վճռեցի, ինչ որ լինի, յաղթել իմ քնին:

— Զէ՛, Եղուարդ, արտասանեց զայրոյթով ու կամաց ձայնով հաջի Համբարձում աղան, — ես կը նկատեմ որ դու «մեր զործի» հա-

մար հետզհետեւ անպէտք ու վնասակար պիտի դառնա... Բայց լաւ մտածիր. «սոն փիւշմանլըք աքէ էթմազ...»¹⁾

—Ախր Համբարձում աղայ, — պատասխանեց Եղուարդ Էփէնդին լացի ձայնով, — դու որ այդպէս կ'ասես էլ ես ուրիշին ի՞նչ ասեմ... Էլ ասկէ աւելին աշխատելը չեմ գիտեր թէ ի՞նչ պէտք է լինի... «Ձեր գործի» համար ես կը մոռանամ զաւակներս, անձս, հոգիս, խիղճս...

—Ահադաչեմ՝ «խղճովդ» մի՛ վախցնէր ինձ... Զրոնոյեանը այնքան յիմար չէ, որ խիղճ ունեցող մարդուն իրեն գործակալ անի... Ես հազար անգամ քեզ ասել եմ, որ մարդու հետ խօսելու ժամանակ, մի՛ մոռնար թէ ո՞ւմ հետ գործ ունիս... Ի՛նչ, Զրոնոյեանը քո անխելք վարժապետներէ՞ն է, որ հզպէս դարտակ բառերով խաբես... «Խիղճս կը ծախսե՛մ», — արտասանեց նա մի կծու հեգնութեամբ, ճիշտ Էփէնդու լացի ձայնով:

—Հաւատա՛, հաւատա՛, Համբարձո՛ւմ աղայ, — ասաց վերջինը մտերմաբար — շարթուս մէջ մի քառասուն մարդու հետ խօսել եմ Թաղականաց ընտրութեան մասին, բայց ոչ ոք կարեւորութիւն չի տար ինձ... դու գիտես, որ թշնամիներս ծովի աւազից շատ են...

—Ինչո՞ւ, ա՛ մարդ, ինչո՞ւ. որտեղէ՞ն են այդ թշնամիները, — հարցուց նա բարկացած:

—Ինչպէ՞ս թէ որտեղէ՞ն, դու չե՞ս գիտէր ո՞րտեղէն... Էն որ Պօղոսեան²⁾ են՝ արդէն մինչև մահս արիւնս պիտի ծծեն, իսկ մնացածներն էլ արդէն քո պատճառով կը հալածեն զիս...

—Ինչպէ՞ս թէ իմ պատճառով, — դուաց Համբարձում աղան մի ահռելի ձայնով:

—Ամաց խօսի՛ր, Համբարձում աղայ, կամաց խօսի՛ր... — արտասանեց Էփէնդին լացի ձայնով, — հապա դու չե՞ս գիտեր, որ ամէն տեղ ինձ երեսիս կը տան, թէ Զրոնոյեանի գործիքն ես...

—Սո՛ւս կ'ասես, — զոռաց նորից վաճառականը՝ ամբողջ մարմնով բորբոքւած: Դու շա՛տ յիմար ես, գիտե՞ս, Եղուարդ, — շարու-

¹⁾ «Աւերջը զղջալը մի կոպէկ չարժէ»:

²⁾ Վաճում քառասուն տարուց ի վեր դպրութիւն ունին Պօղոսեան և Ապօղոսեան անհաշտ կուսակցութիւնները, որոնցից առաջինները վտաղիմաւան, վերջինները առաջադիմական են համարուում:

նակեց նա մի րոպէից յետոյ—քեզ կ'ասեն թէ իմացիր ո՞ւմ հետ զորժ ունիս... Զըրնոյեանը մօրուքիդ ամեն մի մազը ուսումնասիրած է, գիտե՞ս թէ չէ: Բայց ո՞րին կ'ասեմ—ասողին լսող պիտի... Ախր ես չը կրցայ քո զրուի բան մտուցել է'... «Աննայանա՛ սիվրի սինէք սազ, աննամայանա՛ դաւուլ զուրնա ազ»... ¹⁾

—Ինչո՞ւ, Համբարձո՛ւմ աղայ, ես քո ո՞ր մէկ խօսքդ չը կատարեցի,—ասաց Նդուարդը հարստահարեալի մը փաղաքշական ձայնով:

—Ալլա՛հ, Ալլա՛հ... Ծօ մա՛րդ, զու խե՛նթ ես, ի՛նչ ես... քեզ ո՞վ կ'ասի որ իմ մէկ խօսքը կատարելու համար ամեն յիմարութիւն ձեռքդ առնես... Յս քեզ կ'ասեմ, որ քաղաքագէտ լինիս, համբերող լինիս... Յս քեզ կ'ասեմ, որ այս ինչ մարդու դէմ փոս փորես, բայց զու կ'ուզես, որ անպատճառ այդ փոսը մէկ աւուր մէջ փորես ու ինքդ ամենայն յիմարութեամբ մէջն ընկնես... Ախր փոսն այդպէս չեն փորեր, է'. «Աույու կազարսան՝ օջուռնջա կազ, զիրա էլ իչին կազսան՝ քէնդին դիւշերսան»... ²⁾

—Այդ ճիշտ է, որ ես քիչ անհամբեր եմ...

—Բայց այդպիսով իմ տունս կը քանդես է', Աստուած քո տունն աւեր չ'անի,—բարկացաւ նորէն Համբարձում աղան.—աշխարհիս մէջ ամեն բան համբերութեամբ ու քաղաքագիտութեամբ ձեռք կը բերւի. մարդ կայ, որ թաղէով աղւէս չի կարող բռնել, բայց մարդ էլ կայ՝ որ սալով կը բռնի, բայց զրա համար պէտք է աղւէսին կամաց կամաց ու օրե րօւ յոյնեցնել... «Սարր իլէ կօրուք հալփա օլուր, թութ եամիրադը՝ աուլաս» ³⁾ —ի զուր չէ ասում թիւրքը...

—Ճի՛շտ է, Համբարձո՛ւմ աղայ, ճիշտ է,—հաստատեց Նդուարդ էֆէնդին.—«Զէֆանլն սօնու՝ սէֆա դըր»... ⁴⁾

—Ծօ մա՛րդ, որ էդ բաները գիտես՝ էլ ինչո՞ւ ազգչափ անխել-

¹⁾ «Հասկացողի համար ճանճի բզկոյն էլ երաժշտութիւն է, անհասկացողի համար՝ թմբուկն ու զուրնան էլ քիչ է»:

²⁾ «Փոս ես փորում՝ հատակին չափ փորիր, թէ չէ եթէ միայն ձեռքի համար փորես՝ ինքդ մէջը կ'ընկնես»:

³⁾ «Համբերութեամբ ազոխը կարելի է հալվա դարձնել, թթի տերեւ՝ աուլաս»:

⁴⁾ «Նեղութեան նետեանքը ուրախութիւն է լինում»:

քութիւններ կ'անես, ինչո՞ւ ամեն մարդու կը վստահանաս կարծիքներդ յայտնելու... Տաս տարեկան տղան չի անիլ այն, ինչ որ դու կ'անես... Բաւական է որ աղաքսըղի (անձեմի) մէկը քեզ ասէ թէ այս ինչ մարդը վատ է. դու անմիջապէս թափ կը տաս քո ամբողջ գիտցածը այդ մարդու վրայ... Ել չես մտածեր, թէ կարելի է եկել են քեզ փորձելու, լրտեսելու... Եւ միւս օրն իսկ կ'իմանանք թէ Եղուարդ Էֆէնդին կայֆէի (սրճապաշ) մէջ այս ինչ մարդու վրայ այսպէս ու այնպէս է խօսել... Ամբըցի՛ր, եղբա՛յր, ամբըցի՛ր, տղայ չես որ քեզ ամեն օր խրատ տամ...

Եղուարդը լուռ մնաց այդ մասին:

— Բայց այդ բաւական չէ, — շարունակեց Համբարձում աղան, — յաճախ դու իմ անունս էլ կը քիչես, իմ կարծիքներս էլ կը յայտնես այդ լրտեսներին...

— Սո՛ւտ կ'ասեն, Համբարձո՛ւմ աղայ, — վրաբերաւ Էֆէնդին յուզւած:

— Նալա՛թ քե չար սատանայ... Ծօ մա՛րդ, նորէ՛ն դու այդ լեզուով կը խօսիս... Ծօ՛, քե՞զ չեմ ասեր որ ինձ խաբել չես կարող... Ծօ, դու Աւետիս վարժապետին ի՞նչ էիր ասեր...

— Ի՞նչ էի ասեր:

— Դո՛ւ չէիր ասել թէ «Համբարձում աղան կ'ուզի Յովհաննէս վարժապետին վարժարանէն հանել տալ»...

— Հա՛, ճիշտ է, այդ ասեր եմ...

— Ասե՛ր ես, հա՛... Բայց մենակ է՞դ... Դու Յովհաննէս վարժապետին էլ չէիր ասեր թէ «Համբարձում աղան կ'ուզի Աւետիս վարժապետին հին ամառանները յետաձգել տալ, իբրեւ թէ նրա՝ Պօղոսեաններին մտերմութիւն ցոյց տալու համար»...

— Ձէ՛, այդ չեմ ասեր...

— Ասե՛ր ես...

— Ձե՛մ ասեր, Համբարձո՛ւմ աղայ...

— Որ չես ասեր, ես այս բոլորիս մշակն (ծառայ) ուղարկեմ Յովհաննէս վարժապետի յետեւէն, թո՛ղ զայ երեսիդ խօսի...

— Համբերի՛ր, քիչ մտածեմ, կարելի է որ մոռցեր եմ... Հա՛, իմացայ, — վրաբերաւ նա ուրախացած, — ես նրան ճիշտ այդպէս չեմ ասեր...

— Հապա ի՞նչ ես ասեր:

— Նա նրան ասեր եմ թէ՛ «Համբերի՛ր, տեսնե՛նք Համբարձում աղան սխտի մարտեցնէ՞ Աւետիս վարժապետի արածները»...

— Յիմա՛ր դու, չիմա՛ր... եւ ի՞նչ. դու առանձին առանձին այդ երկուքին իրարու դէմ կը զրգուես ու քեզ հետ կը միացուցես: Վերջը զաղտնիքը կը բացուի ու երկուքն էլ միանալով քո դէմ՝ Թաղականութեան բողոքներ կը տան... Ո՞վ է այստեղ մեղաւոր. ե՞ս, թէ դո՞ւ. «էթմա, բուլմա»¹⁾... Դու չե՞ս գիտեր որ «հէր քէս իղէր քէնդինէ, զի՛նէ քէնդի քէնդինէ»²⁾... Զէ՛, ես այս բաների վերջը լաւ չեմ տեսներ, գիտե՞ս, պարո՞ն. բայց ինքզ մտածի՛ր, մեղք ես զաւակներդ: Նա քեզ մի՛շտ, — ասաց նա կատաղութեամբ այդ միշտ բառը շեշտելով, — չեմ թողներ որ մարտես էդ բաները... Ինձ Զըրնոյեան կ'ասես...

Էֆէնդին նորէն լռեց: Համբարձում աղան ոտքի ելնելով, մօտեցաւ կամաց իմ անկողնին ու նայեց կէս երեսիս: Նա, ի հարկէ, ցոյց տուի իմ «խաղաղ քունը»:

— Իս ուշ կ'արթննայ, իր սովորութիւնն այնպէս է, — ասաց նրան կամաց էֆէնդին, թերեւս նրա սիրաւ քաղցրացնելու համար: Համբարձում աղան անցաւ դարձեալ դիմացի կողմը և, բանալով դրացի սենեակի դուռը՝ Մաքրուհի՛, սամովարը բե՛ր», հրամայեց: Տաս տարեկան Մաքրուհին բերեց ջրով լիքը փոքր սամովարն ու գնաց: Հաջի Համբարձում աղան լեցուց նրա մէջ վառարանի կրակն ու նստաւ նորէն իր տեղը:

Դարձեալ տիրեց լռութիւնը:

— Դիտե՞ս, տխուր, սխեց քիչ յետոյ Զըրնոյեանը, — ես հիմա ժամանակ չ'ունիմ աչդ բաներով զբաղւելու, այդ թողնե՛նք ուրիշ ժամանակի... Բայց քեզ այստեղ կանչելու նպատակս էր, որ տեսնես անպատճառ այսօր կամ վաղ այն մի քանի մարդոց, որոնց մասին խօսել եմ քեզ: Նոցա կը յայտնես իմ կողմից, որ այս կիրակի Թաղականաց ընտրութեան մէջ Պօղոսեանները սխտի շահին անպատճառ: Հետեւապէս թո՛ղ նրանք իրենց պատրաստած մարդիկը բերեն և կեղև-

¹⁾ «Մի՛ անիր, մի՛ գտնիր (պատիժը)»:

²⁾ «Ամեն մարդ ինքն է անում իրան (վնաս), էլի՛ ինքն իրան»:

ցու գաւիթ և քուէարկութիւնը կատարելուն պէս՝ յարձակունք տուաւ փրկելու զարգուիչը անեն... Այսնոցա կ'ատես իմ կողմից, կը հասկանա՞ս...

—Հրա՛մեր էք, հրա՛մեր էք...

—Բայց քո կողմից,—չարունակեց նա,—դու կ'աւելացնես, թէ այդ բնորոշները բոլորովին անպէտք մարդիկ են, կաշառակեր են, ժողովրդի համար մոտածող չեն և այլն... Ինչ որ դու չարմար կը դատես: Նոցանից դու երկիւղ մի՛ ունենար, նոքա «մեր» մարդիկն են, վատահիշի են, բայց թէ ինչու ես այս բանը քո միջոցով կ'անեմ և ոչ թէ ինքս անձամբ՝—այդ արդէն քեզ հազար անգամ բացատրել եմ...

Ես շատ էի ցաւում, որ չէի իմանում այն բաները, ինչ որ Համբարձում աղան նրան «հազար» անգամ ասել ու բացատրել էր, բայց նրա յետագայ խօսակցութիւնը բաւականին լոյս ձգեց այդ հանկուտների վրայ:

—Լաւ հասկացի՛ր ու ղլխիդ մէջ մտցու՛ր,—ասաց նա փոքր ինչ յետոյ Եղուարդին,—լաւ հասկացի՛ր թէ ի՞նչ է իմ ծրարիւրը:—Ջրնոցենց տան ոցժը պիտի մեծնայ ու ծաւալի բոլոր Վասպուրականի մէջ: Մեր անունը պիտի բարձրանայ, քանի ես կենդանի եմ, իսկ իմ մահից յետոյ կը յուսամ թէ տղաներս—չնորհիւ իմ իրենց տաճ դատարարութեան—պիտի չը շեղին իմ բռնած ճանապարհից... Պու գիտես որ մեր երկրի մէջ առանց փարայի անուն հանել, հրաշակիլ՝ անհիմն ու անկարելի բան է. ուստի իմ առաջին ու ամենամեծ նպատակս է հարստանա՛լ: Կը հասկանա՞ս՝ հա—րս—տա—նա՛լ... Այդ է ամենամեծ ոցժը մեր աշխարհի մարդոց: Հարստութեան առաջ անգոր են քո բոլոր քաղաքակրթութիւնը, գիտութիւնը, պերճախօսութիւնն ու միւս բոլոր դարտակ ու անօթի խօսքերը... «Չըթ չըթ էտան նալչա գըր, իշ բիթիւրէն աքէ գըր»¹⁾ այս լա՛ւ հասկացի՛ր: Այս նպատակիս հասնելու համար ինձ օգնող հարկաւոր չէ. թէ՛ իմ առևտրական ձեռնարկութիւններս, թէ՛ զիւղական գործերս և թէ՛ կառավարութեան կապալներս ըստ ամենայնի գոհացուցիչ են և չի անցնի քանի մի տարի՝ ես կը լինեմ տէր հազարաւոր ոսկիների...

¹⁾ «Չըթիկ չըթիկ անողը պաշտն է, գործ վերջացնողը՝ գրամը»:

—Ատուռած յաջողութիւն տա՛յ—վրաբերաւ այդ ոսկիներով յափշտակւած Նդուարդ վարժապետը:

—Ատուռած ոչ ոքին յաջողութիւն չի տար,—ընդհատեց նրան կծու կերպով Համբարձում ազան—դու միայն լա՛ւ լսիր թէ ինչ կ'ասեմ... —Այն ժամանակ ես կը լինեմ առաջին մարդը Վանայ մէջ ու կ'իշխեմ ամբողջ աշխարհի վրայ...

—Սամովարը եռաց, սամջվարը եռաց,—ընդհատեց նրան իր խօսակիցը:

Զըլնդեանը ընդհատեց իր խօսքը, չափ լեցուց չալամանի մէջ ու սամովարի ջուրն էլ աւելցնելով, յետ քաշւեցաւ իր տեղ:

—Բայց արդեօք այս մեր հիւրը արթննալու միտք չունի՞,—հարցուց նա Նդուարդին:

—Աւելի՛ լաւ,—պատասխանեց ուսուցիչը—դու վերջացո՛ւր խօսելիքդ:

«Համբերի՛ր»—ասաց Համբարձում ազան ու պինդ հազաց երկու անգամ: Աս, ի հարկէ, տեղիցս չը շարժւեցայ: Նա առեց ունեւիքը ու պինդ զտրիաւ գետնին, որպէս զի իմ քնած լինելը ստուգէ: Աս միայն խնդացի մտքումս այդ «քաղաքագէտի» միամտութեան վրայ ու շարունակեցի «անվրդով քունս»:

—Ներկորդ մեծ նպատակս, որին կը ձգտեմ,—դարձաւ նա դէպի էփէնդին—այդ՛ իմ թշնամիների գլուխը ջարդելն է... Աս այդ մասին միշտ յաջողութեան մէջ եմ եղել, բայց ոչ քեզ պէս անշնորհք ու անտաշ կերպով... Կուգի՞ս թշնամուդ հարւածել—այնպէս ուղղիւր պլաքդ, որ նա չ'իմանայ թէ ո՞ր տեղից կուղայ նա... Մայրաքե՛ղ գլուշութիւն... Քշնամիս քսան աչքով կը դիտէ ինձ. «ուս ուլուր, տիւշման ուլումազ»¹⁾ —կը հասկանաս, վարժապետ: Ախ... արտասանեց նա աստմները կոճտացնելով—ե՛ս պիտի չը թողնեմ, որ նրանք ուրախ օր անցունեն... Քո՛ղ շարունակեն իրենց ափքիարը.²⁾ նրանք ինձ յաղթել չեն կարող... Աս նրանց արիւնը պէտք է խմեմ:

1) «Չուրը կը քնի, թշնամին չի քնի»:

2) «Ափքիարը» տարբերէն բառը խոսադէս «մաքիւր» է նշանակում, բայց տառնկատառնցիւր գործ են դնում զայն «լիքթիւնդրութիւն» բառի տեղ:

Նդուարդ, արիւններ'... Վինսիզին հակերնտան իմանալով զեալիրս¹⁾ — նրանք դեռ ինձ չեն ճանաչեր...

Այդ վերջին խօսքերը արտասանելիս՝ նա փոխեց բոլորովին իր ձայնը ու աւելի մըրմնում էր արջի պէս, քան խօսում:

Բայց ես այլ ես անկարող էի մի կողքի վրայ պառկած մնալ. ես փորձեցի, քնած երեսո նոցա ցոյց տալով, շուտ գալ միւս կողքի վրայ ու վերմակը զլսիս քաշել: Այդ պատահեցաւ. Համբարձում աղայի ճիշտ վերջին խօսքերի վրայ:

—Մ'ա... —արտասանեց Նդուարդը, երեւի իր խօսակցին իմ շուտ գալու մասին ակնարկելով:

Զրբնոցեանը լսեց ու ոտքի ելնելով մէկ երկու անգամ պինդ պինդ անցաւ սենեակի մէջ ու հազաց: Յետոյ մօտեցաւ ինձ:

—Պ. Փիրումեանց,—ձայնեց նա:

—Պ. Փիրումեանց,—կրկնեց նա աւելի բարձր.—չայն պատրաստ է, կուգէ՞ք ելնել:

Պ. Փիրումեանցը իր խելքն հացի հետ չի կերել,—ասացի ես մտքիս մէջ,—որ քեզ հիմա պատասխան տալ:

—Թորայ թէ Փիրումեանցը այսօր արթննալու միտք ունենաց,— դարձաւ նա Նդուարդին—մեռելի՞ քուն է այս, ի՞նչ է...

—Քեզ ասի, որ նրա սովորութիւնն այդպէս է,—պաշտպանում էր ինձ խեղճ էփէնդին,—նա զիշերը ուշ կը պառկի, ատաւօտ ուշ կ'ելնէ. շատ անգամ մինչև կէսօր կը քնանայ...

—Ծօ', ջայնա՛մ նրա զուլս, պատասխանեց Համբարձում աղան—չայն ափսոս կը գայ... Արի՛ մի մի գաւաթ խմե՛նք, յետոյ արթնացնենք: Ես էլ քաղաք պիտի երթամ, կ'ուշանամ:

Եւ նա նստաւ նորէն՝ չայ շինեց:

Ե.

—Շարունակի՛ր, հաջի՛ աղայ,—խեղրեց էփէնդին, չայն կուլ տալով:

—Դու գիտես, որ իմ գլխաւոր թշնամիներն են նախ՝ էն ա-

¹⁾ «Անհատական անկրօնը կորուստ է բաղժիւ (վնասել):»

տաբարդ Պօղոսեանները. երկրորդ՝ քանի մի «նշանաւոր» կոչւած Ապօղոսեանները: Բայց նոքա կը սխալին. Զրբնոցեանը նրանց ակռէքի խարժը չէ... Ես չեմ թողներ, որ նրանք առաջ երթան... Աեցցէ՛ Սահմանադրութիւնը. զու գիտես որ թշնամիներէն վրէժ առնելու համար էդ անտէր Սահմանադրութենէն լաւ բան չկայ... Ի՞նչ կը կարծես. իմ գործերս թողած՝ ես Քաղաքական ժողովի կամ ուրիշ ազգային գործերի մէջ ձրի պաշտօններ կը վարեմ... Խե՛նթ եմ ես, ի՞նչ է... Բայց այդտեղ ես ունիմ իմ ահագին հաշիւները. ես չեմ թողներ որ թշնամիներս պաշտօններ ունենան, ժողովրդի վրայ ազդել կարողանան և ես կը յաջողեցնեմ միմիայն իմ մարդոց ընտրութիւնը: Աւ այդ «իմ» մարդիկը պիտի շատնան օրէցօր՝ հարստութեանս համեմատ...

—Այդ մասին բնաւ տարակոյս չունինք, — վրարեաւ ուրախութեամբ ուսուցիչը:

Թեամբ ուսուցիչը:

—Ի հարկէ, — պատասխանեց մի դառն հեղնութեամբ Զրբնոցեանը — Ի հարկէ, երբ քեզ պէս քաղաքագէտ, օգնականներ ունենամ...

Նդուարդ էփէնդու օանքաղաքագիտութիւնը՝ նորէն բորբոքեց հաջի Համբարձումին: Այդ առիթով նա հարկ համարեց պարզել իր հայեացքը իր գործիք — օգնականների վրայ: Նա ասում էր թէ ազգային ժողովներում «իր» մարդոց ընտրութիւնը յաջողցնելու համար պէտք էր նրան պրօպագանդայ անել իր թշնամիների դէմ՝ ժողովրդի, աւանդական դասի մէջ: Այդ բանը նա չէր կարող անձամբ անել, զի այդպիսով իր զիրքը նուազագոյնացած կը լինէր նոցա աչքում: Ուստի պէտք էին նրան ժողովրդին մօտիկ ու հասարակ մարդիկ: Այդ գործի համար նա ամենէն կարեւոր ոյժ խոստովանում էր քահանաների ու վարժապետների մէջ, բայց ամենալաւ քահանաների ու վարժապետների, որք քաղաքագէտ են, խօսելու ընդունակ են, ժողովրդի աչքին թոյլ փչել գիտեն և այլն:

Նա ասում էր, թէ երբեք չի կարող պահանջել, որ իւր այդ «գործիքները» լինեն ազնիւ ի ներքուստ — «Ես համոզւած եմ, — պնդում էր նա — թէ ազնիւ մարդը չէ կարող ինձ ծառայել, բայց թո՛ղ նոքա ցոյց չը տան իրենց ներքինը, որպէս զի ժողովուրդը վստահ չ'նոցա: Նա պահանջում էր նրանցից ծալրայեղ զոյուշութիւն ու տոգոնութիւն իրենց ձեռնարկութիւնների մէջ: «Այո՛ւ, —

կրկնում էր նա շարունակ,—հիշ բիր իշէ բէջուլ օլամադ: 1) Նա թուում էր իր յատուկ գործիք—վարժապետները և երգում, որ նրանք յաւիտեան պիտի հաց ուտեն ու պաշտօնի վրայ մնան իր շնորհիւ, որչափ էլ անընդունակ չը լինին իրենց արհեստում, կրթական գործում: Նա պահանջում էր իր բոլոր գործիքներից մի վարպետական և ոչ թէ Եղուարդ էֆէնդու պէս «անշնորհք» կեղծաւորութիւն. «Փաթլը տիլ, գիւլէր եիւզ,—ասում էր նա—դիւշմէնին կօլունու բիւքէր»: 2)

Այնուհետև նորէն ու նորէն կծու յարձակումներ էր անում Եղուարդ վարժապետի արարմունքների վրայ ու սպառնում մնասել նրա ապագային, եթէ չ'ուզէր իր բռնած ընթացքը: Նա մեղաւորում էր նրան մանաւանդ՝ իր (վաճառականի) պաշտպանութեան վստահանալու համար՝ չափազանց երես տունելու մէջ:—«Ի՞նչ գիտես, որ ես գրեթէ մ'իսկ պաշտպանդ եմ,—ասում էր նա,—և եթէ ես չը լինեի՞ դու ոչ թէ վարժապետութիւն, այլ ոչ մի գործ էլ չես կարող անել այստեղ»:

—Նա՛տ ճշմարիտ է,—պատասխանում էր կորակնեալ էֆէնդին:

—Որ այդ գիտես, էլ ի՛նչու չես մեղքանար գէթ քո զաւակներին. չե՞ս ամեն բան սահման ունի. մի անգամ էլ կը պատահի, որ իմ պաշտպանութիւնը չ'անցնի և դու տակը պիտի մնաս... Ձե՞ս «կուժն ամեն օր ջուր չի բերի»...

Նա յիշեցնում էր նրան քաղաքի բոլոր ուսուցիչների դժգոհութիւնը դէպի նա: Թուում էր այն բազմաթիւ բողոքները, որ տեղում էին նրա դէմ ի թաղական խորհրդարան թէ՛ ժողովրդի և թէ՛ նրա պաշտօնակից վարժապետների կողմից: Նա յիշում էր ինչ ինչ աղաների անունները ու երգում, որ նոցա համար իբրև կաշառք Փաղականութիւն էր յաջողցուցել միմիայն այն պայմանով, որ Եղուարդ էֆէնդուն պաշտօնանկ չ'անեն, որչափ էլ նրա դատաւորութիւնը անպէտք ու վարքն անկարգ չը լինի: Եւ խեղճ Եղուարդը հաստատում էր չամբարձում աղայի բոլոր խօսքերը...

—Բայց դու մի՛ կարծիր,—ասում էր նրան Զըրնոյեանը—թէ ես

1) «Շտապողը ոչ մի բանի մէջ կատարեալ չի լինի»:

2) «Քաղցր լեզուն ու ժպտող երեսը թշնամու թեն են կոտրում»:

կը պաշտպանեմ քեզ իբրեւ մի մարդու, որ կարող է ժողովրդին օգտաւէտ լինել... Խեղճիցդ հա՛ն այդ ցնորքը: Կը տեսնե՞ս այս կատուն: Ես գուցն կը սիրեմ ու կը կերակրեմ լոկ այն բանի համար, որ նա կ'ոչնչացնէ իմ տան մկները, իսկ երբ նա անընդունակ դառնայ այդ գործի մէջ,—ես զայն կ'առնեմ ու կը նետեմ փողոց... Այս լա՛ւ հասկացիր... Այդ մէկէ երկրորդ՝ մկներս ոչնչացնելով՝ այս կատուն ինքզինքը մեր տան բարեկամ կը ցուցնէ, բայց ի հարկէ ես լաւ կը հասկանամ, որ նրա այդ բարեկամութիւնը իր փորի համար է և ոչ թէ տանս համար: Դու էլ չը կարծես թէ ես քեզ ժողովրդի օգտի համար կը պաշտպանեմ. ես քեզ կը պաշտպանեմ իմ անձնական նպատակների ու աֆիքիարի համար... Այս էլ լաւ հասկացիր...

Անուհետեւ նա խորհուրդ էր տալիս նրան զարգանալ, առաջ տանել իր պերճախօսութիւնը, կարդալ գրքեր ու լրագիրներ, բայց ոչ թէ իսկապէս զարգանալու կամ ժողովրդին օգտու տալու համար, այլ իր թշնամիների աչքին թող փշելու, իր գիտութեամբ նրանց զարմացնելու ու չը թողնելու որ նրանք միշտ «հաչեն» իր վրայ—«Յիմար ժողովուրդ է,—ասում էր նա—ցուցամոյութիւն պէտք է, բայց դու ծոյլ ես, քիչ կը կարդաս... Այս «Արեւելքները» ես աւելի քեզ համար կը ստանամ, դու գիտես որ ես լրագրից շատ չեմ ակորժեր. բաւական է ինձ միայն «Ազգային լուրերը» կարդալ, բայց կը տեսնեմ, որ դու էլ ինձ պէս կ'անես...»:

Չայի երկրորդ զաւաթը լեցնելուց յետոյ՝ նա շարունակեց.

—Բայց այս բաները ես քեզ իմ սենեակիս մէջ կ'առնեմ... դու գիտես, թէ ի՞նչ պատիւներ կը տամ քեզ ուրիշների առաջ... Դիտես, թէ ինչքան կը գովեմ քեզ ամեն տեղ... Ամենքն այնպէս համոզուած են, թէ ես կը պաշտեմ քեզ... Բայց լաւ իմացի՛ր, Զըրնոյեանը այդքան յիմար չէ և նրա պաշտպանութիւնն էլ յաւիտենական չէ: «Ո՞ն փիւշմանլըք աբչէ էթմաղ» — մի՛ մոռանար այս...

—Չաջի՛ աղայ,—պատասխանեց կատարեալ լացի ձայնով Եղուարդ էֆէնդին—հաջի՛ աղայ, ես կոյր չեմ որ այդ բաները չը տեսնեմ... Ես չեմ տեսներ, որ կեանքս, զաւակներիս ողջութիւնը քեզմէ միայն կախուած է... Ես ապերախտ չեմ և բոլոր հոգովս կ'աշխատեմ մեր երկուքիս «ընդհանուր» նպատակների համար: Զի գիտեմ, որ քո զօրութեան մէջ է ամփոփուած և՛ իմ երջանկութիւնը, կեանքը և

ամեն ինչ... Ո՞վ կուզէ, որ իր աչքը կոյր լինի... բայց ի՞նչ անեմ. ես էլ մարդ եմ, կարող եմ պահասութիւններ ունենալ, պէտք է ներողամիտ լինիս...

—Բա՛յց, ջանքով, զեօզով (այդ) — ընդհատեց նրան մի թոյլ փաղաքշանքով Համբարձում աղան — դարտակ խօսքերով բան չի շինուի, գո՛րծ պէտք է, գո՛րծ... «Աստի իլէ փիլաւ փիշաւ, զէնիզ կատար եազ բէնգէն...»¹⁾ Եւ զու տղայ չես, որ ամեն օր խրատ տամ քեզ. Փա՛սք Աստուծոյ 48 տարեկան կատարեալ մարդ ես եւ ես երկու տարով միայն մեծ եմ քեզմէ... Աս՛ւ. հասկացիր կեանքի պայմանները եւ աշխատի՛ր վարժուիլ ամեն բանի մէջ... Մենք խօ մեր մօր փորից չենք հանել մեր զիտցածները: Քիչէն կը սխտն, շատին կը հասնեն. «Այլ բիլմէլէն, — ասել է թիւրքը — չօղունու հի՛շ բիլմէզ»²⁾։ Եփէնդին լսեց։

Ականջներս սրեցի ու տեսայ, որ նրանք չայ են խմում: Նրանցից մէկը պարպած դաւաթը զարկեց սինակի կեդրոնին, փոքր ինչ յետոյ նոյնը արեց նաեւ միւսը: Ուրեմն երկրորդ դաւաթն էլ վերջացել էր:

—Այս չայն կը փշտնայ, — ասաց վաճառականը — չայն կը փոխեմ ու մեր քնածին ձայն կը տամ, որ ելնէ...

«Ուզեմ չ՛ուզեմ, հիմաջ պէտք է ելնեմ» — մտածեցի ես եւ կազմ ու պատրաստ սպասեցի տանտիրոջս հրամանին:

Նա փոխեց թէյամանի չայն, ջուր լեցուց սամփարի մէջ, կրակն աւելցուց ու մօտեցաւ ինձ: Ես նորէն քնածի ձեւով շուռ եկայ միւս կողքիս վրայ:

—Պ. Փիրումեա՛նց, — ձայն տուեց նա:

Ես փոքր ինչ ծրմուկեցայ:

—Պ. Փիրումեա՛նց, — կրկնեց նա աւելի բարձր:

—Ո՞վ է, — հարցուցի ես, վեր թռչելով ջանկարծ ու աչքերս ճմռելով:

—Ես եմ, ներեցէք խնդրեմ... Չայն կը պաղի, կուզե՞ք ելնել...

¹⁾ «Իթէ լսկ խօսքով փլաւ կեփուի, ծովի չափ իւղն էլ ինձանից ձեզ նուէր»:

²⁾ «Քիչը չիմացողը, շատն երբէք չի խմանայ»:

Նսեկայ և յանկարծ Նդուարդ էֆէնդուն ու սամօվարը տեսնելով, ցաւ յայտնեցի, որ այդչափ ուշ էին ինձ արթնցուցել:

Նդուարդս ընդունեց ինձ սովորական քաղցր ժպիտով: Նրկուսի մէջն էլ նկատուում էր մի ծայրայեղ—արհեստական զուարթութիւն: Պէտք է ասած, որ ես շատ աննպատու բաներ էի լսել մինչև այդ օր մեր մանկավարժի մասին—մի բան, որ շատ սովորական ու ածան է Վանում, —սակայն ես երբեք չէի կարող երևակայել, թէ Նդուարդ էֆէնդին ու Համբարձում աղայ Զըրնոյեանը կապուած էին այնպիսի կապերով, որոնք բացէ ի բաց հերքում էին նրանց հոչակեալ և առածի կարգն անցած կոյր—բարեկամութիւնը, մտերմութիւնը և այլն: Շատ միամիտներ, պատմելով Համբարձում աղայի Նդուարդին պաշտելու չափ սիրելը, զարմանքով աւելցնում էին թէ «ի՛նչպէս այդ «քաղաքագէտ» համարուած մարդը անկարող է լինում ճանաչել Նդուարդ էֆէնդուն ինչ պտուղ լինելը»... Այլ սակայն այդ աւուր զարմանալի դէպքն ինձ համոզեց, որ Զըրնոյեանը «այն պտուղը» չէր բնաւ, որ անկարող լինէր դիմացի մարդը ճանաչել:

Բայց այսպէս թէ այնպէս, Համբարձում աղայի և Նդուարդ էֆէնդու զաղտնի խօսակցութիւնը այնպիսի մի նոր աշխարհ բացեց իմ առաջ, այնպիսի մի տարօրինակ լոյս ձգեց մարդկային կեանքի վրայ, որ ես անկողնիս մէջ պառկած միջոցին՝ մտածում էի թէ արդեօք երազ չէ՞ր այդ իմ բոլոր լսածները... Այդ ես կրկնում էի յաճախ, տեսնելով Զըրնոյեանի բռնած պատկառելի դիրքը դէպի մեր էֆէնդին և նրան աւած ծայրայեղ «կոմպլիմանները» թէ՛ այդ աւուր մեր միասին չափ խմած ժամանակ և թէ՛ չետոյ՝ ամեն մարդոց առաջ, և՛ս առաւել խնձոյքներում: Բայց ո՞վ կարող է երաշխաւորել, թէ մեր այս անցաւոր կեանքում ամեն ինչ երազ չէ...

Նրանք ծածկեցին իրանց առանձին չափ խմելը և վայելեցին ինձ հետ դարձեալ երկուսիս գաւաթ: Չայի ժամանակ մենք չունեցանք մի կարևոր գրուցատրութիւն: Եւ զարմացման, թէ ինչո՞ւ Համբարձում աղան վերցուցել էր հիւրանոցից իր կանաքափայտեան (canapé) ու աթոռները և կահաւորել զայն ասիական ձևով—նա պատասխանեց թէ «պատիկ Զատիկ» առիթով նորոգել է տալիս իր այդ կարասիները:—Եւ տունը խօ Զըթչենց ¹⁾ տունը չէ՞, որ հիւ-

¹⁾ Տէս իմ «Պատկեր. Վասպ. հ. կեանքից» ժողով. ա. գիրք (Հին սերունդ):

րերը մինդարների վրայ նստեն»,— աւելցուց նա պարծանքով :
Եւ արդարեւ, երբ ես երկու շաբաթէն յետոյ այցելութիւն տուի
նրան Մենդեան տօնի առիթով—ահագին փառահեղութիւն տեսայ
նրա հիւրանոցում:

2.

Այդ դէպքից յետոյ ես ֆուսի Վանում դարձեալ երեք տարի եւ
անհրաժեշտ համարեցի ի մօտոյ ուսումնասիրել վէպիկիս այդ երկու
գլխաւոր հերոսներին: Ուստի դնենք այստեղ քանի մի յաւելումներ
այդ հետաքրքիր անձանց վրայ:

Նդուարդ Էֆէնդի Քշուառեանը բաւականին կարգացած մարդ
էր: Նա շատ էր կարդում եւրոպական՝ հայերէնի վերածւած՝ վէ-
պեր: Հոգի էր տալիս մանաւանդ այնպիսի բովանդակութեան համար, որոնց
մէջ ծայրացեղ սիրահարութիւններ էին նկարագրուած: Նա սիրում
էր նոյնպէս կարդալ լրագիրներ, բայց շատ թեթեւ կերպով. քիչ էր
կարդում մանաւանդ «Քաղաքական» բաժինը, որ նրա կարծիքով «մի
շատ կեճուալից բան էր»: Բայց նա յափշտակում էր աւելի ոտանա-
ւորների ու խրթին բանաստեղծութեանց ընթերցումով, լինէր այդ
աշխարհաբաւ թէ զրաբաւ: Նա այնքան սիրահար էր բանաս-
տեղծութեան, որ կամեցաւ իր ուսուցչական անունն էլ նուիրել նրան
և ընդունեց Վենետիկի միաբան յայտնի Նդուարդ Հիւրմիւղեանի ա-
նունը, որ մի բոլորովին անծանօթ բան էր իր հայրենակիցների համար:

—Հիւրմիւղեան վարդապետը, —ասում էր նա ինձ մի անգամ—
այնպէս կը թըրթուացնէ սրտիս թելերը, որ կը կարծեմ թէ ամբողջ
մարմնովս եթերի մէջ կը վերանամ:

Նա շատ անգամ թղթեր էր մրոտում իր «նուրբ» զգացումնե-
րը ոտանաւորի վերածելու, բայց բազմը չէր օգնում նրան և շատ
քիչ էր պատահում որ յաջողէր այնպիսի բան դուրս բերել, որ կա-
րելի լինէր համարձակ ցոյց տալ ուրիշներին:

—Նրբեմն, երբ կը տեսնեմ բնութեան մի հոյակապ երևոյթ,
ասում էր նա շատերին, —օրինակ՝ ճաճանշափայլ արեգը, որ կը
ցոլէ իր անդրանիկ կարմիր շառաւիղները համայն տիեզերքի վրայ՝

անյակէս կ'ոգևորիմ, որ եթէ ձեռքիս մատիտ չունենամ, մատերիս ծայրերով կը գրողմեմ որ'և է տեղիմ վայրկենական սպաւորութիւնները:

Մի նշանաւոր բան, որ չէ կարելի այտուել զանց առնել, այդ այն էր, որ մեր պարոնը չէր կարող հինգ տող բան գրել, առանց տալը հատ սիգարայ քաշելու: Ի յարգանս բանաստեղծութեան, նա հետաքրքիր անուններ էր դրել նաև իր երկու սեռի զաւակներին. Ստողիկ, Արուսեակ, Լուսնթագ, Զեփեւիկ, Խոտորիկ և այլն: Ի դէպ է ասել, որ նա ծանրաբեռնաւ էր ահագին բնականութիւն և որ նրա կինը, ի մեծ զժբաղդութիւն խեղճ և անսպասով էֆէկտու, գրեթէ ամեն տարի մի մի աղջիկ էր ծնում...

Նրա «ազէս» ծնողները զուշակած էին երեւի նրա գեղարուեստական ճաշակը և երբ տասնըհինգ, քսան տարի առաջ Երզրումի մի տաճկական ատեանում նա «քեաթիբի» (Գրագիր) պաշտօն էր վարում, «Խաչիկ էֆէնդի» էին կոչում նրան ամենքը: Փոքր հասակին, նա ստացել էր միայն տարրական ուսում, որով իր ամբողջ ուսումնական պաշարը նա պարտական էր միմիայն իր եռանդոտ ինքնաշխատութեան: Բայց ցաւալին այն էր, որ Նյուարդ էֆէնդին, զոնկ վերջին տարիներում, շատ քիչ օգուտ էր քաղում իր կարգացածներէց: Նա ո'չ թէ միայն չէր իրագործում իր կարգացած լաւ բաները (որի մասին, փակագծում ասենք, երբէք էլ նա չէր մտածում), այլ և լաւ չէր հասկանում նրանց: Ինձ թւում էր, թէ նա անընդունակ էր կեդրոնացնելու իր ուշադրութիւնը այդ կարգացածների վրայ: Այդ էր պատճառը, որ նա շատ ալլանդակ բաներ էր պատմում եւրոպացոց կեանքից ու նիստ ու կացից, թէև շատ անգամ էլ ստուգւում էր, որ նա այնպիսի ստեր էր փչում, որոնց մասին երբէք ոչինչ կարգացած չէր: Բայց այդ բաներով նա հրաւիրում էր իր վրայ շատ և շատ միամիտների զարմանքն ու հիացումը:

Նա սիրահար էր նոյնպէս գրաբաւ լեզուի, որ զիտէր բաւականին, ինչպէս նաև տաճկերէն, բայց ծանօթ չէր ո'չ մի եւրոպական լեզուի: Պերճախօս էր բաւականին, թէև յաճախ կապ չէր լինում իր ասածների մէջ: Բայց ինչ որ ամենակարեւորն է այստեղ, այդ նրա բոլոր խօսքերի, զգացումների ու քարոզների կեդրութիւնն էր: Նստ ու գիտար չէր հասկանալ այդ նրա ձայնից ու ծայրացեղ «անսովորականալիզմից»: Իսկ դալով նրա մօտիկ ծանօթներին, որոնք

քաջ գիտէին թէ Նդուարդը չէ՛ խօսում այն, ինչ որ մտածում ու անում է—նրանք բացէ ի բաց զգուժում էին նրա ամեն մի բառից։

Սեղծաւոր և ստախօս էր նա ամեն քայլափոխում և իր ամբողջ էութեամբ։ Այդ մասին նա խորութիւն չէր դնում ո՛չ ծանօթի ու անծանօթի, ո՛չ հեռուի ու մօտիկի և ո՛չ բարեկամի ու թշնամու մէջ։ Նրեանց նա այդպէս էր ամեն մարդու հետ, ժպտաւ էր արձախում աջ ու ձախ, բայց ուրիշ բա՛ն էր նրա բռնած ընթացքը նրանց յետևից... Ս, այդ շատ ուրիշ բան էր։ Նա չէր խարոզ գէթ այնքան յաղթել իր քարացած բնաւորութեան, որ անկեղծ երևար նոյն իսկ այն մարդու առջև, որին պատրաստ էր նախնել իր բոլոր գործունէութիւնը, որից կախած էր, ինչպէս ինքն էր աւում, ոչ միայն իր, այլ և իր զաւակներին կեանքը... Այն ընթերցողը վկայ եղաւ, թէ ի՛նչ յանդիմանութիւններ էր ուտում նա այդ մասին հաջի Համբարձում աղայ Զրբնոցեանից։ Մի ապշեցուցիչ ու նորաբանէ տեսարան էր նրա՝ կիրակի օրեր՝ ս. Պատարազին ներկայ լինելը։ Ամբողջ արարողութեանց միջոցին արտասուների առաներ էին թափւում նրա աչքերից. լալազին ու կողկողալին աղօթում, մրմնջում էր նա բազկառարած... Թերևս մի թողութիւն էր հաչցում Ամենակալ Եից, թերևս իր հայրենակիցների կարեկցութիւնն էր հրաւիրում իր մարդկային սխալանոց համար—չը դիտեմ, դիտեմ միայն, որ այդ երբէք չէր արգելում իր հակառակորդներին՝ շարունակել նրա վարքի շարաշար քննադատութիւնները... Բայց աւաղելին ու ողբալին այն էր, որ խեղճ մարդը մի ժաման ծանր ապաշխարանքից յետոյ, դառնում էր նորէն հին «Նդուարդ էֆէնդի Թշուսեանը» և շատ անգամ, առանց տուն երթալու, այցելում էր ուղղակի իր քանի մի «մտերիմներին» ու ծրագիրներ պատրաստում այս ինչի պաշտօնանկութիւնը չաջողցնելու, այն ինչի տունը քանդելու...

«Մտերմութիւնը» մի բառ էր, որ խկապէս անմատչելի էր նրան։ Այնպէս եմ կարծում, որ նա երբէք իր կեանքի մէջ մտերիմ ունեցած չէր, այդ բառի բուն նշանակութեամբ։ Նա պատրաստ էր կապել իր «մտերմութիւնը» անխորի ամեն մարդու հետ, լոկ այն պայմանով, որ այդ մարդը միանար նրա հետ միասելու իր անձնական թշնամիներին։ Թէև երբէք Նդուարդ էֆէնդին այդպիսի անխորի չէր անում այդ թշնամիների մասին, այլ համոզում էր իր «մտերիմ»

ներին», որ նրանք (թշնամիները) կամ «Պօղոսեան» են կամ «ազգի ու թշուառ ժողովրդի ցեղեր»... Ի հարկէ նա այդպէս էր անում նաեւ հաջի Համբարձում աղայի թշնամիների համար, որոնց նա միշտ իրն էր նկատում: Այդպիսով մեր էֆէնդին «բարեկամութիւնը», «մտերմութիւնը» համանիշ էր համարում «մեղակցութիւն» բառին:

Պարծենկոտ էր նա ամեն բանի մէջ. — «Ենձ պէս ուսուցիչ Պօլիս երեք հատ չը կայ», ասում էր նա ամենքին:

Թշուառեանի ուսուցչական կեանքի մասին արդէն բաւական տեղեկութիւն տուաւ ընթերցողը: Իբրեւ դաստատու, նա շատ ապարդիւն էր, զի չը գիտէր ուսուցման մեթոդներ, ծով էր և շարունակ քնում էր դասարանի մէջ: — «Էֆէնդի», դասերնիս ասինք», — զարթեցնում էր նրան կարգի վերջին աշակերտը՝ իր բաժինը կարդալուց յետոյ: Էֆէնդին անմիջապէս վառում էր նախ իր ձեռքում մնացած ու հանգած ծխախոտը և ապա դասը փոխում: Իբրեւ դաստիարակ, նա չունէր որ և է բարոյական ազդեցութիւն ողաների վրայ. խիստ կոպիտ էր վարւում նրանց հետ: Պատահում էր որ երբեմն քանի մի փայտ էր կոտորում միւսնոյն աշակերտի վրայ: Յուլութեամբ, անհաստատամտութեամբ և իր յայտնած զաղափարների հակառակ վարմունքով նա արդէն չէր կարող օրինակելի լինել նոցա: Եւ եթէ աւելցնենք այդ ամենի վրայ և՛ այն, որ տաս տարեկան ողաներն իսկ լսում էին ամեն օր իրենց տանը կամ փողոցի մէջ՝ խիստ անարգական խօսքեր նրա վրայ, — կարող ենք մի որոշ զաղափար կազմել նրա՝ աշակերտների վրայ ունեցած՝ բարոյական զօրութեան մասին: Իբրեւ ընկեր, նա նախանձոտ էր ու ատելի իր պաշտօնակիցներին. խառնութիւններ ու ինտրիգներ էր յարուցանում նրանց մէջ, զինում իրարու դէմ և լրտեսութիւն անելով նոցա գործերից՝ յայտնում խեղաթիւրւած ձևով վարժատան հոգաբարձուներին:

Համբարձում աղայի և նրա կուսակիցների հրամանով, նա դրում էր երբեմն նաեւ պաշտօնական ու ոչ-պաշտօնական յօդածներ իրանց «ընդհանուր» թշնամիների դէմ: Այդ թղթակցութիւնները ուղարկւում էին Պատրիարքարան կամ լրագիրների խմբագրատներ և նոցա նպատակն էր պաշտօնանկ սննդ կամ գէթ խաչատուակել աշխարհի սուաջ իրանց չը հաւանած մարդիկներին: Բայց Զըրնոյենց խումբը ունէր նաեւ ուրիշ թղթակիցներ քաղաքի երիտասարդներից:

Նդուարդ էֆէնդին ատելի էր հաւատարապէս ժողովրդի բոլոր դասակարգերին, մանաւանդ նրա ուսմիկ կոչւած մասին: Մինչ շատ տգէտ, հազիւ գրել—կարդալ խմացող, բայց բարեբարոյ ուսուցիչներ ղիրքն ու ժողովրդականութիւնը այդ երկրի ուսմկութեան մէջ շատ և շատ նախանձելի էին: Բայց ի հարկէ «կուժը միշտ ջուր չի բերի» և նա մի անգամ պիտի կոտորէի, ինչպէս այդ հաստատում էր հաջի Համբարձում աղայ Զըրնոյեանը:

Այդպիսի մարդ էր ահա իմ բարեկամ Նդուարդ էֆէնդի թըշուառեանը:

Է.

Պալով Համբարձում աղայ Զըրնոյեանին—նա ինձ աւելի անհանգիստ էր անում իր ղիւղական գործերով: Մէկ առաւօտ, այգեստանի նեղ փողոցներէից մէկում, տեսայ դիմացս արագ արագ եկող մի գիւղացի:

—Ատուա՛ծ սիրես, աֆանդի՛, —ասաց նա՝ ինձ հաւասարուելով, էսա սոխախէն (փողոց) կանա՞մ Համբարձում աղենց տան ճամբախ գտնել:

—Զըրնոյե՛նց Համբարձում աղայի, —հարցուցի նրան:

—Հրա՛ման քե, Զըրնոյե՛նց: Ես գիտի ինոնց տուն, ամմա աջալայ ի, ինկայ էսա ծուռ-մուռ սոխախներ, շըշկուայ...

Ես տուի նրան պէտք եղած հրահանգներն ու մէկ հատ էլ սիգարայ:

—Ախպե՛ր, անունդ ի՞նչ է, —հարցուցի ես:

—Աւօ՛ քե ծառայ, Գ. գեղէն եմ:

—Համբարձում աղենց ի՞նչու կ'երթաս:

—Աֆա՛նդըմ, էտա նաղլ էրգէն ի, ամմա թարիֆ անեմ, բալքա սրտիս էրոցք խոջնայ... Ո՛հ, շունչս կտրաւ... Սանջուն (չողֆ ծառայ) ձի (ի՞նչ) բռնե... Ճամբախ քրտնած ի, պաղ ջուր շատ խմայ... Գիտե՛ս, աֆանդի, ութ սահաթփան ճամբախ հինգ սահաթփան մէջ էկայ... Աղթըրանին ելայ մեր դեղից, դեօյ մըկայ հասայ էստունդ. ես կա՛սեմ սահաթ մէկը ¹⁾ կայ մըկայ...

¹⁾ Տաճկաստանում ժամերի հաշիւն սկսում են արեւի մտնելու բուպէից և ոչ կէսօրից, ինչպէս մեղանում:

— ձիշա մէկն է, — պատասխանեցի ես:

— Աֆա'նդըմ, էտա մարդուց հինգ տարի առաջ քսան ոսկի պարտք առի, մըկայ էլե յիտուն ոսկի: Պստիկ ակապէրս էն տարի Ստամբուլ ծամբեցի, ինչ որ էն վաստըկաւ՝ էօրօխկեց ձիկ, տարի տուի Համբարձում աղին Ֆայիզ (ֆայիզ)... Չորս տարի գեօջ էնպէս էլաւ: Մըկայ ակապէրս Ստամբուլ գործ չունի, հիւանդ ի, էս մէկ տարի ի հիւ պըլիկ մը չ'էօրօխկեց ձիկ, որ տի (ֆայիզ) Ֆայիզ... Երէկ մեր «էս Մելօն ձիկ սալախ (ֆեղէն-Մելօն) իտու, որ Համբարձում աղէն հիւքիւմաթ (գարարան) արզիւհալ է տուե, կ'ուզի երկու արտա ծախե... Վա'խ իմ ճծեր, վա'խ իմ ճծեր... — յողւոց հանեց Աւօն ու պինդ զարկաւ ձեռքը իր յոգնած ծնկներին:

— Մըկայ դու ի՞նչ կու գես անեկ, — հարցուցի ես:

— Աֆա'նդըմ, երէկ որ էտա խաբարն առի, շաշմիշ էլայ, խեղքս կուրխաւ, գիշերս նա՛ քուն եկաւ, նա՛ բան... Մըկայ կ'ասեմ՝ գնամ ոտքն ինկնեմ, բալքա արզիւհալն յետ առնի, տունս չը քանդի... Խե'նք (ֆեղէն) Աստոծ ի՞նչ յաջողութեն կը տայ... Ա'խ, Աստուած...

— Էդ քսան ոսկին ի՞նչու առիր, Աւօ՛ ակապէր...

— Վերգի (ֆարգի) տուի, աֆա'նդի, վերգի տուի... Աստոծ սաբաքեարի տունն աւերի, ուրիշ բան չեմ ասեր... Էսա մեր փուծ Մելօն նոր էր ուէսութեն առե, գօնեց թէ իլլահ (անպարճաւ) պիտի պարտքդ տաս: Քանի մի տարւան վերգի կար վրաս, էն տարին էլ հունձն աղէկ չ'էլաւ, պնայի Համբարձում աղի ոտքն ինկայ, ի՞նչ անի ես... Գինե՛ (գարգէշ) վերգու տակէն չ'էլայ, գինե՛ քանի մը տարւան վերասկայ (պարսիկ) կայ վրաս... Ա'խ, Աստո՛ծ, խե'նք մեր ազգի վերջն ի՞նչիս պիտ որ էլնի... Մ'նա'ս բարին, աֆա'նդի, աջալայ եմ, գործից յետ կը մնամ...

Գնա'ց Աւօ ակապէրը ու թողեց զիս խորասուզւած սե մօքերիս մէջ: Ես ի հարկէ բնաւ չէի զարմանում, որ 20 ոսկին (200 ր.) 50-ի էր հասել: Քիչ էր պատահում, որ Համբարձում աղան հարիւրին երեք տոկոս առնէր զիւղացիներէից. նա մեծ մասամբ հինգ էր վերցնում, բայց ոչ թէ տարեկան, այլ ամսական, զի տարեկան տոկոս հաշուելը բոլորովին անծանօթ է այդ երկրում: Հինգի հաշուով քսան ոսկու համար նրան պիտի հասնէր ամսական մէկ ոսկի, հինգ տարու՛մ — վաթսուն ոսկի, եթէ չը հաշուենք տոկոսի տոկոսը: Այդ

փաթնունից 30 ոսկին և կրկնակի տոկոսը, ինչպէս երևում էր, վրձարած էր Աւօի պանդուխտ եղբայրը, որով կը մնար ձիշտ մաթեմատիքական հաշուով յիսուսն ոսկի պա՛րաք...

Երրորդ առաւօտ իմ աշակերտներից մէկը, որ աղքատ դարբնի մը տղայ էր, փոքր ինչ ուշացաւ: Երբ ևս հարցուցի պատճառը՝ նա արեց ինձ հետևեալ պատմութիւնը:—

—Չորեքշաբթի իրիկուն, հօրս հետ հիւանդ գիւղացի մը եկաւ մեր տուն, կ'ասէր թէ սանջու ունէր, շատ կը տքար... Երէկ առաւօտ զողի ժամինս (արշալոյսից առաջ) մեռաւ, տարանք ժամ: Էսօր թաղեցինք, հայրս ինձ էլ եկեղեցի տարաւ:

—Այն գիւղացու անունն ի՞նչ էր...

—Աւօ՛: Գ. գեղէն էր:

—Տքայու ժամանակ ուրիշ բան կ'ասէ՞ր...

—Համբարձում աղին շատ ուշունց կուտար... Մեռնելու ժամանակ «Ա՛խ, մա՛րէ» (հայրիկ) կ'ասէր...

—Գիւղէն մարդ բերի ք նրա թաղման համար...

—Ձէ՛, գիւղը զատն է (էն-աւ), մարդ չը գտանք, որ ուղարկէինք:

Ո՛հ, ի՞նչ այնքան գիւղին, քան մեռել թաղել Վասպուրականում: 'Ինչ ևս մեռելը չը պաղած, ժամկոչը բերում է իր «նաշը»՝ մերկ ննջեցեալը՝ փաթաթեալ կնոջ միմեջով (սաւանով) դրում է նրա մէջ ու եկեղեցի տարում: Ժամկոչը իսկայն լւանում է նրան աջտեղ: Մէկ ժամից յետոյ հանգուցեալի մօտիկ ազգականները քանի մի կանգուն կուտին հետ եկեղեցի երթալով, փաթաթում են դիակը ոտից ցզլուխ այդ լաթում ու «պատանք» կարում: Միւս օր, կանուխ առաւօտ, եկեղեցական արարողութիւնները աւարտելուց յետոյ, զետեղում են նրա մարմինը, ասանց դադաղի, սոսկ պատանքով, մի կանգուն (արշի) խորութեան փոսում ու հողով ծածկում... Այնպէս է յանձնւում այլոսեղ հողին ամեն ոք՝ մեծատուն թէ տնանկ, մանուկ թէ հասուն, ուսեալ թէ անուս...

Իսկ «նաշը» եկեղեցապատկան մի արկղածէ երկայն պատդարակ է, բարրովին բաց երեսով ու սանդղտածէ յատակով: Նրա երկու զոյգ ծայրերը դնում են շորս մարդու ուսի վրայ ու գնացքը շարժւում...

Մէկ ամսից յետոյ եւ տեղեկացայ, որ Համբարձում աղայ Զըրնոյ-
յեանը գրաւել էր արդէն հանգուցեալ Աւօի երկու արտերը ու անօ-
թի թողել նրա բազմամբօխ ընտանիքը:

Այդ մշտական վաշխառութիւնից զատ, Համբարձում աղան ըս-
տանձնում էր նոյնպէս կառավարութիւնից զիւղական տուրքերի հա-
ւաքչութեան արտօնութիւնը և նրա գործակատարները շատ աւելի
խստութեամբ էին վարում շինականների հետ, քան կառավարութեան
ուղարկած ոստիկանները:

Նա երբեմն պաշտօն էր վարում նաեւ դատաստանական ատեան-
ներում և այդ ոչ միայն նիւթական շահի համար, այլ իբրեւ մի ա-
ռիթ իր հակառակորդների վրէժը լուծելու (եբէ նրանք գործ աւելե-
նային այնպէս) և հասարակութեան աչքում իր ազդեցութիւնն ա-
ւելցնելու: Թէև նա չըզիտէր ոչ օրէնագիտութիւն և ոչ տաճկական
գրագիտութիւն, այլ միայն խօսում էր այդ լեզուով:

Նրա ընտանեկան կեանքը բաւականին մռայլ էր. նա չէր սի-
րում ոչ իր կնոջ և ոչ մանր զաւակներին: Բայց նա աւելին էր ա-
նում. նա չարաչար ծեծում էր իր կնոջ ամեն մի չնչին բանի հա-
մար ու կաշկանդում զայն տան սլատերի մէջ՝ տարին տասերկու ա-
միս: Բայց նրա հետ խօսողը, նրա քաղցր ժպիտները տեսնողը՝ եր-
բէք չէր կարող մտքովն անցկացնել այդ և այդ՝ էր ապաքին Համ-
բարձում աղայի քաղաքական փիլիսոփայութեան հիմնական սկզբ-
ունքը:

—Ներքուստ ի՛նչ կ'ուզես եղի՛ր,—ասում էր նա Նդուարդ է-
ֆէնդուն—բայց վարպետութիւնդ նրա մէջ պէտք է լինի, որ մարդոց
առաջ լաւ երևաս:

Եւ չիրաւի, նրա հանձնարը անվիճելի էր այդ մասին:

Համբարձում աղայ Զըրնոյեանը մի քիչ պարարտ, արիւնալից
ու սև աչքունքով մարդ էր: Նրա կենսագրութիւնը համառօտ կա-
պելու համար աւելցնենք նաև, որ նա շատ էր մեծարում իր հաւ-
նած Առաջնորդներին և յաջողում՝ օգուտ քաղել նրանց մեծազօր
զիրքից:

Հաւատում եմ շատերի հետ, որ մեծ քաղաքագէտ էր նա:

ԵՐԳՉԻ ՈՒԽՏԸ

ԱՐՄԻԻ ԵԱՆԻ

Քանի դեռ սրտումս վառում է կրթակ
Անկեղծ, սրբազան ողևորութեան,
Եւ քանի ձայնըս ազատ, համարձակ
Դեռ չէ խըլացրել սե գրոշմը մահւան.
Քանի դեռ հոգիս պահում է իւր մէջ
Լիառատ պաշար ազնիւ կրքերի...
Եւ քանի սիրոյս ցընորքը անշէջ
Դեռ լի աղբիւր է վառ երազների.—

Ես պիտի երգեմ և ջատագովեմ
Անաչառ մարդոց մեծաշուք գործեր.
Ես պիտի երգեմ և փառաբանեմ
Սիրոյ քնքշութիւն և կուսի պատկեր.
Ես պիտի երգեմ, անկաշառ ձայնով,
Սուրբ ճշմարտութեան դրօշակը ձեռքիս.
Ես պիտի երգեմ... թէկուզ այդ երգով
Հալածանք միայն վաստակեմ անձիս...

Հըզօր է ուխտըս, հըզօր իմ հաւատ,
Ինձ չէ սարսեցնում կեանքի փոթորիկ.
Ճակատս պայծառ, սիրտս անվհատ —
Ես ձեզ խղճում եմ, փոքրոգի մարդիկ...
Փրփրացէք անվերջ, դուացէք ուժգին,
Թող օդ գըրգեն ձեր ճիւղ, աղաղակ.
Ես չեմ վըրդովում. վեհ է իմ հօգին,
Եւ անընկճելի հոգոյս նշատակ:

ՀԻՆԳ ՕՐ

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՏՔԵՐ ՈՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Է Օ Ի

Ա Ռ Ա Ջ Ի Ն Օ Ր.

Մոխրագոյն ամպերը բարձրանում են շատ թանձր, շերտ-շերտ կանգնում են անշարժ, մնում մի օր, երկու, երեք օր, շատ անգամ և ամբողջ շաբաթներով: Մնում են անփոփոխ և անփոփոխ մոխրագոյն օրը իր ազքատ ու տկար լուսով կախում է երկրի վերայ. արեգակը մի հատ շոգ չի կարողանում անցկացնել այդ շերտերի միջով: Բայց և ամպերն էլ մի կաթիլ անձրև չեն կաթեցնում: Հողը չոր, երկինքն ամպամած. իսկ մարդը տարակուսանքի մէջ: Շատ անորոշ եղանակ է. անձրևի ևս սպասում [ո] է արևի՝ ինքդ էլ չը գիտես:

Ամառն այդպիսի օրեր շատ են լինում Ղարաբաղում:

Օրացոյցի հաշւով գիշերը լուսնկայ պիտի լինի: Առաինը լոյս է տալիս կուտակ-կուտակ ամպերին, լուսաւորում է նրանց մանր ծալքերը, որոնք մի շատ նւաղ, շատ անկենդան, կիսատ լոյս են ուղարկում երկրի վերայ: Այդ լոյսը մի խօսքով անուանելու բառ չը կայ. ժողովրդի մարդը անուանում է «լոյս-լոյս»: Առարկան իր անորոշ գծագրութիւնն է ցոյց տալիս: Խաւար է, որովհետեւ նրան ամբողջովին չեն տեսնում և լոյս է, որովհետեւ նա ամբողջովին չի կորած: Նրկնքի ո՞ր կողմիցն է դալիս այդ «լոյս-լոյսը» պիտի որոնես, ենթադրես. նա չումես երկնքին, ամեն մի կողմ՝ լուսնի տեղն է ցոյց տալիս: Ահա՛ մի շատ լուսաւոր շերտ հեռու հիւսիսում, մի՞թէ այդտեղ լուսին է, երևում էր մի ուրիշը արեւմուտքի վերին ծայրում. ի՞նչ իմանաս, ո՞րտեղ է նա: Աւելացրէք և այն, որ մի այդ տեսակ օր օգոստոսի

31-ին էր, երեկոցի սկիզբը, օղը մթնացնելու չափ գոգ, իսկ բարակ և հանդարտ քամին իշխան ու աէր—և դուք մի ճիշտ հասկացողութիւն կը կազմէք այն բոպէի մասին, երբ մենք շուռ տաինք մեր ձիերի գլուխները և, դուրս գալով պօստային խճուղուց, Ասկարանի աւերակների մօտից՝ մտանք Կարկար գիւղի քարքարոտ, լայն դաշտը:

Ասկարանի հինաւուրց բերդը նուշուց 25 վերստաչափ հեռու է և շինուած է Կարկար գետի աջ և ձախ ափերին: Ախաւեր պատերը, զրկւած իրանց երբեմն ուազմական գոռողութիւնից, խղճացած, անգօր նայում են մեզ, երբ մեր ձիերը քարերի և ջրի միջով քայլում են զոռշուութեամբ: Գետը, մի քանի ձիւղերի բաժանուած, ձայնը փորն է դցել. գարնան՝ կատաղի, անհաշտ Կարկարը չէ, որ, սար ու ձոր գլուխն ասած, ձայնը երկինք հանած, ոչոքի չի իննացում. այժմ նա խաղաղ հոսում է, չի էլ վախեցնում: Անցնում ենք միւս ափը, շարժւում ենք սրբնթաց: Միմեանց յետևից վազէ վազ գալիս, անցնում են անորոշ տեսարաններ: Ահա՛ ջրաղացը. նրա մեծ քարերը չեն որոտում և ջուրը, ազատ թափւելով նրա կողքից, փրփուր կըտրած, գոռգոռալով պոտցո է գալիս մի նեղ խողովում: Նա յետ մնաց. Ասկարանի պատն է մի րոպէ կանգ առնում մերաչքի առջև և շտապով դէպի մի կողմն է փախչում, կուլ գնում: Գալիս են աչգիներ. խիտ ծառերի մէջ հանդարտ քամին մի կախարդական աղմուկ է գցել, մի անընդհատ վշող. ջուր ու քամի միացրել են իրանց ձայները. չը գիտես ո՛րտեղ է ջուրը և ո՛րտեղ՝ քամին: Անցնում ենք: Սպիտակ թողոտ ճանապարհները դէս ու դէն են վազում. թո՛ղ գնան՝ ուր ուզում են. մեր ճանապարհն այն է, որ լանջիվայր ու լանջիվեր դաշտերն է չափում: Անթիւ և անհամար ծղրիղները ճովւում են ամեն կողմից, ամեն անկիւնից. մի ափ հող չը կաց, որի վերայ չ'աղաղակէին նրանք: Ուղեորի լսելիքը, որ այնքան ուշադիր, այնքան լարւած է լինում գիշերային ճանապարհորդութեան ժամանակ, միայն այդ բարակ, փոքրիկ ձայներն է լսում. նա ըմբռնում է վայրկեաններ, երբ այդ ձայները միանում են, կարգ ու կանոնի տակ մտնում, կարծես դուրս են գալիս մէկի հրամանով, բայց դարձեալ խառնւում են, կարծես միմեանց ջգրու յետ ու առաջ են ընկնում, մի շփոթ, մի անկարգ աղմուկ հանում:

Մենք չորս հողի ենք: Գնում ենք Վարազաբոցն գիւղը, ուր

մեզ պիտի ընկերանայ հինգերորդ հոգին: Վարազաբոյնից պիտի գնանք դէպի Գանձասար: Մեզ ցոյց են տւել ճանապարհը. ասել են թէ այդ գիւղը գտնուում է այն անանուն լեռնաշղթայի արևելեան լանջի վերայ, որ, սկսելով Ասկարանի առաջ, ձգւում է դէպի հարաւ, անցնում է Շուշու հանդէպը, հասնում Գիղայի սահմանները: Ասել են թէ՝ ցոյց տւած ճանապարհի վերայ մենք կը տեսնենք երկու գիւղ, որոնցից յետոյ երրորդը՝ ինքը Վարազաբոյնն է որ կայ: Բայց մենք դեռ Ասկարանին չը հասած՝ իմացանք որ ճանապարհ չը պիտի ճանաչենք: Մենք անփորձ քաղաքացիներ ենք, իսկ մի գիւղի ճանապարհ ճանաչելը այնքան հեշտ չէ, մանաւանդ գիշերը. տեսնում ես, մի քանիսը դէս ու դէն են զալարւում. միայն այդ ճանապարհների վերայ կեանք մաշած մարդն է, որ կանգնում, նայում է ճանապարհի կերկրանքին և մաշած մարդն է, որ կանգնում, նայում է ճանապարհի կերկրանքին և ճանաչում է թէ ի՞նչպիսի ճանապարհ է, ո՛ւր է գնում՝ դի՛ւղը, թէ՛ հեռու՝ վատ տեղ: Այս պատճառով մեզ հետ վերցրինք մի անձանօթ թուրք ձիաւոր, որ պատահաբար մեզ հետ էր ընկել փոստի ճանապարհին և իր գիւղն էր գնում: Սա էլ չէր տեսել Վարազաբոյնը և ճանապարհ չէր ճանաչում, բայց մենք խնդրելով մեզ ուղեկից արինք նրան: Ճանապարհը թո՛ղ մի կողմ կորչի, կայ և մի մեծ պատճառ, որ ինքն ըստ ինքեան յայտնում է այսպիսի տեղեր: Շատ կան աւազակներ այս կողմերում. մեր թուրքը պատմում է զանազան անցքեր, պատմում է թէ ի՞նչպէս են յարձակւում, կողոպտում, սպանում: Ինքն էլ հրացանը ձօնից հանեց, լցրեց, պատրաստեց, արդեօք ումի՞ համար: Զը լինի՞ թէ սա էլ նրանցից մէկն է, մտածում էր մեզանից ամեն մէկը: Գեռ ճանապարհի սկզբին էինք մեր հայութիւնն անում: Ինչպէս որ լինի, զան առաջը պատուածգիր, որ մօտովն անցնես. մենք քաղցր ու մտերմաբար ենք վարւում մեր կիսավայրենի ձիաւորի հետ, խօսում ենք, լսում ենք նրան: Խօսակցութեան նիւթը մի կողմից, ոչ լոյս ոչ մութ գիշերը և ճանապարհի երկարութիւնը միւս կողմից սկսում են մեզ ձանձրացնել: Ո՛ւր է, ինչո՞ւ չենք հասնում. գնում ենք և չը գիտենք թէ ո՛ւր. անձանօթ տեղե՛ր, անձանօթ ուղեցո՛յց: Լուռ ենք, շտապում ենք, ծեծում ենք ձիերի կողերը և մտածում: Զորեր ենք անցնում, թմբերի գլուխն ենք բարձրանում, սպասում ենք, բայց ոչ մի տեղից ձայն ու ծպուտ չի դալիս. մի գազան, մի մարդ, մի շուն ձայն

չի հանում, հանգիստ ու խաղաղ շրջակայքը մեզ ուղեկցում են. ամեն ինչ լռել է և լռել, կարծես այն պատճառով, որ փոքրիկ ծղրիղները ձուլուան, արաքւեն, որքան ուզում են: Մեր թուրքն է խօսում անհոգ, անտրտում. նա հանաքներ է անում, գիտէ թէ մենք այդ բոսէին ո՛վքեր ենք: «Այ անխելք հայեր, ասում է, զիշերւայ այս ժամին ո՛ւր էք ընկել սար ու ձոր, այս ի՞նչ խելք է»: Իսկ թէ անխելքութիւն ենք արել, այդ ինքներս էլ խոստովանում ենք: Ի՞նչ կար, ո՛ւր էինք վաղում, առաւօտը չէ՞ր լուսանալու, որ մարդավարի գնայինք: Հարցնում ենք թուրքից՝ թէ ո՛ւր ենք գնում. նա պատասխանում է ծիծաղելով և ասում՝ ո՛վ գիտէ, ճանապարհ է, երևի մի տեղ դուրս կը բերէ մեզ: Մի տե՛ղ... Դա անորոշ, շատ հեռու, երևակայական, երկիւղալի խօսք է: Յանկարծ... Ել ի՞նչ ջանկարծ.— հազար ու մի ջանկարծական դէպքեր են գալիս մեր միտքը. բայց այն, որի մասին չէինք էլ մտածում, իսկոյն մեր առջև կանգնեց:

— Վանգնեցէ՛ք, ձայն է տալիս առջևից գնացողը:

— Ի՞նչ կայ:

— Ճանապարհը կորցրել ենք: Եւ այդպէս ասողը բարկացած հայհոյում է իր ձիուն:

Այդ էր պահաս: Վանգնում ենք: Շրջակայքի յամառ լռութիւնը, պղտոր երկինքն իր պղտոր լոյսի հետ և ծղրիղների աղմուկը մեզ զայրացնում են, գոնէ այս փոքրիկ անիծւածները մի վայրկեան չեն լռում. վերին աստիճանի լարւած խելիքը զրգուում է այդ ձայներից, աւելի հեռի ձայնը դժւար է լսում: Մենք բարձրանում ենք մի թումբի գլուխ, այդտեղ հնձած արտ է. նայում ենք, բայց նայելով բան չի դառնալ. պէտք է մի ձայն բռնել ու նրա վերայ գնալ: Քամին հեղիկ շփւում է մեր մազերին, փայփայում, զգւում է մեր դէմքը. ակորժելի՛ է, բայց ձայն չի բերում: Բայց սո՛ւս... Հեռւից, վերի կողմից, ահա մի խուլ, անսրոշ ձայն է գալիս. կասես թէ շան ձայն է: Լսում ենք մեծ ակորժանքով. ահա ձայնը բարձրացաւ, մեզ հասաւ. սխալւած չենք, շուն է հաչում: Իսկոյն առաջ ենք քշում ձիերը: Արքան մեծ քաղցրութիւն ունի շան ձայնը այսպիսի դէպքերում. օգնութեան ձայնն է, որ գալիս է սրտիդ տիրած կատարեալ յուսահատութեան առաջ, ուրախացնում է, բերանդ բաց անել է տալիս. գնում ես այդ վայրենի, սպառնական

ձայնին քաղցրութեամբ ականջ կախած, մտքումդ բռնած, իրբեանխաբ առաջնորդի ձեռքս Ձիդ էլ սիրտ է առնում, քայլեր է փոխում և զուշտապում ես, որ չը կորցնես այդ հեռաւոր ձայնը, որ թանգ է քեզ համար, ինչպէս մի նշան, որ քեզ պիտի ազատէ անծանօթ ու անցացտ տեղերի յուսահատ շրջանից և տանէ մի այնպիսի տեղ, ուր մարդիկ են ապրում: Իջնում ենք մի ձոր, բարձրանում ենք. շնահաչոցը մօտիկանում է մեզ, երևում են ինչ որ ցածրիկ հողէ շինութիւններ: Խողարածների տեղն է այդ: Ձայն ենք տալիս. վերեւից պատասխանում են մի տղայի և մի երիտասարդի ձայները. ցոյց են տալիս ճանապարհը:

Էլի գնում ենք. ճանապարհը անվերջ է երևում. ի՛նչ զարմանք, եթէ մեր դրութիւնն ու տրամադրութիւնը իւրաքանչիւր քայլին մեծ երկարութիւն են տալիս: Այդքան երկար գնացինք, բաց գիւղ չի երևում. երեւի էլի ճանապարհից զուրս ենք եկել: Մեր թուրքն էլ այդպէս է կարծում. մի բռնում մոռանում ենք այն քաղցրութիւնը, որ աւել էին մեզ խոգանոցի շունը, տղան և երիտասարդը: Անծանօթ կեանքը, անծանօթ տեղերում գիշերալին խորհրդաւոր վարապոյրի տակ ծածկւած՝ մեզ վերայ կարծես ծագրում է, մեզ զայրացնում:

Բաց ահա վերջապէս երևում են ճրագներ. գիւղականի խաղաղ ու կարճ երեկոյի ճրագներ, որ կպած են սարի լանջին և պահպանւում են շների միաբան հաչոցով: Գեղեցիկ են նրանք, չքնա՛ղ են երևում տանջւած ճանապարհորդին, որ Ատուած գիտէ թէ ո՛րտեղից է զուրս եկել նրանց. հանդէպը և վերջապէս իմանում է, որ իրանից մօտիկ մարդիկ են ապրում: Փոյթ չէ՛, որ այդ փոքրիկ լոյսերը հեռու են և զուցէ չեն կարող օգնութիւն հասնել, եթէ սրբտիդ անորոշ, բաց տխուր զգացմունքներից մէկն իրականանայ. բաց ո՞վ է այդ մասին մտածողը, բաւական է որ նրանք կան և զօրութիւն են տալիս է՛լ առաջ գնալու:

Եւ մենք գնում ենք, որովհետեւ այդտեղ չը պիտի մնանք: Շուտով ճրագները մի ինչ որ բարձրութեան լեռն են մնում, շնահաչոցը կտրւում է. դարձեալ նոյն խորհրդաւոր լուծթիւնը, դարձեալ մեզ անհասկանալի է դառնում թէ ո՛ւր ենք գնում: Բակ մեր թուրքը շարունակ կրկնում է, թէ ականք ի՛նչ էք կորցրել այս տեղե-

րում: Բայց այս անգամ կարճ է մեր անհանգստութիւնը: Մենք մի բարձրութեան գլուխէլ ենք հասնում և տեսնում ենք, որ մեր առջևը փռւած է զիւղը: Ծները հաշում են, խկ զիւղի վերելից՝ մի ճրագի լոյս, պայծառ՝ ինչպէս առաւօտեան աստղը, խիում է ծառերի միջով և դրաւում է մեզ՝ դէպի իրան ձգում: Փա՛ռք Աստուծու, հասել ենք: Միասին գնանք, չը հեռանանք որ շները մեզ չը մօտենան, հարցնենք մեր ընկերի տունը, խփոյն քնենք, պատուիրում ենք միմեանց:

Մտնելում ենք զիւղի ներքին ծայրի տանը. բարձր օշափարի՝ յետև, շունը, ինչպէս ասում են, իրան ուտում է. նրան ձայնակցում են շատ ուրիշ ընկերներ, որոնք մթութեան մէջ զանազան տեղերից գէպի մեզ են դալիս: Տան սրահում վառւած է ճրագը, մարդու ձայն է լսւում:

— Այս ո՞ր զիւղն է, հարցնում է մեր մի ընկերը:

Շունը այդ խօսքի վերայ աւելի կատաղում է. մենք բարձրանում ենք թումբերի վերայ, ուղում ենք շուտ լսել պատասխանը: Պատասխանում է մի կին.

— Ու... Փրճամալն է:

Մենք էլի նստեցինք յուսահատ:

— Իսկ ո՞րտեղ է Վարադարոյնը:

— Թումբի միւս երեսին է, պատասխանում են:

Խնդրում ենք ճանապարհը ցոյց տալ: Մի տղամարդ խոստանում է և բաւական սպասել տալուց յետոյ՝ մեր առաջն է դուրս դալիս:

— Ձեզանից ո՞րն է քիչ խելքը զլիւին մարդը, հարցնում է նա, թո՛ղ առաջ գալ որ ցոյց տամ:

Զը զիտնում ո՞վ էր մեր մէջ քիչ խելօքը. գիւղացին ճանապարհը ցոյց տւեց ու ինքը զարմացած որ այսպիսի ժամանակ մարդիկ են ման դալիս՝ յետ դարձաւ: Իսկ մենք մի ձոր իջանք: Մեզ շրջապատում են ծառեր, լսւում է ջրի ձայնը: Անտառների տեղ էր. մեր ձիերը սայլթաքվում են, քիչ է մնում որ ընկնենք և կոտրաւենք: Գիւղացին զուր չէր մեր մէջ խելքով մարդ որոնում...

Տանջւած, նեղացած, փշրւած վերջապէս ընկնում ենք մի սոսիալի շնահաչոցի մէջ: Հասել ենք Վարադարոյն, որ խոր քնով է անցած. մի հատ ճրագ, մի լոյսի նշոյլ չը կայ: Ծները շրջապատել

են մեզ, ուզում են կտոր կտոր անել. իսկ մենք կանգնել ենք, կուշ եկել, խօսել ու լսել չենք կարողանում: Մի ժամ սրանից առաջ, այդ հաշոցը ինչպե՞ս էր մեզ համար. իսկ այժմ անտանելի է. եթէ կարելի լինէր այս բոլորին կոտորել... Մեր թուրքը զարթեցնում է մի քնածի. մեր ընկերի տունն ենք հարցնում: Հարիւրաւոր տեսակ տեսակ ձայների մէջ նա՞մի բան է պատասխանում. մենք շարժւում ենք:

Մեր ընկերն էլ քնած էր: Նա վեր կացաւ, զարմացած դէս-դէն ընկաւ, դեռ չէր խօսում. միթնում կանգնեցինք, մինչև որ փոքրիկ սենեակում մեզ համար տեղ պատրաստեցին: Ի հարկէ, խօսքն ու ծիծաղը խկոյն մեր բերանները եկան: Հաց կերանք: Մեր թուրքը հաց չը կերաւ, որովհետեւ հայի հաց էր: Հետաքրքիր բան կը լինէր, եթէ հարցնէի նրան՝ թէ ի՞նչ խելք է, այդ անմաքուր հայերին այսքան տեղ պահպանելով բերել և այժմ նրանց հացին ձեռք չը մեկնել: Բայց ինչու մեր պատւելի Լաւաշնորդի սիրտը կոտրել: Նա քաղցած մնաց, իսկ մենք պառկեցինք:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ.

Առաւօտը, ժամի հինգին, բաց եմ անում աչքերս: Փոքրիկ լուսամուտի միջով ողջունում է ինձ լեռնային գիւղի հրաշալի առաւօտը: Նրկինքը պարզ է, կապուտակ. գով օդը անդադարներս է հոսում, խփում է վերմակի տակ տաքացած դէմքիս: Մոռացւում է գիշերային ճանապարհորդութիւնը և սիրտն ու հոգին զւարթանում են Աստուծո՜ւ բարի օրւայ ազդեցութեան տակ: Դուրս եմ գալիս փոքրիկ բակը, աչք տածում գիւղի վերայ: Վապոյտ բարակ ծուխը բարձրացել է, քոշ կապել տների վերայ. արեգակը տարածել է իր շողերը, լուսաւորել է խրճիթների բակերը, փողոցում կանգնած եզան ուսը, մահակի ծայրին կրթնած ալեւորի միրուքը: Շները պատերի տակ են քաշւել և լռել. գիշերը վերջացել է, նրանք այլ ևս ծառայութիւն չունին:

Փոքր գիւղ չէ Վարազաբոյնը: Նա ընկած է լեռնային լանջի վերայով. տները սեղմւած են միմեանց, ներքեւից նայելով՝ կարծում ես թէ միմեանց զլխի են բարձրացել: Այդպէս են Ղարաբաղի բոլոր հայ գիւղերը. այդպէս թիկն են տալիս վիթխարի սարերին, որոնց հպարտ մարմինը կարաւորապէս կ'որոնէր կաճաններով: Այդ

տեղերով են մարդիկ գնում ու դալիս. և ի՛նչպէս լաւ են գնում, զժառուրթիւն չեն զգում. իրանք լեռներն են տւել նրանց ոտներին ու թոքերին այդպիսի ամուր կազմածք: Ձիւն, անձրեւ կը գայ, կը քանդէ այդ նեղլիկ, երկչոտ կածանը. քարեր կը թափւեն վերելից, կը ծածկեն նրան, բայց լեռնաբնակ զիւղականի համար ի՛նչ փոյթ. նա թի չի վերցնիլ, չի դատիլ, այլ կը գնայ և կը գնայ: Բայց Վարազագոյնն ունի նահապետական սալերի յարմար ճանապարհներ. սարի ստորոտից սկսած դէպի արևելք՝ ընկած է լայնատարած հարթավայրը, որ ողողւած է արեգակի ճառագայթներով. այդտեղ են զիւղացիների այգիները. յետոյ սկսում են թուրք զիւղերի անվերջ դաշտերը, որոնք խառնւում են հօրիզոնի հետ:

Կանգնած դէս ու դէն եմ նայում. յանկարծ ականջիս են հասնում փոքրիկ զանգակի սուր հնչիւնները, որոնք դալիս են զիւղի վերելից, մի երկյարկանի տան պատշգամբից: Դպրոցական զանգալն է այդ: Այս պարզ և վճիռ օղի մէջ, առաւօտեան այս պահուն, ի՛նչպէս սիրելի, գեղեցիկ է այդ ձայնը, որ ուրախ ուրախ անցնում է աղբակոյտի վերայով, զիւղական աղքատութիւնից, ցնցոտիներից ու կեղտից բարձր, հայ քրիստոնեաներին սեպտեմբերի մուտքն է յայտնում, երեխաներին դպրոց հրաւիրում, զիր ու զրիչ բռնել է խնդում: Թո՛ղ փոքրիկ զանգակը մի քիչ էլ լեզուն շարժէ, ձայն ապ և ահա այդ զիրքն ու տետրակը դուրս կը դան կեղտոտ, խոնավ պոստիկներից, ուր առատ կերել են կծու ծուխը, փոշեթաթախ կը մտնեն փոքրիկների կոնստակը. իսկ զիւղական հայ վարժապետը անտեղ նրանց է սպասում, լաւ լաւ բաներ, քաղցր խօսք ու զրոյց է պատրաստել: Դրագէտը հպարտանում է, լսելով զանգակի ձայնը...

Դպրոց վաղուց գոյութիւն և լաւ համբաւ ունի. զիւղացիները նրա համար շինել են երկյարկանի մի տուն, որտեղից ուրախութեամբ ընդունում են կրթութեան առաջին խակ պտուղները: Դպրոցը տեսնել չենք կարող. մեր ձիերը պատրաստ են, հեռու ճանապարհ կայ առաջներս:

Նկած ճանապարհով յետ ենք գնում դէպի Ասկարան:

Գիշերն իր խորհրդաւոր վարագոյրով բանաստեղծական գեղեցկութիւն էր ընծայում մեր երեւակացութեանը այդ տեղերի մասին. իսկ ցերեկայ լոյսը, ընդհակառակն, ցոյց է տալիս մերի շրջակայք.

ամեն տեղ հնձած գեղնած արտեր են, անողուտ լանջավայրեր, ապառաժ լեռներ, որոնք տեղ տեղ ծածկւած են աղքատիկ թուփերով և մացառներով: Փրջամալ և Նախիջևանիկ զիւղերը, որոնց ճրագները զիշերով այգքան հրապուրիչ ոյժ և զեղեցկութիւն ունէին ծառերի մէջ, այժմ նայում են իրանց առօրեայ մոխրագոյն կերպարանքով: Հողի վերայ բարձրացած կոլոր կառուները, քարէ շինութիւնները, աղբը, անմաքուր փողոցները սովորական զիւղի պատկերն են ամբողջացնում:

Անցնում ենք նրանց մօտով, կտրում ենք Կարկար գետը, կտրում ենք և պօսաի ճանապարհը, գէպի բարձր ենք գնում: Ահաւել է Խոջալլուի լացնատարած դաշտը: Խոջալլու պօստային առաջին իջևանն է, Շուշուց 19 վերստ հեռու: Դաշտը հիւսիսի կողմից կլոթնում է այն լեռնաշղթային, որ արևմուտքից, Սաշին զաւառից գալով հասնում է Ասկարանին և այդտեղ շուռ գալով գնում է գէպի հիւսիս, պօստային ճանապարհին զուգընթաց, մինչև Շահրուլաղ իջևանը: Խոջալլուի դաշտը գարնան սկզբից ծածկւում է զեղեցիկ բարձրահասակ խոտով, որ պատկանում է Խանքենդի աւանի ուսս զօրքին և այդ զօրքից մնացած հին զինուորներին, որոնք տուն, բնակութիւն են հաստատել Խանքենդում: Խոտն այնքան առատ է, որ ուռնները անտեսութեան աւելորդը ծախում են ու հարստանում: Այդ տեղերում հսկողութիւնը շատ խիստ է և մենք աշխատում ենք շուտ անցնել, որպէս զի մեր ձիերի կերած մի փնջակ չորացած խոտի համար երկար ու ձիգ բացատրութիւններ չը սխենք որ և է կօզակի կամ հին զինուորի հետ:

Հարուստ դաշտի սահմանից դուրս ենք գալիս. ճանապարհը հետզհետէ բարձրանում է, աջ կողմում թողնելով երկու հայ գիւղեր — Սարգարաշէն և Նորագեղ: Բնութիւնը շա՛տ աղքատ է: Ապիտակ հողը մոխրի նմանութիւն ունի, բացի թփերից՝ ոչինչ չի բուսցնում. վարելահողերը քիչ են և հէնց այդ է պատճառը, որ չիշեալ զիւղերը ողորմելի կերպարանք ունին, չոր ու ցամաք լանջերին են կպել և միայն կարճահասակ թփերին են, որ տեղ տեղ, իրրեւ ծառ, քիչ կենդանութիւն են տալիս բնդհանուր մեռած տեսարանին: Մի աղքատ ձոր միշտ ընկած է մեր և այդ գիւղերի մէջ, նրա միջով հոսում է մի բարակ ջուր, որին ապաւինած, ձորի մէջ բանջա-

բանույններ և պարտէզներ են տնկել: Մի տեղ, պէտք է շնորհակալ լինել բնութիւնից, հողը փոխում է իր մոխրոտ անհիւրասէր դէմքը, կազմում է սևահողի մի լայն շերտ, որի վերայ այգիներ են շինել: Այդ այգիներից մէկում հանգիստ ենք առնում, հաց ուտում: Շարունակելով ճանապարհը, գնում ենք դէպի բարձր, անցնում ենք Ղշլաղ և Աէվ հայաբնակ զիւղերի առաջով: Իսկ հողը դարձեալ սպիտակ է, դարձեալ անհիւրասէր. պատահում են մացառապատ վայրերի դաշտեր. մշակի արօրը, ինչպէս երևում է, այդ տեղերին ոչ մի ժամանակ չի զիպել:

Բնութիւնը փոխում է Սէյիդի-շէն անունով հաց զիւղի մօտ. միանման աղքատ տեսարաններից ձանձրացած, աչքի առաջ յանկարծ երևում են փոքրիկ ծմակներ, զեղեցիկ արօտատեղեր և վարելահողեր: Ինքը զիւղը, որ նստած է այդ բնական հարստութեան մէջ, փոքր է, բաղկացած 30 կամ 35 տնից. նրանք կպել են մի թումբի կողերին և միշտ նայելով զեղեցիկ ձորին ու կանաչ սարերին, մնում են ծոյ՝ աղքատութեան մէջ: Այս զիւղում կայ հացոց ուսումնարան և մի հին խարխուլ եկեղեցի: Գիւղացիք պանդխտութիւն սիրող են, Բաղուի ճանապարհը դրանց համար, ինչպէս ասում են, ջրաղացի ճանապարհ է: Կայրում խօսք ենք սկսում մի զիւղացու հետ, խմանում ենք որ նրա փեռան ու աղջիկը, որդին էլ նոյնպէս, Բաղու են դնացել. նա ինքն էլ էր ուզում դնալ, բայց չը կարողացաւ, աչքերը ցաւում էին: Գարմանալի է, միանգամայն անհասկանալի. մարդը Բաղուի որ և է գործարանի առաջ քրտինքի առուներ է թափում, որպէս զի մի չնչին գումար դնէ, զրպանում ու յետոյ դաչ իր երկիրը, կոտրած ու մաշած մէջքը դրսոէ. իսկ աջտեղ, այս զեղեցիկ տեղերում, այս առատ հողերի տէրը լինելով՝ ձեռքը դնում է ծոցը և չը զիտէ թէ ի՞նչ անէ:

Սէյիդի-շէնից սկսում է Խաչենի անտառների թաղաւորութիւնը, որ գարմանալի՝ է, հրաշալի: Առաջին ծանօթութիւնը սկսում է Յէխ-Չորից:

Յէխ-Չոր... Գրիշ է պէտք, որ նրան նկարագրէ, լա՛ւ գրիշ:

Ճանապարհը զլիսիվայր է գնում. իջնում ենք ձիւրից, որ աւելի ապահով դնանք. շատ հեշտ է ձիւլ գլխի վերայով թռչել, գետին ընկնել: Ճանապարհին մարդ իսկոյն խրւում է հսկայական թանձր անտառի

մէջ, որ խիտ առ խիտ ծածկել է երկու լեռների կողերը ու նրանց մէջ ընկած Յեկ-Չորը: Մշտական խոնաւութիւն է տիրում այդտեղ, մշտական սուեր. ծառերը պինդ են պահում այդ տեղը արեգակի երեսից: Չորս կողմը տիրած է խորին լուսթիւնն և հրացանի ձայնը առաջին վայրկեանում մարում է մերձակայ ծառերի տակ, բայց մի երկու, երեք վայրկեան անցած՝ հեռու անտառի խորքում, կարծես ձիւղերը կորատելով, դէս ու դէն է վազվղում սուր արծաղանքը, մերթ բարձր և մերթ նւազ որոտումներով: Բնութիւնն այնքան ահաւոր է իր վայրենի բնադրութեամբ, այնքան մեծ, որ խեղճ մարդու հոգին միանգամայն ծնշում է. հասկանալ, ըմբռնել անհնարին է, աւելի անհնարին է մտքի մէջ նկարել այդ թաւ կռասկան անտաւը. մարդ միայն զարմանում է, հիանում, տեսնելով ճանապարհի երկու կողմից այն բարակ և ուղիղ ծառերը, որոնք անխնայ ձգւել են, հասել ահագին բարձրութեան, որոնք կանաչ են և դեռ շատ ուժեղ և, ինչպէս երևում է, աշխատում են էլ բարձր գնալ: Տեղ տեղ ճանապարհի երեսն են դուրս դալիս փոքրիկ ջրերը, որոնք անտեսանելի են անտառի ծոցում, մշտական լուսթեան մէջ միայն դրանք են բարակ ձայնով քչքչում և կարծես այդ ձայնովն են միմեանց սիրտ տալիս, որ չը կորչեն, չ'անհետանան, այլ դան, միանան, չար մանուկների պէս, ճանապարհը թայց անեն և էլի փախչեն, ծառերի տակ մանեն: Տեղ տեղ ճանապարհն անցնում է ձորակներով. ծառերը աւելի ևս խտանում են, զրկում միմեանց, երկինքը հեռու, շատ բարձր է մնում, յաղթանդամ ձիւղերի արանքով պատառ-պատառ եղած է երևում: Անտառի սիրտն է. խորանում ես, կուլ գնում. դէմքդ քրտնում է, քայլդ արաղանում: Այդ տեղերում բոցն են դնում աւազակները: Սարսափելի են սրանք, բնութեան բոլոր արհաւիրքներից էլ ահաւոր. օր ու դիշեր կողոպտում են, սպանում. նրանց ձեռքն ընկած զոհը միանգամայն անդօր է, անլեզու: Յայտնի է մանաւանդ նրանց քաջագործութիւնների մի տեղը, որ յայտնի է «խըւխըւ-դարասի» (խախուսի չոր) սոսկալի յատուկ անունով: Պատմում են՝ թէ այդտեղ շատ մարդիկ են կորել և երբ զիւղացիք գնացել են կորածներին որոնելու, ծառերի միջից լսել են մարդկանց օրհասական խոխոտը. աւազակները խեղճերին կողոպտել են և ծառերից կախ արել. խեղճերը վերջին շունչը խախուսցնելով են արձակել: Այդքա՛ն սարսափելի տեղ է...

Նթէ ուշադրութեամբ նայես, ձորի մի քանի տեղերը խճած կը տեսնես. Բաղդասար մետրօպօլիտն է շինել տւել այդ խճուղին, որը սակայն երկար տանել չի կարողացել: Տեղ տեղ ճանապարհը դուրս է գալիս փոքրիկ հրապարակների մէջ. ծառերը յետ են կանգնում և ուղեորը կարողանում է յետ ու առաջ նայել: Տեսնում է ուղեորը, որ երկու լեռները, որոնց մէջն է Յելս-Ձորը, ոտից մինչև գլուխ խիտ ծառերով են ծածկւած և մի քանի ուսեր կազմելով իջնում են մի հովիտի վերայ, ուր հոսում է Խաչենագետը: Գետի միւս կողմից բարձրանում են սարեր և սարեր, մութ ու կապուտ սարեր, որոնք միմեանց ճիւղն են բնկնում, միմեանց ուսերն են ելնում, միմեանց կտրում ու այդպէս խառն ի խառն գնում են դէպի արևմուտք, բարձրանում են բարձր, դէպի երկինք և կորչում: Այդ բարձրութիւններից մէկի վերայ է Գանձասարը: Բաց անտառը չի սիրում բաց ու լայն տեսարաններ շատ ցոյց տալ, շուտով էլի իր մէջն է առնում ճանապարհը, ծառերը ամեն կողմից վազում են նրա վերայ, խմբւում, հուպ տալիս. ձիու ոտնաձայնն անգամ չի լսուում, ձայն ու ծպուտ խեղդւում է, կլանւում: Գնում ես, գնում՝ վերջ չը կայ. քանի՞ վերատ կը լինի: Գեռ բարձրից դէպի ցած է այտպէս, ապա ի՛նչպէս կը լինի ցածրից դէպի վեր. ուղեորը դողում է, մտածելով որ յետ պիտի դառնայ...

Վերջապէս հասնում ենք Խաչենագետի ափը: Պնդացնում ենք ձիերի թամբերը, հեծնում ենք, այլ ևս չը պիտի իջնենք, միշտ դէպի բարձր պիտի գնանք: Գետն այժմ փոքր է, բաժան բաժան եղած վշտում է քարքարոտ լայն դաշտով: Բաց գարնանը, երբ յորդառատ անձրևների տակ այդ ահռելի սարերը օր ու գիշեր լանում են իրանց կողերը և աւելորդ ջրերը դէպի ցած են ուղարկում, դեռ արիւն է կտրում, կատաղում, փրփրած մոնչում. անթիւ թըշւառութիւններ է պատճառում նա ձորում ապրող աղգաբնակութեանը: Դէպի Շուշի տանող պոստային ճանապարհը մի անգամ տեսնողին լաւ ծանօթ է Խաչենագետը: Ամսուր, գնալիս, Շահբուլաղ իջևանի մօտ ձեր առաջն է գալիս մի լայն հեղեղատ, որ միանգամայն չոր է, լցւած մանր քարերով. դա Խաչենագետն է, որ տաք և չոր ժամանակները չի հասնում Շահբուլաղի տափարակին. եղած ջուրը բազմաթիւ արհեստական առուներն են կլանում, մնացածը

չոր գետինն է ծծում: Բայց անձրևների ժամանակ, նա իր բոլոր կատաղի ոյժով ամբողջովին վազում է այդ դաշտով, ահ ու գող է տարածում երկու ամիսների վերայ: Սրերով հաղորդակցութիւնը կորուսում է, այնքան սրնթաց է և արենխում. սովորական երևոյթ է այդ ժամանակները տեսնել ձանապարհորդների խմբեր, որ ամիսների մօտ կանգնած՝ երկնքի ողորմութիւնն են խնդրում:

Գետի ձախ ամոմն ենք գնում: Մեզ երկար տեղ ուղեկից է Սաղասղան—դալասին (Կաշաղակաբերդը): Դա բնութեան մի հրաշակերտն է: Հարաւային կողմի սարերը շղթայ են կազմում, որ գետի ուղղութեամբ գնում է դէպի արեւմուտք. շղթայի վերայ կայ մի բարձր սուր գագաթ, որի ծայրը ժայռերից կազմւած մի բերդ է. հրէն ցցւած է նա, բա՛րձր, երկնքի մէջ է երևում: Հանդուցեալ Բաշֆին (Եւամ. Մելիք.) շատ լաւ է ասում՝ թէ միայն արաղաթուի կաշաղակներն են կարող բարձրանալ, հասնել այդ բերդին: Եւ ումի՞ն էր հարկաւոր այդ անառիկ բարձրութիւնը, որի վերայ միայն ամպերն են հաւաքւում և լայնանալով՝ տարածւում երկրնքի երեսին: Ումի՞ն... Ի հարկէ—հային. Կիրակոս պատմագիրը մի տեղ յիշում է, որ թաթարները գրաւում են և այս իսկ բերդը (որ այն ժամանակ Հաւախաղաց էր կոչւում), բոլոր պաշարւածներին կոտորում են, դիակներով ծածկում նրա զառիվայր կողերը և ոսկորների կոյտերը, ասում է, երկար ժամանակ մնում էին այդ տեղերում թափւած: Եթէ Խաչենն էլ ունենար մի Սրիստակէս Լատեւերացի, այժմ Կաշաղակաբերդի սարն էլ մեր պատմութեան մէջ Սև սարի պէս հռչակւած կը լինէր այդ կոտորածի սրտաշարժ ողբով:

Ձանապարհին մեզ պատահում են թափառական թուրքեր, որոնք իրանց մեծ մեծ հօտերի հետ իջնում են սարերից, գնում են Կուրի հովիտը՝ ձեռնելու: Պէտք է ասել, որ Խաչենագետի այս ձանապարհով է երթեւելում թափառականների ահաղին մասը. ձանապարհը միշտ գետն ի վեր տանում է դէպի սարերը, ուր նրանք գտնում են զեղեցիկ արօտատեղեր, որ Նոր-Բաջաղէտի սահմաններն են հասնում: Վայրենի թափառականների այդ շարժական զիւղերը քիչ մնաս չեն հասցնում հաստատաբնակ հայ դիւղացիներին, որոնց բաժինն է Ղարաբաղի բոլոր լեռնային մասը: Բաւական չէ,

որ դարձան առաջին քայլի հետ նրանք փախչում են իրանց դաշտերի մահաբեր կլիմայից, օձերի և կարիճների թոյնից, ապաստան են գտնում լեռնային անմահական անուշաբույր օդի մէջ, այդ խառնիճադանձ խմբերը շատակեր մորեխի պէս թափւում են մշակւած և անմշակ տեղեր, փչացնում են՝ արտ ու անդաստան: Կսիւք, ծեծք, վէճք միշտ անպակաս են լինում. վայրենիների համար բնական պահանջ է բռնութիւն գործելը և եթէ հաստատաբնակը նրանցից թուլատիրտ է, չի կարողանում իր իրաւունքը պաշտպանել, պիտի իր ձեռքի վաստակը փչացած ոտնակոխ եղած պեններու սիրուն ունենայ: Ամեն տեղ, ուր կոխում է այդ անկոչ հիւրերի ոտը, հաց դիւղացին պարտաւորւած է դռնէ զինւած պահապաններով փախեցնել նրանց. «ինձ մի՛ դիպիր, ես էլ քեզ չեմ՝ դիպիր». ահա՛ միակ իրաւարանական փորձուլը, որ հասկանում է անապատի որդին:

Բայց Վարաբազի թափառական թուրքերի կեանքը մեծ ուսումնասիրութեան է կարօտ. մենք թողնենք այդ խեղճերին, որոնք դարուն ու ամառ ահագին տարածութիւններ են կոխ տալիս իրանց բոբիկ ոտներով, շարունակենք մեր ճանապարհը: Նրկինքը վաղուց է ամպերով ծածկւել. երեկոն վրայ է հասնում. պէտք է աշխատել շուտ կարճել ճանապարհը, որ այսօր՝ այնքան երկար է: Ահա Առջածոր գիւղը, որ տեղաւորւել է մեծամեծ ժայռոտ բարձրութիւնների տակ: Ի՞նչ որ արջերի ձոր... Այդքան վայրենի ձորեր ու լանջեր, այդքան մոլթ տեղեր արջերին պիտի պատկանեն: Գիւղի հանդէպ տեսնում ենք այն լեռնային բարձրութիւնը, որ Ուղտաքար է ասւում: Միանգամայն ճիշտ է այդ անունը: Սարի գագաթը նման է մի նստած ուղտի: Նստել է վիթխարի ուղտը, գլուխը դրել է գետնին, քամակը դէպի մեզ դարձրել, նայում է դէպի հարաւ. շատ տեղեր է տեսնում, զուր չէ այնքան բարձր տեղ նստել:

Անցնում ենք Վանք գիւղի տակով. ահա վերջապէս այն բարձրութիւնը, որի զլխին կանգնած է Գանձասարը: Այդ խիստ ստորոտի մօտ, Խաչենազետի ափին, մի փոքրիկ շուկայի նմանութիւն կայ. փոքրիկ, հողաշէն խանութների մէջ հացերն առւտուր են անում: Թափառականների համար է այս առւտրական հրապարակը. երբ նրանք գնում անցնում են, խանութները փակւում են, առւտրական-

ները չքանում: Գիւղացիք հաւաքւած մի խանութի առջև, երեկոցեան թէյն են վայելում: Իսկոյն երևում է առևտրական ոգին, կարգ ու կանոնը: Ճշմարիտ, այս վայրենի անկիւնում, որ ընկած է Խաչենի հեռաւոր ծայրում, հեշտաեռ, ապրանք, թէյի բաժակները նազով-սազով բռնած գիւղացիք՝ այնպիսի տարօրինակ, խորթ բաներ են, որ առաջին անգամ տեսնողը ակամայ ծիծաղում է: Առևտրական հրապարակի կեղծ քաղաքավարութիւնը կամ, ինչպէս ասում են, քերականութիւնը լաւ սերտած գիւղացիք, մեզ հրաւիրում են մի մի բաժակ խմել, բացք մենք շնորհակալութիւն ենք յայտնում, որովհետև առաջներին զժւար ճանապարհ կայ:

Բարձրանում ենք: Ի՛նչ ճանապարհ. պատի՛ժ է, սլաոի՛ժ: Բարձրաւանդակի կողը, որի վերայով գնում ենք, գիտէ՞ք, հողից չէ բաղկացած, փափուկ չէ, այլ կարծր սև և կարմիր քարերի շերտերից: Անձրեւները փորփորել են այդ քարերը, հազարաւոր տեսակ տեսակ խորզուփոս են դոյացրել: Ձին ճանկոտելով է բարձրանում: Խեղճ կենդանին կանգ է առնում, նայում է այդ փորձաքարերին, այդ անկարգ, անկանոն կապերին, նայում է ու գլուխը յուսահատաբար ցած ու բարձր շարժելով՝ վեր է ելնում զգուշութեամբ, էլի կանգնում է, ծանր շունչ քաշում: Խե՛ղճ անասուն. գնում է, քրտնում, իսկ անխիղճ հեծեալի մարակը շրպում է նրա կողերին: Այդ տեսակ ճանապարհը, ինչ ասել կուզի, շատ երկար է երևում. ձին քարշ քարշ է լինում, իսկ նրա վերայ նստածը ամեն րոպէ սպասելով թէ ահա կ'ընկնէ քարքարոտ զառիվայրի վերայ, ձիու տակ, կը փշրէ իր մարմինը՝ զայրանում է այսպիսի ճանապարհով տանող մարդկանց վերայ, անիծում է սարերը, որ այսպէս վատ են: Այո՛, մեր երկիրն այսպէս է. ո՛չ ոք նրան չի չափել, օրերով գնաս՝ չես կարող իմանալ թէ ո՛րքան ես դնացել. մեր երկիրը թշուառ է նրանով, որ ճանապարհներ չունի: Եթէ մի այսպիսի հռչակաւոր հարուստ վանք այս անտանելի ճանապարհն ունի, հապա ի՛նչպէս են այն բազմութիւն խուլ անկիւնները, ուր ապրում է հայ գիւղացին անտես, անծանօթ, մոռացւած ամենքից: Բացք Գանձասարը լաւ ճանապարհ պիտի ունենայ. նա մի հռչակաւոր հնութիւն է, տեսնել ուզողներ շատ կան: Գժւար բան չէ հէնց գոնէ մի փոքր ուղղելը, զրստելը. դժւար չէ և ամօթ նրանց, որ այս տեսակ բաների վերայ ուշադրութիւն դարձնելն էլ չը գիտեն...

Մթնել էր, երբ հասանք վանքի պարխայներին: Փառաւոր շինութիւնը մթութեան մէջ կանգնած է, տղամարդի պէս կուրծքը դէմ է արել և իր անորոշ զծագրութիւններով վառում է ուխտաւորի սիրտը, որ մի ամբողջ օր ճանապարհ է կտրել և այժմ չի կարող սրտի ուզածն իսկոյն տեսնել, որովհետեւ մի կամ կէս ժամ վաղ չի եկել, հասել: Մտնում ենք հարթ, ծառազարդ բակը: Մարդու հոգին մի վայելչութիւն է զգում. իսկոյն երևում է մի եռանդոտ խնամատարի սուերը, նրա շինող ձեռքի կենդանի հետքերը: Ափսո՛ս միայն, որ այդ խնամատարը շատ վաղուց է մտել հողը և նրա հոգին այժմեան մարդկանց մէջ չի մնացել. իսկ գեղեցիկ դաստակերտը դարձեալ դէպի յետ, դէպի աւերումն է դիմում...

Մենք մտնում ենք մի քարաշէն սենեակ, որ բոլորովին անվընաս է մնացել. դա է Աղուանից կաթուղիկոսների անշուք վիհարանը, որի մէջ այժմ բնակւում է վանահայր Շիրակունի վարդապետը: Սենեակում վառած է երկաթէ վառարանը, շատ տաք է. վարդապետը իր անձը պահպանել զիտէ, ասում է թէ՛ մրսել է: Խօսում ենք զէսից-դէսից, թէյ ենք խմում:

Վատ տպաւորութեան տակ դուրս եմ գնում, մի քանի պոռոտներ եմ գործում վանքի պատերի տակ: Յետոյ անցնելով դրսի պարբսպի արևելեան զրնով, կանգնում եմ նրա առջև: Այդ տեղից բացւում է մի հիանալի տեսարան: Բարձրութիւն է և այդ բարձրութեան տակ փռւած է մի լայն ձոր, որի երկու կողմում անշարժ կանգնած են բնութեան տիտանները, բարձրադազաթ լեռները. մինչև Յելս — Ձորի սարերը բաց է նայողի առջև, իսկ այդ սարերի գլխից երևում է երկնքի անսահման տարածութիւնը. արևելքը հեռու է, շա՛տ հեռու: Մեր ոտների տակ, այս կողմից, լանջի վերայ ցրւած են Վանք գիւղի ճրագները և հեղ ու հանդարտ ճպճպում են: Խորին, անվրդով լուսթիւնը կլանել է ամեն տեղ, իսկ խոր ձորի յատակում վշշում է Խաչենագետը. նա քարէ-քար ընկած՝ կատարում է իր յաւիտեան անվերջ ճանապարհորդութիւնը, խոր է գնացել, ճընշւած ձայն է հանում: Եւ անդունդների ու սարերի այդ խորհրդաւոր, աննկարագրելի և անհասկանալի լուսթեան վերայ տիրած է Քրիստոսի յաղթական խաչը, որ անասան կանգնած է գեղեցիկ հին վանքի զլխին և ուղղակի դէպի աղօթարանն է նայում:

Յնորհակալ սրտով նայի՛ր նրան ու երեսդ խաչակնքի՛ր:

Եւ անցադ ծծում ենք լեռնային օդը և նայում չորս կողմը: Հրէ՛ն, զետի միւս կողմին, անտառի ծալքում մենաւոր կրակ է երեւում. նա երբեմն նւագում է, ցած ընկնում, մի փոքրիկ զեղին բիծ դառնում և երբեմն մեծանում է, ծառանում: Որքա՛ն արագաթռիչ են մարդու մտքերը. ո՛րտեղից ո՛րտեղ են անցնում, ի՛նչպէս յանկարծակի թողում են մի բան և միւսի վերայ կանգնում: Այդ կրակի մօտ են գիւղի տաւարածները. և ես երեւակայում եմ՝ զիւղի տղաները բոլորեւլ են կրակի շուրջը, իրանց հաւատարիմ՝ շների քաջութեան վերայ յոյս դրած՝ մութ զիշերւայ ծանրութիւնը անց են կացնում խօսակցութիւնների մէջ: Յիշում եմ Տուրգենեւի չքնադ պատկերը «Вѣжливъ дядя» անունով: Այդ խարոյկի մօտ էլ, երեւի, զեղջուկ փիլիսոփաները խօսում, վիճում են գիւերի, հրաշքների, քաջքերի մասին. անկասկած՝ նրանք աւելի հարուստ նիւթ ունին, քան ուսու մանուկները — սրանց երկիրը ուրիշ է: Խարոյկի մօտ տարածւած է աշխարհի երեսից վաղուց սրբած, տարած մի մեծ զիւղ. ծմակներում, սարերի գլխներին երեւում են անթիւ հնութիւններ, աներ ու եկեղեցիներ. սոմեն տեղ զբւած են քարեր ու խաչեր: Ումի՛ն չէ յայտնի, որ գերբնական զօրութիւնները ապրում են հին հին աւերակների, միջին ձորերի և խոր անտառների մէջ. իսկ այդ բաներից աւելի ի՛նչ են տեսնում Խաչենցիք իրանց օրում...

Մութ զիշերը անցնում է, իսկ տեսարաններից կշտանալ չի լինիլ: Կաւ է քնենք:

Ե Ր Ր Ո Ր Գ Յ Ր .

Ո՛վ մեզ պէս անհոգ ճանապարհորդ է, առանց պատրաստութեան, մէկ ինքն է, մէկ էլ իր ձին և ով միամիտ է կարծելով, թէ աշտպիսի մի յայտնի վանք շատ ու քիչ յարմարութիւն ունի ուխտաւորի կամ մի ուրիշ հիւրի համար պատրաստած՝ նա մեզ պէս կը քնէ հին, չոր կապերտի վերայ և հարկադրւած կը լինի, չքմբոսելու համար, շորերը չը հանել, իսկ երբ քնից վարթնէ, զեռ աչքերը չը բացած, առաջին հարցը կը լինի՝ «հիւանդ եմ, թէ ուրող»: Երկար ճանապարհ կտրես, ձիու վերայ փշրես, տանջես, յետոյ քնես զեանի վերայ, առաւօտը տեսնես մէջքդ փայտացած, կո՛

գերդ ցատկիս, զլուխդ ծանրացած—այս է վիճակդ, եթէ սրտիդ մէջ նստած է Հասան-Ջալալեաններէ փառաւոր բեկորները տեսնելու ցանկութիւնը: Փանծաւորի վանքի քայքայւած տնտեսութիւնը աւելի լաւ ընդունելութիւն անել չի կարող: Ահա պէտք է շնորհակալ լինել վանահայր վարդապետից, որ թոյլ է տալիս իր սենեակում զիշերելու. այդ էլ եթէ չը լինի, պիտի քնես դրսում, մի այնպիսի բարձրութեան զլխին, ուր սեպտեմբերի մէկից, սենեակի մէջ, վառարան են վառում: Նրեակացեցէ՛ք, որքա՛ն թշուա է վանքի գրութիւնը:

Առաւօտեան ժամի չորս և կէսն էր, երբ զարթնելով տեսայ վեհարանի նեղլիկ լուսամուտից ընկած լոյսը և վեր թռայ իմ չոր անկողնից: Աս ուզում էի այս բարձրութեան զլխից տեսնել արեղակի ծագելը, առաւօտեան այն պահը, երբ բնութիւնը այնքան շքեղ, այնքան զեղեցիկ կերպարանք է ընդունում, որ մարդ համրացած, յափշտակւած, վեր է քաշում մի ուրիշ կախարդական աշխարհ: Այդ խորհրդաւոր ժամին ինչ կերպարանք կունենայ մեր տոների տակ ընկած լեռնոտ, վայրենի և անտառային թաշենը—ես ուզում էի տեսնել: Բայց իմ բաղդն այնպէս էր, որ երկինքը պատած էր թանձր, մոխրագոյն ամպերով. արեղակն այդ օրը ծածուկ դուրս եկաւ:

Մեր քնարանի դուռը բացի, և տխուր օրը ճնշեց իմ հոգին: Այդպիսի օրերի մասին հասկացողութիւն կունենայ միայն լեռնաբերնակ զարարացցին: Օգր խոնաւ, օրը մթնած, շրջակայ սարերի դրլխին կոյտ կոյտ հաւաքւել էին ամպերը, սողում էին նրանց՝ պատի պէս ցցւած՝ կողերի շուրջը: Եւ սպասած դւարի ընութեան և նոր դուրս եկող արեղակի տեղ գննեցի վանքի շինութիւնը դրսից: Մի քանի անգամ ստոյտ եկայ նրա շուրջը, առնն կողմից նայեցի, տեսայ, շա՛տ մոտիկ արիւ: Աւ դեռ չէի կարողացել նրա գեղեցկութեան ճաշակն առնել. ինձ վերայ ամենամանր տպաւորութիւն գործեց այն սարսափելի անհոգութիւնը, որին մասնւած է այդ հոգակաւոր, դեղեցիկ և ամենքին սիրելի շինութիւնը: Ոչ ոք նրա համար չի մըտածում, ոչ ոքի դործ չէ, որ դանդաղ կերպով աւերւում, փշաւում է հնութիւնը: Նա իր կամքին է թողւած. ապրիլ, ինչպէս ուզում ես, հաշտւիր, ինչպէս կամենում ես այս բնութեան, այս երկնքի հետ: Թաշենի երկնքի տակ տեղ չը կալ, ուր բոյս չը մե-

ծանայ, չը զարդանայ զարմանալի ոյժով: Սրէնքը ամեն տեղ օրէնք է. կարմրախայտ և սրբատաշ քարերից շինած պատերի մէջ արմատ են գրել անհամար բոյսեր, որոնք աճելով, մեծանալով, ճեղքում են քարերի արանքը, նրանց հեռացնում են միմեանցից: Անձրևի և ձիւնի ջուրը պահում է այդ բոյսերի վերայ, մոտում է քարերի վերայով, այդպիսով սաստիկ խոնաւութիւնը, որ հանրաժանութ անհաշտ թշնամի է իւրաքանչիւր շինութեան, ամենայն սիրով և խանդով պահպանում է ամեն օր, ամեն ժամ և շինութիւնը դրել է մի շատ տխուր, անհրապոյր և մռայլ կերպարանքի տակ: Վանքի կտուրը, որ շինած է սալ քարերից և միանգամայն անխախտ է մնացել և գեղեցիկ, բարձր գմբէթը, որ հեռու տեղերից այնքան փառաւոր է երևում, կանաչով են ծածկւած, կարծես մի գիւղական խեղճ խրճիթի կտուր լինի, այն էլ անրնակ, աւերակ խրճիթի կտուր, որովհետև յետին աղքատը իսկ չի թողնիլ, որ իր զլխից վերև բազմանան խոտերը և իր վերայ ջուր թափեն: Հրաշալի է, ուրեմն, վանքի ամբողջութիւնը. շինութիւնը այսպիսի հանգամանքների մէջ էլ ամբողջ է մնացել, բայց մի քանի քարեր արդէն դուրս են եկել իրանց տեղերից և թափւելու վերայ են. իսկ արևելեան պատի ճակատին նկատելի է մի ճեղք:

Վանքը երկու շինութիւնից է բաղկացած՝ տաճարը և զանգակատունը կամ գաւիթը: Երկու շինութիւնները պինդ կպած են միմեանց և մի ամբողջութիւն են կազմում: Որոշում են նրանով միայն, որ տաճարի շինութեան վերայ ճարտարապետը թափել է իր բոլոր հմտութիւնը, զարդարել է նրան, նաշխել, սարքել, իսկ գաւիթը դրանից պարզ շինութիւն է, թէև տեղ տեղ նոյնպէս զարդարւած է: Արևմտեան մեծ դռները շրջապատած են հիւսնալի քանդակներով. երկու անդլուխ արձաններ կանգնած են մուտքի երկու կողմից. դրան ճակատին նկարւած է լուսինը իր բոլոր փոփոխութիւններով, տեսակ տեսակ գեղեցիկ հիւսածքները տարածւած են չորս կողմը: Այժմ չես կարողանում հեռացնել այդ գեղեցիկ քանդակներից: Բայց մօտենում ես շէմքին, ձեռքդ ուր վնում ես, նկատում ես խոնաւութիւն և ջուր. կարծես անձրևն այս բոլորին է դադարել, կաթիլները ձգւում են, թափւում գեղեցիկ պատի ճակատին ի վեր: Հիւսիսային կողմից կայ մի փոքրիկ դուռ, որի ճակատին կան երկու ար-

ծիւներ: Քանդակագործ պատկերներ զարդարած է և զմբէթը. սա ունի չորս լուսամուտ, որոնց շուրջը կան հետեւեալ պատկերները. արեւելեան կողմից մի խոյ, հարաւային կողմից վիշապ և հրեշտակներ, հարաւ-արեւմտեան կողմից մի քանի մարդ, գլխներին բռնած կաթուղիկէ՝ յետոյ վիշապ, որից ցած Ադամ և Նւա, խկ սրանց մէջ տեղը՝ ծառ կենաց, հիւսիսային կողմից երկու արծիւ և մի այծ: Գմբէթի վերայ բարձրանում է հասարակ սև խաչը. այդ տեսակ խաչ էլ կայ նրա մօտ, զանգակատան զմբէթի վերայ, որ մի հասարակ փոքրիկ շինութիւն է, փոքրիկ սիւնների վերայ հաստատուած: Դրսի կողմից վանքի պատերը ծածկւած են բազմաթիւ երկար և կարճ արձանազրութիւններով, որոնց կարգալը հեշտ չէ և երկար ժամանակ է պահանջում. պատերի երեսով հոսող ջուրը եղծել, փչացրել է շատ և շատ բան:

Դրսի հետ վրդովւած սրտով ծանօթանալուց յետոյ, վարդապետի հետ մտնում ենք վանքի գաւիթը, որ և զանգակատուն է: Այս շինութեան առաստաղը կամարապատ է, սրբատաշ քարերից կազմած և պահուում է չորս հատ կողր և գեղեցիկ սիւնների վերայ: Մի ջուլտո նեղ և փոքրիկ լուսամուտներ հազիւ հազ կարողանում են լուսաւորել գաւթի ներսը և նայողը զօրով է նկատում այն սքանչելի քանդակագործութիւնները, որոնք ցրւած են առաստաղի վերայ: Յատակը բոլորովին մերկ է, սալքարերից շինած. մի դուռ տանում է տաճարի մէջ և այդ դրան առջև ընկած է մի հսկայատիպ գերեզմանաքար, որ սպիտակ է և մի քանի տեղ ճաքճաքւած: Սրա առջև տապան. նրա վերայ կարդում եմ—«Այս է հանգիստ մեծին Ջալալի յաղաթս յիշեցէք»: Դա ինքն է Հասան-Ջալալ-Պօլա իշխանը, Խաչենի, Հաթերքի և Հանգաբերդի տէրը, որ շինել է այս վանքը և յայտնի է մեր պատմութեան մէջ ո՛չ այնքան իր քոջութիւններով, որքան բարեպաշտութեամբ և կրօնասիրութեամբ: Իշխանը, ինչպէս երևում է, պարթև հասակի տէր է եղել. նրա գերեզմանաքարը մի սաժէն և մի քառորդ արշին երկարութիւն ունի: Թաթարների արշաւանքը դէպի Խաչենի այս կողմերը, բազմաթիւ արիւնհեղութիւնները, մի խօսքով ժողովրդի կրած բազմատեսակ տառապանքները զանազան պատմութիւնների անկիւններից հաւաքւում են այս գերեզմանի շուրջը, այս իշխանի կրծքի վերայ: Յի-

շում եմ, թէ որքա՛ն դժար պիտի լինէր մի իշխանին կառավարել արդպիսի ժամանակ մի ժողովուրդ, որքա՛ն միտք և հոգացողութիւն կը լինին տանջած այդ մեծ սիրտը. ժողովուրդը յուսահատ, պատարաստ ամեն մի դէպքում լաց ու աղաղակ հանել. մի վայրենի ժողովուրդ, անծանօթ և աստանան գիտէ ո՛րտեղից եկած՝ տիրել է երկրի ամեն կողմին, հոգի է հանում. ի՛նչպէս կառավարես: Զալալը կառավարել է, լաւ անուն և չիշատակ է թողել, ուրեմն յարգելի է նրա այս գերեզմանը. նա ինքն էլ նահատակել է, իր երկրի բարորութեան համար խաղաղասէր է եղել: Կիրակոս պատմագիրը պատմում է որ նրան գերի են տարել հեռաւոր երկիր, սպանել են, կտոր կտոր արել. բայց նրա Ռուզաբան դուստրը, որ թաթարների մի խանի կինն էր, գնում, հաւաքում է հօր կտորները, որոնք յաւիտենական հանգիստ են դնում այս գեղեցիկ կամարների տակ: Մի աղջիկ, որ արժանի է այս տեսակ առաքինի հօր որդի լինելու: Հարիւրաւոր այս տեսակ մտքեր և չիշողութիւններ են գալիս մարդու գլուխը՝ այս լուռ տապանի առջև: Եւ մարդի գլուխ խորին յարգանքով խոնարհւում է դէպի նրա քարը:

Իշխանի աջ ու ձախ կողմում կան մինչև տասն կաթուղիկոսներ և եպիսկոպոսների շիրիմներ, որոնց մէջ ուշադրութիւն է դրաւում Բաղդասար մետրոպոլիտի դերեզմանը. թէև այդ մի անշուք տափակ քար է, որի զարդն է մի հատ հովւական ցուպ, բայց երբ չիշում ես թէ ո՛վ է նրա տակ հանդուդը՝ լիաբերան «ողորմի» ես ասում նրա հոգուն: Այդ եւանդոտ հոգեւորականի չիշատակարանը չի մոռացւիլ, քանի կանդուն է այս վանքը. չիշատակը անջնջելի է մնացել տեղական ժողովրդի սրտում, իսկ ապագայ սերունդը կը գնահատէ, կը պատուէ մետրոպոլիտին նրա զործերով, որ նկարագրել է հանգուցեալ Բաթիթին «Խամս. Մեկիք» մէջ:

Ազատւելով այս տեսակ չիշողութիւններից, մտնում եմ տաճարը, կանգնում եմ բեմի առջև՝ աչք ածում: Ես չը գիտեմ թէ ի՛նչ տեսակ զգացմունք կար իմ մէջ այդ բուպէին: Վեղեցիկ շինուհութիւն, գեղեցիկ ճարտարապետութիւն, այո՛, շա՛տ գեղեցիկ, բայց խոնաւութիւնից մարդ է խեղդւում: Զրի կաթիլները այտուղ էլ թափւում են անդադար և աստիանել են գեղեցիկ առատաղը, մոռւլ կերպարանք են տւել անշուք, զարդ ու զարդարանքից զրկւած պա-

տերին և բոլորովին մերկ յատակին: Ամբողջ տարին կաթկաթելով՝ յատակի վերայ լճակներ են կազմել. արդէն լափել, վերջացրել են սիւների քանդակների մի քանի նրբութիւնները: Որքա՛ն անգոր ենք, Տէ՛ր Աստուած: Կաթիլները, ջրի այդ փոքրիկ մասնիկները, որ այնքան անմեղ, անփաս բաներ են, լուռ ու մունջ կրծում, լափում են հոցակապ շինութեան մարմինը. լափում են, շուտով կ'ուռեն, կը վերջացնեն: Նւ այն ժամանակ... ո՛ւր կը գնայ այն յաղթական խաչը, որ տիրում է ահռելի ձորերի և տարերի վերայ. ո՛ւր կերթայ այն ջղոտ և հզօր պատւարը, որից կպած է մարմնացած դարերի չորացած, բարակ փոշի դարձած և միայն հոգով շօշափելի կմախքը... Այս տխուր, թաց և մռայլ կամարների տակ հաւաքւած է այնքան շատ բան անցեալից, որ այցելուի հոգին լուռ խօսակցութիւն է սկսում այս տեղերի, այս պատերի ու նրանց անկիւններում թանձրացած, խաւարի հետ:

Տաճարի մէջ առանձնակի կանգնած սիւներ չը կան. սիւնները կպած են պատերին և կոլորակ չեն, այլ կազմւած են եօթ միմեանց յաջորդող աստիճաններից, որոնք թւով երկու են. տաշին աստիճանները, աւելի հաստերը, բաղկացած են եօթ համահաւասար քարերից. եօթ թիւը ցոյց է տալիս՝ եկեղեցու եօթ խորհուրդները: Սիւների ետեւում շինւած են երկյարկանի խորաններ՝ հիւսիսային և հարաւային պատերին կպած. զէպի վերին չարկի խորանները տանում են դեղեցիկ քարեայ սանդուղքներ, որոնք շինւած են պատից դուրս բերած քարերից, կախ լինկած օդի մէջ. ոչ մի բան չը կայ ներքեից, որի վերայ յենւէին:

Հիւսիսային պատի վերայ կայ մի երկար արձանադրութիւն խոշոր տառերով. դա վկայում է, որ այս վանքը շինել է Ջալալ-Ռօյա-Հասան իշխանը, որդի Ալախտանդայ և թոռն մեծին Հասանայ, բնակւոր ինքնակալ բարձր և մեծ Արձախական աշխարհին (Թագաւոր) ¹⁾: Ալախտանդն է կոտակել, շինել վանքն այստեղ, իրանց հայրերի գերեզմանատանը: Շինութեան մասնակցել է և Ջալալի մայր Խորիշանը, որ մեծ իշխանաց իշխան Սարգսի զուտորն էր (Ջաքարէ և Իւանէ

¹⁾ Արձանադրութիւնն ամբողջովին չենք գնում. ցանկացողները կարող են տեսնել Ջալալիանի «Ճանապարհորդութեան» առաջին մասում:

քաջածանօթ սպասալարների քոյրը, ասում է Կիրակոսը): Նինութիւնն սկսել է Քրիստոսի 1216 թւականին և երբ հասել է արեւելեան լուսամուտին, Խորիշան տիկինը թողել է գնացել Երուսաղէմ, ուր կրօնաւոր դառնալով, հազել է կոշտ շորեր և ճգնել է Յարութեան տաճարի դրանը և այդտեղ էլ մեռել է: Քոստնր երեք տարի է տւել շինութիւնը և վերջացել է 1239 թւին: Կիրակոս պատմագիրը նկարագրում է վանքի օծման մեծ հանդէսը, որին ներկայ են եղել, ինչպէս լսել է պատմիչը, զանազան տեղերից ժողովւած մինչև 700 քահանաներ: Ձալալ իշխանը, մեծ ճաշ է տւել, ինքը սպասաւորել է սեղանին և յետոյ դրամ է բաժանել հաւաքւած ժողովրդին: Պաւլիթը շինել է նոյն Ձալալ իշխանը իր Մամքան կնոջ հետ: Այնուհետև բազմաթիւ արձանագրութիւններ վկայում են, որ զանազան իշխանների, գլխաւորապէս Ձալալեանների տոհմից, նւիրել են վանքին զիւղեր և հողեր: Ահազին հարստութեան մի մասը այժմ էլ վանքի սեպհականութիւնն է:

Տաճարի բեմը, ինչպէս և առհասարակ վանքի շինութիւնը, այնքան մեծ չէ. փայտէ հին խաչկալը մնում է մինչև այժմ: Վանքում պահւում են մասունքներ, հին սրբութիւնների, բայց նրանց երկրպագելու քիչ ուխտաւորներ են զալիս:

Վանքի մէջ երկար մնալ չէր կարելի. խոնաւութիւնը ամեն կողմից բռնում է և ոսկորների ցաւ է պատճառում: Մենք հարկաւորւած էինք շուտ դուրս գալ:

Մի քանի խօսք էլ ասենք վանքի բակի մասին: Նա շրջապատւած է հաստ և ամուր պարիսպներով, որոնց մէջ երեւում են ահագին մեծութեան քարեր, ճիշտն ասած, ժայռի բեկորներ. զանազան ժամանակ կարկառուած են այդ պատերը և այժմ առաջւայ պէս պինդ չեն: Հիւսիսային կողմից, վեհարանին կից, շինւած են ութ հատ նեղ և մթին խուցեր, որոնց մէջ այժմ ոչ ոք չի բնակւում: Եթէ մեր մէջ կամքի հաստատութիւն լինէր, կարելի էր ջարմարեցնել այդ խուցերը մի գպրոցի շինութեան համար: Ամբողջ բակը, ինչպէս ասել եմ, հարթ է և բաւական զեղեցիկ, բայց շատ կեղտոտ է պահւում: Վանքի հիւսիսային պատի տակ կան եպիսկոպոսների և վարդապետների գերեզմաններ, որոնցից մի քանիսը բաւական հին են և ունին զեղեցիկ քանդակներով զարդարած տապանաքարեր:

Նս համարիա՝ վերջացրի վանքի նկարագրութիւնը:

Նստած ենք թթի ծառերի տակ, թէք ենք խմում և խօսում: Խօսում ենք, իհարկէ, միայն վանքի մասին: Այո՛, այս մոռացւած շինութիւնը, որի մէջ այժմ հազարից մի անգամ է ժամերգութիւն կատարւում, մի ժամանակ մեծ համբաւ և մեծ հռչակ ունէր: Թողնում եմ այն հեռաւոր ժամանակները, երբ այտեղ կաթուղիկոսներ և մեծ միաբանութիւններ էին ապրում, երբ երկրի իշխողները զանազան ծայրերից հաւաքւում էին այտեղ, խորհուրդներ կազմում: Այդ թողնում եմ: Մեղանից մի քառասուն կամ քիսուն տարի առաջ ի՛նչպէս էր այս վանքը, հարիւրաւոր կենդանի վիաներ կան՝ հարցնենք: Այն ժամանակ կային մարդիկ, կային գործիչներ: Բազդասար մետրօպօլիտը ջանք չէր խնայում շէն ու պաշտօն պահելու իր պապի-նական ժառանգութիւնը. երկար տարիներ նա այտեղ անձամբ էր զործել և յետոյ Շուշու առաջնորդ դասնալով, այնտեղից էլ չէր հեռացնում իր աչքը Պանձասարից: Մեզ հետ նստած է վանքի զիւղացի ծերունի Վանի-ապերը: Հարցնում ենք մետրօպօլիտի մասին, թէ նա ի՛նչպիսի մարդ էր:

—Պա՛, պա՛, պա՛, պատասխանում է ծերունին հիացած.—

հայր ու մայր մարդ էր: Լինում են հայր մարդիկ, բայց թէ լինում է հայր ու մայր մարդ էլ—մենք առաջին անգամն էինք լսում: Բազդասար մետրօպօլիտն այսպէս է եղել շրջակայ զիւղացիների համար:

Բազդասարի ժամանակ այտեղ ապրում էր Ղարաբաղում մեծ անուն ստացած գիտնական Յովսէփ վարդապետը, որ այտեղ դպրոց ունէր, ուր ուսում էին ստանում նաև Շուշու յայտնի հարուստների որդիքը, որոնցից մի քանիսն այժմ յայտնի պաշտօններ են վարում: Այդ ժամանակ կար և միւս Յովսէփ վարդապետը, Ախլաթիւն մականուն ստացած. դա էլ Արդոսի պէս հսկում էր վանքական կալւածների վրայ: Իսկ այժմ... Նս արդէն նկարագրել եմ և նկարագրածիս վերայ պիտի աւելացնեմ, որ Պանձասարը Խաչենի ժողովրդին կոպէկի օգնութիւն չի անում, կրթութեան կողմից: Ամբողջ Խաչենում մի հաս ուսումնարան կայ—Սէփիլի-շէնիկը: Նրկիրը խառա՛ր է, ժողովուրդը ազէտ, կոպիտ, տիրած է համատարած մութ ու խաւար: Նրկրի անտեսական դրութեան մասին ես քիչ յետոյ կը խօսեմ, ցոյց կը տամ թէ այս տեղերի աղքատութիւնը որքան մեծ է: Այս տե-

սակ հանգամանքների մէջ ո՞վ է կարող ժողովրդի կրթութեան զործը սկսել և տանել, մի դործ, որ ներկայ հանգամանքների մէջ հացի և ջրի պէս անհրաժեշտ բան է. հարցնում եմ՝ ո՞վ է կարող, եթէ ոչ Գանձասարի վանքը: Զայալեան իշխանները ժողովրդի ոյժերը զործ են դրել այս վանքի վերայ, խնամքով պահել, պահպանել են և միթէ այժմ այդ վանքը ոչինչ չունի, որով կարողանար հին իշխանների չիշատակը յաւերժացնել և ժողովրդի մէջ վատել երախտապարտութեան ջերմ զգացմունքը: Նա կարող է և պիտի անէ. բարոյական պարտք է մի կանոնաւոր և ապահով դպրոց պահելը:

Բայց դուցէ ընթերցողը զարմանայ, որ ես այս տեսակ պահանջներ եմ յայտնում. — բաւական չէ որ մի հին վանքը լաւ պահեն, դեռ դպրոց էլ պէտք է պահեն և ապահով դպրոց: Ո՞ր են միջոցները: Նա չեմ ասիլ՝ թէ ո՞ր են, բայց կը պատմեմ թէ ինչ հարստութեան տէր է վանքը: Տեղեկութիւնները ինձ հաղորդել է վանահայրը, որ Հայր մերս-ի պէս անդիբ դիտէ վանքի ունեցածն ու չ'ունեցածը: Հայր-սուրբը տարաւ ինձ անկմտեան դրան առջև դռնաւ բլրակի գլուխը, որի մօտ մեծ աւազանի մէջ է թափւում քաղցրահամ քչքչան աղբիւրը, որ երկու տարի սրանից առաջ հեռու տեղից բերւած է մի ոմն պ. Մաչիլեանցի ծախքով: Բլրակի գլխից երևում են հեռու՝ սարեր և լեռնային տեսարաններ: Վարդապետը ձեռքը բարձրացրեց և սկսեց ցոյց տալ ինձ և պատմել:

Գանձասարի վանքն ունի 12,000 դեսետոին անվէճ կալածք. սահմանների մի մասը երևում է մեր բլրակի գլխից: Գեսետոին ասած չափը բոլորովին պարզ հասկացողութիւն չի տալիս: Ո՞վ է չափել մեր երկիրը. հարթավայրերը չեն չափում, ուր միաց այսպիսի լեռնային երկիրը, որ փորփորւած է սոսկալի անդունդներով, պատած է կուսական, անանցնելի ծմակներով: Վերցրել են՝ մօտաւորապէս 12 հազար դեսետոին են ասել: Այդ տարածութեան կէսն էլ չի երևում Գանձասարից, բայց երեւցածը ահագին տարածութիւն է, շատ մեծ: Երևում են հեռու սարեր, պատած կապոյտ մթութեամբ. դրանք ու դրանց ետևն ընկած մեծ տարածութիւնները վանքի անվէճ սեպհականութիւնն են: Հեշտ բան է, իհարկէ, կանգնել մի սարի գլխին և ցոյց տալ սահմանները: — Այս սարի գլխից մինչև այն սարի գլուխը, նրա գլխով այսպէս եկած, հասած այս սարի դադա-

Թր:—Այսպէս է ցոյց տալիս վարդապետը, բայց պէտք է երեւակայել,
 Թ՛, ինչպիսի լայնատարած լանջեր ունին այդ սարերը, ո՛րքան մե-
 ծամեծ ձորեր են կազմում: Վարելահողեր շատ քիչ կան այդ ցոյց
 տւած տեղերում. ամեն կողմ, ուր որ տեսնում է աչքը, տիրում է ան-
 տառ: Վանքին են պատկանում և երկու գիւղ—Վճողու և Վանքի
 գիւղ, որոնք միասին ունին 167 ծուխ: Գիւղացիք վանքի հա-
 մար որ և է ձրի աշխատութիւն չեն անում, ինչպէս անում են բէ-
 կերին պատկանած գիւղացիք հողատէրերի համար. նրանք տա-
 լիս են Շուշու կոնսիստորիային հողային բերքերի տասանորոշը, որ
 շատ աննշան բան է և մօտաւորապէս 200 լուրի տարեկան ծխա-
 հարի: Պէտք է ասել, որ անտառները հարուստ են ընկուզենիներով,
 իսկ Վճողու գիւղի մօտ կայ վանքապատկան ջրաղացաքարերի հըռ-
 չահուոր հանքը. սա տալիս է այնպիսի գեղեցիկ քարեր, որոնց նը-
 մանը, ինչպէս հաւատացնում են, չը կայ ամբողջ Անդրկովկասում:
 Եւ այսքան հարստութիւններից ի՞նչ օգուտ է ստացւում: Կալւած-
 ների կառավարութիւնը, ինչպէս յայտնի է, յանձնւած է Շուշու Թե-
 մական դպրանոցի հոգաբարձութեան, որ պիտի հաւաքէ յօգուտ
 դպրանոցի բոլոր արդիւնքները: Հոգաբարձութիւնն ունի մի կա-
 ռավարիչ, որ տարին մի կամ երկու անգամ երևում է այս կող-
 մերում, անում է ինչ կարողանում է: Մենակ վանքը չէ մատնւած
 վարմանալի անհողութեան, կալւածներն աւելի վատ դրութեան մէջ
 են: Հսկողութիւն համարեա՛ բոլորովին չը կայ, կարգ ու կանոնը
 բացակայ է, ո՛վ ինչ կարողանում անում է. ճարպիկ մարդիկ բոցն
 են զրեւ շրջակայ գիւղերում և անտէրութիւնից առատ օգուտ են
 քաղում: Ցանաւոր ձեռքերից մի բան չի աւելանում, որ մօնէր
 դպրանոցի սնդուկը. հոգաբարձուներից մէկը ինձ հաստատապէս աս-
 ւում էր, որ Պանծասարի վանքից դպրանոցը համարեա՛ ոչինչ ար-
 դիւնք չի ստանում: Այնտեղ վանքն է կիսաւեր դրութեան մէջ,
 անտեսութիւն կամ մի հատ դպրոց չունի, իսկ այստեղ՝ Թեմական
 դպրանոցը չէ օգուտում: Մնում են միջի մարդիկը. դրանց բանն է
 բան: Մենակ այս կալւածները չեն այսպէս. ուրիշ վանքեր էլ ունին
 մեծ մեծ կալւածներ, ունին գեղեցիկ արօտատեղեր, ուր ամառը
 մնում են Թափաստականները իրանց հօտերով, կան անտառներ այն-
 պիսի տեղերում, որտեղից փայտ է ստանում Նոր-Տաջաղէտի դաւառը:

Բայց արդիւնքը շատ չնչին է, միանգամայն ծիծաղելի. հոգաբարձութեան հաշիւներէց երևում է, որ արդիւնքները համարեա՛ւ ամբողջովին գնում են իբրեւ կառավարչի և ծառաների սոճիկ:

Այս է Քանձասարի դրութիւնը:

(Կ'շարունակւի)

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԵՒ

ՆՈՐԱ ՎԷՊԵՐԸ

Ուսումնասիրութիւն

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑԻ

Ա.

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ ԿԵԱՆՔԸ.

Աշտարակ գիւղի մի աղքատ դերձակի՝ Ստեփաննոս Տէր-Առաքելեանցին, 1837 թւին, ծնաւ մի որդի, որի աւագանի անունն էր Յովհաննէս: Գիւղական դերձակն ամեն երկիրներում մի որոշ տիպար է. նա գիւղի հասարակութեան աղքատ անդամներէն է, որովհետեւ հող և սեպհական տնտեսութիւն ունեցող գիւղացին մի տեսակ աղնական է՝ նա արեւստով և վաճառականութեամբ չէ զբաղւում, այդ պարսպմունքները ստոր են նորա արժանապատւութեան համար, որովհետեւ այդ կը նշանակէ ուրիշի համար վարձկան լինել. այս պատճառով գիւղական երկաթագործը, պաշտաւը, որմնագիրը, հիւսն և դերձակը աղքատներէն են: Սոքա ապրում են ծառաւելով հասարակութեան, ուստի և գիւղական հասարակութեան երկրորդական անդամներն են և չունին հասարակական ձաջն գիւղի գործերում: Բայց միւս կողմից գիւղական արեւստաւորները, մանաւանդ դերձակն և իւր ընտանիքը, հանրածանօթ են գիւղում. նոքա ընդունւած են բոլոր ընտանիքներում և ծանօթ են գիւղացոյ ընտանեկան հանգամանքներին: Գիւղական արեւստաւորի վաստակը մեծ չէ, նա հաղիւ կարողանում է իւր ընտանիքի պէտքերն հողալ և, եթէ ճարպիկ է, կալւածի տէր դառնալ և աշխատել ապահովել իւր սերնդի կեանքը: Դերձակ Ստեփանը մի աշխատի գիւղական արեւստաւոր էր, որի ընտանիքը ապրում էր նորա մատերի աշխատանքով. ուստի փոքրիկ Յովհաննէսը չունէր գիւղացի հարուստ ման-

կան սպազման, աչն է՝ երկրագործութեան վարժելը, տիրանալ իւր հօր աշգիւններին և դաշտերին և սովորեցնալով՝ դառնալ գիւղական իշխան. ո՛չ, նա կամ պէտք է իւր հօր արւեստը սովորէր և անընդհատ սովքասութեամբ ապրէր և կամ մշակութիւն անէր սրա նրա գրանը: Սակաւն դերձակ Սանփանի տղին աւելի փաշտուն սպազաջ էր սպասում:

Այլ ժամանակ Աշտարակում ուսուցչութիւն էր անում Էջմիածնի ժառանգաւորաց ուսումնարանի նշանաւոր ուսուցիչ Սահուռնու աշակերտ Շապուհ Շահնազարեանը, որին աշակերտեց Յովհաննէսը: Շուտով մի նոր և աւելի նշանաւոր վարժապետ դէպի իրեն ձգեց Շահնազարեանի աշակերտներին. Աշտարակի մօտ գտնւած Մողնու վանհայր Մարտիրոս Կոստան երիտասարդ վարդապետը սկսաւ գիւղական մանկան կրթութեամբ զբաղւել: Տասն և երկու տարեկան Յովհաննէսը եկեղեցական կրթութեան բոլոր աստիճաններն Մարտիրոս վարդապետի առաջնորդութեամբ աւարտեց. Սաղմոսն, Նարեկը նա անգիր գիտէր. իւր սուր փշտղութիւնը, որ աչն ժամանակեան դաստիարակութեան համար ամենակարևոր հոգեկան կարողութիւնն էր, աւելի զարգացաւ և վարդապետի առանձին ուշադրութեանն արժանացաւ:

1851 թւին Ներսէս կաթողիկոսի հետ մի կառքում նստած Յովհաննէսը Տփլիսի ուղեորւեց և, հասնելով քաղաք, կաթողիկոսի հրամանով ընդունեց որդեգիր Ներսիսեան ուսումնարանում:

Մեր ազգային այս հինաւորաց նահատակ դպրոցը, որի վիճակն իւր անմոռանալի հիմնադրի մահաւանդից չետոյ խաղալիկ է դառել փառամոլ և խանդարիչ անձանց ձեռին, մի ժամանակ ունէր իւր ոսկէ դարը: Այդ աչն ժամանակն էր, երբ նրա վերաջ հսկում էր հիմնադրի օծեալ աջն և նրա անդաստանը մշակում էին Պետրոս Շանչեանի նման քրիստոնեայ և բնաւորութեան հաստատութեան տիպար տեսուչն և Յակովբ վարժապետ Արքիեանի նման հաշ ուսուցիչն: Իրաւ է, Ներսիսեան ուսումնարանը միայն 5 դասարան ունէր աչն ժամանակը, երկու պատրաստական և երեք դասատուն. աչն տեղ չէին ուսուցանում բաղմատեսակ և ոչ դպրոցական գիտութիւններ, բայց երկու գլխաւոր գիտութիւններ հաստատ էին ուսուցանում, դոքա էին՝ կրօնագիտութիւն և հայրենագիտութիւն: Կրօնի ուսուցումն տեսական և գործնական էր, իրենց ուսուցչի վարքն ու բարքը, նրա ամեն մի խօսքը հաստատում էր իւր ուսուցածը, ուստի և հետևանքն էր զուտ կրօնական և բարոյական կրթութիւն: Յակոբ վարժապետը հայերէն էր սովորեցնում և լատին է, թէ ինչ երկաթի բնաւորութեան տէր մարդ էր նա և իւր առաջադրած նպատակին ինչ չարատեսութեամբ դիմող և հասնող:

Աշտարակցի դերձակի որդին աշտպիսի բնաւորութեան տէր մարդկանց և անձնէր ուսուցիչներին առաջնորդութեամբ կրթւելով՝ ձեռք բերաւ եկեղեցական և հայրենագիտական գիտութիւններին հմտութիւն և վառ ոգի: Ներսիսեան դպրոցից աւարտելով, քիչ ժամանակ արքունի գիմնադիօնում

էլ ուսում, բաւց առանց աւարտելու, ստիպեց հեռանալ իւր հայրենի գիւղը։ Արարատեան գաւառի գիւղերի մէջ Աշտարակը մի մարդարիտ է։ Նրա բարձրաւանդակ գիրքն և համեմատաբար բարեխառն կլիման, բանաստեղծական շրջակայքը Մասիս և Արագած հսկայ լեռներով, գիւղի սաղարթաւոր և բազմապտուղ տղիները, նւիրական ուխտատեղիների կենտրոն, արժանի է Արարատեան գիւղերի աւաղութեան աստիճանին։ Աշտարակը պարսկական բռնութիւնների ժամանակ անգամ բացառիկ գիրք է ունեցել և կարողացել է իւր առանձին տիպարը պահպանել։ Յալտնի է՝ որ հարստութիւնը բռնակալ իշխանութիւնների մէջ աչն ամենամեծ ուժն է, որով կարելի է գիմարել բոլոր հալածանքներին։ Աշտարակացոյ հարստութեան աղբիւրն եղել են միշտ իրենց աղբիւրները, որոնց արդիւնքով նոքա ոչ միայն հոգացել են իրենց ապրուստը, այլ նաև կաշառների միջոցով աղատ են մնացել պարսկական բռնութեան աւերիչ ազդեցութիւնից, իրենց ընտանեկան նիստ ու կացն ըստ կարելոյն անխառն և զուտ են պահպանել։ Ահա այս գիւղում սկսում է առաջին անգամ Յովհաննէս վարժապետն իւր գործունէութիւնը։ Չը մոռանամ փշելու, որ Պռօշեանցը իւր վիպասանութիւնների մէջ լաճախ չառաջ է բերում իւր կեանքի հանգամանքները, աչալէս՝ Շահէնի վերջին գլուխներում (գլ. ճղգ.—ՄԺ) նկարագրում է նա, սակաւ փոփոխութեամբ, իւր մանկական կրթութեան պատմութիւնը։ Աչալէս, եթէ չենք ռիսաւում, Սօս և Վարդիթերի մէջ նկարագրած Գարեգին տիրացու-վարժապետն ինքն է, մանաւանդ որ Ներսիսեան ուսումնարանում աշակերտներին զուտ հպկական անուններ տալու սովորութիւնը կար և Յովհաննէսին Գարեգին էին կոչել։ Նրա Յովհաննէս վարժապետը աչալէս է առաջին անգամ տեղեկանում, որ գուցէ իւր ցեղն հին և աղնական է, որ ինքը սերում է Պահլաւի Գրիգոր Մազիսարոսի եղբոր որդի Պռօշից, ուստի և սկսում է կրել Պերճ իշխանական անունն և Պռօշեանց ազգանունը (Տե՛ս Կոռաժաղիկ երես 24)։ Պռօշեանցի ուսուցչութիւնը երկար չէ տևում։ Աշտարակում, թէև նա աղ ժամանակ իւր ապագա գործունէութեան համար մեծ պաշար է հաւաքում։ Յալտնի է՝ որ գիւղական վարժապետը, մանաւանդ հին ժամանակի վարժապետը, գիւղացիներին սիրելի հիւրն է։ Նա ամեն հրաւերներին և ընտանեկան ուրախութիւններին մասնակից է։ Ահա աղ ժամանակեան հաւաքած հարուստ պաշարն է, որ նա մեզ իւր վիպասանութիւնների մէջ տալիս է։ Բաւց զիպածը նորան ծանօթանալու միջոց տաւ բոլոր Արարատեան գաւառի գիւղական կեանքին, որով նորա գիտութիւնների պաշարն աւելացաւ։ Պռօշեանցը չը թողնելով ուսուցչութիւնը, գրադրի և հաշապահի պաշտօնով սկսաւ ծառայել Մողնու վանահայր և Էջմիածնի գործակալ Յակոբ վարդապետ Գեանդարանցու մօտ, որ վանքի պողին և ուրիշ հաստիքներն հաւաքելու համար ամբողջ զա-

ւառը չըջում էր: Այս բարեկաշի հանգամանքն է պատճառը մեր վիպասանի ճիշտ և մանրամասն տեղեկութիւնների Արարատեան գաւառի տեղագրութեան և կեանքին, որի բազմատեսակ կողմերի նկարագրութիւններին հանդիպում ենք «Սօս և Վարդիթերի», «Առուածաղկի» և մանաւանդ «Հացի խնդրի» մէջ:

Սարգիս եպիսկոպոս Զալալեանը, տեսնելով Յակովբ վարդապետի դրագրի ընդունակութիւնները, հրաւիրեց նրան 1859 թւին Թիֆլիս, ուր և նա սեմիջապէս ուղևորեց: Դեռ Սարգիս եպիսկոպոսը չէր վերադարձել Թիֆլիս, որ Պռօշեանցը քաղաք հասաւ և մնաց անօգնական, ապրելով վանքի պարսպի ամառի բերդի մէջ եղած փոքրիկ սենեակում:

Պռօշեանցը, Սարգիս եպիսկոպոսի հովանաւորութեամբ, հալերէնի ուսուցչի պաշտօն է դառնում Տէր-Յակովբեանի դպրոցում և վերջը՝ Ներսիսեան ուսումնարանում. իսկ իւր սակաւ աղատ ժամերը նւիրում է բանաստեղծութեան և ձեռնարկում է «Սօս և Վարդիթերը»: Վարժապետի հեղինակութիւնը դեռ մեծ էր Պռօշեանցի առաջ. նա իւր վիպասանութիւնը տառաւոր է Յակովբ վարժապետին տեսնելու և սրբագրելու: Վարժապետը հաւանում է իւր աշակերտի նրախաղթին և 1860 թւին լուս է տեսնում «Սօս և Վարդիթերը»:

Ալուսեհտե Պռօշեանցի գործունէութեան շրջանն սկսում է լալնանալ 1862—1864 նա բանում է Թիֆլիսում առաջին օրիորդաց ուսումնարանը (սբ. Գալիանեան), «Ալուսեհ» ամսագրի օգնական խմբագիր և սրբագրիչ է դառնում: Խմբագրութեան ծախքով և առաջարկութեամբ սովորում է լուսանկարչութեան արհեստը, որպէս ղի ճանապարհորդէ Հայաստան և տեսարաններն ու աւերակները նկարէ՝ ապագայում «Ալուսեհ»-ում հրատարակելու նպատակով. արհեստը թէև սովորում է Պռօշեանցը, բայց խմբագրութիւնը չէ հասնում իւր նպատակին: Իւր պաշտելի ուսուցչի (Շանչեանի) հրաւերը կանչում է նորան Շուշի՝ օգնականի պաշտօնով, ուր նա նպատակ է և դրեթէ պատճառ է դառնում Շուշեայ օրիորդական «Մարիամեան ուսումնորանի» բացման: Շանչեանի և Պռօշեանցի գործունէութիւնը Շուշում երկար չէ տևում. ստորերկրեալ խարդաւանանքները, որ Թիֆլիսից սկսած հալածում են Շանչեաններին, քանդեցին նորա գործը և Շուշում, որով բոլորովին հեռացրին նորան ազգային ամապցած գործունէութեան ասպարիզից, որ խղճմտանքի նման ալնուհետե հեռուից սկսաւ փառամոլների և շահամոլների գործունէութիւնը դիտել: Պռօշեանցին օգնեց ալժմ իւր արհեստը. նա 1865-ին դարձաւ Երեան և սկսաւ իւր արհեստով զբաղել, պատահմամբ ընկաւ Ագուլիս, ուր ժողովրդեան ցանկութիւնը կատարեց՝ հասարակական տղաւոց ուսումնարան բանալով և, պաշտպանելով օրիորդական ուսումնարանի գաղափարը, լաջողեց հիմնել տէնտեղ մի ծխական օրիորդական ուսումնարան, թէպէտ և աղտեղ դեռ ևս գործում էր պ. Հալրապետ Քալանթարեանցի ուսումնարանը՝ տղաւոց և օրիորդաց բաժանմունքներով:

Սակաւն մի տարուց չետոյ Պռօշեանցը ստիպեց թողնել Ազուլիսը և 1866—1872 ապրիլ լուսանկարչութեամբ, մարելով թափառական կեանքը, Ալս ժամանակի արդիւնք է «Շահէն» վիպատանութիւնը, ինչպէս ալ գործի սկզբում պատմած է:

«Մշակ» լրագրի հրատարակութիւնը կրկին հրաւիրեց Պռօշեանցին գրական ասպարէզ: Նա ալ թերթի խմբագրութեան մէջ 1872 թւին աւելաւ խմբագիր էր և նորա բաժինն էր ներքին տեսութիւն Երեւանի վերաբերեալ և արտաքին տեսութիւնից՝ Տաճկա-Հայաստանն: Սակաւն ալ խմբագրական ասպարէզը Պռօշեանցը, ուրիշ շատերի հետ միասին, շուտով թողեց:

Անուհետև Պռօշեանցն անցաւ Ռուսաստան՝ Եւրոպա դնալու նպատակով, որ չը քաջուրեց: Նա դնաց Ասորիսան՝ Վահագնեան եպիսկոպոսի հրաւերքով իբրև տեսուչ քաղաքի դպրոցի, բալց, դպրոց չը գտնելով, մի ծխական ուսումնարան բացաւ: Մինչև 1877 թւականն ապրիլով անտեղ անկաջող հանգամանքներում և հալածելով դարձեալ իբրև Շանչեանի աշակերտ, վերջապէս ազատեց ալ գրութիւնից «Փորձ» հանդիսի երևան գալով:

«Փորձ» հանդիսի խմբագիրն հանեց Պռօշեանցին կրկին անգամ գրական ասպարէզ և միջոց տաւ նորան իւր տաղանդը ցոյց տալու և մեր գրականութեան մէջ ալ տեղը բռնելու, որ ալ ժամանի: Նա ստացաւ «Փորձից» աշխատակցական ամենաբարձր վարձատրութիւնը և, սպանովելով իւր տպրուստը, ապեց իւր գործերից մինչև ալժամանանշանաւորները. — «Արուածաղիկ», «Հացի խնդիր» և «Շահէն»: Մինչև 1879 թւականը, Պռօշեանցը և՛ աշխատակից էր «Փորձ»-ին և՛ սրբագրիչ, վերջերս սակաւ թարգմանիչ գանաղան լօղածների: Ալ թւին նա նշանակեց թեմական տեսուչ Երեւանի թեմի դպրոցներին և ուղեւորեց իւր պաշտօնատեղին: Այս անգամ կրկին բացեց նորա համար մի ասպարէզ, որը թույլ տուց նորան հարստացնել և ամբողջացնել իւր երկտասարդութեան ժամանակ հաւաքած տեղեկութիւնների պաշարը Արարատեան աշխարհի ժողովրդի վերաբերեալ:

Այս շրջանի արդիւնքը դեռ երևան չէ հանել Պռօշեանցը, բալց հիմք ունինք լուսալու, որ իւր ապագայ վէպերի համար բեղմնաւոր պիտի լինի:

Պռօշեանցի թեմական տեսութիւնը վերջացաւ ուսումնարանների փակումով և 1885—1887 թւականներին, անպաշտօն և նիւթական նեղ գրութեան մէջ, տպրում էր նա Երևանում՝ իւր տպրուստը ինչպէս, աւա՛ղ, հաստատում է, ամիսավաճառութեամբ հալթհալթելով... Արժանաւոր պատկ և վախճան հալ անձնէր ուսուցչի, հրապարակախօսի և բանաստեղծի: Բալց ոչ, նա դեռ լաւ օրեր պիտի տեսնէր: Անցեալ տարի (1877) նա հրաւիրեց հալոց լեզուի ուսուցչի պաշտօնով Ներսիսեան ուսումնարան, ուր ուսուցչի ծանր դրաղմունքն և ալ դպրոցի հալոց լեզուի ուսուցչի սխալման աշխատանքը ջլատում է նորա ուժերը, խանգարում նորա առողջութիւնը:

«Մուրճ» ամսագրի հրատարակութիւնը կրկին դուրս է բերում վիպասանին աչն մեծ տապալելը, որ նա կորցրել էր «Փորձ» ամսագրի զաւարելով. տապալելը, որի վրայ միայն վիպասանի սլմն և քանքարը մեր մէջ կարող է երեան գալ:

Աւարտելով Պոօչեանցի կեանքի համառօտ նկարագիրը, պէտք է սուշալացնենք, որ նա գրականութիւնից հետի եղած ժամանակներն էլ, միշտ և ուսնդուն գործակից է եղել հովիական հրապարակախօսներին. բաղմաթիւ կեղծ անուններով նա թղթակցել է մեր բոլոր լրագիրներին—«Մեղու»-ին, «Մշտր»-ին, «Արձագանք»-ին և «Նոր-Գար»-ին:

Բացի լրագրական լուրածներէից, Պոօչեանցը թարգմանել է պ. Ն. Լիզեանի «Ներքին կեանք հին Հայաստանի» վերնագրով երկն, զրել է «Ազատի» անունով ողբերգութիւնն և Աղուէկաց երկսիւս. գաղացների և Շուշալ օր. գաղացի բացեւիտ պատմութիւնը, որոնք մնալուն արժանաւորութիւն չունենալով և բոլորովին դուրս լինելով բանաստեղծական գրականութեան սահմանից, որին իրրե ներկայացուցիչ ճանաչում ենք Պոօչեանցին, դուրս ենք թողնում մեր ուսում-նասիրութեան շրջանից:

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

Կենսագրական ուսածք

Գ Է Ո Ր Գ Զ Մ Շ Կ Ե Ա Ն Ի

Անմոռանալի Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսը հիմնարկելով Ներկալ Ներսիսեան Գալանդոյը, անհրաժեշտ համարեց հրաւիրել ամեն կողմից զարգացած հաշ ուսումնականներ, որոնք հետեւելով նորա հաշարութեան գաղափարին, կարողանալին տարածել Թիֆլիսաբնակ հաշերի մէջ իրանց մուսցած մալրենի լեզուն, եւրոպական լուսաւորութիւնը՝ կից ազգասիրութեան հետ:

Ի թիւս աղջ հրաւիրւած գաղափարաւէր անձանց՝ էր և Յակոբ Շահան Զրպետեան՝ Եղեռացի, ալն ժամանակաւ եւրոպական դրականութեան մէջ չալանի արեւելեան լեզւագէտ Cirbied Փրանսիացին:

Աղջ հաշարաւոր ուսումնականի Թիֆլիս գալուց առաջ, Անչախատ անուանած թաղում, բնակւելիս է եղել Գարբիէլ Սունդուկեանցի հալը Մկրտումը իւր սեպհական տանը, եւրոպական ճաշակով շինւած, որը Թիֆլիսի մէջ աղջ ժամանակ նորութիւն է համարւելիս եղել:

Մկրտում Սունդուկեանցը (աղջուէս էր կոչւում նա) պարագում է եղել վաճառականական գործերով, ինչու համար և յաճախ ալցել է եւրոպական շատ քաղաքներ և մի քանի անգամ Լէւզցիդ:

Ահա՛ աղջ տան մէջ, 1825 թ. շունիսի 29-ին, ծնւում է մեր առաջնգաւոր գրամատուրդ Գարբիէլ Սունդուկեանցը:

Մկրտում Սունդուկեանցը, վախճանւելով 1831 թ. մալիսի 22-ին, քաւատուն և իննը տարեկան հասակում, թողնում է իւր որբւալրի Թինաթին կամ Թեկղինէ ամուսնուն, չրջապաւած երկու արու՝ Գարբիէլ և Միքայէլ և մի աղջիկ՝ Բէպիմէ գաւալներով:

Մկրտումի մահից վտուց, Թինաթին Սունդուկեանցը անգալափուում է իւրեանց մի ուրիշ սեպհական տանը, «Փռանդներ» անուանւած թաղում, և աղջ ժամանակամիջոցին, գալիս է Թիֆլիս վերալլելալ ուսումնական Զրպետեանը իւր Փրանսուհի, ըստ ծննդեան Denise Margueritte Wolantum

ամուսնու հետ և բնակւում է Սունդուկեանների Անչոխատի թաղում գտնւած տանը:

Մէր հեղինակի մայրը, մօտիկ ծանօթանալով ալդ նորեկ գերդաստանի հետ, նկատելով ուսումնականի գիտնական զիրքը, տեսնելով նորա մօտ զբքերի կիտաճներ, պատերին կախ արած քալտէզներ, վճռում է տալ ուսման ալդ գիտնական ընտանիքին՝ իւր անդրանիկ զաւակ Գաբրիէլին:

Այդպէս ահա՛, տաղանդաւոր հեղինակը սկսում է պարապել Զրպետեանի մօտ, ապրիլի մէկից 1832 թ. ամեն առաւօտ 8 ժամից սկսած՝ մինչև երեկոյեան 8 ժամը:

Զրպետեանը պարապելիս է եղել Սունդուկեանցի հետ հալերէն գրաբար, իսկ նորա ամուսինը՝ Փրանսերէն լեզու, որոնցով և աւանդելիս են եղել նորան երեսնաչական հասակին մատչելի ամեն տեսակ գիտութեան ճիւղերը:

Իսկ ուսերէն լեզուն ուսանելու համար, Սունդուկեանցի մայրը ուղարկելիս է եղել նորան պարապելու երեկոյեանները՝ նախ մի կաթոլիկ ուսնապէտ ոմն Մամուլովի և ընտոյ չալտնի հալագէտ Արարատեան վարժապետի մօտ:

Զրպետեան ամուսինների աղղկցութիւնը ալնքան խոր տպաւորութիւն է անում Սունդուկեանցի մանկական սրտի վերայ, ալնքան նա սիրելիս է լինում նոցա, որ մինչև օրս, անուանելով նոցա իւր երկրորդ ծնողները, մեծ հոգատարութեամբ պահում է նրանցից մնացած որ և իցէ՝ վաշտակի արժանի թէ՛ գրութիւններ և թէ՛ չնչին իրեղէններ, ի շարս ալլոց և մի ժամացոյց, որը նւիրած է լինում նորան Զրպետեանի ամուսինը, նորա մօր ձեռքով: Օգոստոսի 16-ին, 1833 թ. վախճանւում է Զրպետեանը և ալնուհետև Գաբրիէլ Սունդուկեանցը մտնում է Արզանդէների պանսիօնը, որտեղ ուսումը աւարտելուց չնոյ, քառասուն թւականին, անցնում է գիմնազիօն և ալդտեղ ուսումը աւարտելուց չնոյ, 20-ին օգոստոսի 1846 թւականին, զնում է Պետերբուրգ և մտնում ալնտեղի համալսարանի պատմա-լեզուադիտական մասնաբաժինը:

Այդտեղ նորա համալսարանական չորս տարւոյ ուսման ընթացքում, զրպուում է նորա մէջ սէր դէպի թատրոնը և նա հիացած ալն ժամանակաւ ալնտեղի Փրանսիական երեկի գերասանուհու՝ տ. Արնօլդ Պլէսի՛ի և Իկրտօն և Ալլան գերասանների խաղով, համալսարանական ուսումն աւարտելուց չնոյ, դառնում է իւր հալրենիքը՝ Թիֆլիս, քսան և հինգ տարեկան հասակում:

Այտեղ մտնում է փոխարքայ վօրօնցօլի կանցելարիան, որտեղ ծառայում է մինչև 1854 թ. և ալդ տարւանից տեղափոխւում է դարձեալ տէրունական պաշտօնով Դերբէնա քաղաքը, ուր և շարունակում է իւր ծառայութիւնը մինչև 1858 թականը:

Դառնալով դարձեալ Թիֆլիս, 1860 թ., նա նշանակւում է անդամ

Գաւառական վարչութեան շինութիւնները ըստ մասնագիտական գործունէութեան միջոցին աւելիսի նորաձև և իմաստալի սովորութիւն է ցոյց տալիս, որ՝ երբ մի երկու տարի ընդհատելով աչդ պարտաւճիւր, դարձեալ տեղափոխուած է փոխարքայի կանցելարիան, աչդ ժամանակաւ Թիֆլիսի Գաւառապետ հանգուցեալ Սրլովսկին, տեղեակ լինելով Սունդուկեանցի շինութիւնների մասնագիտական բարի համբաւին, հրաւիրում է նորան կառավարիչ-անդամ Թիֆլիսի Նահանգական վարչութեան շինութիւնների մասնաբաժնի մէջ, որտեղից հետզհետէ տէրունական բարձր աստիճանների հասնելով, տեղափոխուած է ճանապարհների հաղորդակցութեան (Управление Путьей Сообщения) վարչութեան ժառանգութիւնը, ուր ներկայումս կրում է տնտեսական մասի կարգադրիչի պաշտօնը, պետական խորհրդականի, ըստ զինւորականի՝ ժէնէրալի աստիճանով:

Աչդ ժամանակ Նախախնամութիւնը, կարծես, հոգ տանելով ապագայ տաղանդաւոր զբամաստուրդի գործունէութեան մասին, հանդիպեցնում է նորան օրիորդ Սօֆիայ Միրիմանեանցի հետ՝ աչդ ժամանակաւ համար հաղւատիւ մի երևութ, հաչ հոգով դաստիարակած մի աղջիկ, որի հետ պսակուած է Սունդուկեանցը 16-ն լունիսի 1863 թւականին: Սունդուկեանցը գտնում է իւր ամուսնու մէջ, իւր ապագայ գործունէութեան համար, մի աշխատակից ընկեր, որը իւր կանացի նուրբ քննադատական հաշիւաքով, թէ՛ օգնում է նորան՝ հեղինակին տիպերի մշակելու գործում, թէ՛ զբոսում է նորա թելադրութեան ներքոյ և թէ՛ վերջապէս, հանդիսանում է իրրև հոգատար կին, որպէս մարդուն օրինակելի ամուսին և օրինակելի մայր զաւակներին:

Սկսում է 1863 թւականի աղմկալից նորարողութիւն հաչ թատրոնական բեմի գործունէութիւնը՝ շնորհիւ մի քանի սեմեսարիստների, որոնց պարագլուխ լինում են հանգուցեալ Միհրդատ Ամերիկեանը և մեր քանքաւաւոր վիպասան—բանաստեղծ Պերճ Պաօշեանցը:

Հաչ թատրոնը կեանքի նշույլը զգալուն պէս, աչդ արժանաւիշատակ ժամանակ, դուրս է ցատկում իւր մութ անկիւններից Թիֆլիսի քաղաքային թատրոնի բեմը, խուլընդոս հանդիսանալով անգամ Խոտլական Օպերայի ներկայացումներին:

Մէկ անգամ մեր քանքաւաւոր հեղինակը, ներկայ գտնւելով Արշակ Բ. Գալֆախեանի ողբերգութեանը, որից վետոյ խաղում են «Գալալ-Աաղօ» վոդեվիլը, հեղ. հանգուցեալ բժիշկ փուղինեանցի, և համեմատելով աչդ ժամանակաւ խեղճ հաչ թատրոնի դերասանների խաղը իւր տեսած հռչակաւոր ֆրանսիացի դերասանների խաղի հետ, մտածում է՝ եթէ փուղինեանցը կարողացաւ մեր շնչասպառ հալութեան կեանքից դուրս բերել Գալալ-Աաղօի և Սանդուխտի տիպեր, մի՞թէ նա, Սունդուկեանցը, չի կարող ուրիշ զոցա նման ազգային տիպեր բեմ դուրս հանել... Աւ տան

չափշտակելով Դալար-Ղազօի դերակատար Սուքիասեանի կենդանի խաղով, նա մի օր թեւադրում է իւր ամուսնուն «Գիշերաւն Սարըը խնր է» վօղելիլը, որը և խաղում են Թիֆլիսի քաղաքալին թատրոնում հոկտեմբերի 23-ին, 1863 թւականի: Այդ խաղը մեծ աղմուկ է հանում և չը նստելով որ նա զրւած էր Սուքիասեանի Դալար-Ղազօի դերակատարութեան աւելիքով, մեծ չափողութիւն ունեցաւ այդ պիեսի մէջ մի երկրորդական դեր՝ Արուսիկն ձարտարովի դերը, որը առաջին անգամ խաղաց Սեդրակ Մանդրինեանցը:

Առաջին չափողութիւնը ձեռք բերելուց չնտոյ մեր տաղանդաւոր հեղինակը ձեռնամուխ եղաւ «Թաթարալալ» կօմիդիայի զրութեան և ահա թէ ի՛նչ պէտ: Նա ունէր իւր տանը երկու պատկեր, որոնցից մէկը ներկայացնում էր մի տան պատուհանում կանգնած մի գեղեցիկ կին, որին ուզում է լանձնել մի ծաղկեալ փունջ՝ տակաւի վերալ բարձրացած երիտասարդի մէկը, միւսը, ինչպէս այդ երիտասարդը, կորցնում է հաւասարակշռութիւնը և վստի է ընկնում տակաւի վերալից:

Յափշտակելով այդ չնչին բնարանով, մի քանի օրու մէջ գրում է 1865 թ. «Թաթարալալ» կօմիդիան երկու արարւածով: որը ներկայացւեց միտոն 7-ին ապրիլի, 1866 թւականի, զարձեալ քաղաքալին թատրոնում: Այդ պիեսն ալնպիսի հուշակ հանեց, որ, լիտագալ ներկայացումների ժամանակ, մի շարաթ առաջ թատրոնի կասսաւում բոլոր տոմսակները վաճառւած էին լինում: Այդ պիեսի մէջ առաջին անգամ երևան եկաւ հանգուցեալ Ամիրիկեանի ուժգին տաղանդը՝ Գարսամ Նախուլիչի դերակատարութեան մէջ, որը հնուգնտէ զօրանալով, հասաւ իւր գագաթնակէտին «Աւագակների» Ծրանց Մօրի դերի մէջ 1): Յետոյ այդ պիեսը կերպարանալ փոխւեց նախ՝ երեք արարւածի և ապա, 22-ին Նոյեմբերի 1879 թ. նա ներկայացւեց չորս արարւածով և վեց պատկերով:

Անուհետեւ Սոնդուկեանցը ուսումնասիրելով Սկրիբի, Շիլլերի ու Շէկսպիրի գրւածները, «Ոսկան Պետրովիչը երազումը» փոքրիկ Փարսը գրեւելուց չնտոյ, ձեռնամուխ եղաւ «Էլի Մէկ Զոն» կօմիդիայի մշակութեանը:

Այդ պիեսի մասին ևս ունիմ տւած մանրամասն տեղեկութիւններ «Իմ թատրոնական վիշտութիւններ»-ի մէջ՝ «Փորձ» ամսագրում: Ներկայացւեց այդ պիեսը միևնոյն քաղաքալին թատրոնում 1870 թ. մտպիսի 4-ին:

«Թաթարալալից» չնտոյ, «Էլի Մէկ Զոն»-ի ներկայացման դերասանական անսամբը կատարեալ լողթանակ ձեռք բերեց հեղինակի տաղանդը պսակելու համար:

Նւարդ Մելիք-Նապարեանցը (ներկայումս տ. Իզմիրեանցը), երկու

1) Տես «Փորձ» ամսագրի «Իմ թատրոնական վիշտութիւններ»:

դեր կատարելով այդ պիեսի մէջ, մէկումը ձեռքերեց անմահ պճնասէր և փառամոլ ապագայ գնդապետ տիմար Եագոր Սիմոնիչի (հանգուցեալ Սիւրսողեանց) կնոջ դերը. նորա աղջկա, այն ժամանակեալ համար ի դէպակա՛ն հա՛ հոգով զարդացած և կրթւած օրիորդի դերը, վերին աստիճանի ներութեամբ կատարեց տ. Սաթենիկը (ներկայումս Եղիսաբէթ Չմշկեանը). Ամերիկեանցը հոտաւ սպօգէլին իւր անմահ խաղով, հարուստ վաճառական Սարգսի, երբեմն Սաքօի դերում. մնացածները ամենքը իրանց դերերը խղճմտանքով կատարելուց լետոյ, արժանացան բուռն ծափահարութիւնների և վաստակեցին անվերջ «կեցցէներ» հեղինակի հասցէին, որը չըջապառւած դերասաններով մի քանի անգամ բեմ դուրս եկաւ ողջունելու այդ անկեղծ ջերմ ծափահարութիւնները:

Այդ երկու լուրջ կոմեդիաները բեմ հանելուց լետոյ, Սունդուկեանցը արդէն ամենաճիւղ իրաւունքով վաստակեց դրամատուրգ հեղինակի անունը և մնաց միակ բնական բանաստեղծ-հեղինակ հանգուցեալ Տէր-Գրիգորեանցի մահից լետոյ, որի մի քանի շնորհալի վողեվիւնները մինչև այժմս մնում են աղքատիկ հաջ թատրոնի բեմի վերայ:

Այդ ժամանակամիջոցին, «Խաթաբալալի» և «Էլի Մէկ Զոհի» հեղինակը, մի երեկոյ աչքերէլով հափրէն ներկայացման, որը քաղաքային թատրոնի բեմից աքսորւած լինելով՝ լուռ էր գրել ժամանակաւորապէս Գերմանացոյ ժողովարանի դահլիճում, հաւանել էր իմ մէկ չնչին դերակատարութիւնը, հանգուցեալ Փուդինեանցի «Ալուր տրաքվիս պիտի պսակվիս» Մօլիէրից փոխադրած՝ Թիֆլիսի կեանքին չարմարեցրած պիեսի մէջ, Շամիր կին-տօի կամ պաժարնի ի դերում: 1) Գորանից զրգւած, նա վճռում է գրել մի նոր պիես, որի բովանդակութիւնը առնւած լինի այդ պաժարնիների կեսնէքից. և ահա 1870 թականին, սկսում է գրել «Պէպօ» հանրածանօթ կօմեդիան, որը և ներկայացնում են առաջին անգամ դարձեալ քաղաքային թատրոնում 1871 թ. ապրիլի 30-ին:

Հանդիսականները ապշեցան. հեղինակը զմալեց: Պէպօն ստացաւ chef-d'oeuvre-ի հեղինակութիւն՝ Խաթաբալալի և Էլի մէկ Զոհի համեմատութեամբ և այն ատիճան նա ժողովրդականացաւ, որ առաջին ներկայացումից լետոյ, հազիւ անցաւ մի ժամանակամիջոց, որ վրաց ինտելլիգենտ երիտասարդութիւնը, կամենալով վերանորոգել վաղուց դադարած վրաց բեմի գոյութիւնը, սկսեց այդ պիեսով իւր առաջին, միութեութիւնից ղէպի կեանք վերածնուող վրաց բեմի գործունէութիւնը: Վրաց բեմի վերադ Պէպօն այն աստիճան վրացիացաւ, որ ներկայումս դեռ ևս կան վրացիք, որոնց դժւար է հաւատացնել, որ այդ պիեսի նախատիպը աշխարհ է եկած հալերէն լեզուով, որ նա բղխած է հաջ բանաստեղծի հոգուց: Ապացոյց՝ որ նախ, երբէք «Պէպօ»-ի ներկայացման

1) Տես «Պէպօյի» յառաջաբանը:

ժամանակ աֆիշի վերաջ չէ վիշում, թէ նա թարգմանութիւն է հալերէնից. իսկ երկրորդ հանգամանքը հալութեան համար վիրաւորիչ՝ վիրական իմաստակութեան մի բնատրոշ երևոյթ է ներկայացնում, այն է, որ Պէպօն, այդ իսկական հալ պաժարեռու նախատիպ հերոսին, վրաց բնմի վերաջ դուք կը տեսնէք վրաց ազնւական երիտասարդի գրիմով, այն ինչ՝ հարստահարող, հալ վաճառական հարուստ Արուսթինին՝ անպատճառ ծաղրածու հալ վաճառականի զրմակով: Այդպէս շարունակելով, մի քանի տարուց լետոյ՝ հալութիւն թէ դոնէի վրաստանում մի վրացի, որ հաւատալ թէ «Պէպօն» գրած է հալերէն լեզուով և թարգմանած վրացերէն և ոչ թէ հակառակը, և թէ Պէպօն, Վախուշին, Արուսթինը և ալլն, բոլորը վերցրած են հալութեան շրջանից և որ հալութեան պակասութիւնները հալ բանաստեղծից են մշտրակւած:

Նթէ ալս տպւէս է, իմ կարծիքով վրացկա շատ անխոհմ և անիրաւացի են վարւում, երբ հալ բանաստեղծ Սունդուկեանցի հերոս Պէպօն ճակատին դրոշմում են բնմի վերաջ քաւթ վ. և լ. օ (վրացի) և Արուսթինի ճակատին ս. օ. մ. է. ի. օ (հալ) կոչումները: Ինչո՞վ է մեղաւոր Սունդուկեանցը, որ հալ կեանքի մէջ է փնտռել և որոշել մարդու լաւ ու վատ կողմերը: Ինչո՞ւ մենք եւրոպացոց հեղինակութիւնները պարտք ենք համարում ճշտութեամբ թարգմանել, իսկ մէկ հալերենակից հալ հեղինակի բանաստեղծութիւնը չինել գալթակողութեան մի խնդիր:

Ներդրութիւն, թէև հեռացալ հարցից, բաց հարկաւոր է, որ մեր տաղանդաւոր հեղինակի իմ թող գրչովս տւած կենսագրութեան հաշի մէջ գետեղէի ալս խնդիրը, որ վրաց համար գալթակողութեան քար է դառել՝ իրանց բնմի վերաջ վրացին միշտ անշահասէր և ազնիւ է, իսկ ամեն մի հալ մի տեսակ գուփող—գջլողի տիպար է, մարդկութեան սեպհակունդ գագնմունքից դուրկ մի էակ:

«Պէպօն» աշնպէս գրութիւն տմրողջ Թիֆլիսի հասարակութիւնը, որ անգամ ուստաց ինտելլեկտիւցիան հետաքրքրեց այդ պիեսի բովանդակութիւնով, անշաղաղ թարգմանեց նորան ռուսերէն և, եթէ չեմ սխալւում, 1879 թւականին երկու անգամ տւին նորա ռուսերէն ներկայացումը քաղաքալին թատրոնում, թատրոնական անտրպրէնիօր Պալմայի խմբով:

* * *

«Պէպօն»-ի ներկայացումից լետոյ, միևնոյն տարւալ տմաւը, Սունդուկեանցը գրեց «Բանդուած Օջախ» կօմեդիան, որի նիւթը վերցրել էր մեր վաճառականական դատակարգի կեանքից:

Այդ պիեսը ևս խաղացեց քաղաքալին թատրոնում, 19 ապրիլի, 1873 թ. թատերասէրներից դորա համար լատուկ կալմած խմբով: Թաղը գնաց գեղեցիկ և սլիւար ունեցաւ մեծ լաջողութիւն: Բացի այս հիմնա-

ւոր պիտաներից, Սաւորակեանցը դրած ունի և մի քանի վօղեվիւններ, ինչպէս «Օսկան Պետրովիչը կրողումը» և ալլն, որոնք մնացած են անտիպ:

* * *

Ուրեմն, 1863 թւականից մինչև ներկայս, տաղանդաւոր հայ բեմական հեղինակը տւել է հայ հասարակութեան չորս նշանաւոր բեմական թատրերգութիւններ—ալն է՝ «Խաթաբալալ», «Էլի Մէկ Զոհ», «Պէպօ» և «Քանդուած Օջախ»։ Խաղեր, որոնց մէջ կենսադրւած է ամբողջ Թիֆլիսի հայերի կեանքը՝ իւր ուրախ թէ տխուր, լուրջ թէ ծիծաղաշարժ տեսարաններով։ Այսպէս, օրինակ, հեղինակը իւր գործունէութեան սկզբում, «Փիչերուան Սաբըր խէր է» ծաղրածութեան մէջ, Օսկան Պետրովիչի տիպով ցոյց է տալիս հին և նոր հայ սերունդների կեանքի կոմիքական երևույթները։ Գետոյ «Խաթաբալալ»-ի մէջ նա արդէն բացատրում է Գարասիմ Նախուլիչներից և Մասիսեանցներից բաղկացած հասարակութեան կազմը, դուրս բերելով մէկի խաբէբալութեան սխառմը, միւսի, ալլ սխառմի առկ ձնչւածի, բացականչութիւնները և անկարողութիւնը մարտնչել տոութեան դէմ։

«Էլի Մէկ Զոհ» տաղանդաւոր հեղինակը, շարունակելով իւր դիտողութիւնը, արդէն որոնում է պատճառները թէ արդեօք ինչո՞ւ հայ երիտասարդը անզօր է դիմադրելու հայ հին սերունդի սխառմին, ինչո՞ւ զարգացած համալսարանական Միքայէլը, զինւած լոգիկական դատողութիւններով, դարձեալ ընկճւում է հին սերունդի հզօր սօփիզմների արտադատութիւնների ներքոյ։ Եւ ցետոյ, կարծես դժւարանալով ալլ հարցերը լուծել ունեւոր հօր և նորանից կախւած որդու մէջ, նա դիմում է ամբօխին և ահա՛ նորա չը մարած կենսական գոյութիւնից հրապարակ է հանում ձկնորս Պէպօին և նորա ուժեղ բռնցքներով սողտակում է փռած, հին վաճառականութեան խարդախ սօփեստութիւնը։

«Քանդուած Օջախում» հեղինակը որոնում է ալլ հասարակութեան կեանքի մէջ բոլոր տարակուսանաց նախապատճառը և, հետեւելով Փրանսիական առածին «chercher la femme», կանգ է առնում մեր կէկէլօների և քարիչնիանների վերայ և լուծում է խնդիրը ալլպէս, որ ամենալն չարեայ սկզբնապատճառը մեր կանանց տգիտութիւնն է և պճնասիրութիւնը։

Այսպիսով, իւր քսան և հինգ տարւայ գործունէութեան միջոցին, մեր միակ, ըստ եւրոպական հասկացողութեան դրամատուրգ հեղինակը, գնեւլուց ցետոյ Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ երեսցող կեանքի լաւն ու վատը, նորան գրադեցնող կնճառ խնդիրները, հրապարակ հանելուց ցետոյ խաբէբալ Գարասիմ Նախուլիչին, բռնակալ որդիասէր, միւսնոյն Գարասիմ Նախուլիչի խաբէբալութեան սխառմին հետեւող Սարքսին, վաչխառու Արաւիկին Զիմլիմովին և Փասօին և pendant ալլ հրէշներին, նրանց

որոգալթը ընկած և նրանց տատանում կապած պարզամիտ և ազնիւ հասկացողութեան տէր և ճշմարտութեան անձնատուր, բաղց և թաւամորթ երիտասարդ Մասիսեանցին, թող բնաւորութեան տէր ուսումնական Միքաէլին, արիասիրտ ձկնորս Պէպօին և կանանց պճնասիրութեան զո՛ւ Գուլաբենց Օսէփին և սրանց չրջապատող միշտ բողոքող, բաղց և անգոր պառաւապարերին. ապեղ, բաղց բարեհոգի օրերդ Մարգրիտին, իզէալական հոգով դարգացած Անանին, ձկնորսի քնքռւչ քույր Կէկէլին և ալլն—մեր քանքարաւոր հեղինակը մտիլ է նորերումս Թիֆլիսի հայութեան սալօճների պիմակաւորած շրջանները և ալնտեղից հրապարակ է հանել «Ամուսիններ» անունով չորս արարւածով մի նոր պիես, որի մէջ հրապարակ է դուրս գալու սալօճների թեթեւոյլի, բաղց զիմակաւոր սերունդը, որի լծի տակ ճնշւում է խիսական սուսքինութիւնը և նուրբ հասկացողութեան տէր երիտասարդութիւնը:

Մենք լի հաւատով, որ մեր քանքարաւոր զրամատուրդին տպատւած է զործունէութեան զեռ ևս փառաւորագոյն ապագայ:

ԱՂԷՔՍԱՆԴՐ II ԿԱՅՍԵՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ո լ ա լ ա ծ ր

Կ. Ե Ա Ղ Ո Ւ Բ Ե Ա Ն Յ Ր

(ՅՕԴԻԱԾ ԱՌԱՋԻՆ)

ԴԱՏԱՏԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ¹⁾

Судъ скорый, правый и милостивый.

Արագ, արդար և ողորմած դատաստան:

I

Պատմութեան նպատակը, անհատական և հասարակական պահանջներ պատմութեան սկզբում, աշխատանքի բաժանման ծագումը նրա դարերում, նորա ընդհատումը և վերականգնումը նոր դարերում, պետական աշխատանքի բաժանումն Անգլիայում, տնտեսական նիւնաբերութիւնները ուսումնասիրութիւնը տասնևութերորդ դարում, Մանտեքիեօի և նորա հետեւողների մշակած սկզբունքները, վարչական գործերի բաժանումն Վերոպայում, դատաստանի պաշտօնը և անհրաժեշտ պայմանները: Մանտեքիեօի մտքերի տարածումը Ռուսաստանում:

Ազգերի յասաճադիմութիւնը նորանց կազմող անհատների և հասարակութիւնների պահանջների աստիճանաբար զարգացումն է: Պատմութեան պաշտօնը և նպատակն է—ինչպէս արդի դիտութիւնը բացատրում է—հետազօտել այդ անհատների և նորանցից կազմած րազմատեսակ և բազմաձև հասարակութիւնների (քնտանիքի, համայնքի, զանազան ընկերութիւնների, կրօնի և, վերջապէս, պե-

¹⁾ Այս լուրձի գլխաւոր նիւթ եղել է «Судебные уставы 20-го ноября 1864 г. съ изложениемъ разсуждений, на коихъ они основаны, изд. 2-ое Госуд. концел. С. П. Б. 1867 г.

տութեան—մարդկային հասարակութեան այդ ամենաբարդ կողմնութեան) հոգեկան և ֆիզիքական պահանջների զարգացման օրէնքները:

Մարդկային պատմութեան սկզբում թէ՛ անհատական և թէ՛ հասարակական պահանջներն այնքան պարզ և տարրական են եղել, որ ամեն մի անհատ կամ հասարակութիւն, առանց ուրիշի օգնութեան կամ աջակցութեան, իւր սեպհական ոյժերով լիովին բաւարարութիւն էր տալիս իւր պահանջներին: Անհատը իւր ֆիզիքական զոյութիւնը—կեանքը պաշտպանելու համար և զինւոր էր, պաշտպանում էր իւր անձը ուրիշի յարձակման դէմ, և որսորդ էր, կերակուր էր որսում, որի համար ինքը որսորդական զործիքներ էր շինում, և խոհարար էր, ինքն իրեն կերակուր պատրաստում, և զերծակ էր, որսի մորթուց շոր կարում, տուն էր շինում, բնութեան վրտանդաւոր ոյժերից պատսպարւելու համար: Անգամ իւր մոտաւոր պահանջը, որը պատմութեան սկզբում միայն կրօնի մէջ էր ամփոփւած, ինքը անհատն էր լրացնում, ինքն էր կատարում իւր կրօնական արարողութիւնները:

Նոյն ձևով զործում էր հասարակութիւնը. հոգեւորական դաս էր նա, երբ ժողովրդի կողմից կրօնական արարողութիւններ էր կատարում հրապարակում—զոհ մատուցանում աստուածներին, կառավարչական մարմին էր վարչական զործերում, օրէնսդիր էր, երբ հին սովորութիւններն էր բացատրում կամ այդ սովորութիւններին ոյժ և անխախտութիւն տալու համար զրի էր անցնում նորանց և օրէնսդրութեան և դրական օրէնքների առաջին տարրերը դրոշմում:

Բայց մարդկային անհատին, ինչպէս և հասարակութեան յատուկ է զարգանալը, յառաջ գնալը: Անհատական և հասարակական պահանջներն օրըստօրէ՛ զարդանում են և այնքան բարդւում, որ մի անհատի, կամ մի հասարակութեան համար շատ դժւարանում, նոյն իսկ անկարելի է դառնում միակ իւր սեպհական ոյժերով իւր պահանջներին բաւարարութիւն տալը: Անհատի համար այժմս դրժւար է իւր կեանքի պաշտպանութիւնը. յարձակողները շատ են, ճարպիկ են, իրեն էլ հարկաւոր է նոյն ճարպիկութեան ընտելանալ, սովորել ինքն ապաշտպանութեան արհեստը: Դժւար է դատաւոր լինել, վէճերը շատացել են և բարդւել, նորանց վճռելու

Համար փորձել սովորութիւններէ և օրէնքներէ զիտութիւն է հարկաւոր. դժւար է զինւորական վարչութիւն կազմել, պէտք է ռազմագիտութեան տեղեակ լինել: Մի խօսքով ամեն բան, ամեն պաշտօն հետզհետէ բարդւում է և մի անհատի, կամ մի հասարակութեան համար այդ բոլորը միասին գործելը անկարելի է դառնում:

Անհատի և հասարակութեան իմացողութիւնը (intellect), որը նոյնպէս պահանջների հետ զուգահեռաբար զարգանում է, փորձով համոզւում է, որ շատ բան միասին անելով ոչ մէկը այնքան լաւ չէ դուրս գալիս և այնքան շատ քանակութեամբ, որ պահանջների բաւարարութիւն և աւելի էլ զարգանալու միջոց տալ: Փորձը, մարդկային գիտութեան այդ ամենաճիշդ աղբիւրը, ապացուցանում է, որ եթէ անհատը կամ հասարակութիւնը մի, կամ շատ շատ երկու գործ է կատարում, և համեմատաբար աւելի շատ է անում և արածը աւելի լաւ, աւելի կատարեալ է դուրս գալիս:

Այդ փորձի ազդեցութեան տակ մարդիկ և հասարակութիւնները սկսում են իրենց աշխատանքը—պահանջները լրացնելու միջոցը—բաժանել: Մի գործ ստանձնում են մէկին, միւսը մի ուրիշին: Այդ հանգամանքից ամեն մէկն այնպիսի վարժութիւն և հմտութիւն է ձեռք բերում, որ կեանքի համար աւելի շատ և աւելի կատարեալ մթերք է պատրաստում: Նախնական մի հասարակութիւն բաժանւում և ստորաբաժանւում է բազմաթիւ հասարակութիւնների ¹⁾, որոնցից ամեն մէկը մի առանձին պաշտօն է վարում. մէկը ժողովրդի զինւորական հոգսերը քաշում, միւսը վարչական, երրորդը դատաստանական, չորրորդը կրօնական և այլն: Այդ պատճառաւ յառաջադիմութիւնը աւելի արագ է ընթանում:

Աշխատանքի այդպիսի բաժանման սկիզբը դնում են հին պատմական ազգերը իրանց տնտեսական և մասամբ պետական կեանքում: Վերջին հանգամանքը՝ այսինքն պետական աշխատութեան բաժանումը նոր էր սկսել, բայց նա ընդհատւում է չորրորդ դարից, երբ քաղաքակիրթ աշխարհի վերայ թափւում են զերմանական,

¹⁾ «Հասարակութիւն» մանք անուանում ենք այն կազմութիւնը, որը լատինեօքէն կոչւում է socius և որից կաղմնել է sociologia բառը:

սլաւոնական, մոնղոլական և այլն բարբարոս և վայրենի ցեղերը և մի առժամանակ ընդհատում են քաղաքակրթութիւնը, թէպէտ նորան հարստացնում են և նոր տարրերով:

Չորրորդ դարից մինչև տասնևհինգերորդ դարը, վերոյիշեալ բարբարոս ազգերը նոյնպէս յառաջադիմում են քաղաքակրթութեան ասպարիզում: Նոքա հասնում են այն աստիճանի զարգացման, որ նորից առաջ է գալիս աշխատանքի բաժանման պահանջը, որը մարդկութեան զարգացման մի որոշ աստիճանի անհրաժեշտ պայմանն է:

Պատմութեան նոր տարրերը, Վերդենի զաշնադրութիւնից (943 թ.) յետոյ կազմեած ազգացնական պետութիւնները, որոնք հին պատմութեան անծանօթ էին, նւիրելով իրանց ահագին պետական ոյժերը ազգացնական յառաջադիմութեան, աւելի ևս նպաստում են անհատական և հասարակական պահանջների զարգացման, ուրեմն աւելի լայն ասպարէզ բաց անում աշխատանքի բաժանման:

Աշխատանքի բաժանման օրէնքին ենթարկւում են այժմն ո՛չ միայն ազգերի տնտեսական կեանքը, այլ և հասարակական և մանաւանդ պետական կեանքը, որ հին դարերում զրեթէ չը կար: Սորանում է նոր պետութիւնների առաւելութիւնը. աշխատանքի բաժանման օրէնքը անցնում է պետական գործերին: Վերջիններն ևս զանազան ճիւղերի, զանազան կատեգորիաների են բաժանւում. ի՞նչ հետևանք է ծագում այդ հանգամանքից, մենք վերջը կը տեսնենք:

Պետական գործերի բաժանումն ամենից առաջ կատարւում է Անգլիայում՝ շնորհիւ պատմական բարեպատեհ հանդամանքների, որոնց բացառելը մեր նպատակից դուրս է ¹⁾: Այդ հանգամանքների ազդեցութեան տակ օրրատօրէ պետական օրէնսդրական, վարչական և դատատանական գործունէութիւնները բաժանւում են միմեանցից. իսկ վերջին հանգամանքից առաջ է գալիս օրինականութիւն (loyalite, правоберность) և հասարակական ազատութիւն. մինչդեռ միւս երկրներում այդ բոլորը մի հիմնարկութեան, վարչութեան ձևաբովանդակ են կենտրոնացած և զորանից առաջ էր գալիս օրի-

¹⁾ Այդ հարցը մանրամասնօրէն բացատրել է Մակօլէյիւր «Անգլիական պատմութիւնում»:

նախնութեան և հասարակական ազատութեան բացակայութիւն:

Այդ պատճառաւ տասն և ութերորդ դարում Անգլիան զբաւում է իւր վերայ եւրոպական հասարակութեան ուշադրութիւնը: Եւրոպական ուսումնականներն և քաղաքական գործիչները սկսում են մանրամասնօրէն հետազօտել Անգլիացի հասարակական և պետական հիմնարկութիւնները: Ուսումնականներից մէկը, Ֆրանսիական յայտնի փիլիսոփայ Մօնտէսքիւ (Montesquieu) հիմնաւորապէս ուսումնասիրում է անգլիական հիմնարկութիւնները և իւր ուսումնասիրածը հաղորդում է Եւրոպային: Վերջինի հասարակական հիմնարկութիւնները, ինչպէս նկատեցինք, շատ յեա էին մնացել. եւրոպան տուժում էր այդ ժամանակ «ոստիկանական» անուանւած պետական բեժիմի (կարգ ու կանոնի) տակ. իսկ այդ բեժիմը, ինչպէս յայտնի է, բացասում էր օրինականութեան որ և է տարր:

Մօնտէսքիւի հաղորդած մտքերը մի նոր յայտնութիւն, մինոր Ամերիկացի զիւտ էր եւրոպական հասարակական մտքի համար: Ամենքը հետևում էին Մօնտէսքիւի օրինակին, լուսաբանում նորա յարուցած հարցերը, վերաստուգում նորանց նորանոր հետազօտութիւնների և փաստերի համաձայն: Այդ բոլոր զբաղանական և միտաւոր աշխատութիւնից մշակեցին հետևեալ մտքերը, որոնք մեր օրերում ամեն մի բարեկիրթ պետութեան սեպհականութիւն են դարձել ¹⁾:

1) Ամեն մի պետութեան անհրաժեշտ տարրը նորա ծայր. իշխանութիւնն է (Souveraineté, верховная власть). «պետութիւնը միայն այն ժամանակից կազմւած է համարւում, երբ կազմւած է նորա գերիշխանութիւնը. մինչև այդ ժամանակ պետութիւնը զոյութիւն չ'ունի ²⁾: Այդ ծայր. իշխանութիւնը կարող է մի անձի ձեռքում լինել, ինչպէս է միապետութիւնը, երբ միապետի կամքը ոչ մի բանով սահմանափակւած չէ: Կարող է այդ ծայր. իշխանութիւնը միապետի և ժողովրդի ներկայացուցիչների ձեռքում միասին լինել, ինչպէս է սահմանադրական միապետութիւնը. վերջապէս

¹⁾ Montesquieu, Esprit des lois.

²⁾ Zweck im Rechts—Իւերինդ. ուս. Թարգ. Երես 232:

ծայր. իշխանութիւնը կարող է միմիայն ժողովրդի ներկայացուցիչների ձեռքում լինել (Հանրապետութիւն): Բայց ամեն մի պետութեան անհրաժեշտ տարրը ծայրագոյն իշխանութիւնն է, որին ստորադրւած են միւս բոլոր իշխանութիւնները: Վերջինները ենթարկւում են օրէնքների իշխանութեան, իսկ առաջինը օրէնքից բարձր է (Princeps legibus solutus est):

2) Այդ ծայր. իշխանութիւնը գործում է ստորադրեալ Հիմնարկութիւնների միջոցով. առանց վերջինների առաջինը անկարող է օրէնքով վարել պետական գործերը: Սրինական պետութեան, այսինքն այնպիսի պետութեան, որը իւր գործաւարութիւնը օրէնքներով է որոշում և օրէնքների վերայ Հիմնում, անհրաժեշտ պայմաններն են այն ստորադրեալ Հիմնարկութիւնները, որոնք իրենց իրաւասութիւնը ստանում են ծայրագոյն իշխանութիւնից:

3) Ծայր. իշխանութիւնը չէ կարող կենտրոնացնել պետական գործերը մի ստորադրեալ Հիմնարկութեան մէջ. աշխատանքի բաժանման Հիման վերայ ստորադրեալ բոլոր Հիմնարկութիւնները երեք գլխաւոր ճիւղերի պէտք է բաժանել: Առաջին՝ պէտք է կազմել օրէնսդրական Հիմնարկութիւն—օրէնքներ մշակելու համար: Երկրորդ՝ պէտք է կազմել վարչութիւն (administration), որ իրադրծում է օրէնքների պահանջը, պաշտպանում պետութեան անկախութիւնը և բարօրութիւնը: Երրորդ՝ պէտք է դատաստան կազմել օրէնքների ոյժը և անհատական և հասարակական ազատութիւնը պաշտպանելու և օրինազանցներին պատժի ենթարկելու համար: Պետութեան այդ վերջին գործունէութեան հարցին նւիրւած է մեր այս յօդւածը:

Ուրեմն, դատաստանական Հիմնարկութիւնների պաշտօնը և կոչումն է՝ մարդկային հասարակութեան օրէնքների ոյժը պաշտպանելով՝ պետութեան մէջ անհատական և հասարակական ազատութիւն սահմանել: Միայն օրինապահութիւնը, ինչպէս արդէն Յիցերոնը նկատել էր, կարող է անհատական և հասարակական ազատութիւն պահպանել, իսկ առանց կանոնաւոր դատաստանի՝ չը կայ օրինապահութիւն:

4) Ամեն մի դատարան ունի երկու անհրաժեշտ պայմաններ՝ ինքնուրոյնութիւն և դատական գործերը վարելու համար որոշ

կազմակերպութիւն. ա. դատաստանները պիտի լինին լիովին անկախ, ինքնուրոյն և պետական միւս ստորադրեալ հիմնարկութիւններէ բաժանուած: Ոչ ոք և ոչ մի ոյժ չը պիտի միջամտէ կամ ճնշում գործ զնէ դատաստաններէ վերայ. միմիայն օրէնքների ոյժի վերայ պիտի լինի դատարանների գործավարութիւնը: Բ. Դատաստանը որոշ կազմակերպութիւն պիտի ունենայ, որ զանազան գործերի վճիռ տալու ընդունակ լինի: ¹⁾

Ահա այն հիմնական մտքերը, որոնք օրըստօրէ տարածւեցան Եւրոպայում: Դորանց ազդեցութեան տակ վերանորոգւեցան եւրոպական պետութիւնները և նորանց դատաստանները: Դորանց ազդեցութեան տակ փոքր առփոքր մշակեց օրինական պետութեան (Rechtsstaat) հիմնական սկզբունքը, թէ վարչութեան ամեն մի քայլը օրէնքների հիման վերայ պիտի լինի, թէ պետութիւնը օրինական կարող է համարուել այն ժամանակ միայն, երբ նա ունի կանոնաւոր դատաստան:

Նոյն մտքերը սկսեցին տարածուել և Ռուսաստանի պետական և հասարակական շրջաններում, մեծ մասամբ շնորհիւ Կատարինէ II Կայսրուհու, որը իւր գահակալութեան առաջին տարիներում աշխատում էր իւր միապետութեան մէջ ևս մարմնացնել Մօնտեսքիեօի մտքերը: Սակայն Կայսրուհու ձգտումն ապարդիւն մնաց. ռուսաց հասարակութիւնն այնքան անպատրաստ էր, այնքան յետ էր մնացել, որ մի ամբողջ դար հարկաւոր եղաւ նորան աւելի լաւ դատաստանի պահանջ զգալու համար: Միայն Աղէքսանդր II Կայսրը հաստատ հիմք դրեց այդ նոր մտքերը Ռուսաստանում մարմնացնելու:

¹⁾ Այդ կազմակերպութեան հետ կը ծանօթանանք իւր տեղում:

II

Կատարին, II-ի ձգտումներն և դատաստանական վերանորոգման փորձը Աղեք-
տանդը I-ը, նախադարձութիւններն Հիմնարկութիւնը և նորանց ազդեցութիւնը նա-
հանգական և դաւառական վարչութիւններն վերայ. Բիւրօկրատիայի ազդեցու-
թիւնը, Հին դատաստանի գլխաւոր կէտերը, սկզբնական քննութիւն, դաւառական
դատաստանի վճիռը և նորո վերաքննութիւնը նաշանդական դատարանում. Սենտ-
աը, պետական խորհուրդը և կայսրը իբրեւ դատաստանական տօնաձաններ,
Հին դատաստանի պահապանութիւնները և Նիկիզայոս կայսրը բարենորոգութեան փորձը:

Ասացինք, որ Նւրուպայի նոր մտքերը սկսեցին տարածուել Ռու-
սաստանում Կատարինէ II-ի ժամանակից. նորանից էլ սկսեւք մեր
տեսութիւնը:

Կատարինէ II-ի դահակալութիւնը (1762—1796) ռուսաց
պատմութեան մէջ լաւ դահակալութիւններից մէկն է, համարոււմ,
մանաւանդ առաջին կէտը: Կայսրուհին, ի բնէ օժտւած հարուստ ըն-
դունակութիւններով, ևնթարկւած 18-րդ դարի քննական և փիլիսո-
փայական գրականութեան, մանաւանդ Վօնտէսքիտօի մտքերին, դա-
հը բազմելուց անմիջապէս յետոյ, ցանկացաւ բարենորոգել իւր միա-
պետութիւնը և մանաւորապէս նորա դատաստանական հիմնարկու-
թիւնները: Վերջին մտադրութեան համար նա 1767 թւին մի
ժողով կազմեց ամեն մի նահանգի ազնականների, միջին դասակար-
գերի և զիւղացիների ներկայացուցիչներից: Այդ ժողովը պիտի վե-
րանորոգէր դատաստանական հիմնարկութիւններն և նոր դատաստա-
նադիրք մշակէր: Ժողովի գործունէութիւնը ղեկավարելու համար
Կայսրուհին մի գիրք գրեց «Հրահանգ» (Наказъ) անունով, որում
նա յորդորում էր ժողովին օգուտ քաղել եւրոպական փիլիսոփաների,
մանաւանդ Վօնտէսքիտօի «Օրէնքների ոգի» հեղինակութիւնից.
ինքը Կայսրուհին «Հրահանգի» գրեթէ բոլոր հիմնական մտքերը
այդ գրքից էր քաղել:

Այդ ժողովի գործունէութիւնն ամենալաւ ապացոյց է, թէ որքա՛ն
այն ժամանակուայ հասարակութիւնը անպատրաստ էր Նւրուպայի նոր
մտքերը իւրացնելու: Բարենորոգութեան համար հաւաքւած ժողո-
վի ամենամեծ, գրեթէ միակ ձգտումն էր՝ զասակարգական (соедоб-
нымъ) առանձնաշնորհումներ ձեռք բերել: Այդպէս էլ եղաւ: Փոխանակ
դատաստանական հիմնարկութիւնները վերանորոգելու, նորանք ա-

ռանձնաշնորհո մների հրովարտականքը ձեռքերին՝ ցրեցան իրանց երկիրները:

Իսկ մի անգամ սերմ զցած մոքերը չ'անհետացան. նորանց աւելի զօրեղ պաշտպան հանդիսացաւ Աղէքսանդր I Կայսրը: Առհասարակ յետագայ կայսրերը մեծ համակրութիւնով կրկնում են «Զբրահանգի» մոքերն և զազափարներն և աշխատում են պատուասել նորանց ուսաց կեանքին:

Նոյն մոքերի ազդեցութեան տակ՝ Աղէքսանդր I-ը մտածում է վերանորոգել բոլոր պետութիւնը. իբրեւ այդ վերանորոգութեան առաջին քայլ, 1802 թ. ին սահմանում է նախարարութիւններ, «պետական գործերը, ինչպէս ասած է հրովարտական, գանազան ճիւղերի բաժանելու համար, համաձայն գործերի տեսակին»: Այս խօսքերը արտայայտում են պետական աշխատութեան բաժանման համաշխարհային օրէնքները: Կայսեր նպատակն էր վերջ դնել վարչութեան քառասական դրութեան և պետական գործերն որ և է սխտեմի վերածել: Աշխատանքի բաժանումը սկսում է վերելից. սակայն գաւառներն և նահանգներն նոյն խառնիճազանձ դրութեան մէջ են մնում: Միայն փոքր առ փոքր՝ նախարարութիւնների ազդեցութեան կամ ճնշման տակ՝ նոյն բաժանումները սկսում է և գաւառական գործերում, թէպէտ շատ դանդաղ կերպով: Նապօլէօնեան պատերազմները թող չեն տալիս Աղէքսանդր I-ին սկսած վերանորոգութիւնը շարունակելու: Միևնոյն ժամանակ յառաջադէմ և լուսաւորւած խորհրդատուներին փոխարինում է պատմաբան Արամզինի յետադէմ կուսակցութիւնը, որին յաջողում է համոզել կայսեր, թէ նորա մտադրած բարենորոգութիւնները հակառակ, նոյն իսկ վնասակար են ուսաց ոգուն և պատմութեան: Դորանից յետոյ գրեթէ ընդհատւում է վերանորոգութիւնների ձգտումը ուսաց պետական կեանքում մինչև Աղէքսանդր II կայսեր ժամանակ:

Աղէքսանդր I-ի կիսաաբարենորոգութիւնը մի հետք է թողնում, որը խոր ազդեցութիւն է անում պետական բոլոր հիմնարկութիւնների վերայ: Նախարարութիւնները, կենտրոնացնելով իրենց ձեռքում գրեթէ պետական բոլոր գործերը, ներմուծում են բիւրօկրատիական սխտեմ բոլոր հիմնարկութիւնների մէջ: Յետագայ գահակա-

լուծիւնը աւելի ամրացնում է նոյն սխտեմը և այդ բոլոր տարրերից կազմւում են այն բոլոր «Հին» կարգ ու կանոնները, որոնց վերանորոգելու առաջին հիմնաքարը դնում է Աղէքսանդր II կայսրը:

Նոյն բիւրօկրատիական ձեւից զերծ չը մնացին և դատաստանական հիմնարկութիւնները, որոնց ողուն բոլորովին խորթ է վարչութեան այդ ձևը: Այդ ժամանակում հետեւեալ դատաստանական կարգ ու կանոններն ենք զանում ամբողջ Ռուսաստանում:

Ներքեւում ամենաստորին աստիճանը կազմում է զաւառական դատարանը. դատաւորի պաշտօնը մեծ մասամբ տալիս էին պատերազմներում վիրաւորւած և զինւորական ծառայութեան համար այլ ևս անպէտք սպաներին (օֆիցերներ), որ դորանք մի կերպ իրենց ապրուստը հայթհայթեն: Սակայն նորանք ստանում էին տարեկան 112 ռ. ոսծիկ: Պարզ է, որ դատաստանը պէտք է եկամուտի մի աղբիւր դարձնէին. այդ պատճառաւ դատարաններում վերին աստիճանի տարածւած էր կաշառակերութիւնը, որի դէմ շատ անգամ մաքառում էր Նիկողայոս I-ի բարկութիւնը, սակայն մեծ մասամբ անօգուտ:

Սկզբնական քննութիւնը, որը դատաստանի համար ահադին նշանակութիւն ունի, իսկ այն ժամանակ ևս աւելի ազդում էր վճռի վերայ, ամբողջապէս ոստիկանութեան ձեռքին էր, որի քննութեան սովորական ձևը հետեւեալն էր: Նախ և առաջ բանտը զցել այն բոլոր անձանց, որոնք նորան կասկածաւոր են թւում, կամ որոնցից որ և է ակնկալութիւն ունի: Յետոյ սխալում է քննութիւնը: Ամեն տեսակ ճնշում, ծեծ (забывѣніа) զործ էր դրւում, որ «ծիշը» վկայութիւն տան. շատ անգամ ամբողջ գիւղեր ենթարկել են այդպիսի ծեծի:

Այդ ձևով հաւաքւած տեղեկութիւնները ոստիկանութիւնը արձանագրելով՝ զործը ուղարկում էր դատարան:

Գաւառական դատարանը կարող էր լրացուցիչ քննութիւն պահանջել, որը կրկին ոստիկանութեան ձեռքով էր կատարւում. ուստի ոչինչ ազդեցութիւն չէր կարող ունենալ, որ վճիռը աւելի արդար լինի: Դորանից յետոյ դատարանը առանց մեղադրեալի ներկայութեան, միմիայն գրաւոր տեղեկութիւնների հիման վերայ, վճռում էր զործը, եթէ թեթեւ քրէական յանցանք էր. եթէ յանցանքը ծանր էր, այն ժամանակ զործը ուղարկում էր նահանգական դատարան իւր

Պարծիքով հանդերձ: Դաւառական դատարանի վճիռը իսկապէս կայացնում էր քարտուղարը, որը միայն օրէնքների տեղեկութիւն ունէր, ուստի և գործի տէրն ու իշխանը լինելով, որ կողմը կամենար, այն կողմն էլ շուռ կը տար նրան:

Նահանգական դատարանը նոյնպէս իրաւունք ունէր լրացուցիչ անօգուտ տեղեկութիւններ պահանջել (կրկին նոյն ոստիկանութեան ձեռքով): Դորանից յետոյ նա վերջնական վճիռ է կայացնում: Սակայն՝ եթէ վճիռը միաձայնութիւնով չը կայացաւ, կամ նորան նահանգապետը չը հաստատեց, գործը ընկնում է Սենատը, ուր նոյն ձևը, նոյն կարգ ու կանոնը և նոյն հետևանքը կարող է լինել: Սենատից էլ յետոյ գործը ընկնում է պետական խորհուրդը և մինչև անգամ ամեն մի գործ կարող է մինչև կայսեր հասնել: Նրբեմն տասնեակ տարիներ գործը քաշում էր, իսկ մեղադրեալը բանտում փտում: Պատահել են դէպքեր, որ մեղադրեալը արդէն վաղուց մեռած է եղել, բայց գործը իրեն կարգով շարունակել է:

Ահա այն հին դատաստանական կարգ ու կանոնը, որն ամեն բան էր, բացի դատաստան լինելուց: Դժւար է թւել նորա պակասութիւնները, քանի որ իբրև դատաստան՝ գրեթէ ոչ մի արժանաւորութիւն չունէր:

1) Այդ դատաստանը կարծես ժողովրդի համար չէր, սկզբից մինչև վերջը ծածկւած զաղանխութեան քօղով, թէ՛ մեղադրեալի և թէ՛ հասարակութեան համար. առաջինը չը գիտէր և չէր էլ կարող գիտենալ, թէ ի՞նչպէս են բննում և վճռում նորա գործը, շատ անգամ նորա կեանքի և մահուան հարցը, իսկ վերջինը—հասարակութիւնը, անկարող լինելով ստուգել, թէ ինչ ձևով մարդու և հասարակութեան իրաւունքները պաշտպանում են դատաստանում, չէր կարող նորան հաւատ ընծայել. այդպիսի դատաստանից կամ խուսափում էր ժողովուրդը, կամ վերին աստիճանի անտարբեր մնում:

2) Բայց այդ դատարանների ամենամեծ պակասութիւնը այն էր, որ նոքա ոչ մի ապահովութիւն չէին տալիս անձնաւորութեան, որ անմեղը կարող անար իւր անմեղութիւնը հաստատել. մենք վերջը կը տեսնենք, որ մարդու անձնական և հասարակական իրաւունքները պաշտպանելը մի դատաստանի առաջին և

ամենազլիտաւոր պարտաւորութիւնն է. եթէ զատաստանը այդ ապահովութիւնը տալու անընդունակ է, նա զատաստան չէ:

3) Այդ զատաստանը ներկայացնում է, ասում է մի հեղինակ,¹⁾ մի մեռեալ, անկենդան կանցելլարիական մեքենայ, որը չը դիտէ յարմարել անհատական մեղաւորութեան և որոշել նրան միւս տարրերից. ամեն մի յանցանք միեւնոյն չափով էր չափւում:

Այդ տեսակ զատաստանը, որը խառնեաժ էր միւս վարչական մարմինների հետ, որն ամփոփում էր ամեն տեսակ սկզբունքներ, հին թէ նոր, երբեմն միմեանց հակասող, որն անկասութեան և ինքնուրոյնութեան հետքն անգամ չէր ներկայացնում, այդպիսի զատաստանը ինքն իւր առաջին զատապարտողը պիտի լինէր:

Նիկողայոս կայսրը, որի տաք բնաւորութեան և ոգուն հակառակ էր ամեն մի ծուռ բան, մանաւանդ զատաստանական զեղծմունք, շատ անգամ նկատում էր այդ բոլորը, բարկանում էր, ինչպէս ասում է Ախակովը «ցարին յատուկ բարկութեամբ», բայց անկարող էր ոչնչանցել այն անարդարութիւնը (неправда), որը տիրապետում էր զատաստանների մէջ: Ամբողջ զատաստանական սիստեմը վարակեաժ էր այդ անարդարութիւնով. հարկաւոր էր բոլորովին վերանորոգել նորան: Բայց այդպիսի արամատական վերանորոգութեան արամադիր չէր Նիկողայոս I-ը: Այդ վերանորոգութիւնը կատարեց ի Տէր հանդուցեալ Աղէքսանդր II կայսրը, որի բարենորոգութիւնը զարադլուխ է կազմում ռուսաց նոր զատաստանական պատմութեան:

¹⁾ Фойницкий—Курсъ Угол. Суд.

III.

Արմատական բարենորոգութիւնների պահանջը Ռուսաստանում: Ճորտութիւնը և նորանից ծագած չարիքները, ճորտերի ազատութիւնը, Բարձրագոյն Հրամանը պետական խորհրդին, վերջինի մշակած «բնդհանուր կանոնները», դատաստանական մասնախմբերի գործունէութիւնը, նորանց մշակած կանոնադրքերի վաւերացումը, 1864 թ. նոյեմբերի 20-ի հրովարտակը, նոր դատաստանի սկզբունքները, անհատի իրաւունքների պաշտպանումը: Քաղաքացու իրաւունքները Յռնաստանում և Հռովմում: Ճորտութիւն, քրիստոնէական եկեղեցու դիւանոր սկզբունքն անհատի մասին, անհատական հաւատարմեան իրաւական պաշտպանումը Անգլիայում, habeas corpus act. նոյն իրաւունքների պաշտպանումն աշխատանքի Ներդրական տէրութիւններում: Աղէքսանդր II կայսեր հրովարտակի (1864 թ. 20-ին նոյեմբեր) մտքերը նոր դատաստանի մասին:

Վերևը նկատեցինք, որ տաան և ութերորդ դարի լուսաւոր դադափարները շարունակում էին աճել և տարածւիլ հասարակութեան մէջ և այն ժամանակ, երբ կարծես ամեն բան դէմ էր նորանց, ամեն բան սարգած էր նորանց տարածման առաջն առնելու համար: Մարդկային դադափարները, երբ նորանք ժամանակի ծնունդ և հասարակական կեանքի պահանջ են, անհետանալ չեն կարող, չը նայած ոչ մի խոչընդոտի: Դատաստանական բարենորոգութիւնը Ռուսաստանում այն աստիճան ժամանակի պահանջ էր, որ անգամ Նիկողայոս կայսրը, ինչպէս նկատեցինք, մի քանի փորձեր արաւ դատաստանական հիմնարկութիւնների ամենազատ, փոռած մասերը նորոգելու: Բայց այդ փոփոխութիւնների ամեն մի փորձը մի բան էր վկայում հասարակութեան և վարչական շրջաններին, թէ մասնաւոր փոփոխութիւնները միայն վատթարացնում են դատարանի դրութիւնը. հարկաւոր է հիմնական բարենորոգութիւններ, և ոչ միայն դատաստանական, այլ և պետական: Դատաստանի պաշտօնը—հաւասար պաշտպանութիւն տալ անհատական և հասարակական իրաւունքներին—անիրագործելի էր մի երկրում, ուր կար ճորտութիւն, ուր տաանեակ միլիոն մարդիկ զրկւած էին մարդկային իրաւունքներից և նորանց անձի և ստացւածքի վերայ ամեն օր ամեն տեսակ բռնութիւն և անիրաւութիւն էր կատարւում: Հարկաւոր էր առաջ այդ հիմքը մաքրել, նախապատրաստել այն պարագաները, որոնք միայն կարող են ապահովանել արդար դատաստանի գործունէութիւնը: Առաջ հարկաւոր է

մարդոց տալ մարդկային իրաւունքներ և յետոյ մտածել այդ իրաւունքների պաշտպանութեան վերայ:

Ահա զայիս է 1861 թւի փետրւարի 19-ի մեծ բարենորոգութիւնը. բարեյիշատակ Աղէքսանդր II կայսեր կամքով ճորտերը, մօտերեք հարիւր տարի մարդկային իրաւունքներից զրկւած, այժմ ազատութիւն են ստանում ¹⁾, վերահաստատուում են նորանց մարդավայել ապրելու պայմանները: Դորանից յետոյ հին դատաստանը, որը մարդկային ստրկութեան վերայ էր ձեւած, ինքն ըստ ինքեան մի տաբաժամութիւն (anachronisme) է դառնում:

Փետրւարի 19-ի բարենորոգութիւնից անմիջապէս յետոյ, Աղէքսանդր II Ազատիչ կայսրը իւր բոլոր ուշադրութիւնը դարձնում է դատաստանական հիմնարկութիւնների վերանորոգման գործին: Նոյն տարւոյ հոկտեմբերի 23-ին բարձրագոյն հրաման է դուրս գալիս պետական խորհրդին, ¹⁾ մշակելու դատաստանական վերանորոգութեան նոր սկզբունքներ և ²⁾ համաձայն այդ սկզբունքների մանրամասն օրէնքներ նախագծել: Առաջին պաշտօնը ստանձնում է պետական խորհրդին, որը այդ ծանր պարտականութիւնը մեծ յաջողութիւնով աւարտում է 1862 թւի սեպտ. 29-ին. նորա մշակած «ընդհանուր կանոնները» անմիջապէս կայսրից հաստատուում են. մնում է երկրորդ և աւելի ծանր աշխատութիւնը—այդ սկզբունքները մանրամասն կանոնների վերածելը: Դորա համար մի մասնաժողով է կազմւում, որը երեք մասնախմբերի է բաժանւում. առաջինը մշակում է դատարանական կազմակերպութեան օրէնքները (учреждение судебных установлений). երկրորդը մշակում է քրէական գործերի դատաստանագիրքը (уставъ уголовного судопроизводства) և երրորդը՝ քաղաքացիական գործերի դատաստանագիրքը (уставъ гражданского судопроизводства): Դորանից յետոյ մի փոքր պառժագիրք է կազմւում հաշտարար դատարաններում գործադրելու համար (уставъ о на-казаніяхъ, налагаемыхъ мировыми судьями): Այդ բոլոր օրինագծերը հետզհետէ ներկայացւում են պետական խորհրդին, որը քննում է նորանց մինչև 1864 թւի նոյեմբեր ամիսը: Նոյն ամիս

¹⁾ ձորտերի ազատութեան հարցին առանձին տեսութիւն կը նւիրենք:

20-ին, Աղէքսանդր II-ը, վաւերացնելով այդ չորս օրինագծերը, օրէնքի ոյժ է տալիս նրանց, որով ռուս Հասարակութեան պարգևում է արդար, ողորմած և ամենքի համար հաւասար դատաստան:

Ապրիլի 4-ի 1884 թ. Բարձրագոյն հրամանաւ նորից հրատարակած վերոյիշեալ դատաստանագրքերին յառկացում է հիմնադրի անունը և հրամայում է կոչել «ԱՂԷՔՍԱՆԴՐ II ԿԱՅՍԵՐ՝ դատաստանագրքերը» — (Судебные уставы ИМПЕРАТОРА АЛЕКСАНДРА II): «Այդ դատաստանագրքերը ձգտում են, առած է 64 թւի հրովարտելով, սահմանել Ռուսաստանում արագ, կանոնաւոր, ողորմած և ՄԵՐ բոլոր հպատակների համար հաւասար դատաստան, բարձրացնել դատարանների նշանակութիւնը, ստանձնելով նորանց հարկաւոր ինքնուրոյնութիւն և առհասարակ ամրացնել Մեր ժողովրդի մէջ յարգանք դէպի օրէնքը, օրինապահութիւնը, առանց որի անկարելի է հասարակական բարօրութիւն. միայն այդ ղեկավար պիտի լինի ամեն մէկի, մեծի թէ փոքրի գործունէութեան»¹⁾:

Մեզ այժմ հարկաւոր է բացատրել, ի՞նչ նոր մտքեր և նոր սկզբունքներ են ներմուծում Աղէքսանդր II Կայսեր դատաստանագրքերը ռուսաց կեանքի մէջ, որո՞նք են նոր դատաստանների գլխաւոր առաւելութիւնները:

Դժւար է թւել նոր դատաստանների բոլոր առաւելութիւնները, այն նոր սկզբունքներն և գաղափարները, որոնք այդ ժամանակից տարածւեցան ռուսաց հասարակութեան մէջ և օրըստօրէ ժողովրդականանում են: Այն առաւելութիւնները, որոնք վերաբերում են դատաստանների կազմակերպութեան, նորանց մասին կը խօսենք իւր տեղին:

Բայց մի յատկութիւն, որը նոր դատաստանների ներքին կողմին է վերաբերում, նորանց սիրտն ու հոգին, նորանց *raison d'être*-ն կազմում, այդ անհատի, անձնաւորութեան իրաւունքների պաշտպանութիւնն է. դատաստանը, պաշտպանելով մարդու օրինական (օրէնքներով ստանձնած) իրաւունքները, միեւնոյն ժամանակ պաշտպանում է մարդու ամենաթանկագին յատկութիւնը, նորա ազատութիւնը:

1) Բարձրագոյն հրովարտակ 1864 թ. նոյեմբերի 20-ին՝ Յարսկոե Սելօ-լում տրւած:

Նոր քաղաքակրթութիւնը ամեն մի անհատի անխոր ապրիւ է հաւասար իրաւունքներ¹⁾, առանց դատարարի և ծագման խորութեան: «Ամեն մի անձնաւորութեան ոլորտը (չորս կողմը, շուրջը), ասում է Նյերինգը, պատած է մի շարք իրաւունքներով, որոնք հետեւում են նորան ամեն տեղ և նորա անձից անբաժանելի են»: Այս յատկութիւնը նոր քաղաքակրթութեան սեպհականութիւնն է և բոլորովին անձանօթ էր հին աշխարհին:

Արդէն Յոյները և մանաւանդ Հռոմէացիք բարձր գնահատում էին այդ իրաւունքները և դատաստանի պաշտօնն էր նորանց պաշտպանել: Աթէնքում այդ իրաւունքները անքան բարձր էին գատում, որ նորանց կորցնելն ամենամեծ զրկանքն էր համարւում. ուստի միմիայն կանոնաւոր դատաստանը կարող էր խլել այդ իրաւունքները: Հռոմում հանրապետութեան ժամանակ այդ իրաւունքները անպիսի բարձրութեան էին հասցրած, որ ամենամեծ եղեռնազորժին, ամենաճանր մեղապարտին անգամ, սկզբնական քննութեան ժամանակ, չէին բանտարկում և շատ շատ տնային բանտարկութեան ենթարկում: Բացի այդ, ամեն մի մեղապարտ դատից առաջ իրաւունք ունէր կամ ընդ միշտ հետանալ հայրենիքից, կամ դատի ենթարկւել: Առաջին դէպքում նա զրկւում էր հպատակութեան բոլոր իրաւունքներից (ignis et aquae interdictio — ջրի և կրակի արդիւումն) և եթէ կրկին վերադառնար հայրենիք, նորան ամենքը կարող էին սպանել:

Բայց այդ իրաւունքները, որոնց բարձրութեան հազիւ կարող են հաւասարել Անգլիացի կամ Ամերիկացի քաղաքացու իրաւունքները, նորանց վայելում էին միմիայն քաղաքացիները, որոնց թիւը համեմատելով մնացեալ ազգաբնակչութեան հետ, շատ աննշան էր: Մնացեալների իրաւունքները կամ շատ սահմանափակ էին, կամ նորանք բոլորովին զուրկ էին որ և է իրաւունքներից, օրինակ՝ ստրուկ-

¹⁾ Այդ իրաւունքները քննւում են պետական իրաւագիտութեան մէջ. ապտեղ թոււմ ենք միայն գլխաւորները: Խղճի և կարծիքի ազատութիւն, մտմուլի անկախութիւն, աշխատանքի, բնակութեան տեղի ազատ ընտրութիւն, զանազան ընկերութիւնների կազմելու թիւ՝ հատարակական և թէ՛ տրեստական շահերի համար, գաղթականութիւն, անգամ հայրենիք ընտրելու ազատութիւն և այլն:

ները, ճորտերը, զիւղացիք և այլն: Բացի այդ մի երկրորդ կէտ կայ, որով հին պատմութիւնը նոյնպէս տարբերուած է նորից: Հին ժամանակներում քաղաքացին իրան հայրենիքից զուրս ոչ մի իրաւունք չէր վայելում և միմիայն կրօնական հայեցողութեան համաձայն մի քանի աննշան իրաւունքներ տալիս էին օտարներին. օրինակ, Հռովմում ալիպիսի իրաւունք տալիս էին օտարներին միայն որ և է քաղաքացու խնամակալութեամբ (patronatus): Ընդհակառակ նոր դարերում օտարի քաղաքացիական (ոչ քաղաքական) իրաւունքները յարգուած են բոլոր քաղաքակիրթ երկրներում:

Վերոյիշեալ անհաւասարութեան, որը հին աշխարհի անկման գլխաւոր պատճառներից մէկն էր, առաջին հարւածը տւեց քրիստոնէութիւնը: Նկեղեցին առաջին անգամ քարոզեց բոլոր մարդկանց հաւասարութեան գաղափարը, թէ ամեն քրիստոնեայ հաւասար է Աստուծոյ առջև և հաւասար պիտի լինի նորանից սահմանած իշխանութիւնների էլ առջև, թէ օրէնքի առջև չը կայ ոչ յոյն, ոչ էլ եբրայեցի: Քրիստոնէութեան առաջին դարերում ալիք գաղափարը մեծ յաջողութեամբ տարածուած էր եկեղեցին բարբարոս ազգերի մէջ: Այդ շարունակեց կաթօլիկութիւնը, որը քարոզում էր, թէ բոլոր կաթօլիկները (սկզբում ամենքը կաթօլիկ էին) հաւասար իրաւունք պիտի վայելեն:

Այդ բարոյական սկզբունքին մնում էր իրաւական ոյժ տալ, որը դարերի ընթացքում կատարւում է Անգլիայում և յետոյ նորանից փոխ են առնում եւրոպացիք:

Երբ անգլիական կառավարութիւնը բռնաբարում էր ժողովրդի քաղաքացիական իրաւունքները, Անգլիայի հողատէրերը և ազնւականները ոտքի կանգնեցին և, օգուտ քաղելով Յովհաննէս Անեկրիի նեղ զրութիւնից, ասիպեցին նորան՝ 1215 թւին մի օրէնք հրատարակել, որը կոչւում է Վրաւունքների մեծ կանոնագիր (Magna Charta Libertatum), որը առաջին հիմք է դնում անհատական իրաւունքների օրինական ապահովութեան: Այդ կանոնագրի 39-րդ յօդւածը ասում է. *nullus liber homo capiatur, vel imprisonnetur, nisi per legale iudicium parium suorum, vel per leges terrae*, — այսինքն, ոչ մի ազատ մարդ (այն ժամանակ ճորտութիւն կար) չի կարող ոչ բռնուել, ոչ էլ բռնատարուել առանց կանոնաւոր դատաստանի վճռի, հա-

մաձայն երկրի օրէնքներին: Այդպէս, միայն կանոնաւոր և ամենքի համար մի դատաստանը կարող է զրկել իրաւունքներից: Այդ 39-րդ յօդաւածը հիմք դարձաւ անգլիական քաղաքացու այժմեան լայն իրաւունքներին և ազատութեան, որը նորա փառքն ու պարծանքն է:

Իայց իրաւական սկզբունքը որոշել, ղեռ չէ նշանակում նորան գործադրել՝ մարմնացնել: Անգլիական կառավարութիւնը 1215 թւից յետոյ էլ շարունակում էր խախտել ժողովրդի իրաւունքները: Միևնոյն ժամանակ ընդհանրական շահերը ստիպում էին ժողովրդին բողոքել այդ ապօրինութեան դէմ. 17-րդ դարում, երբ կառավարութիւնը անընդհատ խախտում էր ժողովրդի դարաւոր իրաւունքները, ժողովուրդը ոտքի կանգնեց և 1679 թւի մարտի 26-ին Կարլոս II թագաւորից նոր պալման առաւ, որը կոչւում է պատմութեան մէջ «Habeas corpus»¹⁾ և որը խիստ միջոցներ է դնում ժողովրդի իրաւունքները պաշտպանելու համար: Այդ «Habeas corpus»-ի համաձայն բանտարկւածը իրեն բանտարկողից պահանջում է մի հրաման, որի համաձայն նա պիտի ներկայանայ դատաւորին: Եթէ բանտարկողը 24 ժամ բանտարկելուց յետոյ չը տայ այդ հրամանը, ինքը մեծամեծ տուգանքների (մինչև 2000 ր.) է ենթարկւում, իսկ բանտապետը պիտի իսկոյն ազատութիւն տայ նորան: Դատաւորը, որին ներկայանում է բանտարկեալը, պիտի իսկոյն քննէ նորա գործը և եթէ նորա դէմ ծանր մեղադրանք չը կայ, պիտի ազատէ նորան կամ վերջին դէպքում երդւեալ դատարանին ուղարկէ: Արգելւած է անգլիական հպատակներին Անգլիայից դուրս ուղարկել. խտրւ աւրգելւած է մի անգամ դատաւորի ազատածին նոյն գործի մասին երկրորդ անգամ բանտարկել: Այդ օրէնքների դէմ գործողը մեծամեծ տուգանքների (յօգուտ բանտարկւածի) և ծանր պատասխանատուութեան կ'ենթարկւի:

Յետագայ գահակալութիւնների ժամանակ այդ իրաւունքները աւելի ամրացան և այժմս նորանց քանդելն երևակայել անգամ անկարելի է, այնքա՛ն նրանք մարմնացել են անգլիացոց կեանքում:

Անգլիական այդ զաղափարները անցեալ դարում ստարածւեցան Եւրոպայում և 18-րդ դարի վերջին քաղաքական շարժումների զրեթէ

¹⁾ Այդ բառերով է սկսւում պալմանադիրը:

գլխաւոր պահանջը այդ էր, — անհատական իրաւունքների պաշտպանութիւնը: Անհատական իրաւունքների ապահովութիւնը հաստատելու համար այդ օրէնքները պետական հիմնական օրէնքների (կամ սահմանադրական) շարքում դասեցին: Այժմ ամեն տեղ հաստատուած է, որ մարդի կամ քաղաքացու այդ իրաւունքները, որոնք անխզելի, անձեռնմխելի (inaliénable) են կոչւում, միայն դատաստանով և այն էլ սովորական (և ոչ արտակարգ) դատաստանով կարելի է սահմանափակել կամ ոչնչացնել: Ուրիշ միջոցներով իրաւունքներից զրկւելը այժմեան մարդուն ամենամեծ տանջանք է պատճառում:

Նոյն սկզբունքը, նոյն մտքերը ռուսաց կեանքին պատճառելու, նորա մէջ մարմնացնելու նպատակ ունէր Աղէքսանդր II կայսրը և նոր դատաստանագրքերի խմբագրողները, քրէական դատաստանագրքի 8—11 յօդաձևները խմբագրելիս: Նոքա բացատրութիւններում մինչև անգամ յիշում են, մասնացոյց են անում Անգլիայի և Ֆրանսիայի օրէնքները: Եւ իրաւ, այդ ձգտումը, այդ սկզբունքը — հաւասարապէս պաշտպանել անհատի օրինական իրաւունքները — արտայայտւում է դատաստանագրքերի գրեթէ ամեն մի բաժնից:

(Կը շարունակւի)

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆԿԱՆ ՀԱՆԴԵՍ. Հրատարակութիւն Մ. Բարխուդարեանցի:

Մօսկա. 1888 թ.

Այս հրատարակութիւնը, որը խոստանում է դառնալ պարբերական, ալն է՝ վեց-ամսեայ, որպէս պէտք է ենթադրել, ծնունդ է առել նման գաղափարից, որպէս և «Մուրճ» ամսագիրը: Ի հարկէ բոլոր միւս կողմերից համեմատութիւնը սուր երկու հրատարակութիւնների մէջ՝ կը լինէր անսուղի: Պ. Բարխուդարեանցի «Հանդէսը» լոկ գրական բնաւորութիւն ունի և ներկայացնում է մի ժողովածու զուտ գրական-վիպական-բանաստեղծական աշխատութիւնների: Այս լուսին մեզ հետաքրքրողը այդ առաջին հատորի բովանդակութիւնը չէ. նորա մէջ կան գրւածներ, որ գրական արժանաւորութիւն ունին, կան որ մեծ արժէք չեն ներկայացնում: Մեզ համար գլխաւոր խնդիրը այդ հրատարակութեան ապագան է, որը կախած է նորանից, թէ մասնաւորապէս ի՞նչ բնավորութիւն պիտի կրէ «Հանդէս»-ը, որպէս զի կոչւած համարւի մեր գրականութեան մէջ մի պակասորդ լրացնելու: Արդ, այդ խնդիրը լուծելու համար, պէտք է իմանալ, թէ մեր աշխարհի հրատարակութիւնները ի՞նչ բանին բաւականութիւն չեն տալիս և չեն էլ խոստանում տալու մօտ ապագայում. միմիայն պակասը լրացնելով կարող է մի հրատարակութիւն ընդհանուրի ուշադրութիւնը գրաւել և համակրութիւն գտնել հասարակութեան կողմից: Մի հրատարակութիւն պակաս է լրացնում նաեւ ալն ժամանակ, երբ մինչև անգամ նման հրատարակութիւններ կան, բայց որոնք խմբագրական պակասութիւններ են ներկայացնում և որոնք ցանկացած ոգով չեն ներշնչւած: Վրական իրար հակառակ չիօլանների բացակայութեան պատճառով հայերիս մէջ, պէտք է կարծել որ «Հանդէս»-ը կոչւած չի կարող համարւել՝ քարոզելու մի ալլ գրական ուղղութիւն, քան ինչ ներկայացնում են մեր բոլոր հայկական թերթերը, որտեղ անխտիր տպւում են ամեն տեսակ գրական ուղղութեան գրւածներ: Իսկ «Մուրճ»-ի երևան գալով՝ վճռում է առհասարակ մի ամսագիր ունենալու խնդիրը: Ուրեմն նաեւ այդ կողմից «Վրականութեան

Հանդէս»-ը կարցնում է իւր նշանակութիւնը: Կարծել, թէ մի ամսագիր, որպէս «Մուրճ»-ը, չի կարող բաւականութիւն տալ բոլոր գրողների պահանջներին՝ տեղի սղութեան պատճառով, դորա դէմ էլ կարելի է ասել, որ «Մուրճ»-ը դատապարտւած չէ հրատարակելու ամիսը 8—10 թերթով, այլ որ նա կարող է մեծանալ մինչ 16 թերթ, միայն թէ լինին բաւականաչափ բաժանորդներ:

Բայց չը նայած աղբ բոլոր ստարկութիւններին, պ. Բարխուդարեանցի «Գրականական Հանդէս»-ը մեր աչքում ունի գոյութեան կատարեալ իրաւունք, քանի որ նա կարող է լրացնել մի մեծ պակասութիւն և քանի որ աղբ պակասութիւնը գրեթէ ոչնչով չեն լրացնում մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները և ոչ իսկ «Մուրճ»-ը: Այդ մեծ պակասութիւնը՝ թարգմանական գրածների բացակայութիւնն է մեր պարբերական մամուլի մէջ, մամուլի, որին օգնութեան հասնել չի կարողանում մեր մատենագրական-թարգմանական գրականութիւնը: Ինչ վերաբերում է «Մուրճ»-ին, մենք զաւօք օրտի լալտարարում ենք, որ չը պիտի կարողանանք թարգմանական վէպեր տպել աչն չափով, որ «սովակա» լրացնելու պարծանքը երբ և իցէ ձեռք բերել չուանք: «Մուրճ»-ը, իւր գրական բաժնում, գրեթէ բացառապէս պէտք է հիւրընկալէ մեր լինքնուրոյն գրողները գործերը:

Ահա ուրիմ, պ. Բարխուդարեանցի «Գրականական Հանդէս»-ը, մեր կարծիքով, կարող է պատաւոր տեղ բռնել հայկական պարբերական հրատարակութիւնների մէջ միմիայն այն ժամանակ, երբ նա իւր գլխաւոր նպատակը չինէ՝ առաջարկել հաշ ընթերցող հատարակութեան թարգմանական գրական ստեղծագործութիւններ: Աւ երբ մարդ մտածում է, որ «Հանդէս»-ը հրատարակում է մեր հայրենի երկրից 5—6 օր հետո, այն ժամանակ թարգմանութեան ծառայելու նպատակը կրկնակի է թւում պարտաւորիչ նորա համար: Իւր առաջին գրքի մէջ «Հանդէս»-ը, արդէն տալիս է մի քանի թարգմանութիւններ: Մենք է միայն, որ թարգմանութիւնները սովազաւում բռնեն նրա մեծագոյն մասը. իսկ եթէ նորա փոքրագոյն մասը ծառայէ խմբագրական և այլ չօղւածների—այդ կը լինէր և օգտակար և ցանկալի:

«ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԻՅ» — (ԻՐ ցիւղողութիւններից): Տիգրան Փիլոսոփանց: Գրքոյկ առաջին: Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանցի, 1888 թ., փոքր թերթ, 4-աճալ, 115 երես. տառ № 10: Գինն է 40 կոպէկ:

Այս գրքոյկը, չառաջաբանից դուրս, պարունակում է երեք պատկեր. 1. Հին Սեբուս, 2. Աշխարհի կէսը և 3. Լիմանապատի Գէորդ ճգնաւորը:

Գրքովի մեծ մասը (67 երես) բռնում է առաջինը, որը և անկասկած ամենից աջողածն է: Պ. Փիրումեանցի զրեւու եղանակը բացառիկ է մեր գրականութեան մէջ և, չտապենք աւելացնել, ամենաաջող եղանակներէն է տխրի նկարագրելու: «Հին Սերունդ»-ը, նախ քան գրքովի մէջ տեղ բռնելը, տպւոց 1887 թւականին «Մշակ» լրագրում, որով հեղինակը կամեցաւ մի ճաշակ տալ ընթերցողներին իւր ուսածքների մասին, որոնք մի քանի հատոր պիտի կազմէին: «Հին Սերունդ»-ի ընթերցումը մեզ վերադէպ աչն ժամանակ աչն տպաւորութիւնն արաւ, որ մենք, առանց տատանման, դեռ ևս աչօր էլ կը կրկնենք, աչն է, որ 1887 թւականին լոյս տեսած բոլոր գրւածներից պ. Փիրումեանցի «Հին Սերունդ»-ը ամենատաղանդաւորն է:

«Հին Սերունդ»-ի մէջ հեղինակը պատկերացնում է Վանի «Չըթչենց» մեծանուն տունը, որտեղ երկու դար շարունակ տիրապետել է հին նահապետական ոգին և որի վերջին նախտոխար ներկայացուցիչն է հաջի Ստեփան աղան: Այդ նահապետականութիւնը արտապայտում է սրտի կատարեալ մաքրութեամբ, բարեխիղճ հետեողութեամբ Սուրբ գրքի մէջ չափաւոր թարգմանութեան, ամեն բանում երեացող երկիւղածութեամբ Աստուծոյ առջև, ներքին միտքարութեան զգացմունքով՝ աղքատներին և թուլերին օգնելու ժամանակ, պատկառանքով դէպի մեծերը, սրտի բարութեամբ և ներողամտութեամբ դէպի ուրիշների սխալները, արդար հոգու անդորրութեամբ, անորոտունջ լինելով իւր վիճակից, աննախանձութեամբ դէպի ուրիշը և աչն և աչն:— Հեղինակը ներկայացնում է Ստեփան աղային սորա ութսուն-ամեալ ծերութեան ժամանակ, երբ նա արդէն հեռացած էր շուկայի գործերից և երբ ուրեմն նա իւր կեանքը կարող էր վարել բոլորովին համեմատ իւր ցանկութեան, համաձայն իւր ներքին կրօնական հաւացքների: Տաղանդ է պահանջւում ներկայացնել մի աղայիսի ծերունու հոգեկան զրոյթիւնը և տաղանդ՝ աղայիսի մի անվրդով կեանքի համար հետաքրքրել վիպասը ընթերցողին: Պ. Փիրումեանցը աչղ կատարում է մի ձևով, որի մէջ մենք ուղիղ նկատում ենք վարպետի զրիչ: Նա հատկանում է ոչ միայն ներկայացնել ճիշտ կերպով, աչ և ստիպել ընթերցողին թափանցել աչն ծերունու հոգեկան աշխարհը, հասկանալ և համակրել նորան: Ընթերցողը մի առ ժամանակ մոռանում է ներկայ աշխարհականութիւնը և ապրում է աչն կրօնական աշխարհում, որի մէջ ապրում էր Ստեփան աղան: Հեղինակը իրաւունք ունի բարձր գնահատել Ստեփան աղայի տխարը մեր կեանքում, որովհետև աղքատ հահապետական մարդը ունէր հաւատ, որից զուրկ էին նորա միւս եղբայրները՝ Պետրոսը և Պողոսը, որոնց կեղծութիւնը և հոգու ծռութիւնը չէր կարելի աւելի լաւ ցոյց տալ, քան նոցա դէմ լանդիման կացուցանելով Ստեփան աղայի հոգու մաքրութիւնը: Այդ Պետրոս և Պողոս աղաները Ստեփան աղայի եղբայրներն են, բայց անսոք բոլորովին աչ ողով՝ շահամուրթեան, կեղծաւորութեան ողով: Աղղասէրներ են, որոնցից եթէ աղղը աղատէր, փրկւած կը լինէր:

Գրքակիր երկու միւս պատկերներից մէկում ներկայացրած է Զաքար աղայ Կորէժեան անունով ճարպիկ և արիւնարբու մէկը, որը տաճկաց Գա-տական ասեանի ծառայողի պաշտօնը տասնեակ տարիներով գործ է դնում միմիայն մի նպատակով՝ կաշառք առնել դատարանին դիմող մարդկանցից և, նպատակին աւելի լաւ հասնելու համար, խճճելով բոլոր գործերը, թա-կարդի մէջ պահելով արդարադատութեան դիմողներին: Նոյն ալի Զաքար աղան դառնում է թաղական խորհրդարանի անդամ հէնց աչն ժամանա-կից, երբ 1860 թւականի Սահմանադրութիւնը ներմուծեց Վասպուրական, աչն է 70 թւականներից. ալի պաշտօնում, միշտ վերընտրւելով, Զաքար աղան մնում է ամբողջ 12 տարի: Իբրեւ ազդեցիկ մարդ, նա ընտրւում է նաև իւր թաղի եկեղեցու երեսփոխ և «աչնպէս լոպկեց, կողապեց եկե-ղեցու զրամները, որ բիչ էր մնում նրա սուրբ սպասներն էլ ծախէր»: Աւ ալի մարդը ամեն օր ժամ էր դնում ու ջերմացնում աղօթում...

Ալի փոքրիկ պատմութեան վերջը կազմում է խօսակցութիւն վիմար, բալց և մեծամիտ մէկի հետ՝ վախճանւած Զաքար աղայի լուղարկաւորու-թեան ժամանակ: Պ. Փիրումեանցը չէր կարող իւր արհամարանքը գէպի հանդուցեալ հարստահարողի դազաղը աւելի ուժեղ կերպով չալանել, քան իւր պատմութեան վերջում մոռանալով նորան և զրադելով ալի հոտս ե-րխտասարդի հետ, որին վանցիք անուանում էին «Աշխարհի կէս», աչնքան նա «գիտուն» էր: Բալց անհասկանալի է, թէ ինչո՞ւ ալի պատկերը պէտք է կրէր ալի պատահական լուղարկաւորողի մականունը:

Երբորդ պատկերում, որ կրում է վերնագիրս «Վիմ անապատի ճգնա-ւորը», հեղինակը առաջ է բերում Մանուկ աղայ անունով չառախօս մարդու մի տիպար, Վասպուրականի գիւղական ուսուցչի գրութեան մի նկարագրութիւն չանձին Մեկրոն վարժապետի և վերջապէս Վիմ անապա-տի վիտուն տարի առաջ վախճանւած Գէորդ ճգնաւորի մասին ժողովրդի բերնում պտըտող աւանդութիւնը:

Քանի մի խօսք ես հեղինակի լեզուի մասին: Ննթարիւելով տաճկա-հալերի բնորոշ ազդեցութեան և գտնելով նորա մէջ ինչ ինչ առաւելու-թիւններ, հեղինակը մշակել է մի լեզու, որ և լալս և լալնկոյս Ախուրեանի գրական լեզուները իրար հետ շաղկապում է: Ալիպէս է, որ նա գործ է ածում՝ մարդու մը, աղալի մը, գի, գորս, հարցուցի ե ալն, ալ նաև՝ պ աղ խօսակցութիւն և ալն: Մենք համոզւած ենք, որ ալի դարձւածները և առ-հասարակ բարբառների իրար հետ ալի ձեով խառնելը հեղինակը ինքր կը թողնի ոչ ի վնաս գրական լեզուի զարգացման: Յամենաչն դէպս պէտք է թողնել գորս, գալն և նման խորթութիւնները: Բալց և միւս կողմից մենք համոզւած ենք, որ հալիւ թէ պ. Փիրումեանցի լեզուն ներկայացնէր աչն ճոխութիւնը և գեղեցկութիւններից չառելը, եթէ նա քանի մի տարի անցրած չը լինէր հայրութեան սրտին մօտիկ մի քաղաքում, որպիսին է Վանը:

Քամալեանց Ս. «ՆՈՎԻՆԱՐ» (Հէքիաթ): Տփլիս, տպարան Ռո-
տինեանցի, 1888 թ. ութնամիս, 79 երես, տառ № 12. Գինն է
20 կոպէկ:

Մեր գրականութիւնը, քանի ժամանակից ի վեր, սկսել է հարստանալ
ժողովրդական հէքիաթներով: Այդ հէքիաթները երկու ձևով են առաջարկ-
ւում հառարտութեան՝ որպէս հում նիւթ և որպէս գրականագէտ մշակած
ժողովրդական բանաստեղծութիւն: Ներկայումս, մեզ մօտ, առաջին տեսա-
կի մէջ զիջաւոր աշխատողն է պ. Տիգրան Նաւասարդեանցը, երկրորդ տե-
սակի մէջ մինչև այժմ փայլել է պ. Ղազարոս Աղապեանցը՝ պատմողը («Անահիտ»)
և «Տօրք Անգեղ» հէքիաթների: Պ. Տ. Նաւասարդեանցը, որպէս կա-
տարեալ բերան ժողովրդի, մեզ հաղորդում է ժողովրդի պատմածը, ա-
ռանց մի կէտ անգամ փոխելու եղածի մէջ. նա նիւթ է տալիս բանասե-
րին, գիտնականին, բանաստեղծին. պ. Աղապեանցը լսածը կամ կարդացածը
փոխախտւում է, որպէս նորա գեղարվեստական ճաշակը թելադրում է, ժո-
ղովրդական հէքիաթը դարձնում է բանաստեղծի լօրինածը և մոցնում
նորան գեղեցիկ գրականութեան մէջ:

Պ. Քամալեանցը, իւր «Ծովինար»-ով, տալիս է մի հէքիաթ այդ վեր-
ջին տեսակից: Գա մի պատմութիւն է՝ սկզբում սղաժարդու ղխմակով մի
«հրաշք» թագաւորաւն աղջկայ, որը սարսափ է տարածում ամբողջ տիե-
զերքի վերայ, չաղթում է և անխնայ կտորում նորա հետ մրցութեան
դուրս եկողներին: Աղջիկը սրտնում է քաջ սղաժարդու, որ նորան մարդու
գնաց, բայց իւր լալի դ մարդ չի գտնում: Հաջորդ տեսանալով՝ նորան նախ-
րում է մի աղջիկ, որի գրախառնման սիրունութիւնը ամեն քաջ իշխանի
կարող էր հրապուրել՝ այն ճաշակաւ համար: Աղջիկը, ամենալին իրականացելով,
իւր հրեղէն ձին նստած, ամպերի վերայ խաղալով, գալիս էր իր գրախոսու-
նման աղջուն աղջկութեան: Գալ ու գնալու ժամանակ նորա սահելի «ծղր-
տոցից» սար ու ձոր զղրդում էր, գետերը որտեղ թողնում փոխաւում էին:
Ախար չէ՞որ Ծովինարը ոչ ալ ինչ է, եթէ ոչ կալծակը: Բայց ասան, աղ
աղին մանկու խիղախում է, նաև Միծիկդար անունով երկտառարդ իշխա-
նը, որը Ծովինարի մասին լսած է լինում և սղւում՝ թէ նորա հետ կուի
մտնելու և թէ նորան չաղթելու և նորան կնիկ ուղելու: Առանց սակաւ
խմանալու թէ, ո՛ւմ հետ է կուում, Մեծիկդարը կուի մտու նորա հետ, որ-
պէս իւր երկու եղբայրներին սղանողի հետ: Բայց կուի միջոցին Ծովինարի
գիմակը բնկնում է և Միծիկդարը, որը միայն աղ աղջկայ ումի մասին էր
լսել, կարողացաւ հիանալ նորա գեղեցկութեամբ, աչքսէս սր, վրձն թու-
ղած, բնկնում է նորա փոսից՝ նորան ձևաք բերելու համար: Արկար ձու-
նապարհադրութիւնից փոս, որի միջոցին նա բարեկամանում է գետի շատ
խմբերի հետ, նա վերջապէս հասնում է Ծովինարի հօր մալաբարարը,
ճիշտ այն ժամանակ, երբ Ծովինարը դուրս է գալիս այն բոլոր իշխանաւն

աղերանց չարքը նախելու, որոնք եկած էին նորա ձեռքը խնդրելու: Շարքի ծաղում գալիս-կանգնում է թուրաթիւն բառ պատշաճին չը գտնելով Միծիկդարը, որին, ի հարկէ, միակ հաւանում է Շովինարը և նորա հետ ամսանաւում: Միծիկդարի ուժը կապանում է եղիլ իւր լարգանքի մէջ՝ դէպի իւր նախնիքը, որոնցից և ժառանգում է նոցա աւեր: Այդ գաղտնիքը ստատահարէն գտնում է մի զիւական պատու կին (պատիկ), որին լաջորում է Շովինարի աչքում կատկածելի դարձնել Միծիկդարի սէրը և փախցնել խաղնոր թաղաւորի աղի մօտ, որը պատահամբ Շովինարի պատկերը տեսած էր և նորա վերադ գծած: Բայց սոց բանը խնայւում է. Շովինարին լաջորում է կրկին իւր մարդու գիրկը հասնել, իսկ պատիկը չարաչար պատժւում է:

Ամբողջ հէքիաթը պատմւած է մի լեզուով, որը դրական սճի հետ միացնում է ժողովրդական բարբառի բոլոր հրաշալի հարստութիւնները թէ՛ բառերով և թէ՛ դարձածներով: Արձակի հետ խառը կան շատ կտոր: ստանաւորների բարմարեցում հէքիաթի բնաւորութեան և բառականին աջողած, թէպէտ և ոչ. Ազապանը մեզ բնակացիս է լաւագոյնին:

Հեղինակը չի ստում մեզ, թէ որոնցից է քաղել իւր հէքիաթը, միայն թէ հէքիաթի մի տեղից (երես 57) խմանում ենք, որ դա՛ Ուտիպոց (որոնցից ալում Նուխալ գաւառի Նիմ և վարթաշէն մեծ գիւղերի բնակիչներն են մնում) հէքիաթ պէտք է լինի, քանի որ Միծիկդար ուտիպէն նշանակում է «կրտսեր տղա» և որ ալը երկրի «Գէօփուր-գալա» կոչւած աւերակներին կից Ղլղալաւի (Աղջկաբերդ) կոչւած տեղ կա: «Վալընդուր» անունից էլ երևում է, որ ալը ճիշտ ենթադրութիւն է, քանի որ խաղնուրցիք հնումը լեզգի կամ ալ լեռնարձաձիներին էին անուանում, որոնք մօտ են Ուտիպիներին: Մենք խորհուրդ ենք տալիս մեր հէքիաթարաններին գլուածքի ըսկրպրում բաժանել պատմած հէքիաթի աղբիւրը և թէ պատմածը որքան հաւատարիմ է ժողովրդական սուանդութեան: Այդ խմանալը հարկաւոր է աւելի քան մի տեսակէտից:

Շովինարի նման հսկալ ուժի տէր էակի «ծղրաւը» աչքի ընկնելու չափ անբնական է թւում: Եթէ Շովինարը կալծակն է՝ նորա ձալնը՝ որոտմունքը—չի կարելի ծղրաւուն նմանեցնել:

Միծիկդարի սիրապաշտութիւնը Շովինարին (երես 26)

«Թէ որ դու ես քունս կորսող Շովինար,

Աղջի, ես եմ սիրող կարօտ Միծիկդար»

հասկանալի է լինում միմիայն երես 33 կտրուելով:—Դեկրի խմբերի նկարադրութիւնը թւում է մեզ շատ աջողած, նա մանսւանդ որ նոքա երկկազալի չեն դուրս բերւած:

Բայց և աչնոյէս, մի թեթև սրբազրութիւն ես, ապստալի համար, աւելորդ չէր լինիլ: Ամենեւին հարկ չը տեսանք սահմանի տեղ՝ սա ր հա տ ա տիւլ

(եր. 5 և չարուն.), աղբիւրի տեղ՝ աղբւրի (18 և չարուն.) և ալն: Նկատենք, որ թշերը (թէկուզ պառաւի) չեն լապոռոտում (եր. 34): Մի փոքրիկ բառարան էլ աւելորդ չէր լինիլ. համաձայն-
ւեցէք, որ ամեն մի հալ պարտական չէ խմանալ, թէ թոռո՛ւ անձ-
րեն է, որ աշխարհքի տոռո՛ւ՝ աշխարհքի ծալքն է, որ լամուկ՝ լակոտ է
նշանակում և ալն էլ «թուրքի» լակոտ, որ տալսը՝ տարիքն է, որ բախ-
րան՝ եղջերուն է կամ մարալը:

Մեծ հաճոյք կը զգան ընտանիքներում, եթէ մի հալը, մի մալը վերց-
նեն և կարգան ալդ հէքիաթը 10—14 տարեկան երեխաների մօտ: Յար-
մարաւոր նկարներ՝ շատ իրանց տեղում կը լինէին:

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՅ: ՕՐԱՅՈՅՑ 1889 թւականին Փրիստոսի և աղ-
գալին ՌՅԼԸ—1338 (երրորդ տարի): Թիֆլիս. տպարան Յ. Մար-
տիրոսեանի. 16-աժալ, 383 երես, տառ № 10. գինն է 20 կոպ.

Բացի օրացույցներին չատուկ բովանդակութիւնից, այս օրացույցը ունի
մի «Յաւելւած», որի մէջ մտնում են բազմազան տեղեկութիւններ (Առաջին
մասն)՝ վերաբերեալ զպրոցական տօներին, երկրադնդի ընդհանուր վիճա-
կագրութեան, աշխարհագրութեան, լրագիրներին, զրամներին, Ռուսաց Կալ-
սերական տան, Ռուսաստանի բնակիչներին, Կովկասի և Անդրկովկասի մի
քանի տեղերի աշխարհագրական դիրքին: Երկրորդ մասը բովանդակում է
տեղեկութիւններ՝ վերաբերեալ հաղորդակցութեան միջոցներին: Երրորդ
մասը ժամանակագրութիւն է համաշխարհային պատմութեան ամե-
նանշանաւոր անցքերի, Հալոց պատմութեան, սուրբերի և հին հալոց
թագաւորներին: Նոյն ալդ մասում կալ ցուցակ նշանաւոր օրերի՝ Կովկասի
և Անդրկովկասի վերջին 100 տարւոյ պատմական կեանքից: Զորքորդ մասը
տալիս է տեղեկութիւններ Հալոց հինգ թիմերի կրթական դործի մասին:
Հինգերորդ մասում զետեղած է մի տեղեկատու Թիֆլիսի մասին, թէ ան-
ցեալից և թէ ներկայից, նորա աջմեան վարչական կազմով և հիմնարկու-
թիւնների մասին տեղեկութիւններով հանդերձ: Վեցերորդ մասը խօսում է
սոսոյջապահական կանոնների մասին. եօթներորդ մասը պարունակում է
մի ցուցակ սրական և իլական անունների, մուրհակի օրինական կարգը,
մի ոտանաւոր Սիւլիւկի և ցուցակ՝ կազմողի անցեալ տարւոյ օրացույցի բո-
վանդակութեան:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, պ. Յ. Նաղարեանցի Օրացույցը լիքն
է տեղեկութիւններով, որոնք ամենայն դէպքում մարդուս հարկաւոր
են և, ալդ կողմից, նա բարձր է ուրիշ շատ օրացույցներից: Բաց
նոյն իսկ այն պատճառով, որ մենք ցանկանում ենք ալդ օրացույցի տա-
րածելը ժողովրդի մէջ, մեզ վերաջ անախորժ տպաւորութիւն արաւ ալն-

տեղ զետեղած (երես 5—6) «Էֆեմերոսիի գուշակութիւնը 1889 թւականի համար»։ Յոյս ունինք, որ հետեւեալ տարիներում պ. Նաղարեանցը աղբ բաժինը իւր Օրացուցից բոլորովին դուրս կը գցի, համաձայնելով մեզ հետ, որ թէ աղ և թէ նման գուշակութիւնները ոչ միայն գիտութեան, այլ և նոյն խոյ հալի առողջ գատողութեան բարի համբաւի համար վիրաւորական են։—Տօմարագիտութեան չը նւիրած ընթերցողին անհասկանալի է երես 7 զետեղած տառերի և բառերի նշանակութիւնը։ Երես 87—88 թւանշանները անհաստատ են և մի քանիսը սխալ. օրինակ, իբր թէ 1000 հողուց մէկը հասնում է 100 տարեկան հասակին։ Եւ առհասարակ, իբր տատիտիք, ալլոսդ բերած թւանշանները գին չ'ունին։ Փոխանակ ընդհանուրից խօսելու, աւելի օգտակար կը լինէր ճիշտ թւեր բերել ստատիստիքապէս հետազօտած աղբերի կեանքից։—Երես 99-ում հաջ Լուսաւորչականների թիւը որոշում է 634 հազար հողի, իսկ Նկատողութեան մէջ առնում է, թէ «Էնրջին վիճակադրական տեղեկութիւններից երևում է, որ Ռուսիայի հացոց թիւը այժմ հասնում է 1 միլլիոնի»։ Իսկ ինչ թիւ է առաջինը և ձրտեղից է վերցրած երկրորդը։—Երես 175-ում Աղամի մահը որոշում է 4578 թ. Քր. առաջ, որպէս Ջրհեղեղինը՝ 2253 թ. մինչդեռ ամենքի համար արդէն պարզ է, որ այն պատմութիւնը, որի մէջ Աղամը և Ջրհեղեղը կարող են պատմական եղելութիւնների տեղ ընդունել, այլ ևս պատմութիւն չէ և ոչ նորա հեղինակը՝ պատմաբան։—Օրացուցի «առողջապահական բաժինը» սկսում է ոչ դրին հարկաւոր դատողութիւններով, թէ ինչ է ասել ջրի մասին Հիպոկրատէս, Պինտարոս և այլն։ Գորա փոխարէն մենք սպասում էինք գտնել Օրացուցի մէջ տեղեկութիւններ ջրի քիմիական և ֆիզիքական բաղադրութեան մասին, անգամ Կուր գետի և Աւշալալի ջրի՝ վերջերում եղած անալիզների հետեւինքի մասին. իսկ գինու վերաբերեալ հաղարապատիկ աւելի օգտակար կը լինէր Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ վերջերումս եղած ուսումնասիրութեան մի ամփոփ ու խմատալի ղեկուցում տալ։

Պարոն Նաղարեանցի աշխատատիրութեան բարի համբաւից սպասելի է որ ժամանակով, նորա կազմած Օրացուցը Նկատողութիւնների ոչ մի առիթ չի ներկայացնի։ Օրացուցի կազմելուն զբոլած է տեսնում իրան նոյն խոյ գիտնականը և մանաւանդ լուսաւորութիւն տարածել ցանկացողը, այնքան ճիշտ է, որ ոչ մի գիրք աղքատ խուլ անկիւններ չի տեսնում, որքան Օրացուց առած բանը։ Ահա թէ ինչո՞ւ օրացուցները պէտք է աւելի բարձր տեսակէտից քննել, քան այդ սպասելի է նոցա փոքր հաւալից և նոցա, սո. երկուք, անմեղ կերպարանքից։

Վիլիամ Շեքսպիր. «ԶՈՒՐ ՏԵՂԸ ՄԵՆ ԱՂՄՈՒԿ». (կատակերգութիւն հինգ զործողութեամբ). զերմաներէնից հայերէն թարգմանից Յովհաննէս Լալայեան: Թիֆլիս. տպար. Յ. Մարտիրոսեանցի, 1888 թ., քառածալ, 111 երես, տառ № 12. Գինն է 50 կոպ.

Հաղկական բեմը ծանօթ է Շեքսպիրի հետ. նորա վերադ խաղացած են Համլետ, Օթելլո և Արքայ Լիր: Բայց հաղկական գրականութիւնը դեռ ևս գրեթէ ծանօթ չէ նոր դարերի աղջ հզօրագոյն հանճարի թատերական գլուխների հետ. և եթէ չենք սխալոււմ, պ. Մալխասեանցը առաջինն է, որ առեց Շեքսպիրից միտադարձ թարգմանութիւն, աչն է՝ Արքայ Լիր ողբերգութիւնը «Արաքս» վեցամսեալ հրատարակութեան մէջ: Մեր գրականութեան բարեկամներին կարող ենք հաղորդել, որ Շեքսպիրի թարգմանութեամբ գրադարձ է նաև մի երկրորդը, իւր աղջ դործի համար կատարեալ ձեռնհաս հալ գրող՝ պ. Աւետիք Եղեկեան-Պարեան, որի «Համլետ» ձեռագիր թարգմանութիւնը առելի քան մի անգամ կարգացած ենք կամ նորա ընթերցումին ներկալ եղած և որի հրատարակութիւնը, կարող ենք վստահ կերպով ասել, գրական նորութիւն պէտք է դառնի, երբ նա լոյս ընծայել:

Բայց ահա Շեքսպիրի նաև մի երկրորդ թարգմանիչ—Յովհաննէս Լալայեան, որը այսօր հրապարակ է գալիս վերը վերած կատակերգութեան թարգմանութեամբ: Եւ աղջ առաջին փորձով պ. Լալայեանը կատարելապէս հաստատում է աչն կարծիքը, ինչ ունէինք նորա գրական-գեղարուեստական ճաշակի մասին: Մեզ համար մեծ գին ունի աչն հանգամանքը, որ մէկը ձեռնամուխ է լինում մի գրածքի թարգմանութեան՝ բնական հակումով, ունենալով իւր իսկ բնատուրութեան մէջ չափութիւններ, որոնք գրաւում են նորան գէպի որսչ հեղինակութիւններ: Պ. Լալայեանցը, որքան մենք նորան ճանաչում ենք, սիրում է գեղարուեստը նոյն իսկ գեղարուեստի համար, որտեղ և աղջ գեղանիութիւնը արտաշայտի՝ նրկարչութեան թէ անդրիադործութեան մէջ, վէպի թէ կարրիկատուրի մէջ, վեհութեան թէ ծամածուծութեան մէջ: Թարգմանիչների մէջ նա կոչւածներիցն է, թէպէտ և հանգամանքները նորան դեռ ևս թուլ չեն տաւ իւր ձիրքը կատարելապէս արտաշայտելու: Նոյնքան սիրով մենք ողջունում ենք նորա աղջ դեռ ևս ոչ մեծ դործի թարգմանութիւնը:

Բայց և աչնպէս, մի նկատողութիւն: Ինչ միտք ունի ազմեան աշխարհաբարի դարում դործ ածել գրաւարի բոլորովին աւելորդ ձեւերը, քանի որ մեր աշխարհիկ լեզուն ունի նոցա տեղ իւր սեպականք, մեղ աւելի մատչելին և նոյնքան կատարեալը: Ինչո՞ւ որք և ոչ՝ որոնք, ինչո՞ւ ազնուականք և ոչ՝ աղնականներ. բնական է, որ պէտք է ասել՝ խօսիր և ոչ թէ՝ խօսէ (եր. 19), գիշտվ և ոչ՝ գիշտով, բարեկամներ և ոչ՝ բարեկամք, կ'առնես և ոչ՝ կ'առնուտ: Փոխանակ կոռեցան, հաշուեցան, լցուեցան,

պէտք է գրել՝ կռեցին, լցեցին, հաշուեցին: Նմանապէս անհիմն է ասելը՝ սպասածէն ասելի. սխալ է գրելը՝ գրաբառ (պէտք է գրել՝ գրաբար):

Մի վերջին նկատողութիւն եւ: Մեզ մօտ ո՞վ իւր եղբօրը աչապիտի հարց կը տա՞լ՝ «որտեղ է եղբօր որդիս»: Մեզ մօտ եղբօր ներկայութեամբ եղբօր որդի ասելու տեղ, ազգակի նորա տնունն են ասլիս՝ որտեղ է Յովհաննէսը և ալլն, փոխանակ ասելու՝ որտեղ է «եղբօր աղջիկս» (խկապէս՝ եղբօրս աղջիկը), ազգակի հարցնում են եղբօր աղջկա՞ն տնունը:

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ. «ԲՆԱԼՈՐՈՒԹԻՒՆ»: Գերմաներէնից թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան. Թիֆլիս. Մարտիրոսեանցի տպարան. 1888 թ., 490 էր., տառ № 12., զինն է 1 ր. 50 կոպէկ:

Վերնագրից բնթերցողը կարող էր ելրակացնել, թէ Սմալսը գերմանացի է. որպէս զի աղջկաի թիւրիմացութեան տեղիք չը արւի, թո՛ղ բնգոճի աչապիտի մի ձև՝ (բնապիրը անգլիերէն) — Գերմաներէնից թարգմանեց ապ ինչ անձը: Ազգայնապէս ճշտութիւնը պահպանւած կը լինէր, որ ինքն ըստ ինքեան կարեւոր է:

Բնաւորութիւնը մի գիրք է, որը միմիայն մի անգլիացի բաւականաչափ հեղինակութիւն կարող էր ունենալ գրելու: Ոչ մի ազգ աչքքան դարձ չի չինել բնաւորութեան շնորհիւ, որքան անգլիացին և, ազգ խի պատճառով, ոչ մի ազգ աչքքան բնաւորութեան տէր մարդիկ չի ունեցած, որքան անգլիականը: Լսել բնաւորութեան մասին՝ պէտք է ուրեմն անգլիացուց, որպէս ճաշակի մասին՝ Քրտնախոցուց: Եւ բնական է, որ Սմալսի հեղինակութեան մէջ օրինակները զլիաւորապէս վերցրած են Անգլիացի մարդկանցից: Ազգ գիրքը գտտօրարակութեան մի գիրք է՝ ազգ ձեռնգրած, քան գտտօրարակութեան մասին առհասարակ գրածները. օրինակ՝ Ժան Ժակ-Ռուսօն, Հերբերտ Սպենսեր և ուրիշներ: Նորա մէջ չը կա ոչ անալիզ և ոչ սինթէզ, ազգ կա միայն խրատ, սինթէզ, հաստատումն՝ հեղինակաւոր մարդկանց վկայութիւններով վստեայցրած: Ազգ պատճառով ազգեցութիւնը Սմալսի բնթերցումից աչքքան մնալուն չէ, որչափ փիլիսոփայօրէն գրած գտտօրարակութեան գրքերի ազգեցութիւնը: Սմալսից բոլոր օգուտը ստանալու համար, նորան հարկաւոր է ոչ թէ կարգալ և անցկենալ, ազգ նորան տնային պարտաւորանի մշտական սեպականութիւն գտրձնելուց և մի անգամ կարգալուց ըստ՝ ժամանակ առ ժամանակ վերցնել և կրկին ու կրկին կարգալ և ոչ անպատճառ սկզբից, ազգ ո՞ր տեղերը մարդու գիրքին, յապկական արամագրութեան և գէպրին լարմարում են: Բանը նորանումն է, որ ազգ գիրքը, աչգ ձեռն, ինչպէս նա շարագրւած է և աչգ ոճով, որով պրւած է՝ ժամանակակից գրականութեան գտտական գրքերից մէկն է՝ կապում և ուրեմն՝ մէկը աչգ գրքերից, որոնց թարգմանութիւնը պարտաւորիչ է գտում բոլոր գարգացած ազգերի գրականութիւն: Ների համար:

Հեղինակի գլխավոր ցանկութիւնը սա է՝ որ մարդիկ, ինչ գործի և կոչումի տէր և լինին, ամենից առաջ պէտք է կրթին իրանց բնաւորութիւնը համեմատ աջ պահանջների, որ անհրաժեշտ են դարձնում ընտանիքի սրբութիւնը, հասարակութեան անդամների համերաշխութիւնը, տէրութեան քաղաքացիութիւնը: Կարճ խօսած, գիրքը քարոզում է առաքինութիւն, սրտի ազնւութիւն և բարութիւն, առանց հերքելու ոչ գիտնականութեան և ոչ մտաւոր ու ալ ձիրքերի օգտակարութիւնը, որպէս նաև հարստութեան ոգի, բայց որոնք առանց առաքինութեան՝ իրօք որ քիչ արժէք ունին, և նոյնքան օգտակար կարող են լինել, որքան և վնասակար: Պարտաճանաչութիւն—ահա անց գլխավոր բանը, որի շուրջը պէտք է պտտէ կեանքը, նամանաւանդ, որ ալդ լատկութեամբ կարող է փալկել թէ մեծը և թէ հասարակ մարդը:

Սմայսը մի առ մի խօսում է աջ բոլորի մասին, որոնք մարդուս բնաւորութեան վերայ ազդեցութիւն ունին՝ ընտանիքը, ընկերութիւնը, աշխատանքը, արիւթութիւնը, անձնիշխանութիւնը, պարտքի և չխտակութեան գիտակցութիւնը, լրջմտութիւնը, վարւողութեան ձևերը և արւեստը, գրքերի ընթերցանութիւնը, ամուսնութեան ազդեցութիւնը և, վերջապէս, կենսական փորձը:

Թարգմանութիւնը, արւած լինելով լեզուն գիտցող և իւր հակումներով կոչումն ու գրական ճաշակ ունեցող թարգմանչից, որը արդէն անուն ունի վատտակած մեր գրականութեան մէջ՝ ինչ ասել կ'ուզէ, որ լաւ է: Բայց մենք չենք հաւանում չարգելի թարգմանչի հակումը դէպի մի քանի գրաբարիան ձևերը՝ օրինակ մեծ աւ մասամբ, ընտանեաց մէջ և սղն:

Ստացանք Արքունական կալամծների մինխտրի հաւատարմատար Կովկասեան երկրի համար ոլ. դաղանի խորհրդական Իւան Իւանովիչ Տիլիէկից նորա հրատարակած այս երկու մեծ հրատարակութիւնները. «Материалы по изучению быта государственных крестьянъ въ Закавказскомъ краѣ» եւ «Сводъ материаловъ по изучению экономического быта государственныхъ крестьянъ Закавказскаго края» չորս համանման մեծ հատորներից բաղկացած:

Առաջին հրատարակութեան վերնադրի թարգմանութիւնն է՝ «Նիւթեր Անդրկովկասեան երկրի արքունական գիւղացիների տնտեսական դրութիւնը ուսումնասիրելու համար»:

Երկրորդ հրատարակութեան վերնադրի թարգմանութիւնն է՝ «Անդրկովկասեան երկրի արքունական գիւղացիների դրութեան վերաբերեալ ճիւղերի համագումար»:

Պէտք է ասած, որ այս սքանչելի հրատարակութիւնները միմիայն սակաւաթիւ մարդկանց և հատաատութիւնների տեղականութիւն են, ո-

րովհետեւ, ցաւելով պէտք է ասենք, ալդ հատորները սոցազրւած են մի-միայն մի քանի հարիւր օրինակ: Եւ եթէ աւսօր մենք ալդ գրւածների տէրն ենք, դորա համար շնորհապարտ պէտք է լինինք այն հանդամանքին, որ ինքներս եղած ենք հետազոտող մասնախմբի անդամ և, որպէս սոցալիսին, վալերիցինք ձրի տառնալու արտօնութիւնը: Ծախու նոքա չկան ոչ մի տեղ: Այս նշանաւոր հրատարակութիւնների մէջ ամփոփւած նիւթերի մասին խոստանում ենք հետեւեալ անգամ տեղեկութիւն տալ, որպէս նաեւ թէ ինչ զիտաւորութիւնների է հետեւել արքունական կարածների մինիստրի հաւատարմատարը՝ ձեռնարկելով մի աղբքան մեծածախս դործի:

Վերջին ժամին տապանք հետեւալ հրատարակութիւնները:

1) Տիրբան Նաւասարդեանցի «Հալ ժող. հեքիաթները» դ. զիրքը:

2) Կրօնական—Բարդուղիան Խորհրդածութիւններ՝ աստուածամիրութեան, առաքինութեան և բարեգործութեան եռանդ արծարծելու համար: Թարգմանեց գերմաներէնից Գրիգոր Էպ. Ազափիրեանց: Հատոր Բ., Վաղարշապատ, 1888 թ.

3) Նոյնը՝ հատոր դ. Վաղարշապատ 1888 թ.:

4) Քնարիկ մանկական. երգեր, պարերգեր և սոցթքներ փոքրահասակ մանուկների համար. ձաւնադրեց Վաղարու քահանալ Յովսէփեան: Ս. Պետերբուրգ, 1887 թ.

5) Երախալիք. 1882—1887, (պատկերապարտ), Հատուածներ մանուկների համար: Աւաջին զիրք—գարուն. հրատարակութիւն Կամար Տ. Ս. Սարգսեանի. Թիֆլիս. 1887 թ., տպար. Թոմինեանցի:

6) Նոյնը՝ երկրորդ զիրք—ամառ: 1887 թ.

7) Նոյնը՝ երրորդ զիրք—աշուն: 1888 թ.

8) Նոյնը՝ չորրորդ զիրք—ձմեռ: 1888 թ.

9) 1837—1887. Յիսնամուակ Հարց հոգևոր թեմական զպրօցի Երեանալ, Տիֆլիս, տպարան Ս. Վարդանեանի, 1888 թ.

10) Ս. Աբեղեան—Նմուշներ. Շուշի. 1888 թ.

11) Պատկերապարտ Օրացոյց 1889 թ. կաղմեց Ս. Չմշկեանց. հրատարակութիւն «Աղբիւր» ասնապրի:

Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ համարում զետեղւած առաջնորդող լուծածին կը լաջորդէ մի ալ լուծած՝ մարտի համարում—«Մուրճ» ամսագիրը, որպէս զբաղան օրգան—վերնագրով, որունց իրանց տեղը պիտի բռնեն «Կռուակ Հաղոց Սչխարհի» և «Փորճ» ամսագիրները, Մարկոս Աղաբէկեան և Արդար Յովհաննիսեան:

Ամսագրիս «Մուրճ» վերնագրի զեղարուստական նկարը պատկանում է մեր աշխատակից նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանի վրձինին, իսկ նկարը պղծնձի վերաջ փորագրել է պ. Իլիա Մատթոսովիչ, որին, սակայն հարկու-ւոր կը լինի զեռ ևս կլիշէն նրբացնել՝ նկարչի օրինակն աւելի հաւատարմով կերպով արտագրելու համար:

«Մուրճ»-ի աչս առաջին համարը դուրս է գալիս ոչ իւր իսկական երեսի թղթով: Մեր ամսագրի իսկական երեսի թուղթը շատ բաց կանաչ գոյն ունի և պատուէր էր տրւած պ. Տիգրան Նաղարեանցի մօտ: Բաց, դժբաղդարար, աչդ թուղթը չը ստացուց Մօսկուի վարդունի թղթադր-ծարանից: Բանից երեսեց, որ մեզ համար պատուիրած թուղթը նոյն ալիք-ներին է զո՞ գնացած, որպէս և «Աղբիւր»ի թուղթը, որի մասին աչդ ամ-սագրի աչս տարւալ առաջին համարից տեղեկանում ենք, թէ Սև ծովի ա-լէկոծութեան մատնեց:

ՓՈԽՍՏՈՒ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ:

«Մուրճ» ամսագիրը հրատարակելու թուլտութիւն տաճալուն պէս, մենք, որպէս նորա խմբագիր-հրատարակիչ, մշակեցինք մի «Ներքին Կռ-նոնագրութիւն», որոչելու համար մեր չարաբերութիւնները գէպի «Մուրճ»-ի խմբագրութեան ծառ ուղղները և ամսագրի ամեն կարգի աշխատակիցները:

Նա բաղկացած է լողաձներից՝ իրաւունքների և պարտականութիւնների վերաբերեալ, և նոքա ընդհանուր զիտութեան համար չեն նշանակւած, ալ միմիայն «Մուրճ»-ի գործակիցների համար:

Բայց ալ կանոնադրութեան մէջ կա մի լողաձ, որի հետ կարեւոր ենք համարում ծանօթացնել հաշ ընթերցող հասարակութեան առհասարակ և որով պատկարզին մասնաւորապէս: Այդ լողաձով «Մուրճ»-ի խմբագրութիւնը հաստատում է մի փոխառութեան խնայողական Գանձարան, որին պարտաւորիչ կերպով մասնակցում են բոլոր աշն անձները, որոնք որ և է վարձատրութիւն են տաւում «Մուրճ» ամսագրի խմբագրութիւնից: Մասնակցութիւնը կազմում է նորանում, որ խմբագրութիւնը ո՛ւմ ինչ գումար էլ տալու լինի, նորա 4% լիտ է պահում. ալ տուցած գումարները գրում են մեծ մասանի մէջ՝ նոցա աւերի հաշի: Խնայողութեան ընդհանուր գումարը կը լինի 100 ռուբլի, երբ խմբագրութիւնը իւր աշխատակիցներին տւած կը լինի 2,500 ռ. խնայողութիւնը հասած կը լինի 1000 ռուբլու, երբ ժամանակով «Մուրճ»-ը իւր հիմնադրութեան օրից, իւր աշխատակիցներին տւած կը լինի 25,000 ռուբլի, և ալլն:

Խնայած գումարի չափով, «Մուրճ»-ի խմբագրութիւնը կը տալ փոխառութիւն գանձարանին մասնակից անձներին. բայց թէ ի՞նչ կանոններով, ալ դեռ ես չեմ որոշւած: Երբ գումարը կը հասնի մի որոշ միժուլեան, աշն ժամանակ գանձարանի կանոնադրութիւնը կը մշակի ընդհանուր ժողովի միջոցով, իսկ առժամանակ խնայած գումարի գործադրութեան մասին կադրերը վերադաշում է «Մուրճ»-ի խմբագիր-հրատարակչին, որը, սակայն, ալ գումարը կը բանեցնի միմիայն փոխառութեան զխնայողներին և պատասխանատու է գումարների անկորուստ պահպանութեան՝ գանձարանին մասնակցողների աւջի:

Արանով «Մուրճ»-ի խմբագրութիւնը գէթ մասամբ իրաւունքացնում է հաշ գրողների ընդհանուր փոխառութեան խնայողական ընկերութեան գաղափարը, որը նոր չէ պահում մեր կրթւած դասի մէջ և բաժախ խօսակցութեան տարակալ է կողմ մասնաւոր շրջաններում, բայց, որքան մենք գիտենք, երբեք ոչ շատ լուրջ կերպով: Շատ կարելի է, որ ալ ընդհանուր ընկերութիւնը դեռ ես չաւտով չ'իրագործւի, բայց որ «Մուրճ»-ի փոխառութեան Գանձարանը ալ ընդհանուր գաղափարը իրականացնելուն պիտի նպաստի, դուրս մտին չենք կտակածում: Մանաւանդ, եթէ մեր միւս բոլոր խմբագրութիւնները ալ օրինակին հետեւեն և մի քանի տարի գործեն, աշն ժամանակ գործը ընդհանրացնելը կը լինի հեշտ լուծելու խնդիր: Աշն ջերմ համակրութիւնը, որ մեր թէ մօտաւոր և թէ հեռաւոր աշխատակիցներից լողանում են մեզից տաւջին անգամ լզացած և առաջին անգամ իրաւորձած գաղափարին մեզ լոյս են տալիս, որ նա արձապանք կը գտնէ նաև մեր միւս խմբագրութիւնների կողմից և նորա օր առաջ կը շտապեն օգտւել «Մուրճ»-ի օրինակից:

Այս տողերով («Մուրճ»)-ի խմբագրութիւնը հրաւիրում է բոլորի ուշադրութիւնը իւր այս օգտակար հիմնարկութեան վերադէպ ցարկումն է, որ չօգուտ աչք զանձարանի ընդունւում են նւէրներ մեծ շնորհակալութեամբ: Այդ նւէրները կարող են լինել թէ՛ մեծ և թէ՛ ամենափոքր գումարներ: Առաջիմ ստացած ենք նւէր հինգ լուրի: Նւիրատունների անունները կը յայտարարենք պարբերաբար:

«ՄՈՒՐՃ», ԱՄՍԱԿՐԻ ՈՒՂՂԱԿՐՈՒԹԻՒՆԸ:

Մեր աշխատակիցներին հարկաւոր ենք համարում տեղեկացնել, որ հաշկական ուղղագրութեան վիճելի խնդիրներից մի քանիսի նկատմամբ, «Մուրճ»-ը հետեւելու է այս կանոններին: Մենք բոլորովին աւելորդ և անօգուտ ենք համարում կրաւորական բաղերի վերջաւորութիւնները վնջով (ո) սկսել, ինչպէս աչք մնայնում ընդհանուր սովորութիւն է, օրինակ՝ ասուել, տրուել, դանդաղուել: Մենք զրկու ենք աւապէս՝ ասուել, տրուել, դանդաղուել, չարչարուել և այլն:—Նոյնը պէտք է անենք նաև կարճ բաղերի հետ՝ կուել, տրուել և այլն, որովհետև նոցա սկզբնական ձևերը՝ կուիւ, տալ և ալն վո (ո) ստուը չունին:

Բայց ոչ ամեն տեղ, որտեղ վո՛ւր (ո) չէ հնչւում, մենք պիտի ջնջենք աչք տառը, մենք կը պահպանենք վո՛ւր (ո) ալն խօսքերում, որոնց մէջ աչք տառը արմատի մէջն է. օրինակ՝ լեզու, սեռականը պէտք է վնենք լեզուի և ոչ լեզւի. լեզուարանական և ոչ՝ լեզարանական: Անուն—անուանել և ոչ անւանել, անուան և ոչ անւան: Ատուած և ոչ Ատուած, որովհետև երկու դէպքերումն էլ թէև հնչիւնը միևնոյնն է, բայց առաջին, ուրեմն աւանդական ձևը ունի աչք առաւելութիւնը, որ առանձին բացատրութեան տեղիք չէ տալիս, թէ ինչո՛ւ նոյն բառի սեռականը զրոււմ է՝ Ատուածոյ: (Առարկել զորան, թէ Արարատեան աշխարհի ժողովուրդը ասում է Ատործու և ոչ Ատուածոյ—կշիտ չունէ. մեր գրական լեզուն ամեն գէպքում չէ հետևում Աշտարակի և նորա մօտ եղած գիւղերի արտասանութեան): Նոյնպէս առանձին բացատրութեան տեղիք չկալ բացատրելու, թէ ինչու անուան՝ սեռականն է անուն խօսքի, անուանել՝ բաճ է անուն գոյականի. մինչդեռ չփոթութիւն կը բարոյցանէինք երկխաների գլխում, եթէ մի տեղ վո՛ւր զրենք, իսկ միւս տեղ՝ նորան դուրս գցենք: Նւ վերջապէս անուն խօսքի սեռականը նաև անունի է: Վո՛ւր (ո) պահպանւում է ուրեմն հետեւեալ բառերում և նոցա բոլոր ձևակերպութիւնների մէջ—Ատուած, լեզու, անուն, արտասուք (արտասուելից) և այլն, որպէս նաև ալն դէպքերում, որտեղ «ու» բարդ ձայնաւորը չի կրճատւում—վերարկուի, բուի և այլն: Բայց դիր, գրութիւն, գրը-

ւածք և ոչ գրուածք, որովհետեւ ութիւնը (գրութիւն խօսքի մէջ) վերջաւորութիւն է և վոյ (ո) չկալ արմատի մէջ:

Հաշիւ—հաշիւ և ոչ հաշուի:

Յօդւած և ոչ թէ չօդւած, որովհետեւ ոչ մի դէպքում վոյը իրան զգացնել չէ տալիս. նա կադմւած է չօդ—չօդել բառից:

Լւանալ, լւացք և ոչ լուանալ, լուացք, որովհետեւ ոչ մի փոփոխութեան մէջ ո չէ լսւում, ուրեմն նա բոլորովին աւելորդ է:

Ագնիւ—աղնւանալ, աղնւարարոյ, զգւել—զգւանք, որովհետեւ վոյը (ո) ոչ մի ձևակերպութեան մէջ չէ լսւում. նա աւելորդ է և նորա չը լինելը ոչ մի խնդիր չէ բարդում:

Մենք կարծում ենք, որ Վերը լիշած օրինակներով և լայնատրութիւններով մեր ուղղագրութեան կանոնը բոլորովին պարզած ենք, որ ինչ վերաբերում է հիւն (ւ) տառի գործածութեան, փոխանակ ու բարդ ձաջնաւորի: Մնում է մեզ հիւն (ւ) տառի մասին աւելացնել ալն, որ հիւնը (ւ) աւելի փափուկ է հնչւում, քան վիւ (վ) տառը, ալնպէս որ, օրինակ՝ ասւել խօսքը հնչւում է ալնպէս, ինչպէս արտասանում են, երբ գրւում է ասուել, կտուելը՝ կտուել և ալն: Այդ իսկ հիման վերալ մենք սխալ չենք համարում նախկին ուղղագրութիւնը և այդ իսկ պատճառով, մենք թող ենք տալիս «Մուրճ»-ի մէջ նախնային ուղղագրութիւնը, եթէ գրողը ալնքան մեծ հաճող է զգում վոյի (ո) անմեղ գործածութիւնից, որ անպատճառ ուղղում է հին ձևով տպւած տետքեր իւր գրածքը: Բայց նոյն իսկ հին ձևով գրողներն էլ, որպէս ձեռագիրներից համոզւած ենք, վոյը դէն են զգում, երբ խօսքի մէջ հիւնից (ւ) փոխո՞ւ ու բարդ ձաջնաւորն է գալիս. օրինակ, նոքա չեն գրում՝ հնչւում, գրւում, բերւում, այլ գրում են՝ հնչւում, գրւում, բերւում, թէպէտ եթէ ալնպէս էլ գրէին, էլի նոյն ձևով պիտի հնչէին: Այնքան է, որ նոքա ևս ընդունում են, որ ուում ևւում միևնույնն է, ուրեմն դորանով իսկ ընդունում են, որ ուել ևւել միևնույնն է:

«Աւ» վերջաւորութիւնը ալն բաղերի անցեալ եղանակի մէջ (ասւեցաւ, կարգադրւեցաւ և ալն), որտեղ նա միմիալն մի աւելորդ ձաջն է, մենք դէն ենք գցում, որովհետեւ նա մի մնացորդ է գրաբարից բայց մի մնացորդ, որը ոչնչով չէ արգարացնում իւր գոյութիւնը, բայց նորանից, որ երկարացնում է բառը. իսկ ալն ոչ ոքին օգուտ չէ՝ ոչ խօսողին՝ որ ժամակորոյս է լինում, ոչ գրողին՝ որ բոլորովին աւելորդ ժամանակ և թուղթ ու թանաք է վատնում, ոչ էլ, վերջապէս, հրատարակչին, որը դուրսէ ալն բոլոր աւելորդ բաների համար փող է վճարում: «Աւ» վերջաւորութիւնը պէտք է պահպանենք միմիալն ալնտեղ, որտեղ նա հարկաւոր է, աստեղ որի անկարելի է ցանկացած միտքը լսւնել, օրինակ՝ կալացաւ, եկաւ, հասաւ, վերջացաւ, տարաւ, կորաւ և այլ բաղերի մէջ:

Աղգերի անունները, երբ սոքա եղակի ուղղական հոլովում լինի

(Ի) տառով են վերջանում, լուգնականում ընդունում են քէ (ք). Ժողովուրդը չի ասում՝ Երևանցիներ, Ղարաբաղցիներ, Թիֆլիսցիներ, այլ ասում է՝ Երևանցիք, Ղարաբաղցիք, Թիֆլիսցիք. սեռականում ժողովուրդը ասում է՝ Երևանցոց, Ղարաբաղցոց, Թիֆլիսցոց և այլն: Նոյն համեմատութեամբ՝ ժողովուրդը և գրողներից շատ շատերը ասում են և գրում՝ Ֆրանսիացիք, Իտալացիք, Վերմանացիք, Ֆրանսիացոց, Իտալացոց, Վերմանացոց, առանց ուղեհալու գորանով գրաբարին հետևել: Մենք էլ կը հետևենք ժողովրդին:

Պ. ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

25-ամեայ յօք էլեանը:

1863 թ. հոկտեմբեր ամսի 22-ին խաղաղեց բեմի վերայ Գաբրիել Սունդուկեանցի առաջին թատերական գրառքը՝ «Գիշերաճաճ սարբը խէր է»։ Այդ պատճառով 1888 թ. հոկտեմբերի 22-ին լրացաւ նորա թատերական գործունէութեան 25-րորդ տարեշրջանը։ Բալց պատահեց, որ հաջ գրականութեան և թատրոնի համար ալի նշանաւոր օրը հաշւի չէր առնաւ հաջ հասարակութիւնից և ալի համակրելի ջօքէլեանը տօնելու համար առաջուց ոչինչ պատրաստութիւն չէր տեսնաւ։ Բալց պէտք է հրապարակով և բարձրագոյ կերպով վկայել, որ ալի մոռացումը հետեանք չէ հասարակութեան ստանաորտութեան՝ ո՛չ դէպի հաղկական թատրոնի գործը ընդհանրապէս և ոչ դէպի բազմապատասկ ջօքէլեարի անձնաւորութիւնը մասնաւորապէս։ Սա մի հաստատ իրողութիւն է, որ 25 տարեալ լրանալը հոկտեմբերի 22-ին մոռացել էր թատրոնական գործին ընդհանրապէս և պ. Գ. Սունդուկեանցին անձնապէս ալիքան մօտիկ մի մարդ, որպիսին է պ. Գէորդ Չմշկեանը։ Գա մի սպառցոց է, որ ջօքէլեանը իւր ժամանակին չը տօնելու պատճառը կամ ալիապէս մոռացումը չը պիտի վերադրել ուրիշ հանգամանքին, ալ միայն հասարակ պատահմունքին։

Յօքէլեանը տօնելու խնդիրը ծագեց ալի լուգէից, երբ պ. Գ. Չմշկեանը խմացաւ ալի և երբ նա գործի էութիւնը հաղորդեց Թիֆլիսի Հալոց Գրամատիկական ակումբի անդամներից՝ իշխ. Ամատունուն, պ. Արզար Յովհաննիսեանին և ուրիշներին։

Յալանի է, որ Հալոց Գրամատիկական ակումբը իւր նոյնմբ. նիստում վճռեց տօնել ալի ջօքէլեանը գեկտեմբերի 22-ին, որ օրը և պիտի ներկալացէր քաղաքալին թատրոնում պ. ջօքէլեարի նոր աւարտած «Ամուսիններ» պիւսը. ջալանի է նոյնպէս, որ պ. Գ. Սունդուկեանցը հրապարակական մի նամակով, որ տալեց տեղական հալոց թերթերում, հրաժարեց

տօնելու պատւից: Այդ նամակը ընդհանրապէս լաւ չը հասկացուց հասարակութիւնից. բայց և այնպէս չօրէլեանը տօնելու խնդիրը թւեց ամենքին արդէն լուծւած, վերջացած և, ի հարկէ, բացասական մտքով, այն է՝ որ նա չը պիտի տօնէր: Շատերը պ. Գ. Սունդուկեանցի մերժումը՝ ակումբի հրաւերքը ընդունել — վերադրեցին թիւրիմացութիւններ, որ կարող էին տեղի ունեցած լինել պ. Սունդուկեանցի և Կրամատիկական ակումբի մէջ:

Խնդիրը այդպիսով վճռած էր համարւում, երբ մի հանգամանք կրկին ստիպեց օրւալ խնդիր չինել պ. Սունդուկեանցի չօրէլեանը: Հանգամանքը սա էր, որ համալսարանների հալ ուսանողութիւնը, ղեկտեմբերի 22-ին չօրէլեանի տօնելը վճռւած գործ համարելով, պատրաստութիւններ էին տեսել ուղերձներ ուղղելու և ալքումներ մատուցանելու պ. Սունդուկեանցին և այդ մտքով շտապել էին իրանց կողմից ներկայացուցիչներ ընտրել չօրէլեանի օրւալ համար: Ամենասառաջինը համալսարանական ուսանողութիւնից, որ այդ բանի համար կարգադրութիւն էր արել, Օդեսայի ուսանողներն էին, որոնցից 11 ղեկտեմբ. տօնցւած հեռագրի աւելիքով կապեցաւ մի մասնաւոր ժողով «Մուրճ»-ի խմբագրատանը, որին հրաւիրւած էր և պ. Գ. Չմշկեանը: Այդ մասնաւոր ժողովի մէջ վճռւեց պ. Սունդուկեանցի թատերագրութեան 25-ամեայ չօրէլեանը կրկին բաց խնդրի լաւտարակել, վճռւեց նաև մեծադատիւ պ. չօրէլեանին ալդ մասին իմաց տալ և նորա հաւանութիւնը ձեռք բերել: Այդ փափուկ քանձնարարութիւնը իւր վերայ առաւ պ. Չմշկեանը, որի գործը մի քանի օրով ուշացաւ այն դառնադէտ կորուստների պատճառով, որոնց ենթարկւեց այդ խոշոր խնդիրներին սրտով և անձնապէս աջնքան մօտիկ պ. Արդար Յովհաննիսեանի ընտանիքը, որի սուզը ընդհանուր սուգով համակեց Թիֆլիսի հասարակութեան մի ստւար մասը, մասնաւորապէս զրականութեան և թատրոնին մօտ մարդկանց շատ շատերի սրտերը: Այդ ղէպը պատճառով խնդիրը մի առժամանակ մնաց, բայց միմիայն այն նպատակով, որ սկսւած պատրաստութիւնները շարունակեն: Այդ միջոցում ստացուեց նաև Պետերբուրգի հալ ինտելլիգենցիայից ուղարկած ուղերձը, որի ներկայ ցուցիչ խնդրւած է լինել պ. Ալէքսանդր Քալանթարը, որպէս ստացուեց Օդեսայի հալ ուսանողների ալքումը ուղերձով հանդերձ, որը պիտի մատուցանէ պ. չօրէլեանին նոցա ներկայացուցիչ «Մուրճ»-ի խմբագիրը: Նոյն Պետերբուրգի ուսանողութիւնից ստացած է ալքում պ. Կ. Նաղուբեանը, իբր ներկայացուցիչ:

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԱՐԴԻԻՆԱՀԱՆԴԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1889 Թ.

Ներկայ 1889 թվականի սեպտեմբեր ամսում Թիֆլիսում բացուելու է Կովկասեան երկրի բոլոր արդիւնքների մի հանդէս, ըստ օրինակի այն

հանդէսները, որոնք սովորական են դառած Եւրոպայի լաւաջադէմ երկիրներում:

1889 թւականի արդիւնահանդիսի գաղափարը ծնած է Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ՝ դեռ ևս 1887 թւականին, երբ, ընկերութեան խորհրդի հրաւերով, ընկերութեան անդամ պ. Վիկտոր Դինգելշտեդ զեկուցում կարդաց ալի խնդրի մասին, առաջարկելով միանգամայն, որ ալի հանդէսը տեղի ունենար 1888 թւականին՝ Թագաւոր Կալսեր Կովկասը անցնելու առիթով: Գլխաւորապէս ֆինանսական դժարութիւնների պատճառով, ալի խնդիրը վտաճեց, մինչև որ 1888 թվի վերջը նա բաւարար լուծում ստացաւ, երբ գիւղատնտեսական ընկերութիւնը ձեռք բերեց Տէրութեան գանձարանի և Թիֆլիսի քաղաքային վարչութեան դրամական աջակցութեան երաշխաւորութիւնը:

1889 թւականի Կովկասեան արդիւնահանդէսը անքան կէտերով չափում է մեր երկրի ամբողջ ազգաբնակչութեան և աշխատաւոր բոլոր դասակարգերի շահերը, որ մենք պարաք ենք համարում երկրիս բոլոր ազգաբնակչութեան, բաց մանաւանդ մեր երկրի բոլոր հաւերին չորդորել, որ զէպի ալի հանդէսը վերաբերեն ամենայն լուրջմտութեամբ: Ալի հանդէսը պիտի երևան հանէ ոչ միայն ալի, ի՞նչ արդիւնաբերում է մեր երկիրը առհասարակ, ալ և ալի, թէ ալի արդիւնաբերութեան գործում ո՞ր ազգերը ո՞րքանով են մասնակցում: Ահա մի երեւելի առիթ՝ ցոյց տալու ամբողջ Ռուսաստանին, թէ ի՞նչ է Հալը Կովկասի արդիւնագործութեան մէջ, նշանաւոր և հազապիւտ առիթ՝ ցոյց տալու ոչ թէ խօսքով և վիճելի կարծիքներով, ալ իր ապէս, դրական ապէս, որ Հալը ոչ միայն զիտէ առևտուր անել, ալ և հող մշակել, երկիր կանաչեցնել, արդիւնք ստեղծել, արհեստ զարգացնել, բան սովորել և բան սովորեցնել, օրինակ առնել և օրինակ տալ: Մենք անասելի հաճուք կը զգանք, եթէ հալը ալի՝ մի չափով միջազգային մրցութեան դաշտից դուրս գալ ալի պատուով, որին արժանի են կացուցանում նորա համբաւաւոր աշխատասիրութիւնը և առաջդիմութեան սէրը, բաց որը, ո՞ւր է չափունի, ժխտում է նոյն խի ալի մարդկանցից, որոնք առաջինը պիտի լինէին ալի հռչակելու: Հանդէսը, սակայն, միմիայն նորա համար է, որ ալիտեղ ցոյց տան ունեցածը, ալ և նորա համար է, որ տեսնեն նաև ուրիշների գործածը և աւելի լաւից օրինակ առնեն:

«Մուրճ»-ը իւր կողմից կ'անէ, ինչ կարելի է մի ամաաղրի՝ չորդորել ժողովրդին, ծանօթացնել նորան հանդիսին մասնակցելու բոլոր պայմանների հետ, օգնել նորան խորհուրդներով, և ալին: Ալի պատճառով մենք կ'աշխատենք իւր ժամանակին միշտ հազարել ինչ կը վերաբերի ալի հանդիսին և, ալի նպատակի համար, «Մուրճ» մէջ պիտի բացենք մի առանձին բաժին արդիւնահանդիսին վերաբերաւ:

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ

ԵՆԱ. 5 դեկտեմբ.

Ենայի համալսարանի օտարական ուսանողների մէջ նոր չէ մի աւելի ակտիւ անձ — միջազգային ընկերութիւն հիմնելու գաղափարը. դեռ ես հինգ թէ վեց տարի առաջ, աշնտեղի ուսանող օտարականների մէջ աղպիսի միտք չկայաւ, միայն թէ նա չ'իրագործւեց, վասն զի դուրս համար պակաս էր հարկաւոր եռանդը աղպիսի մի ընկերութիւն ոչ միայն հիմնելու, այլ և ղեկավարելու: Բայց ներկայ վեցամսեակում, 1888 թ. նոյեմբերին ժողովեց Sophienhöhe կոչւած տեղը ուսանող օտարականների մի խումբ, կարծիքներ փոխանակելու համար՝ ապա ընկերութիւնը հիմնելու նկատմամբ: Նոյն ապա ժողովում մի մասնաժողով ընտրեց՝ կանոնադրութեան նախագիծը կազմելու համար: 14 օրից չեառ վերստին մի ժողով կապացաւ՝ մասնաժողովից մշակած կանոնադրութիւնը ընդունելութեան առաջարկելու համար: Ապա կանոնադրութիւնը ընդունեց: Կանոնադրութեան մէջ ընկերութեան նպատակը որոշւած է ապալէս. — ընկերութեան նպատակն է հնչունական հանգամանքները (ժողովրդական կեանք, պատմութիւն, գրականութիւն, կրթութիւն և այլն) ներկայացնել և նորեւ օտարական ուսանողներին ծանօթացնել գերմանական հանգամանքների հետ: Այս նպատակով պէտք է դասախօսութիւններ լինեն հայրենական հանգամանքների մասին և ամենակարեւոր օտար լրագիրներ ստացւեն: Եւ որովհետեւ ընկերութիւնը գիտնական նպատակ ունի և մի գերմանական համալսարանի է պատկանում, ուստի ընկերութիւնը որոշեց՝ 1. քաղաքականութիւնը (պօլիտիք) սրտաբանել, 2. Գասախօսութիւնները գերմաներէն լեզուով կատարել, 3. Հեմարանի ամեն մի քաղաքացու, որ հետաքրքրութիւն կը բաւեն ապա ընկերութեան համար, անդամ ընդունել:

Կանոնադրութիւնը ժողովից ընդունելուց չեառ, մասնաժողովը այն պահէնց Մեծ-դքսական և Սաքսոնական դքսութիւնների համալսարանի վարչութեան՝ վաւերացնելու համար: Կանոնադրութիւնը վաւերացնելուց և ընկերութիւնը կազմելուց չեառ, դեկտ. 3-ին կապացաւ առաջին պաշտօնական նիստը՝ վարչութեան անդամներ ընտրելու համար:

Ընտրւեցին հետեւեալ անձներ՝ Յովհաննէս Բարխուդարեան, Կանդիատոս փիլիսոփայութեան, աշխատակից «Մուրճ» ամսագրի, որպէս նախագահ. Կելլեր, ուսանող աստուածաբանութեան, որպէս քարտուղար և Իօնեսկու, ուսանող մանկավարժութեան, որպէս զանձապահ:

Աւժմ հետեւեալ ազգերից կան ներկայացուցիչներ՝ ամերիկացիք, հայեր, բուլղարներ, սերբեր, ռումանացիք, ղուիցերիացիք, չվեգացիք, զիւրենբուրգցիք և ունգարացիք:

Աւսպիսով շատերից վաղուց չալանած մի ցանկութիւն իրագործուց և լոյս տնինք, որ ընկերութիւնը՝ չուրախութիւն նորա անդամների, կը զարգանայ և լաւ պտուղներ կը տա:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ուսումք

ԿԱՐԱՄ ՈՒՐԶԱՅԻ

Ա.

Ամենայն ազգ ունի իւր երգը, այնպէս որ լինի նա լուսաւորեալ և զարգացած, կամ նահապետական և առանձնացած՝ բնականապէս պահանջ է զգում արտայայտել իւր զւարթ կամ տխուր հոգեկան դրութիւնը երգի միջոցով:

Որչափ ազգ՝ այնչափ և երաժշտական տարր և բնութիւն: Այսու ամենայնիւ երաժշտութիւնը, ենթարկւած խիստ քննութեան, բաժանուում է երկու գլխաւոր տարրական ճիւղերի՝ եւրոպական և ասիական, կամ արեւմտեան և արեւելեան, որոնք և ունին իրենց զանազան մասնաւոր ճիւղերը: Որչափ ինձ յաջողել է ուսումնասիրել այս երկու ճիւղերն էլ, կարող եմ ասել, որ երկրորդ ճիւղը տկարագոյնն է և ունի շատ և շատ մեծ թերութիւններ: Գիտնականների աչքի առաջ նա ունի իւր արժանաւորութիւնը միմիայն իւր ունեցած ինքնուրոյն բնաւորութեամբ, որի իսկական սկիզբն և և այժմեան գոյութիւնը կատարելապէս յորոշելու համար եղել են մասնագէտներ, որ շատ տարիներ զոհել են իրանց քրտնաջան աշխատութեանը, բաց ոչինչ որոշ հետեւանք չը ստանալով, թողել են ամենայն քննութիւն:

Եւ յիրաւի, որ մասնագէտ երաժիշտը, երաժիշտ-հեղինակը կը համաձայնի ուսումնասիրել մի անմշակ երաժշտական տարր, որը նորա աչքում երևում է իբր մի անկատար գեղարւեստական ճիւղ և իբր մի ստեղծագործութիւն, որը զուրկ է ամենայն իղէալական վը-

սեմութիւնից: Նա այդ հեշտութեամբ չի անիլ, քանի որ նա հոգով-սրտով զբաղւած է միւսնոց դեղարւեստի այն ճիւղով, որը կատարելագործւած է և վերին աստիճանի մշակւած: Եւրոպական երաժշտութիւնը բացում է նորա համար մի լայն ասպարէզ. նա ծնեցնում է հեղինակի մէջ ծրագիրներ, որոնց իրագործելու համար մարդս իւր կեանքը շատ կարճատեւ է համարում և շատ անգամ իրան ստիպւած է տեսնում գործի շարունակութիւնը իւր յետագայ սերունդին թողնել:

Ինչպէս նա զբաղւի օտար երաժշտութեամբ, քանի որ նա այդ մշակւած ճիւղի մէջ ևս երբեմն այնպէս սաստիկ դժւարանում է իրագործել իւր սրտի զգացածն, հոգւոյն պահանջը և իւր կամեցածը՝ որ ստէպ իբրեւ խելացնոր՝ կամենում է օր ու գիշերը կրկնապատկել, որպէս զի գործը առանց ընդհատման մինչև վերջը զրէ, վերջացնէ: Բայց ահա՛ այս մի գործը կատարելուց յետոյ, հերթը դալիս է միւսին, երևան են գալիս նոր նիւթեր, և այնպէս շարունակաբար ընկղմած անվերջ ձայնական ալիքներու մէջ՝ մերթմաքառում է դժւարութիւնների դէմ և մերթ վայելում միմիայն հեղինակին մատչելի, բայց անպատմելի սրտի հրճւանքը. ա՛յն հրճւանքը, որը այնքան քաղցրութիւն է տալիս նորա գիշերային ուշ ժամաց հանգիստ քնին:

Ի՞նչ հարկ ունի նա ուրեմն անկատար երաժշտական ճիւղին ձեռք զարնել, երբ կատարելալի մէջ շատ բան կայ աշխատելու, և երբ ժամանակը նորան չի ներում պարապել իրագործելու մի ուրիշ բան, եթէ այդ օրը հեռու է նորա սրտից, հակասում է իւր հոգեկան զրութեանը և ոչնչով չէ նպաստում իւր բանատեղծական զարգացման:

Ասացի, որ երաժիշտը դժւարանում է զրելու ժամանակ: Այո՛, այդ դժւարութիւնը հասկանում է ամեն մի երաժիշտ-հեղինակ: Այդ դժւարութիւնը կայանում է մտապատկերը ձայների վերածելու և նախադասութիւնների միջոցով որոշակի ցոյց տալու մէջ, պատկերի միջի առարկաներն բնականաբար միմեանց հետ կապելու և այդ միջոցին օրէնքին հակառակ ոչինչ չը կատարելու մէջ: Բայց որչափ ևս առաւել բազմանում են այդ նեղութիւնները արևելեան երաժշտութեան մէջ, որը զուրկ է հարկաւոր յատկութիւններից:

Արդ, արևելեան երաժշտութիւնը գեղարւեստի մի թերի մասն է ներկայացնում մեր աչքի առջև, բայց նա այդպէս չի մնալ: Կը գաց ժամանակը որ նա կը կատարելագործւի, և կարելի է մինչև անգամ իբրև մարդարէութիւն գուշակել, որ նորան կը մշակեն եւրոպացիք, որովհետև արևելեան երաժշտութեան մէջ կայ բաւական խոր թաղւած մի այնպիսի զիւթական քաղցրութիւն, որ անկարելի է չը պարզել մի օր: Իսկ առայժմ այդ քաղցրութեան համը եւրոպացիք դեռ չեն առել: Այո՛, եւրոպացին կը մշակէ արևելեան երաժշտութիւնը, երբ նորա ճաշակը կը զարգանայ և այս ճիւղի համար. բայց՝ այդ չենք սպասում ասիացուց, որովհետև նա չի պարապում նորանով:

Թողնելով մի այլ անգամի, աւելի ընդարձակ խօսելու այս երկու երաժշտական տարրերի մասին, կանգ եմ առնում ասիական ճիւղի վերայ, որին և պատկանում է հայկական երգեցողութիւնը:

Հայկական երգեցողութեան և երաժշտութեան մասին ուզում եմ խօսել մանրամասնաբար, բայց նախ հարկաւոր եմ համարում պարզել երկու բան. թէ ի՞նչ է՝ նօտայով երգել և նօտայով ածել մի օրևէ գործիքի վերայ և միւսը՝ թէ ի՞նչ է նշանակում ձայնագրութիւն:

Առաջինի բացատրութիւնը հասկանալը շատ հեշտ է. բաւական է, որ գիտենանք՝ ի՞նչ է նօտան, ինչի՞ համար է հնարւած, ի՞նչ է նորա նպատակը, ի՞նչ բանի է ծառայում, ի՞նչ արդիւնք է տալիս նա և ի՞նչ է այդ արդիւնքի հետեանքը:

Նօտան՝ ձայնի բարձրութիւնը և տեղութիւնը որոշելու նշանն է (իտալ. nota = նշան), հնարւած է՝ ձայները թղթի վերայ նշանակելու համար, նպատակն է՝ որ գրւածն ուրիշներն էլ կարդան, ծառայում է՝ գրւածն յիշատակ և անմոռաց պահելու, արդիւնքն է՝ որ բիւրաւոր հեղինակութիւններ ունին իրանց անմահ գոյութիւնը, և արդիւնքի հետեանքն է՝ որ մե՛նք էլ օգտւում ենք այդ հեղինակութիւններից՝ եթէ արեւտը լաւ հասկանում ենք և գիտենք ճիշտ կատարել:

Այս բոլորից գալիս ենք այն եզրակացութեան, որ եթէ կամենանք մի երաժիշտ-հեղինակի գրւած պիեսը ճիշտ կատարել, ածել կամ երգել՝ անհրաժեշտ է որ այդ գրւածքի նօտաներն ունենանք մեր ձեռքին,

որպէս զի, նոցա վերայ նայելով, կարողանանք անսխալ կատարել թէ որոշեալ ձայները և թէ նոցա սահմանեալ տեղութիւնը: Եթէ կան ուրիշ պայմանական, մեղմ կամ ուժգին և այլն ցոյց տուող նշաններ, նոցա էլ պէտք է ինկատի ունենանք և, ի հարկին, ըստ կարելոյն նոցա հետեւենք, — ապա թէ ոչ՝ խաղը կ'աղաւաղենք: Եւ մինչև անգամ շատ աշխատելով, կրթել ենք մեզ այդ պիեսը ածելու և վարժել ենք արդէն լաւ կատարելու, առանց նստալի եթէ մի օր հանդէս դուրս գանք՝ չի կարելի հաւատ ընծայել, որ ծիշտ է. կամ եթէ միայն լսելով ենք սովորել և շատ ենք աշխատել դրա կատարելագործութեան վերայ և ապա յանդգնում ենք ածել ուրիշի զիմաց՝ դա ևս առաւել սխալ և աններելի է. — ուսուցիչն իսկ առանց նստալի չի կարող սովորեցնել:

Հակառակ կարծիքների տէրեր լինում են մինչև անգամ երաժիշտ և երգեցող մարդիկ ո՛չ թէ միայն արևելեան ազգերի մէջ, այլ և ամենազարգացած եւրոպական զրեթէ բոլոր ազգերի մէջ էլ: Սա մի սկզբնական հասկացողութիւն է նստաների մասին, որ մասնագէտները տալիս են իրանցից աւելի տկարին և արգելում են շեղւել այս փոքրիկ կանոններից, հաւատալով, որ մի չնչին շեղման թոյլտրութիւնն իսկ կարող կը լինի աղաւաղել գործը՝ մանաւանդ ընտանեկան դաստիարակութեան մէջ:

Ուրեմն՝ քանի մենք տկար ենք արւեստի մէջ, այնչափ աւելի հլու հնազանդ պէտք է լինինք այս կանոններին, այսինքն առանց նստալի ոչինչ չը պէտք է կատարել: Բացառութիւն չենք ընդունում, վասն զի, դրան ընդունելու համար, պէտք է լինել կամ մասնագէտ և կամ ունենալ մի այնպիսի զարգացումն զեղարւեստի մէջ, որ շեղւելով այս կանոններից, անսխալ և անփաստ կատարենք մի որ և իցէ երաժշտական գործ:

Այս այսպէս է, և համեստութիւն է մեր կողմից, եթէ մենք, չը փստահանալով մեր երաժշտական գիտութեան, նստաները ձեռներիցս չենք թողնում: Բայց սա համեստութիւն չէ, երբ ձեր նկատողութեան, թէ ես սխալւում եմ, ձեզ ասում եմ միմիայն, որ «ես դրա նստաները ունիմ» և ուրիշ ոչինչ: Նոյնպէս և համեստութիւն չէ, երբ ձեր կասկածին իմ կատարելու ճշտութեան մասին, ես ձեզ ասեմ թէ՛ «կառնեմ նստաները ձեռքս և այնպէս կ'երգեմ»: Այս եր-

կու դէպքումն էլ, ինչպէս են ծագած այդ նօտաները, ո՞վ է երաշխաւոր, որ յօրինողն անսխալ հեղինակ է. ո՞վ է ստուգել, որ նօտաները ճիշտ տպւած են. կարելի է մենք սխալ արտագրել ենք, և նօտաներին նայելով իսկ, մի՞թէ չի պատահիլ, որ սխալ ենք, կամ անգիտութեամբ կամ արւեստի մէջ տկար և անփորձ լինելու պատճառով:

Այս մասին խօսում եմ այսչափ նորա համար, որ շատերը նօտաների անունով խօսում են այնպէս, ինչպէս մի ոսկու մասին, որի գինը մնում է անփոփոխ ինչ ձևի մէջ էլ որ լինի, մանաւանդ մեր հայ երգեցողներն, որոնք աւելի զիւրութեամբ շփոթւում են այս տեսակ հարցերից՝ կանոնաւոր երաժշտական դաստիարակութիւնից զուրկ լինելու պատճառով: Բայց դա ո՛չինչ հոգ չէ, որ մենք հայերս ուրիշ ազգերի պէս զարգացումն չունինք երաժշտութեան մէջ: Դա՝ հանգամանքների ծնունդ է:

Պէտք է զոհ լինինք բնութիւնից մեզ տւած երաժշտական ընդունակութեան համար, որը մենք վայելում ենք առանց երաժշտութեան այիբ ու բէնք գիտենալու, ապրելով լեռների և ձորերի մէջ իսկ: Ուրեմն նօտաների մասին մի անգամ ընդ միշտ իմանանք հետևեալը:—

2 է՝ կարելի երաշխաւոր լինել նօտաների ճիշտ կատարման համար, 1) եթէ մենք լաւ չենք իմանում նօտաներ կարդալ, 2) եթէ լաւ ենք իմանում, բայց սխալ են տպւած, 3) եթէ լաւ ենք իմանում և ճիշտ են տպւած կամ արտագրւած, բայց հեղինակն է սխալւած գրելու ժամանակ և 4) եթէ, չընայելով այս բոլոր պայմանները կատարւած են, բայց հեղինակը տկար է և, չ'իմանալով, սխալ է ձայների կազմութիւնը:

Ընդհակառակն՝ կարելի է երաշխաւոր լինել բերանացի կատարման ճշտութեան համար, եթէ կատարողը հմուտ երաժիշտ է և իմանում է իւր դերը, եթէ յիշողութիւնը լաւ է և անգիր սովորել է կատարելիքը, եթէ կատարողը լսելով է սովորել իւր դերը, բայց սովորել է նա հմուտ երաժիշտ-վարժապետից և փորձւած է նորա ղեկավարութեամբ, և եթէ կատարողն կրթւած երաժիշտ-հեղինակ է:

Զայնազրութեան մասին միւս անգամ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս վերնագրով ամեն ամիս «Մուրճ»-ը տալու է հաշիւ նախ-
ընթաց ամիսներում պատահած բուն քաղաքական անցքերի, և
որովհետեւ քաղաքական ծանրակշիռ խնդիրները դարերից ի վեր
լուծւում են նւթալուծում, ուստի քաղաքական տեսութեան նիւթը
գլխաւորապէս պիտի առնուի եւրոպական առաջնակարգ պետութիւն-
ների քաղաքական կեանքից: Իսկ ինչ վերաբերում է օտար ազգերի
տնտեսական, հասարակական, գրական և արտիստական կեանքին,
այդ բոլորը պիտի կազմի նիւթ մեր ամսագրի այն բաժնի, որը պիտի
կրէ վերնագիրս՝ Արտաքին Քրօնիկոն:

Քաղաքական տեսութեան մէջ կը զետեղենք քաղաքական խըն-
դիրները: Բայց քաղաքական խնդիրները երկու տեսակ են՝ ներքին
քաղաքական և միջազգային: Ներքին քաղաքական կեանքը մի ազգի
բովանդակում է այն բոլորը, ինչ կապւած է մի ազգի իրաւունքների
հետ՝ երկիրը կառավարելու գործում: Միջազգային քաղաքականու-
թիւնը վերաբերում է շատ աւելի սահմանափակ թւով խնդիրնե-
րին, գլխաւորապէս միջազգային առևտուրին և հաշտութեան կամ
պատերազմի խնդիրներին:

Այն, ուրեմն, ինչով պէտք է զբաղւի մեր «Քաղաքական
տեսութիւնը», պէտք է լինի տէրութիւնների ներքին և արտաքին
քաղաքականութիւնը:

Արդ, պէտք է զիտենալ, որ տէրութիւնների մէջ—մեծ զանա-
զանութիւն կայ: Թէպէտ և բոլոր տէրութիւնները քաղաքական
կեանք ունին, բայց ոչ ամեն տէրութիւն ունի անկախ և զօրեղ քա-
ղաքականութիւն: Այդ մանաւանդ ճիշդ է արտաքին կամ միջազգային
քաղաքականութեան վերաբերեալ, որի նկատմամբ եւրոպական տէ-

րութիւնները երկուսի են բաժանուում՝ առաջնակարգ և երկրորդական տէրութիւններէ։ Այս բոլորէն առաջնակարգ տէրութիւնները սոքա են՝ Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսիա, Անգլիա, Աւստրիա և Իտալիա։ Առանց սոցա ամենքի խորհրդի՝ չէ վճռուում ոչ մինչանաւոր միջազգային խնդիր. պատերազմի և հաշտութեան խնդիրներէ մէջ միմիայն սոքա են, որ ունին կարեւոր նշանակութիւն. երբ հարկաւոր է լինում որ և իցէ քաղաքական գործ կատարել, որ ընդհանուր նշանակութիւն ունի, ամենից առաջ հարկաւոր է լինում այդ տէրութիւնների կարծիքն իմանալ։ Այդ տէրութիւններն են, որոնց ներկայացուցիչները կազմում են վեհաժողովներ. մնացեալ տէրութիւնները այնքան ուժեղ չեն, որ նոցա կարծիքը անհրաժեշտ համարւի միջազգային քաղաքական խնդիրներ լուծելու համար։

Ահա թէ ինչու քաղաքական տեսութիւնների մէջ առհասարակ առաջին տեղը լռնում են թէ՛ ներքին և թէ՛ արտաքին քաղաքականութիւնը առաջնակարգ տէրութիւնների, այն է՝ Գերմանիայի, Ռուսիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի, և որովհետեւ արտաքին ոյժը կապ ունի երկրի ներքին ոյժի հետ, իսկ այդ ներքին ոյժը մեծապէս կապւած է ներքին քաղաքականութեան հետ, ուստի քաղաքական տեսութեան մէջ, բացի արտաքին քաղաքականութիւնից, առաջին տեղը պիտի բռնեն ներքին քաղաքական հանդամանքները նոյն այդ հինգ մեծ պետութիւնների։ Նրկրորդական տէրութիւններից պիտի խօսուի համեմատապէս աւելի քիչ, զլիաւորապէս, որքանով որ նոքա կապ ունին ընդհանուր քաղաքականութեան հետ։

Այս անգամ մենք ուզում ենք բաւականանալ մի կարճ տեսութեամբ այն զլիաւոր իրողութիւնների, որոնք ներկայ քաղաքականութեան զլիաւոր փախտօրներն են կազմում։ Այս վերջին տասն և ութ տարում եւրոպական բոլոր քաղաքականութեան հիմքը կազմում է այն հակառակութիւնը, որ կայ Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ։ 1870—71 թւականին Պրուսիան, ունենալով իբր զաշնակից բոլոր գերմանական տէրութիւնները (բացի Աւստրիայից), պատերազմեց Ֆրանսիական կայսերութեան դէմ և յաղթեց սորան չարա-

շար կերպով: Պրանսիան կազմակերպեց հանրապետութեան, իսկ Վերմանական տէրութիւնները ի մի ձուլեցին և կազմեցին Վերմանական կայսերութիւն, որի կայսեր տիտղոսը սխեց կրել Պրուսիայի թագաւորը: Բայց, չը նայած որ Պրանսիան այնպէս յաղթեց, որ նորան ուրիշ բան չը մնաց, եթէ ոչ հպատակել Վերմանիայից առաջարկած ամենածանր հաշտութեան պայմաններին, այնու ամենայնիւ Ֆրանսիական հանրապետութիւնը մի քանի տարուց յետոյ կարողացաւ այնքան կազդուրել, որ ձեռք բերեց զրեթէ Վերմանիային հաւասար պատերազմական ոյժ: Եւ որովհետեւ իբր հաւասար ոյժ, Պրանսիան իւր նորեկ ազէտները չէր կարող մոռնալ ու պատուի խնդիր համարեց կորցրած երկու նահանգները՝ Ելզաս և Լօթարինգիան կրկին յետ ձեռք բերել, ուստի բացեց մօտաւոր ապագայի համար մի երկրորդ անդամւայ ահեղ պատերազմի հնուպատկերը: Վերմանիան, որի հանճարեղ քաղաքական ղեկավարը իշխան Բիսմարկն է կայսերութեան հիմնադրութեան օրից, որից առաջ Պրուսիայի հանճարեղ մինիստրն էր, Վերմանիան, ասում ենք, մնացեալ Եւրոպայի հետ միասին զարմացած Ֆրանսիական ոյժի զարմանալի վերականգման վերայ, չուղեց թոյլ տալ, որ իւր հակառակորդը իւր համար սպառնալի ոյժ դառնայ և աշխատեց 1875 թւականին մի որ և է պատրուակով կրկին պատերազմ բացել, քանի որ Պրանսիան դեռ ևս ոչ բոլորովին պատրաստ էր, քանի որ դեռ ուշ չէր: Այժմ հաստատ է, որ Վերմանիան այդ պատերազմը կը սխեց, եթէ չը լինէր Ռուսաց Վայսը Ալէքսանդր II-ի միջամտութիւնը, որը Վերմանիային հասկացնել տւեց, որ Ռուսիան այդ գէպքում չէզոք չի մնալ, որպէս մնաց նա 1870—71 թւակ., այլ կը միջամտէ յօգուտ Պրանսիայի:

Պրանսիան շարունակեց, սակայն, իւր պատերազմական պատրաստութիւնները, որպէս զի ոչ մի բանով յետ չմնաց իւր զօրեղ թշնամուց: Եւ այդ վերանորոգման զործը նորան այնքան լիախառար կերպով աջողեց, որ ամենքը սկսեցին համոզել, որ բան է, եթէ պատերազմ ծագի նորա և Վերմանիայի մէջ, այդ երկու երկիրները կը լինին իրար հաւասար: Իսկ է, Վերմանիան չը լուած յաղթութիւններ տանելուց յետոյ, ունենալով միւլենոյն ժամանակ ամենակատարեալ և մեծագունդ մի զօրք, որը օրինակելի է դարձած բոլոր

աշխարհում, իրան աւելի ոյժեղ էր զգում. — բայց և այնպէս ինչպէս կարող էր այդ բանով մխիթարւել, քանի որ պատերազմի ելքը այնքան էլ հաստատու չէր կարելի գուշակել. իսկ եթէ Գերմանիան յաղթւէր, զորա հետ կը կործանւէր նոր հաստատուած գերմանական միութիւնը Պրուսիայի առաջնորդութեամբ. իսկ գերմանական միութիւնը վտանգից և սպառնալիքներից ազատել, այդ ամենից գլխաւոր հոգսը պէտք է լինէր ամբողջ գերմանական ազգի համար: Գերմանիայի դրութիւնը ծանրացաւ ոչ միայն Ֆրանսիայի վերանորոգումով, այլ և նորանով, որ Ռուսիան, որպէս ասացինք, հասկացնել տւեց, որ երկրորդ անգամ Ֆրանսիային գետին տապալել չի թոյլ տայ:

Այդ ժամանակներից սկսած Գերմանիան (իմացէ՛ք իշխան Բիսմարկ) սկսեց լրջօրէն մտածել իւր քաղաքական ապահովութեան վերայ: Միայնակ պատերազմ սկսել Ֆրանսիայի դէմ, ունենալով իւր յետեւից Ռուսիային, — դա անկարելի բան թւաց. դա մի այնպիսի ռիսկ է, որ ոչ մի պետական մարդ չը պէտք է իրեն թոյլ տար: Ուրեմն ամենից առաջ պէտք էր մտածել, որ, մի նոր Ֆրանս-Գերմանական պատերազմի ժամանակ, Ռուսիան չը կարողանար օգնել Ֆրանսիային, յարձակելով Գերմանիայի վերայ: Բիսմարկը մտածեց, որ, այդ բանը զլուխ բերելու համար, հարկաւոր էր ձեռք բերել մտերիմ բարեկամութիւնը այն Աւստրիայի, որին Պրուսիան ջարդել էր 1866 թւականին և զուրա վնասել գերմանական պետութիւնների դաշնակցութիւնից: Աւստրիան միացած է Ունգարիայի հետ մի թագաւորով, որը Աւստրիայի կայսրն է և Ունգարիայի թագաւորը. նոքա կապւած են նաեւ նորանով, որ մի զօրք ունին և մի մինիստր արտաքին քաղաքականութեան համար: Աւստրո-Ունգարիայի քաղաքական աղբեցութիւնը չի կարող տարածւել ուրիշ տեղ, քան Բալկանեան թերակղզու վերայ: Բայց որովհետեւ նոյն այդ Բալկանեան թերակղզու վերայ (որտեղ են Բօլգարիա, Սերբիա, Հերցոգովինա և այլն) Ռուսիան հովանաւորութեան անկասկած իրաւունքներ ունի, ուստի Ռուսիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ սկսեց տիրապետել մի խուլ թշնամութիւն, որը աշկարայ երևաց Ռուս-Տաճկական պատերազմի և Բերլինի վեհաժողովի ժամանակ: Բայց Աւստրո-Ունգարիան միայնակ աւելի թոյլ է, քան Ռուսիան և, յամենայն դէպս, եթէ Աւստրո-Ունգարիան ուզե-

նար մի բան գլուխ բերել հակառակ Ռուսիայի, նա այդ չի կարող առանց վտանգի գլուխ բերել, առանց օգնութեան մի ուրիշ մեծ պետութեան:

Բիսմարկը, ուրեմն, մտածեց մտերիմ բարեկամութիւն հաստատել Աւստրո-Ունգարիայի և Վերմանիայի մէջ, խոստանալով առաջինին՝ օգնութիւն և պաշտպանութիւն անել նորա Արևելեան քաղաքականութեան մէջ (Բալկանեան թերակղզում) և պահանջելով նորանից, որ, եթէ Ռուսիան ուզենայ միջամտել Ֆրանս-Վերմանիական պատերազմին ի վնաս Վերմանիայի, Աւստրո-Ունգարիան յարձակի Ռուսիայի վերայ:

Այդ սրամիտ քաղաքական կոմբինացիան կատարեալ իրականութիւն ստացաւ մի դաշնագրով, կապւած Վերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ 7-ն հոկտ. 1879 թւականի, որի միտքը արդէն վաղուց շատ թէ քիչ յայտնի էր, բայց որի բնագիրը հրապարակւեալէս յայտարարեց միմիայն 1888 թւականին միաժամանակ՝ Բերլինի Reichsanzeiger և Վիեննայի Abendpost պաշտօնական լրագիրներում: Այդ նշանաւոր քաղաքական պայմանագրի գլխաւոր յօդւածը այն է, որտեղ ասւում է, թէ՛ դաշնակից երկու կողմերն էլ յարձակւում են Ռուսիայի վերայ, եթէ սա կամ ինքը կը յարձակի իրանց վերայ և կամ մի ուրիշին (իմացիր՝ Ֆրանսիային) օգնելու ցոյցեր կան:

Այդ դաշնագիրը կապւած էր սկզբում միայն չորս տարով, բայց որովհետեւ հանգամանքները չը փոխեցին այդ ժամանակամիջոցում, ուստի նա նորոգեց և մինչև այժմ ոչ միայն տևում է նորա զօրութիւնը, այլ և նա այնքան հաստատ է համարւում, որ դառել է եւրոպական քաղաքականութեան մի նոր նշանաւոր փախտոր:

Ռուսիայի կողմից ապահովւած, Բիսմարկը շարունակեց Վերմանիայի ապահովութեան դործը՝ Ֆրանսիայից սպասելի յարձակումից ազատ պահելու: Բաւական չը համարելով ապահովութիւնը Ռուսիայի կողմից, նա մտածեց արդէն մի այնպիսի դաշնակից գտնել, որը, հարկաւոր դէպքում, ուղղակի Ֆրանսիայի վերայ յարձակի: Մի տղայիսի դաշնակից Բիսմարկը գտաւ Իտալիայի մէջ, չը նայած որ այդ նոր թագաւորութիւնը (1859 թւականից) իւր քաղաքական միութեամբ ամբողջապէս Ֆրանսիական օգնութեանն և նորա վեհանձնութեանն է պարտական: Իտալիայի հետ կապած դաշնագիրը չի հրատարակւած,

բայց երևի Բիսմարկը խոտադած է, Խալիպի օգնութեան փոխարէն, պաշտպանել նորան Միջերկրական ծովի վերայ իշխանութիւն ձեռք բերելու ի վնաս Ֆրանսիայի, իսկ Ֆրանսիայի համար մի անաջող Ֆրանս-Գերմանական պատերազմից յետոյ, միացնել Խալիպի հետ Ֆրանսիական Նիցցա և Սալօյա երկիրները և թերևս Կօստիկա կղզին: Խալիպի հետ դաշնակցութիւնը թէպէտ դեռ ևս զաղտնիք է, բայց նա ամրացրած է համարում Կրիսպիի այցելութեամբ իշխան Բիսմարկին 2 դեկտ. 1887, նորա կրկին այցելութեամբ Բիսմարկին 21 օգոստ. 1888 թ., տեսակցութեամբ Կրիսպիի (խալիպի մինիստր-նախագահ) Կալնօկիի հետ (որ Աւստրո-Ունգարիայի արտաքին գործերի մինիստրն է), և, վերջապէս, գերմանացոց երիտասարդ Վիլհելմ II կայսեր այցելութեամբ Խալիպի Հումբերտ թագաւորին 1888 ամառը:

Բոլորովին լրացնելու համար իշխան Բիսմարկի արտաքին քաղաքականութեան նկարագիրը, աւելցնենք և այն, որ, առանց միանգամայն մտերմանալ կարողանալու Անգլիայի հետ, Գերմանիան այնուամենայնիւ ձեռք բերեց մասնաւոր բարեկամութիւնը Անգլիայի հետ և համաձայնութիւն կայացրեց զէթ մի քանի կէտերի նկատմամբ, որոնց մասին, սակայն, որոշակի առաջժամ ոչինչ ասել կարելի չէ: Նոյն ոյժը Անգլիան իրան է մօտեցրել Խալիպին, որի հետ զաշինք կայ, թէ չէ—յայտնի չէ. յայտնի է միայն որ այդ երկու պետութիւնները Միջերկրական ծովի նկատմամբ մի որոշ համերաշխութիւն կայացրած են,—գուցէ միայն բերանացի կերպով:

Բիսմարկը իւր առաջադրած նպատակին լիովին հասաւ՝ նա առանձնացրեց Ֆրանսիային և թէ մի ժամանակ Ֆրանսիան դեռ ևս կարող էր յոյս ունենալ իւր կողմը զրաւել Խալիպին կամ Աւստրիային—այդ յոյսը նա այժմ արդէն վաղուց կորցրած է: Հարևան երկիրների մէջ նա չ'ունի բարեկամ: Ռուսիային նմանապէս հակառակ է Գերմանիայի այդ ամենակարողութիւնը, որովհետեւ շնորհիւ Գերմանիայի բարեկամութեան, Աւստրո-Ունգարիան Բօսնիան և Հերցեգովինան առանց արիւնի զրաւելուց յետ (դեռ ևս Բերլինի վեհաժողովի վճռով, 1888 թ.), աշխատում է ազդեցութիւն ձեռք բերել Սերբիայի վերայ, որը նորա հարևանն է և, շնորհիւ Աւստրո-Ունգարիայի, Բօլղարիայի այժմեան կառավարութիւնը քանի

տարիներին ի վեր բանեցնում է մի քաղաքականութիւն, որը արմատապէս ընդդէմ է Ռուսիայի շահերին: Աւստրո-Ունգարիան աւելի էլ հեռու է գնում այդ շաւղի վերայ. Բալկանեան թերակղզու երկիրները իւր տնտեսական և քաղաքական ազդեցութեան ներքոյ ունենալու համար, նա անցեալ տարի գլուխ բերեց երկու երկաթուղու զծերի շինութիւնը, որոնք ահադին քաղաքական նշանակութիւն ունին: 1888 թ. մայիսի 18 (6) բացւեց երկաթուղին, որը կապում է Սերբիայի Բելգրադ և Նիշ քաղաքները Սալօնիկ ծովափնեայ քաղաքի հետ, Մակեդօնիայում, որը եւրոպական Տաճկաստանի մի նահանգն է առ այժմ: Սալօնիկը Էգէյեան ծովի ափին է և ունի վաճառականական նշանակութիւն Արևելքի համար: Այդ երկաթուղիով Վիեննան միացւում է Սալօնիկի հետ, իսկ զորա տնտեսական և քաղաքական հետևանքները անսխառտեսանելի են: — Միւս երկաթուղային գիծը, որը նմանապէս 1888 թւականին բացւեց, այդ տարւայ օգոստոս ամսին, միացնում է Վիեննան Կ. Պօլսի հետ, Բելգրադի (Սերբիայի մայրաք.) և Սօֆիայի (Բօլգարիայի մայրաք.) վրայով:

Բնական է ուրեմն, որ Ֆրանսիան մի կողմից, Ռուսիան միւս կողմից, որոնց դէմ ուղղած է Գերմանական - Աւստրո - Ունգարական - Իտալական երեքպետեան այսպէս կոչւած «խաղաղութեան լիգան», պէտք է իրար հետ՝ բարեկամանային: Այդ բարեկամութիւնը, որը տասը—տասներկու տարի առաջ պէտք է սկսէր, իսկապէս միայն մի քանի տարի առաջ սկսեց արտայայտել՝ գլխաւորապէս լրագիրների միջոցով, բայց իրապէս միայն նորանով, որ Ռուսիան բացայայտ կերպով յայտարարեց, որ նա ուզում է իւր «գործողութիւնների ազատութիւնը» պահպանել եւրոպական որ և է շփութութիւնների դէպքում: Այդ դարձւածը ճիշտ հասկանալու համար, պէտք է իմանալ, որ, չը նայած իւր հակառուսական քաղաքականութեան, Գերմանիան քանիցս անգամ զրաւեց Ռուսիային իւր կողմը, կազմելով Աւստրո-Ունգարիայի և Ռուսիայի հետ երեք-կայսերեան համաձայնութիւն. յայտնի է, որ հանգուցեալ կայսր Վիլհելմ I, բարեկամական յարաբերութիւններ կայացնելու համար, մի քանի անգամ տեսակցութիւններ ունեցաւ հանգուցեալ կայսր Ալէքսանդր II և մեր այժմեայ կայսր Ալէքսանդր III-ի

Ձեզ մօտ ընթերցանութեան սէրը չէ կապած սարեկան ստալը լուրջուց գրկելու պատրաստակամութեան հետ, որ նուէն է, թէ չորսից ամէն մէկը գրկէր ստալեկան $2\frac{1}{2}$ լուրջուց:

ԵՐԵՒԱՆ. Կ. Կ.-ին: Ինչու էք դժար կարծում ընկերութեամբ «Մուրճ» ստանալը: Ահա Ձեզ մի խորհուրդ. թո՛ղ Ձեր չորսից մէկը իրաւունք ունենալ իւր անունով «Մուրճ» ստանալ և մօտը պահել 10 օր ու վերջը իւր սեպհականութիւն համարէ, վճարելով 5 լուրջի 50 կոպ., երկրորդը իրաւունք ունենալ առաջինից ստանալ համարը 10 օրից վտալ և մօտը պահել 7 օր, վճարելով 2 լուրջի, երրորդը ստանալ երկրորդից և մօտը պահել 7 օր, վճարելով $1\frac{1}{2}$ ռ. սարեկ. չորրորդը ստանալ երրորդից և պահել մօտը 5 օր, վճարելով սարեկան 1 ռ. և վերադարձնելով գլխաւոր բաժանորդին: Եթէ 10 լուրջի գրամագլխով ընկերութիւններ կազմել դժարանում էք, էլ ի՞նչ վստահութիւն ունենանք ձեզ վերալ, երբ ձեզ հարկաւոր կը լինի մեծամեծ գործեր կատարելու համար ընկերութիւններ կազմել: Ներկալ դէպքում պահանջում է մի փոքր կամք և մի քիչ էլ իրար հետ հաշտ մնալու ու պալման լարդելու չափ կրթութիւն: Այդպէս վարւելու լինին ոչ-ունեորները — ախօր մինք միայն Ձեւ ջաղարկից կ'ունենայինք մի քանի հարիւր բաժանորդ և մեր գրական — բաժանորդական դարդն ու լալէն մի անգամից վերացած կը լինէր: Օրինակ առէք և հետևողներ շատ և շատ կ'ունենաք: Վիճելի դէպքերում, վիճակ պիտիցէք, բայց երբէք բանը վիճաբանութեան չը հասցնէք: Երբ դուք չէք հաշտում, միմիայն դուք չէք վնասում, վնասում ենք և մենք՝ ոչ դուք էք բան ստանում, ոչ մենք:

ԷՋՄԻԱՅԻՆ. Եղիշէ վարդապետ Ամասունուն: Հասցրինք «Արձագանքի» խմբագրութեան նորան հասնելի 5 լուրջին:

ՄՕՆՊԵԼԼԻԷ. Հալ ուսանողներին: Խոստանում ենք Ձեզ բաժանորդ համարել, կամ երբ մէկը Ձեր անունով նւէր կ'անէ, կամ երբ ինքներս 10 լուրջու չափ աշխատանք կ'ունենանք:

ՍԱԼԵԱՆ. պ. Յովհ.-ին: Ձեզ նամակ կը գրեք:

ՕԴԵՍՍԱ. Հալ ուսանողներին Կպտեր. Նովո-րուսեան համալսարանի Ստա-ցանք ուսանող պ. Վիրապեանից և հասցրինք «Արձագանք» չաբաթաթերթի պ. խմբագրին «Արձագանքի» բաժանորդագինը հինգ լուրջի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ. Գեղապետ պ. Իւզը.-ին: Շատ շնորհակալ ենք Ձեր կոմպլիմենտներին համար: Ձեր լուսերը և մեր ցանկութիւնները իրար հետ լուծում են: Տո՛ւ Աստուած, որ ասպագան իրադործի մեր լուսերը

ՂԶԱՐ. պ. Մ. Մարտիրոսեանցին: Հարկաւոր եղածից մի թուրքի տէրի
էր ուղարկել: Կարգադրեցէք:

ԲԱՔՈՒ. պ. պ. Միք. Մաղաթեանցին և Գր. Աւետեանցին: Ձեր անունե-
րով պ. Յ. Բաբադեանցից մեզ ուղարկած երկու տասնեակ
թուրքին կանձեցինք «Մշակ» լրագրի խմբագրութեան:

— պ. Մ. Մաղաթեանցին: Ձեր ուղարկած հինգ թուրքին հասցրինք
«Արձագանք» շաբաթաթերթին:

ՄՈՍԿՈՒ. պ. Լ. Մանուէլեանցին: «Ֆրուգից» Ձեր երկու հրաշարի թարգմանու-
թիւնները առ ազմէ չեն տպագրուիլ:

Խմբագիր—Հրատարակիչ՝

Ա. Ի. ԵՏԻՓ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

հետ՝ Ալեքսանդրովօյում, Ակերնեվիցում: Բայց այդ տեսակցութիւնները, որոնց շնորհիւ կայացաւ, այսպէս կոչւած, երեք-կայսերեան համաձայնութիւն, քողարկում էր միայն այն մեքենայականութիւնը, որը նախագծած կերպով պատրաստում էր Բիսմարկը Ռուսիայի դէմ: Ահա թէ ինչո՞ւ Ռուսիայում եկան այն խոր համոզմունքի, որ ուժեղ Թրանսիան, ուրեմն Գերմանիայի մի ուժեղ զբաղին, օգտակար է և մինչև անգամ անհրաժեշտ Ռուսիայի համար: Այդ համոզմունքից ծնեց բարեկամութեան զաղափարը՝ Ռուսիայի և Թրանսիայի մէջ, մի զաղափար, որ, մի երկու տարի է, ամեն կերպ փայփայում է թէ՛ Թրանսիայում և թէ՛ Ռուսիայում:

Անկասկած է, որ Ռուսիայի այն քաղաքականութիւնը, որը արտայայտվում է «գործողութիւնները ազատութեան» (СВОБОДУ ДѢЙСТВІЙ) սկզբունքով, իւր մեծ նշանակութիւնը կունենայ եւրոպական որ և է շփոթութեան ժամանակ:

Այս էն, ահա՛, եւրոպայի տէրութիւնների մէջ եղած քաղաքական յարաբերութիւնները — ամենախոշոր գծերով նկարագրած: Այն իրողութիւնները, որ մենք յիշատակեցինք այս տեսութեան մէջ, հիմնաքարն են կազմում ներկայ արտաքին քաղաքականութեան: Բոլոր միւս քաղաքական նշանաւոր թէ աննշան անցքերը ուղղակի կամ անուղղակի հետեւանք են այն քաղաքական սխառմի, որ մենք զբաղրեցինք. այնպէս որ մեր այն ընթերցողները, որոնք կամենում են «Մուրճ»-ի «քաղաքական տեսութեան» բաժնից լաւ օգուտ քաղել, խորհուրդ ենք տալիս այս յօդւածը լաւ ուսումնասիրել և նորա բովանդակութիւնը միշտ յիշել: Հետեւեալ անգամին մենք կը տանք մի տեսութիւն յատկապէս 1888 թւականի քաղաքական կեանքին նըւիրած:

„ՄՈՒՐՋԻ՝ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ընդհանուր շնորհակալութիւն բոլոր անձներին, որոնք «Մուրճի» հրատարակութեան առիթով մեզ շնորհաւորեցին թէ հետագրով և թէ նամակով: Մենք մեր կողմից բոլոր մեր բաժանորդներին շնորհաւորում ենք Նոր-Տարին, Քրիստոսի Մեռնողը և Մկրտութիւնը:

ԹԵԼԱԻ. պ. Ն. Տէր-Յարութիւնեանցին: Ձեր ուղարկած «Ազրիւրի» բաժանորդագլինը և մարկանսը հասցրինք բոս պատկանելուն:

ԲԱԹՈՒՄ. պ. Խօջամիրեանցին: Ձեր ուղարկած 15 ր. հասցրինք «Արձապանքի» խմբագրութեան, բաժանորդներէ անուններէ հետ միասին:

ԲԱՔՈՒ. պ. Ա. Ղարաբէկեանցին: Նրեք բուլլին և մարկանսը հասցրինք «Ազրիւրի» խմբագրութեան:

ԹԻՖԼԻՍ. * * Դուք, ի հարկէ, բոլորովին կը թողնէք կրճատումներ անելու սովորութիւնը: Պատիւներ դնելով, Դուք անչափ զփառացնում էք խմբագրութեան և գրաշարների գործը: Միւս անգամ աղպիսի ձեռագիր չի ընդունուի:

— Օրիորդ Մինրուհուն: Ձեր ուղարկած վէպը անպարմար գտանք: Դուք առ ալժամ:

ՎԱՐՇԱԽԱ. պ. Լիւիցեանցին: Հանուշի գրքի մասին ուղարկեցէք. կարճ լինի:

ԺԸՆԵԻ. պ. Օհանեանցին: Նիթէ կամենալու լինիք տալու բաժանորդ լինել, Դուք կ'ունենաք ուղարկելու միմիայն երկու բուլլի մարտի 1-ին և ոչ չորս.—ուսանողական վճարը ուրիշ բուլլի է:

ԶԽԱՐ. պ. Մալխասին:—Ոչինչ չենք կարող առել, մինչև կարդացած չենք լինիլ Ձեր գրածքը: Բայց եթէ նա 24 մեծ թերթերից է բաղկացած, խնդրում ենք որ ինքներդ լաւ նայէք, նախ քան կ'ուղարկէք: Ինչ և իցէ, մի' շտապէք. ապագրելու վէպերով «Մուրճը» արդէն ալժամ չափազանց առատ է:

ԱՍՏՐԱԽԱՆ. պ. Վ. ին: Ձեր նախերգը անպարմար գտանք «Մուրճի» համար:

ՄԻ ՄԵՆԱՍՏԱՆԻ Սուրբ Հայրերին: Խմբագրութիւնը ցաւում է, որ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿ, ԲԱՆԱՍԻՐԱԿ, ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳՐԻ 1888 Թ., ՀԱՄԱՐ Ժ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ԿՐՈՆԱԿԱՆ.** Պետրոս Առաքեալը երբեք Հոմ չէ եկել. (Թ ա ր գ.):
Հաս. Վարդան վարդապետի ի վերայ Յոհան Օճեկոյ
ըստ ինկրոյ Համազասպ Եպիսկոպոսի Հաղրատաց:
- ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.** Կիրակոսայ Հանգստութիւնը. (Թ ա ր գ. շարունակ.)
բժ. Մ. Զարգարեան:
- ԱԶԳԱՅԻՆ.** Հրովարտակ Պարսից Արեղանաւազ Նաարեաթին շահի առ
Վեհ. Հաղրատեան ազգիս: —
ԺՎ. տարեգարձ ճեմարանի Մայր Աթոսոյս. — Տեղեկա-
դիր ճեմարանի 1887 - 88 ամի. Հաս. պ. Յովհաննիսի
Յովհաննիսեան. — Աւգեորութիւն Վեհ. Հաղրատեալի ի
Տիֆլիս. Վեհ. Հաղրատեալի աչքելութիւն Տիֆլիսոյ ու-
սումնարանաց. — Բարեկ. Մինաս Փ. Շուշեցոյ նախա-
արւութիւն:
- ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.** Քաղաւածք յարադրութեանց Անեղի:
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

„Մ Ձ Ա Կ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Այլ հրատարակիլի թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպրամուպէ
Մենք կը տառնանք տեխնիկան ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսովն 6 ռուբլի:

Գրելը «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձեակալ և Բա-
ղարմալ վարդերի անկիւնում Թաւմաշեկի տանը):

Կադրութեան ուրիշ քարտերից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք
է գիմը հետեւայ հասցեով. ТИФЛИСЬ. Редакция газеты „МПАКЪ“.
իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien „MSCHAK“.

Խմբագիր հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ:

ՎԱՂԱՔԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՆՈՐ-ԴԱՐ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻ

ԹԻՖԼԻՍԻՆ

ՆԵՐԿԱՅ 1889 ԹՈՒՆԿԱՆԻՆ

(ՎԵՅՏԻՄԻՔ ՏԱՐԻ)

Այլ հրատարակութիւնն չկրթով և ճշգրտով:

Խմբագրութիւնը կ'ստանայ և տեղական հետադիւրներ:

Տարեկան գինն է 10 ռուբլի, միայ տնտեսներ՝ 6 ռուբլի, հաստով՝ 5 կող
Եւրոպայի, Թիւրքիայի, Վալարիկայի և այլ հետաւոր երկիրների
բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ:
Բաժանորդ են գրում խաւարանիւր տանի 1-ից միայն:
Թիւրքիայում բաժանորդ են գրում ՄԻՄԻՆՆ «Նոր-Դար»-ի խմբ-
ագրատանը:

Խմբագրատանը գտնւում է Բարանկայա փողոցում, պատահե-
ռագրատան դէմ, տան № 12:

Յոտար քաղաքներից գտնւում են խմբագրութեան՝ Тифлисъ въ
Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis.
(Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր—հրատարակիչ՝ ՍՊԵՆԴԱՐ ՍՊԵՆԴԱՐԵԱՆ:

ԲԱՅՈՒՆՔ Է ԲԱԺԱՆՈՐԵԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

47-դ տարե, 1889, Վենետիկ, ու Վաղար:

Առաջինից 1889 տարեցն ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ տաւմ-
նաթերթին փոխանակ ետանակայ լինելու, տնէն տնայ տիրորդ երկեր-
կու ու թաժայ թերթիւր ի լոյս պիտի բնծալուի:

Տարեկան գինն է 10 ֆրանք, Ռոսաստանի համար 4 ռուբլի.
Ճանապարհի ծախարով բաժանորդ գրուել ցանկացողք կարող են գի-
մել ուղղակի խմբագրութեան՝ à Venise, au couvent des P. P. Mé-
khitaristes, S. Lazare և կամ առ ցոյժակայ մեր որ ի Տիֆլիս պ. 30-
ՎԱՆԻՄ ԶԱՐԴԱՐԱՆՆ:

ԽՄԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ.

ՆՆԲՐԱՅ 1889 ԹԻՒՆ

„ԱՂԲԻՒՐ“

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԸ

ԵԹՅՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Այլ հրատարակելի նպն ապրուստեամբ և նպն աշխատակիցների մասնակցութեամբ:

ԱՌԱՋԻՆ ՊՐԷՍԻՍԵ Է ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՕԼԻԳՐՈՅԻՍ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

Բաժանորդը պրուստը հենց խոսքն կըստանայ Ա. պրէմիան, որ թէ թիֆլիզում և թէ հոգարնակ քաղաքներում մեր դարձակալների մաս պրուստ ևն ի զուգ հատարակութեամբ:

Բ. պրէմիան՝ մեր առաջնորդար նկարիչ Գ. Բաշինջաղեանի «ԱՐԱՐԱՏ» մեծագիր պատկերը (տալի մեծ քան «Արամարայ ծովակը») վիճակ կըզգուի մեր բաժանորդների մէջ տեսակներ տանին: «ԱՐԱՐԱՏ» առաջու բաժանորդը եթէ կամենայ՝ կարող է նրա փոխարէն ստանալ 100 լարի:

Գ. պրէմիան՝ ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑ 1890 թուականի, կ'աղարկուի բաժանորդներին զեկանների Տէ-ի հետ:

Բացի պրուստից՝ ապրուստը ընթացքում կ'առաջարկուին աննկուկներ և բերուսներ, որոնց ԱՌԱՋԻՆ վճարները կըստանան մ'ը ա ն ա կ ն ե ր — գրքեր, պատկերներ, արձուներ, գրասենեակի զարդեր և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրամասեր, պոէզիներ, ստաններ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Նոր լուրեր: V) Ալիստիք:

ՉՈՒԱՐ ՀԱՆԻՔ

VI) Մանկական, փրօթիկներ, չախնութիւն և ուղ խաղեր: Բերուսներ, թուարանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շատատեսիլներ: VII) Երգեր՝ ձայնադրած (նոտաներով):

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և գաղափարակութեան վերաբերեալ բոլորածներ և տեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ: Յաշտարակութիւններ:

«ԱՂԲԻՒՐ» տարեկան բաժանորդագիրը 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է աղարկել 4 հատ 7 կ. մարկաներ:

ԱՊՍՈՒԿ ՈՉ ՈՒՅՑ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Հասցեն՝ Тифлисъ. Редакция «АГБУРЪ». իսկ արտատահմանից Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

1889-ին

(ՈՒԹԵՐՈՐԳՏԵՐԻ)

„ԱՐԶԱԳԱՆՔ“

ՇԱՐԱԹԱԹԵՐԹՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅ

ՄԻՋԵՆՈՅՆ ԳԻՐԹՈՎ, ԵՒ ՀԵՏԵԻՆԱԿԱԿ ՊՐԻՆԻՍԻՍԿԱՎ,

I. Տեղեկություններ կատարվող զործարարականների և օրհնա-
դրական միջոցների մասին:—II. Առաջնորդող ժողովածուներ հասարակական
կեանքի նշանադր հարցերի վերաբերությամբ:—III. Փոխակցություններ
հայտնաբերող տեղերից, բնականորեն տեղափոխ հաղ և օտար լրագրողների տե-
ղեկություններ և կարծիքներ:—IV. Տնտեսական և առևտրական հարցե-
րի քննադատություն:—V. Յոլածուներ ժողովրդական կրթության նկատ-
րելություն:—VI. Արտաքին առևտուր, ժողովածուներ և տեղեկու-
թյուններ արտասահմանական հասարակական և քաղաքական կեանքի նշա-
նադր տեղերի մասին:—VII. Կրթական և մասնագիտություն:—VIII. Ֆե-
լիտան:—IX. Զանազան լուրեր:—X. Յարտադրություններ:

«Արձագանք»-ին 1889 թ. կոչմանակցին բոլոր այն անձինք,
որոնք աշխատակցել են 1888 թ. ընթացքում, այն է՝ Արեւիկան Ն.,
Աղանեան Գր. Խ. Բեհրաթյան իշխ. Կոնստ., Կազմական Կար.,
Կեղևրաթան Գարեգ., Երկրեան Աղ., Խաչատրյան Գր., Սր. Մատի-
նեան, Յարոյ, Ներսիսյան, Պատկանեան Ա., Պաշտան Ա., Տեր-Ան-
ժանյան Նիկ., Քարամեան Նիկ. և այլք:

Տարեկան բաժանորդագրման է 5


Կէս տարեկան 3

Թիֆլիսում տարողություններ բնականորեն է լինել. Բեհրաթյանի և Ար.
Յոլածուների լրագրական զործարարական գրասենյակում և Թիֆլիսի
փոստատար փոստի ընկերության մեջ, խմբագրի մոտ:

Ստորագրողները գտնվում են՝ Тифлисѣ, въ Редакцію „АРД-
ЗАГАНЪ“, Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal „ARDZAGANG“.

ԱՊՈՒԼԻ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Խմբագիր — Հրատարակիչ՝ ԱՐԳԱՐՑՈՎ, ՀԱՆՆԻՍԵԱՆ:



Մ Ո Ւ Ր Ճ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԻՆՆԱԿՈՒՄ Է:

Տարեկան բաժանորդագրին	10 ռ.
Կէս տարեան	6 ռ.
Մի գրքով	1 ռ. 50 կ.

Յաւելար ամսի բաժանորդագրութիւնը կարեորագոյնը լինելով տարեաց մէջ, խնդրում ենք զանկացողներին շտապել որ տա՞ծ բաժանորդ գրեցու:

Խմբագրութեան գիմնւմ են ապագէս՝ Тифлисѣ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրութիւնը գտանում է՝ Գանձիւան փողոց, տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Іоаннисиани). Մարձի ամէն մի համարը, որպէս տա՞ծին «Հրակր»-ի մէջ տա՞ած էր, ունենալու է 8—10 տարագրական թերթ, կամ որ նոյնն է 128 մինչ 160 երես, իսկ ամբողջ տարին՝ Մարձը կազմելու է 12 զերք, երեք մեծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ, բարոյական, ուսումնական, արուեստագիտական: Հրատարակութիւն Վիեննայի Միխիթաբեան Միաբանութեան, կը հրատարակուի ամէն ամսի սկիզբը:

Բաժանորդագրութեան գինն է՝ Տարեկան 8 Ֆ.—4 ռ. փեցումսեպէ՝ 5 Ֆ.—2 ռ. 50 կ. կանխիկ վճարելի:

Եւրաքանչիւր թիւ տա՞նձին՝ կարճէ 1 Ֆ.—50 կ.

Հասցէն á la Rédaction de la Revue «HANTESSE». Au Couvent des R. R. P. P. Mechitharistes.

à VIENNE (AUTRICHE).

VII. Mechitharistengasse 4.

Թիֆլիսում գրում են պ. Յ. Չափալբաշեանի մօտ. գրասենեակ Կ. Մաթթաշեանի: